



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

RUBEN SAFRASYAN

OTTOMAN EMPIRE:
THE GENESYS OF THE PROGRAM
OF GENOCIDE
(1876-1920)

YEREVAN 2009

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

РУБЕН САФРАСЯН

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՅԱՆ

ОСМАНСКАЯ ИМПЕРИЯ:
ГЕНЕЗИС ПРОГРАММЫ
ГЕНОЦИДА
(1876 – 1920гг)

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆ.
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(1876 – 1920 թթ.)

ЕРЕВАН 2009

ԵՐԵՎԱՆ
ԼՈՒՍԱԿՆ
2009

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Ս 305

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ և պետական հովանավորությամբ**

Պատասխանատու խմբագիր՝
պ.գ.դ., պրոֆ. Վ. Ա. Բայբուրդյան

Գրախոս՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ. Մ.Կ. Զուլայան

Սաֆրաստյան Ռ.

Ս 305 ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1876 – 1920 թթ.)-
Եր.: «Լուսակն» հրատ., 2009թ.: 248 էջ:

Մենագրությունում տեսական ցեղասպանագիտության տեսանկյունից
համակողմանի հետազոտվում է Օսմանյան կայսրությունում ցեղասպա-
նության ծրագրի ծագումնաբանության գործընթացը: Նախատեսվում է
մասնագետների և ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-9939-9012-0-6

© Ռուբեն Սաֆրաստյան

© «Լուսակն» հրատ.

Երախտագիտությամբ նվիրում եմ իմ ուսուցիչների՝
Հայաստանում թուրքագիտության հիմնադիրների
անմար հիշատակին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան..... 8

**Գլուխ առաջին
ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1. Ցեղասպանության հայեցակարգի ձևավորումը.
քննական ներածություն 20
- 2. Նախացեղասպանության հայեցակարգը 31

**Գլուխ երկրորդ
ԱՐԵՎՍՏԱՍԵՏ ԲԱՐԵՆՈՐՈՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԸ**

- 1. Հավասար իրավունքներ..... 44
- 2. «Միախառնում ու միաձուլում» 54

**Գլուխ երրորդ
ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄՆ
ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԸ**

- 1. Սահմանադրականների գաղափարախոսությունը 73
- 2. Թուրք սահմանադրականները և հայ ազատականները..... 92

**Գլուխ չորրորդ
ՆԱԽԱՅԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ
ԱՌԱՋԱՅՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ**

- 1. Օսմանյան պետության ծագումնաբանությունը 103
- 2. Հակաքրիստոնեության ուժեղացում 117

**Գլուխ հինգերորդ
ՆԱԽԱՅԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ**

- 1. Զոհի ընտրություն 133
- 2. Ճգնաժամ 149
- 3. Ցեղասպանության առաջին ծրագիրը 157

**Գլուխ վեցերորդ
ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ՝ ՈՒՂԴՎԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՍ**

- 1. Համիդյան և երիտթուրքական ծրագրերը 167
- 2. Քեմալականների ծրագիրը 190

**Վերջաբանի փոխաբան
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 203**

Օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկ 212

Առաջարան

Ցեղասպանությունը ոչ միայն պատմական երևույթ է կամ էլ գիտական արտարկացիա, այլ նաև մեր օրերի դաժան իրականություն, ծանրագույն հանցագործություն մարդկության դեմ, որի կանխարգելումը կարող է փրկել միլիոնավոր մարդկային կյանքեր: Այս տեսանկյունից՝ գիտական ամեն մի հետազոտություն, որտեղ քննության են առնվում ցեղասպանության կամ ցեղասպանական ծրագրերի ծագումնաբանության օրինաչափությունները, ինչպես դա արվում է սույն մենագրության մեջ, կարող է նպաստել կանխարգելման ավելի գործուն միջոցների ընտրությանը և կիրառմանը:

Ցեղասպանության տեսական հետազոտությունների կարևորագույն և, թերևս, սակավ ուսումնասիրված ուղղություններից է պետության (state power) դերի իրականացման հետ կապված առանձին խնդիրների հայեցակարգային պարզաբանումը: Այդ խնդիրների շարքում առանձնանում է պետական կառավարման բարձրագույն մարմինների կողմից ցեղասպանության նախապատրաստման գործընթացի ուսումնասիրումը: Այդ գործընթացի արդյունքը հանդես է գալիս պետական ծրագրի տեսքով, որտեղ արտահայտված է ցեղասպանություն իրագործելու հանցավոր դիտավորությունը (intent) և նշված են այն իրականացնելու միջոցները:

Սույն մենագրությունն անդրադառնում է վերը նշված խնդրին՝ Օսմանյան կայսրության օրինակով: Այդ ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Օսմանյան կայսրությունը մարդկության պատմության մեջ առաջին պետությունն էր, որը նախապատրաստեց և իրականացրեց լայնածավալ ցեղասպանություն:

Փաստավավերագրական ծավալուն ու բազմաբնույթ նյութի հիման վրա, որը մեկնաբանվում է ժամանակակից համեմատական ցեղասպանագիտության տեսական հիմնական դրույթների տեսանկյունից, մենագրության մեջ պարզաբանվում են այդ բազմազգ ու բազմադավան պետությունում ցեղասպանության առաջին

ծրագրի ծագումնաբանության նախադրյալներն ու ընթացքը, ինչպես նաև ծրագրի ընդունման հանգամանքներն ու նրա կառուցվածքը: Համեմատական վերլուծության են ենթարկվում ինչպես այդ, այնպես էլ ավելի ուշ ստեղծված ցեղասպանության ծրագրերը և վեր են հանվում դրանց բաղադրիչների վերածնակերպումների օրինաչափությունները:

Աշխատության մեջ հատուկ տեղ է հատկացված տեսական բնույթի հարցերի քննությանը, առաջարկված են հայեցակարգային նոր մոտեցումներ և ձևակերպումներ: Դրանցից ամենակարևորը նախացեղասպանության հասկացության հայեցակարգային-տեսական հիմնավորումն է, ինչպես նաև նախացեղասպանական իրավիճակի հիմնական չափորոշիչների առաջարկումը:

Սույն մենագրության թեմայի արդիականությունը դրսևորվում է ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական հարթությունների վրա: Ցեղասպանության, որպես մարդկության անցյալում ու ներկայում տեղ գտած մեծագույն չարիքի հետազոտումը, խիստ այժմեական է և գիտական, և գործնական-քաղաքական առումով: Գիտական տեսանկյունից մերօրյա ցեղասպանագիտական հետազոտությունների կարևոր խնդիրներից մեկը փաստարկված ցեղասպանությունների վերլուծության, համեմատական հետազոտությունների և ստացված արդյունքների ընդհանրացման հիման վրա այդ երևույթի համապարփակ և համընդունելի տեսության ստեղծումն է: Այդ տեսության կարևոր մաս է կազմելու պատմական ու քաղաքական կոնկրետ պայմաններում ցեղասպանության ծրագրերի ստեղծման և դրանց կառուցվածքների առանձնահատկությունների բացահայտման արդյունքների համեմատական վերլուծության և ընդհանրացման հիման վրա ձևակերպված ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության հայեցակարգը: Սույն մենագրությունում իրականացված հետազոտական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները, մեր կարծիքով, որոշակի ներդրում են այդ հայեցակարգի ձևակերպման մեջ:

Աշխատության թեմայի գիտական արդիականության մյուս կողմը պայմանավորված է այն հանգամանքով, որ դեռևս սակավ են ուսումնասիրված Օսմանյան կայսրությունում ցեղասպանության՝ որպես պետական քաղաքականության որդեգրման պատճառների և

առանձնահատկությունների հետ կապված բոլոր հանգամանքները: Սույն ուսումնասիրությունը մի փորձ է լրացնելու այդ բացը:

Ցեղասպանությունը ծանրագույն հանցագործություն է, իսկ նրա նախապատրաստողներն ու իրականացնողները՝ հանցագործներ, որոնք ամեն կերպ փորձում են քողարկել կամ ժխտել այդ հանցագործության փաստը: Եվ երբ մի պետություն իր պատմական անցյալի կեղծումը և ցեղասպանության փաստի ժխտումը հռչակում է պետական քաղաքականության կարևոր նպատակներից մեկը, այդպիսով նույնացնելով իրեն ցեղասպանություն իրականացրած պետության հետ, ապա այդ դեպքում ցեղասպանության՝ որպես պատմական իրականության մի հատվածի, փաստերի վրա հիմնված գիտական անաչառ հետազոտումը ստանում է նաև կարևոր քաղաքական նշանակություն՝ նպաստելով ցեղասպանության դատապարտմանն ու կանխարգելմանը:

Աշխատության գլխավոր նպատակներն են.

- հենվելով արխիվային և վավերագրական ծավալուն այլ նյութերի ու սկզբնաղբյուրների վրա՝ համակողմանի ուսումնասիրել Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության գործընթացի առանձնահատկությունները և բացահայտել դրա հիմնական օրինաչափությունները,
- նորովի մեկնաբանել և գնահատել Օսմանյան կայսրության պատմության որոշ շրջաններ,
- առաջարկել նախացեղասպանության հիմնավորված հայեցակարգ:

Այս նպատակներին հասնելու տեսանկյունից հեղինակի կողմից կարևորվել են հետևյալ խնդիրները.

- քննության առնել ցեղասպանության հայեցակարգի ձևավորման գործընթացը և շեշտադրել ցեղասպանության իրականացման մեջ պետության առաջնային դերի, ինչպես նաև պետական ծրագրերի միջոցով ցեղասպանության դիտավորության արտահայտման առանձնահատկությունների ուսումնասիրման կարևորությունը,

- թանգիմաթի արևմտամետ բարենորոգումների նշանակության ուսումնասիրումը օսմանյան պետության բնույթի տեսանկյունից,
 - թանգիմաթի արևմտամետ բարենորոգումների առաջին փուլի ընթացքում քրիստոնյաների նկատմամբ «հավասար մոտեցման» հայեցակարգի և քաղաքականության քննությունը,
 - թանգիմաթի արևմտամետ բարենորոգումների երկրորդ փուլի ընթացքում քրիստոնյաների նկատմամբ «միախառնման ու միաձուլման» հայեցակարգի և քաղաքականության ուսումնասիրումը,
 - սահմանադրականների ընդդիմադիր շարժման առաջնորդների կողմից առաջարկված «օսմանյան ազգի» և «օսմանյան հայրենասիրության» հայեցակարգերի և օսմանյան առաջին սահմանադրությունում դրանց արտացոլման խնդրի լուսաբանումը,
 - սահմանադրականների և հայ ազատականների փոխհարաբերությունների առանձնահատկությունների բացահայտումը,
 - նախացեղասպանական իրադրության հասունացման մեջ թանգիմաթի արևմտամետ բարենորոգումների քաղաքականությանը որպես հակազդեցություն ուժեղացող հակաքրիստոնեական տրամադրությունների կատարած դերի վերհանումը և ուսումնասիրումը,
 - բուլղար ժողովրդին՝ 1876 թ. որպես ցեղասպանական ծրագրի հիմնական թիրախ դարձնելու պատճառները,
 - Օսմանյան կայսրությունում 1876 թ. ստեղծված նախացեղասպանական իրավիճակի հիմնական գծերի լուսաբանումը,
 - 1876 թ.՝ բուլղարների դեմ, 1915 թ. և 1920 թ.՝ հայերի դեմ ցեղասպանական ծրագրերի ստեղծման հանգամանքների և առանձնահատկությունների ու դրանց հիմնական բաղադրիչների համեմատական վերլուծության իրականացումը:
- Աշխատության ինչպես թեման, այնպես էլ հիմնական հարցադրումները գիտական նորույթ են ոչ միայն հայրենական պատմագիտության մեջ, այլև արտերկրում: Նմանատիպ աշխատություններ ու հարցադրումներ բացակայում են նաև վերջին տասնամյակի ընթացքում հիմնականում Արևմուտքում, մասնավորապես ԱՄՆ-ում

արագորեն ձևավորվող հասարակագիտության այնպիսի նոր բնագավառի շրջանակներում, ինչպիսին է համեմատական ցեղասպանագիտությունը:

Հետազոտման առարկան է Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության գործընթացը: Հենվելով սկզբնաղբյուրների հետազոտման և համադրման վրա՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ այդ գործընթացը սկիզբ է առել 1876 թվականին՝ արևմտամետ բարենորոգումների հետևանքով կայսրության մուսուլմանական ազգաբնակչության ու կառավարող թուրքական վերնախավի շրջանում հակաքրիստոնեական տրամադրությունների կտրուկ ուժեղացման պայմաններում՝ որպես արմատական հակազդեցության փորձ: Այս առնչությամբ հեղինակը, օգտագործելով փաստա-վավերագրական նյութ, քննության է առնում այդ նպատակին ուղղորդված օսմանյան իշխանությունների քաղաքականությունը:

Հետազոտության հեղինակը լուծում է նաև հետևյալ խնդիրը. պարզաբանել, թե ինչ կոնկրետ ձևեր է ընդունում անցումը այն սոցիալական իրականությունից, որտեղ բացակայում է ցեղասպանությունը՝ որպես լիովին ձևավորված երևույթ, մի նոր որակ ունեցող իրականության, որտեղ, որպես այդ նոր որակի արտահայտություն, առկա է ցեղասպանությունը: Հեղինակի կողմից առաջարկվում է այդ անցման ուսումնասիրության մեթոդաբանությունը, որի հիմքում դրված է հետևյալ մոտեցումը. տարանջատելով ցեղասպանության մի քանի հիմնական բաղադրիչները՝ քննության առնել նրանց ձևավորման գործընթացը առանձին-առանձին: Այդպիսով՝ հնարավորություն է ստեղծվում գիտական հենքի վրա իրականացնել ցեղասպանության ծագումնաբանության համալիր հետազոտում: Այդ մոտեցումը իրականացվում է դիտավորության հանգամանքի կիրառմամբ, որը ցեղասպանության կարևորագույն տարրերից բաղադրիչ է: Հեղինակը գտնում է, որ քաղաքականության մեջ դիտավորության հանգամանքը սովորաբար հանդես է գալիս ցեղասպանական բնույթի որոշակի գործառույթներ և արարքներ իրականացնելու պետական ծրագրի տեսքով: Այդպիսով, եթե հաջողվում է հաստատել նման ծրագրի գոյությունը, որն ընդունվել է կամ հաստատվել է պետական կառավարման բարձրագույն

մարմնի կողմից, ապա դա նշանակում է, որ առկա է ցեղասպանության երևույթի կարևորագույն բաղադրիչը, և որ տվյալ պետությունում սկիզբ է առել անցումը դեպի այնպիսի իրականություն, որտեղ ցեղասպանությունը հանդես է գալիս որպես պետական քաղաքականության արմատական դրսևորում:

Աշխատության մեջ առաջ են քաշվում ու հիմնավորվում են նաև մի շարք այլ նոր տեսակետներ, որոնք ցեղասպանության համընդհանուր տեսության ձևավորման համար ունեն կարևոր նշանակություն: Մասնավորապես նշվում է, թե ցեղասպանության ծրագիրը կարող է հանդես գալ ոչ միայն մեկ փաստաթղթի տեսքով, այլ կարող է պարփակվել մի քանիսի մեջ, ընդ որում, նրանցից ամեն մեկը լուծում է որոշակի խնդիր: Քննության են առնվում նաև պատմական այն կոնկրետ պայմանները, որոնք նպաստեցին օսմանյան թուրքիայի ղեկավարների կողմից ցեղասպանական բնույթի մի քանի ծրագրերի նախապատրաստմանը:

Սույն գրքում առաջ է քաշվում և հիմնավորվում է նախացեղասպանության հայեցակարգը, քննության են առնվում նրա առնչությունները ցեղասպանության հայեցակարգի հետ, ինչպես նաև տեսականորեն հիմնավորվում են տարբերություններն այնպիսի երևույթների միջև, ինչպիսիք են զանգվածային կոտորածը, նախացեղասպանությունը և ցեղասպանությունը, ցույց է տրվում, որ նրանց միջև գոյություն ունի որոշակի հաջորդականություն, ինչպես դրա մասին վկայում է Օսմանյան կայսրության օրինակը: Մասնավորապես ընդգծվում է, որ ցեղասպանության պետական նախնական բնույթի ծրագրի առկայությունը, որտեղ հստակորեն արտահայտված է դիտավորությունը իրականացնելու ցեղասպանություն, սակայն դեռևս չեն նշված դրա միջոցները և ձևերը, վկայում է, որ արդեն ստեղծվել է նախացեղասպանական իրավիճակ: Երբ ցեղասպանության ծրագիրը ստանում է ավելի կոնկրետ տեսք, մասնավորապես, նրանում նշվում են ցեղասպանություն իրականացնելու միջոցները, ապա կարելի է պնդել, որ սկսել է անցումը դեպի այնպիսի իրականություն, որտեղ ցեղասպանության քաղաքականությունը դառնում է նրա մի մասը:

Հեղինակը վերը նշված տեսական դրույթները ձևակերպում է, վերլուծության ենթարկելով Օսմանյան կայսրության պատմության

վերջին մի քանի տասնամյակների իրադարձությունները, որոնց ֆոնի վրա մանրամասնորեն ներկայացվում է նախացեղասպանության երևույթի ծագումնաբանության գործընթացը:

Աշխատության մեջ առաջ է քաշվում և պատմական փաստերով հիմնավորվում է հակաքրիստոնյա տրամադրությունների կարևոր դերը Օսմանյան կայսրությունում նախացեղասպանական իրավիճակի առաջանալու մեջ:

Հեղինակը համեմատական ցեղասպանագիտության տեսանկյունից քննության է առնում Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության գործընթացը: Առանձնացվում և վերլուծվում են 1876 թ., 1915 թ., 1920 թ. ծրագրերը, նշվում են նրանց տարբերությունները, ինչպես նաև առանձին դրույթների «զարգացման» ու «խորացման» միտումները և ուղղվածությունը:

Աշխատության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են շուրջ մեկ հարյուրամյակ՝ սկսած XIX դարի 20-ական թվականների վերջերից, երբ Օսմանյան կայսրության վերնախավը, նպատակ ունենալով պահպանել իշխանությունը կայսրության քրիստոնյա հպատակների վրա և փրկել երկրի տարածքային ամբողջականությունը, ձեռնամուխ եղավ արևմտամետ բարենորոգումների, որոնք առաջացրին հզոր հակազդեցություն երկրի մուսուլմանական ազգաբնակչության շրջանում և այդպիսով նպաստեցին բուլղար ժողովրդի դեմ ուղղված ցեղասպանական բնույթի և առաջին պետական ծրագրի առաջացմանը (1876 թվականից 1920 թվականի նոյեմբերը), երբ քեմալական թուրքիայի պարագլուխները, ռազմական պարտության մատնելով Հայաստանի Հանրապետությանը, չբավարարվեցին դրանով և ծրագրեցին իսպառ վերացնել հայ ժողովրդի կենսական ուժերը: Այդպիսով՝ հեղինակի կողմից ընտրված ժամանակագրական սահմանները հնարավորություն են տալիս լիովին բացահայտել թուրքիայում ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության պատճառները և առանձնահատկությունները:

Աշխատության աղբյուրագիտական հենքը կազմում են արխիվային նյութերը, որոնցից շատերն առաջին անգամ են շրջանառության մեջ դրվում: Անհրաժեշտ է հատուկ ընդգծել Ռուսական

կայսրության արտաքին քաղաքականության արխիվի (ՌԿԱԲԱ) հարուստ ֆոնդերի բացառիկ կարևոր նշանակությունը սույն գրքի համար¹: Օգտագործվել են նաև այլ ռուսական², ինչպես և հայաստանյան արխիվների³ չիրատարակված նյութերը:

Աշխատանքում լայնորեն օգտագործվել են տարբեր երկրներում հրատարակված արխիվային փաստաթղթերի ժողովածուներ, որոնք պարունակում են հարուստ նյութ Օսմանյան կայսրության իշխանությունների քաղաքականության մասին թանգիմաթի շրջանում, քրիստոնյաների նկատմամբ: Դրանց թվին են պատկանում ամերիկյան⁴, բրիտանական⁵, ավստրիական⁶, գերմանական⁷, բուլ-

¹ Архив Внешней Политики Российской Империи (Фонд Главный архив, II -18, 1855-1867; Фонд Посольство в Константинополе; Фонд Канцелярия; Фонд Канцелярия МИД).

² Государственный Архив Российской Федерации (Личный фонд Н.П. Игнатьева), Российский Государственный Военно-Исторический Архив (Коллекция Военно-ученного архива, 71 Турция).

³ Հայաստանի ազգային արխիվ (Ֆոնդ 450, Հայկական հարց), ՀՀ Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի պետական թանգարան (Թ. Ազատյանի ֆոնդ):

⁴ Papers relating to the foreign relations of the United States, transmitted to Congress, with the annual message of the President, December 3, 1877. New York: Kraus Reprint Corporation, 1966.

⁵ British documents on foreign affairs: reports and papers from the foreign office confidential print. General editors: Kenneth Bourne and D. Cameron Watt. Part I: from the mid-nineteenth century to the First World War. Series B: the Near and Middle East, 1856-1914. Editor: David Gillard. Volume 2: the Ottoman Empire: revolt in the Balkans, 1875-1876. Bethesda, 1984; Eastern Papers: Correspondence Respecting Christian Privileges in Turkey, London, 1856; Reports Received From Her Majesty's Ambassador and Consuls Relating to the Condition of Christians in Turkey. 1867, London, 1867.

⁶ Документи за българската история. Т. VI: Документи за Новама история на българския народ из Виенските държавни архиви: 1830 - 1877. Ч. II. Събрал П. Ников. София: БАН, 1951.

⁷ Документи за българската история из германски архиви (1829-1877). Съст. и ред. Хр. Христов и В. Паскалева. София, 1963; A documentation of the Armenian genocide in World War I. Ed.: W. Gust, S. Gust. - www.armenocide.net; Геноцид армян перед судом. Судебный процесс Талаат паши. Стенографический отчет. М., 1992; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива министерства иностранных дел каизеровской Германии. Ереван, 1995.

ղարական⁸, թուրքական⁹, ռուսական¹⁰ արխիվային փաստաթղթերի ժողովածուները:

Մենագրության աղբյուրագիտական հենքի կարևոր հատվածն են սկզբնաղբյուրի բնույթ ունեցող թուրքական բազմաթիվ նյութերը, որոնց մի մասը օսմաներեն է և առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ: Դրանք կարելի է բաժանել մի քանի խմբի: Առաջինը, իհարկե, արխիվային փաստաթղթերի հրապարակումներն են: Դրանց նշանակությունը կարևոր է ոչ միայն սույն աշխատության հիմնահարցերին պատասխաններ գտնելու տեսանկյունից, այլև զուտ այն պատճառով, որ չափազանց սակավաթիվ են թուրքական արխիվային փաստաթղթերի հրապարակումներն ընդհանրապես, մանավանդ, եթե դրանք առնչություն ունեն թուրքական իշխանությունների կողմից դարերի ընթացքում վարած հակաքրիստոնեական քաղաքականության հետ¹¹:

⁸ Документи за българската история: Архив на Наїден Геров, т. 1-2, София: БАН, 1931.

⁹ Документи за българската история. Т. 3: Документи из турските държавни архиви. Ч. 1: 1564 – 1872, Подбралъ и превелъ П. Дорев. София, 1940; Документи за българската история. Т. IV: Документи из турските държавни архиви. Ч. II: 1863 - 1909. Подбралъ П. Дорев. София, 1942 Османски извори за ислямизационните процеси на Балканите (XVI – XIX в.). Под редакцията на: М. Калицин, А. Велков, Евг. Радусев. София: БАН, 1990; Uluğ İğdemir, Kuleli Vak'ası Hakkında Bir Araştırma, Ankara, 1937; H. İnal, Bosna'da Tanzimatın tatbikına ait vesikalar. - Tarih Vesikalari, 1941-1942, 1. Cilt, III, s.374-396; İ. Sungu, Mahnud II.nin İzzet Molla ve Asakir-i Mansure hakkında bir attı. - Tarih Vesikalari, 1941-1942, 1. Cilt, III, s. 162-183; Düstür, Tabb-ı sani, Dersaadet: Amire, 1282. Düstür, Cild-i Evvel, İstanbul, 1289. A. Ş. Gözübüyük, S. Kili, Türk Anayasa metinleri, Ankara, 1957.

¹⁰ Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875-1877. Под ред. С. А. Никитина, В. Д. Конобеева, Ал. К. Бурмова, Н.Т. Тодорова. Москва, 1961.

¹¹ Osmanlı belgelerinde Ermeniiler (1915 - 1920). Ankara, 1994; Arşiv Belgelerine Göre Kafkaslarda ve Anadolu'da Ermeni Mezâlimi. I: 1906-1918. Ankara, 1995; T. Z. Tunaya, Türkiye'de Siyasal Partiler. Cilt I: İkinci Meşrutiyet dönemi, 1908 - 1918. Genişletilmiş ikinci baskı. İstanbul, 1988; K. Karabekir, İstiklâl Harbimiz, İstanbul, 1959 – 1960.

Սկզբնաղբյուրների առանձին խումբ են կազմում թուրք պետական ու քաղաքական գործիչների հուշերը, նրանց զրչին պատկանող աշխատությունները, հարցազրույցները: Դրանք նույնպես կարելի է բաժանել երկու խմբի: Եթե թանգիմաթի շրջանի երկրի ղեկավար գործիչները՝ Ռեշիդ փաշան, Ալի փաշան, Ֆուադ փաշան, Ջեդեթ փաշան¹² ինչպես նաև նրանց քաղաքական հակառակորդները՝ «նոր օսմանցիների» ընդդիմադիր շարժման առաջնորդները, համեմատաբար ավելի ազնիվ էին իրենց հայացքների ու մտեցումների արտահայտման մեջ¹³, ապա ավելի ուշ շրջանի ղեկավարները, սկսած նրանց կրտսեր ժամանակակից և «աշակերտ» Միդհատ փաշայից ամեն կերպ ձգտում էին քողարկել իրենց քաղաքականության իրական նպատակները¹⁴: Այդ երկերեսամիության ավանդույթը իր զագաթնակետին հասավ «արյունարբու» սուլթան Աբդուլ Յամիդ երկրորդի և երիտթուրքերի պարագլուխների, ինչպես նաև, քեմալականների թողած հուշագրություններում, քանի որ նրանք լավ հասկանում էին իրենց վարած քաղաքականության, մասնավորապես, իրենց կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրականացրած զանգվածային սպանդի հանցավոր էությունը¹⁵:

¹² Belgelerle Tanzimat: Osmanlı Sadriazamlarından Ali ve Fuad Paşaların Siyasi Vaziyetnameleri, Hazırlıyan: E. D. Akarlı, İstanbul, 1973; Aali Pacha, Testament politique. - La Revue de Paris, 1910, T. 3, No. 7, p. 505-524; No. 9, p. 105-124; B. Lewis, Ali Pasha on Nationalism. - Middle Eastern Studies, 1974, No. 10, p. 77-79. [Un Impartial]. Réponse a Son Altesse Moustapha Fazil Pacha au sujet de Sa lettre au Sultan. Paris, 1867; Cevdet Paşa, Tezakir: 1 - 12. Ankara, 1953.

¹³ Ali Suavi, A propos de l' Herzegovine. Paris, 1875; Ahmed Midhat, Üss-i İnkılap. Kısım-ı 1-2. İstanbul, 1295; Namık Kemal, Vatan yahut Silistre. Külliyyat I, Ankara, 1960.

¹⁴ [Midhat Pacha], Mémorial de Midhat Pacha au Prince Bismark. - Paris, 1877. Midhat Paşa. Hayat-ı Siyasiyesi, Hidematı, Menfa Hayatı. Naşiri: Ali Haydar Midhat. Cilt 2: Tabsıra-ı İbret. - İstanbul, 1325; Midhat Pacha. La Turquie: son passé, son avenir. London, 1878.

¹⁵ [Abdulhamit II]. İkinci Abdulhamidin Hatıra Defteri. İstanbul, 1960; [Halil Mentеше], Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Mentеше'nin anıları. İstanbul, 1986; [Talât Paşa], Talât Paşa'nın Hâtıraları, İstanbul, 1946. İsmet İnönü, Hatıralar: 1. Kitap. Ankara, 1985.

Աշխատությունում քննության առնված խնդիրնրը ավելի հանգամանալի քննության առնելու տեսանկյունից օգտակար են եղել նաև փաստաթղթերի մի շարք այլ ժողովածուներ¹⁶:

Կարևոր նշանակություն ունեն գրքում քննության առնված իրողարձությունների, ականատեսների, ժամանակակիցների, այդ թվում նաև, արտասահմանցիների, հետազոտական, հրապարակախոսական, հուշագրական բնույթի աշխատությունները, որոնք ոչ միայն պարունակում են կարևոր փաստա-վավերագրական նյութեր, այլ նաև հնարավորություն են տալիս ծանոթանալու երկընտրանքային զնահատականների¹⁷:

Ուսումնասիրության համար կարևոր նշանակություն են ունեցել տեսական և համեմատական ցեղասպանագիտության շրջանակներում վերջին տարիներին զրված աշխատությունները, որոնք հիմնականում պատկանում են արևմտյան, գլխավորապես, ամերիկյան մասնագետների գրչին: Այդ աշխատությունների հեղինակների մո-

¹⁶ Schopoff A. Les réformes et la protection des chrétiens en Turquie, 1673-1904. Paris, 1904; Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի եվ նյութերի ժողովածու, Մ.Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991.

¹⁷ Benoit-Brunswik. La vérité sur Midhat Pacha. Paris, 1877; Ed. Engelhardt, La Turquie et le Tanzimat, t. 1 -2, Paris, 1882 -1884; L. Farley, Turks and Christians, London, 1876; Galerie des contemporains illustres. T.VII: Reschid Pacha. Paris, 1850; Léouzon le Duc, Midhat Pacha, Paris, 1877. C. Oscarjan, The Sultan and His People, New-York, 1857; A. Prokesch-Osten, Geschichte des Abfalls der Griechen vom Türkischen Reiche im Jahre 1821 und der Gründung des Hellenischen Reiches. Aus diplomatischem Stand. Band 6, Wien, 1867; S.G.B. St.Clair and Ch. Brophy, A Residence in Bulgaria or, Notes on the Resources and Administration of Turkey, London, 1963. L. Thouvenel, Trois années de la Question d' Orient, 1856-1859, Paris, 1897; A. Vaillant, Solution de la Question d' Orient. Paris, 1853; Valmy, le Duc de, La Turquie et l' Europe en 1867. Paris, 1867. [A. D. Mordtmann], Stambul und das moderne Türkenhum (Politische, sociale und biographische Bilder von einem Osmanen), B. 1-2, Leipzig, 1877; Канитц, Дунайская Болгария и Балканский полуостров, С.-Пб., 1876. П. Кусимовъ, Мехмедъ паша. Първи турски реформаторъ. - Българска сбирка, г. V, кн. IX, с. 799-809; кн. X, с. 886-898. П. П. К., Мидхатъ паша и опитваннето му да потуричи българските училища. - Българска Сбирка, г. V, кн. I, с. 56-63; К. Пангалос, Турция и просвещение, С.-Пб., 1862; Д. Т. Розен, История Турции от реформ в 1826 г. до Парижского трактата в 1856 г. В двух частях, С.-Пб., 1872.

տեցումները որոշ դեպքերում հեղինակի կողմից ենթարկվում են հիմնավորված քննադատության¹⁸: Ցավոք, նմանատիպ հետազոտություններ մեզանում դեռևս անհրաժեշտ խորությամբ չեն տարվում¹⁹: Անտարակույս, օգտակար են եղել Հայոց ցեղասպանությանը նվիրված հայ պատմաբանների բազմաթիվ աշխատությունները:

Քանի որ սույն գրքում փորձ է արվում նորովի մեկնաբանել օսմանյան թուրքիայի պատմության մի շարք հարցեր, հեղինակը բանավեճի է բռնվում արտերկրի, մասնավորապես արևմտյան թուրքագետների մոտեցումների հետ: Քննադատության են ենթարկվում թուրքական պաշտոնական պատմագիտության ներկայացուցիչների աշխատությունները, որոնք կեղծում են Հայոց ցեղասպանության պատմությունը:

¹⁸ Leo Kuper, Genocide: Its Political Use in the Twentieth Century, New Haven and London, 1981; Genocide and Human Rights: A Global Anthology. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982; Irving Louis Horowitz, Taking Lives: Genocide and State Power. New Brunswick-London, 1997; M. N Dobkowski, Genocide and the Modern Age. - Remembering for the Future. Working Papers and Addenda. Vol. II: The Impact of the Holocaust on the Contemporary World.- Oxford: Pergamon Press, 1989, p. 1997-2002; Frédéric Guillaume Dufour, Toward a Socio-historical Theory of Persecution and an Analytical Concept of Genocide. - YCISS Occasional Paper, Nr. 67, October 2001; Cecile Tournaye, Genocidal Intent before the ICTY. - International and Comparative Law Quarterly, April 2003, vol. 52, no. 2, pp. 447 – 462; Staub, Ervin. The Roots Of Evil. (Cambridge University Press), 1989; Franc Chalk and Kurt Jonassohn, The History and Sociology of Genocide: Analyses and Case Studies. New Haven and London, 1990; William Schabas, Genocide in International Law: The Crimes of Crimes, Cambridge: Cambridge University Press, 2000; Kurt Jonassohn, Defining the Perpetrator: Seeking Proof of Intent. - MIGS Occasional Paper, March 1993, p. 1 - 3; Henry R. Huttenbach, From the Editor: Towards a Conceptual Definition of Genocide. - Journal of Genocide Research, 2002, 4(2), p. 167–176.

¹⁹ Կարելի է նշել, թերևս, հետևյալ աշխատությունները. Ն. Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, 2002 և Ա. Աვაգյան, Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений. Ереван, 1999.

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

**1. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՉԵՎԱԿՈՐՈՒՄԸ.
ԲՆՆԱԿԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ցեղասպանությունը մարդկային պատմության ամենադաժան և ամոթալի երևույթներից է, բացարձակ չարի խտացված դրսևորումներից մեկը: Առօրյա կյանքում նրա ամեն մի կոնկրետ դեպքի հիշատակում անխուսափելիորեն առաջացնում է զգացմունքային պոռթկում, ուղեկցվում է բարոյական գնահատականներով: Արդեն իսկ բուն ցեղասպանություն (գենոցիդ) բառը իր մեջ կրում է ուժեղ զգացմունքային լիցք: Թերևս այդ է պատճառը, որ այն վերջին տասնամյակներում իր հաստատուն տեղն է զբաղեցրել հասարակական ու քաղաքական գործիչների բառապաշարում և հաճախակի օգտագործվում է ամհիմն՝ զուտ քաղաքական կամ քարոզչական նպատակներով, որպես ծանր մեղադրանք ընդդիմախոսին:

Ձգացմունքային ու քաղաքական շերտավորումները, ինչպես նաև, իհարկե, բուն երևույթի բարդությունը և բազմակերպար բնութքը զգալի դժվարացնում են նրա գիտա-տեսական հետազոտումը, խոչընդոտում են կոնցեպտուալ արժեք ներկայացնող հարցադրումներին: Փաստորեն, ցեղասպանության՝ որպես կոնկրետ պատմական երևույթի, տեսությունը, որն ընդունելի լիներ մասնագետների մեծ մասի համար, դեռևս չի ձևակերպված: Չկա նաև նրա վերջնական իրավագիտական ձևակերպումը. 1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված "Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին" կոնվենցիայում տեղ գտած ցեղասպանության բնորոշումը ներկայումս հասարակագետների, պատմաբանների ու իրավագետների մեծ մասի կողմից բնութագրվում է որպես անբավարար և աղճատված:

Մինչդեռ, մեր աչքերի առջև աշխարհի տարբեր անկյուններում տեղի ունեցող խաղաղ բնակչության կոտորածների շարանը պարզ-

րոշ ի հայտ է բերում ստվարանալու միտումներ, անշեղորեն աճում է պետությունների կողմից սառնասրտորեն իրականացվող իր իսկ քաղաքացիների որոշակի խմբերի զանգվածային սպանությունների քիվը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված անվտանգության համակարգը անկարող է պաշտպանելու ոչ միայն անհատի իրավունքների, այլև մարդկային հոծ խմբերի կյանքի իրավունքը նույնիսկ: Մոտավոր հաշվարկները վկայում են, որ 1945 -1987 թթ. պետությունների կողմից իրականացված զանգվածային կոտորածների զոհերի քիվը մոտ 1.05-ից մինչև 2.5 անգամ գերազանցում է 1945-1980 թթ. տեղի ունեցած բոլոր պատերազմների զոհերի քիվը²⁰: Դժվար թե, գտնվի որևէ մեկը, որը չհամաձայնվի աներիկացի հասարակագետ ու աստվածաբան Ֆ. Գ. Լիթլի հետ, որը բնութագրում է 20-րդ դարը որպես «Ցեղասպանության դարաշրջան»²¹:

Ցեղասպանության որպես մարդկության անցյալում ու ներկայում տեղ գտած մեծագույն չարիքի հետազոտումը խիստ այժմեական է: Խնդիրը հետևյալն է. փաստարկված ցեղասպանությունների վերլուծության, համեմատական հետազոտությունների և ստացված արդյունքների ընդհանրացման հիման վրա ստեղծել այդ երևույթի համապարփակ և համընդունելի տեսություն: Սակայն ցեղասպանության երևույթի համեմատական եւ ընդհանրացնող բնույթի հետազոտումները զգալիորեն զիջում են իրենց թվաքանակով առանձին դեպքերի ուսումնասիրություններին: Կանադացի ցեղասպանագետներ Ֆ. Չոքը ու Ք. Յոնասոնը գրում էին, որ երբ 1979 թ. նրանք սկսեցին զբաղվել ցեղասպանության համեմատական ուսումնասիրություններով, ապա զարմանքով հայտնաբերեցին, որ այդ ոլորտի աշխարհի մասնագետներին կարելի է հաշվել մեկ ձեռքի մատների վրա²²: Դրանցից էին, անտարակույս, աներիկացի հասարակագետ Ի. Լ. Դորովիցը, որի մենագրությունը ցեղաս-

²⁰ H. Fein, Political functions of genocide comparisons. - Remembering for the future: working papers and agenda. Volume III: the impact of the holocaust and genocide on Jews and Christians. Oxford, 1989, p. 2438.

²¹ F. H. Little, Breaking the succession of evil. - Problems of genocide: proceedings of the international conference on "Problems of Genocide", April 21-23, 1995, Toronto, 1997, p. 29.

²² F. Chalk and K. Jonassohn, The history and sociology of genocide: analyses and case studies. New Haven and London, 1990, p. 8.

պանության իրականացման մեջ պետության որոշիչ դերի մասին արդեն լույս էր տեսել²³, և հայազգի հասարակագետ եւ պատմաբան Վ. Տատրյանը (ԱՄՆ), որը արդեն ձեռնամուխ էր եղել ցեղասպանության երևույթի հիմնարար խնդիրներին նվիրված և արդեն քառորդ դարից ավելի շարունակվող իր ուշագրավ հետազոտություններին²⁴: Տասը տարի անց ամերիկացի գիտնական Ու. Զ. Իզլըը նշում էր, որ անգլերենով գոյություն ունի միայն շուրջ մեկ դյուծին տեսական բնութի աշխատություն ցեղասպանության վերաբերյալ²⁵:

Ցեղասպանագետների ավագ սերնդի հեղինակած աշխատություններից կարելի է նշել Լ. Քուփրդի հիմնարար ուսումնասիրությունը²⁶, ինչպես նաև Դ. Ֆայնի (ԱՄՆ) գիրքը²⁷: Ակսեցին իրատարակվել ցեղասպանության ուսումնասիրմանը նվիրված հոդվածների ժողովածուներ, որոնցից, հարցադրումների նպատակաուղղվածությամբ ու հստակությամբ աչքի էր ընկնում Զ. Ն. Փորթրի խմբագրությամբ ու առաջաբանով լույս տեսած ժողովածուն²⁸: Փորթրը իր խմբագրած ժողովածուն դիտում էր «քայլ դեպի առարկայի (ցեղասպանության - Ռ. Ս.) համապարփակ համեմատական ուսումնասիրություն գլոբալ տեսանկյունից»²⁹: Հաջորդ քայլը այդ ուղղությամբ արդեն հիշատակված Ֆ. Հոքի ու Զ. Յոնասոնի

²³ I. L. Horowitz, *Taking lives: genocide and state power*. New Brunswick-London, 1997.

²⁴ V. N. Dadrian, *Methodological components of the study of genocide as a sociological problem - the Armenian Case*. - *Recent Studies in Modern Armenian History*. Cambridge MA, 1971, p. 83-103; V. N. Dadrian, *A typology of genocide*. - *International review of modern sociology*, 1975, Vol.: 5, No 2, p. 201 - 212.

²⁵ W. K. Ezell, *Investigating genocide: a catalog of known and suspected cases, and some categories for comparing them*. - *Remembering for the future: working papers and agenda*. Volume III: the impact of the holocaust and genocide on Jews and Christians. Oxford, 1989, p. 2881.

²⁶ L. Kuper, *Genocide: its political use in the twentieth century*. New Haven and London, 1981.

²⁷ H. Fein, *Accounting for genocide*. New York, 1979.

²⁸ *Genocide and human rights: a global anthology*. Ed. by J. N. Porter. Lanham-New York-London, 1982.

²⁹ *Genocide and human rights: a global anthology*. Ed. by J. N. Porter. Lanham-New York-London, 1982, p. IV.

լավ կշռադատված գիրքն էր, որտեղ փորձ էր արվում ի մի բերել 1970-80-ականների ուսումնասիրությունների արդյունքները³⁰:

Վերը նշված աշխատությունները հիմք ծառայեցին ցեղասպանագիտության, որպես հասարակագիտության առանձին ոլորտի, զարգացման համար: Ներկայումս ցեղասպանագիտությունը արագ և դինամիկ զարգացող գիտություն է, որի առաջատար ներկայացուցիչների աշխատությունները տեսական հենարան են եղել սույն գլխում քննարկվող խնդիրների մեր մեկնաբանությունների համար:

Ցեղասպանություն (զենցիղ) եզրույթը 1943 թ. ստեղծել ու հաջորդ տարի գիտական շրջանառության մեջ է դրել ծագումով հրեա, լեի իրավագետ Ռաֆայել Լեմկինը: 1944 թ. ԱՄՆ-ում լույս տեսավ նրա «Առանցքի իշխանությունը գրավված Եվրոպայում» գիրքը, որտեղ հեղինակը, հենվելով դեռևս 1933 թ. իր իսկ ձևակերպած պատերազմական պայմաններում իրականացված «բարբարոսական» գործողությունների պատասխանատուներին պատժելու վերաբերյալ դրույթների վրա³¹ և ուսումնասիրելով նացիստական Գերմանիայի քաղաքականությունը գրավված երկրներում, ոչ միայն առաջին անգամ հանրությանը ներկայացրեց այդ բառը, այլ նաև առաջինը բնութագրեց այդ երևույթը³²: Նրա կողմից տրված ցեղասպանության առաջին բնութագրումը հետևյալն էր. «Ցեղասպանության տակ մենք հասկանում ենք ազգի կամ էթնիկական խմբի ոչնչացում (destruction)»³³: Հետագայում լույս տեսած իր աշխատություններում Լեմկինը խորացրեց ցեղասպանության բնութագիրը՝ այդպիսով հիմք դնելով նրա հայեցակարգի ձևավորման գործընթացին³⁴:

³⁰ F. Chalk and K. Jonassohn. *The history and sociology of genocide: analyses and case studies*. New Haven and London, 1990.

³¹ R. Lemkin, *Akte der Barbarei und des Vandalismus als delicta juris gentium*. - *Anwaltsblatt Internationales*, Vienna, Vol. 19, No. 6 (Nov. 1933), S. 117-119.

³² R. Lemkin, *Axis rule in occupied Europe: laws of occupation - analysis of government - proposals for redress*. Washington, D.C.: Carnegie Endowment for International Peace, 1944, p. 79 - 95.

³³ R. Lemkin, *Axis rule in occupied Europe: laws of occupation - analysis of government - proposals for redress*. Washington, D.C.: Carnegie Endowment for International Peace, 1944, p. 79.

³⁴ R. Lemkin, *Genocide - a modern crime*. - *Free World*, Vol. 4 (April, 1945), p. 39 - 43; Raphael Lemkin, *Genocide*. - *American Scholar*, Volume 15, No. 2 (April 1946), p. 227-230; Raphael Lemkin, *Genocide as a crime under*

Նրա ընկալմամբ, բացի ֆիզիկական բնաջնջման քաղաքականությունից ցեղասպանություն անհրաժեշտ է ծանաչել այն հալածանքները տվյալ խմբի հասարակական, հոգևոր կամ տնտեսական հաստատությունների, մշակույթի, լեզվի, ազգային զգացմունքների, կրոնի դեմ, որոնք վտանգում են նրա հետագա գոյությունը որպես առանձին խումբ:

Ցեղասպանության կարևորագույն բնորոշիչներից մեկը դիտավորությունը ոչնչացնելու որևիցե ռասայական, ազգային կամ կրոնական խումբը, նույնպես առաջինը մտցրել է գիտական և իրավագիտական շրջանառության մեջ Ռաֆայել Լեմկինը: Հիմք ընդունելով ցեղասպանություն իրականացնողի դիտավորության (intent) հանգամանքը՝ նա բնութագրել է ցեղասպանությունը որպես որոշակի ազգային, կրոնական կամ ռասայական խմբի դեմ “հալածանքի կամ ոչնչացման նպատակով իրականացվող տարաբնույթ գործողությունների ընդհանրություն (composite)”³⁵: Լեմկինի հաջողվել էր բացահայտել ցեղասպանության կարևորագույն բնորոշիչներից մեկը՝ մտադրվածությունը ոչնչացնելու ողջ ռասայական, ազգային կամ կրոնական խումբը: Դրանով հնարավորություն էր ստեղծվում տարբերազատելու կոտորածը, որի դեպքում նման մտադրվածություն չկա, ցեղասպանությունից, ինչից հետևում է, որ այդ երկու երևույթների միջև, հասարակագիտական կամ իրավագիտական տեսանկյունից (բայց, իհարկե, ոչ բարոյաէթիկական) դատելով, գոյություն ունի որակական տարբերություն, այլ ոչ միայն՝ զուտ քանակական³⁶: Երկրորդ կարևոր հանգամանքն էր, որ մտադրվածության կատեգորիայի կիրառումը հիմք հանդիսացավ ցեղասպանության տարբեր ձևերը իրարից զատման համար, քանի որ բացահայտեց նրանց հենքային նույնականությունը: Այսպես, օրինակ՝ դիտարկենք հետևյալ տեսական դեպքը. առաջանում է

international law. - American Journal of International Law, Vol. 41, No. 1 (1947), p.145-151.

³⁵ Raphael Lemkin on Genocide. - Genocide and human rights: a global anthology. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. 330.

³⁶ L. A. Chorbajian, Massacre or genocide: an essay in personal biography and objective experience. - Genocide and human rights: a global anthology. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. 121.

մտադրվածություն վերացնել որևիցե ազգային կամ համանման մարդկային խումբը, սակայն այն իրականացնելու համար գործադրվում են ոչ թե ֆիզիկական բնաջնջման մեթոդներ, այլ պայմաններ են ստեղծվում նրա բռնի ուժացման համար: Ելնելով Ռ. Լեմկինի բնորոշումից՝ այս դեպքում նույնպես տեղի է ունենում է ցեղասպանություն: Հետագայում այդ տիպի գործողությունները անվանվեցին *թնցիդ*³⁷:

Ռաֆայել Լեմկինի կողմից ցեղասպանության երևույթի բնորոշումը պարունակում էր մի շարք կարևոր բացթողումներ: Դրանցից էր, օրինակ, այն, որ նա շրջանցել էր ցեղասպանության հեղինակների բնութագրման հարցը: Մասնավորապես, նրա ուշադրությունից վրիպել էր պետության կենտրոնական դերը նոր ժամանակներում տեղի ունեցած ցեղասպանություններում, ինչից բխում է պետության դատապարտման անհրաժեշտությունը: Միաժամանակ, որպես իր հետազոտությունների և տեսական ընդհանրացումների հիմք ընդունելով հրեաների բնաջնջումը Եվրոպայում, երբ խոսքը գնում էր իր հայրենիքից հեռու բնակվող ժողովրդի ոչնչացման մասին, Լեմկինը իր բնորոշման մեջ անտեսել էր պետության կողմից կազմակերպված և հիմնականում զանգվածային կոտորածների միջոցով իրականացված տեղաբնիկ ժողովրդի՝ իր պատմական Հայրենիքի տարածքից վերացնելու երևույթը: Ցեղասպանության այդ տեսակը կարելի է բնութագրել որպես հայրենազրկում, այն ավելի է ծանրացնում պետության մեղքը՝ որպես ցեղասպանության կազմակերպիչ:

1945 թ. ցեղասպանություն եզրույթն առաջին անգամ տեղ գտավ պաշտոնական փաստաթղթում՝ գերմանական ռազմական գլխավոր հանցագործներին դատելու նպատակով ստեղծված Նյուրնբերգյան ռազմական ատյանի մեղադրական ակտում: Հետաքրքիր է, որ մեղադրական ակտի ռուսերեն տարբերակում այն փոխարինված էր «ժողովուրդների կանխամտածված ու սխտեմա-

³⁷ F. Chalk and K. Jonassohn. The history and sociology of genocide: analyses and case studies. New Haven and London, 1990, p. 9.

տիկ բնաջնջում» արտահայտությամբ, ինչը, ըստ էության, պարզապես նրա ռուսերեն բացատրությունն էր³⁸:

1946 թ. «զենոցիդ» եզրույթը սկսում է օգտագործվել ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթղթերում և հետզհետե թափանցում է նաև աշխարհի հիմնական լեզուների բառապաշարի մեջ: Այդ գործընթացը ընթանում էր բավական դանդաղ, օրինակ՝ անգլերենի համարածանոթ «Վեբսթըր» բացատրական բառարանի մեջ այն տեղ գտավ միայն 1961 թ.³⁹: Որոշ լեզուներում, օրինակ՝ հայերենում կամ գերմաներենում, որպես հոմանիշներ օգտագործվում են նաև նրա բառացի թարգմանությունները:

Ռ. Լենկինը, իր իսկ վկայությամբ, «զենոցիդ» տերմինը ստեղծել է այն ժամանակ արդեն օգտագործվող «տիրանիցիդ» (բռնակալի սպանություն), «հոմիցիդ» (մարդասպանություն), «ինֆանտիցիդ» (մանուկների սպանություն) բառերի համանմանությամբ⁴⁰: Կարելի է ենթադրել, որ նրան ծանոթ է եղել նաև 19-րդ դարի վերջի - 20-րդ դարի սկզբի գերմանացի ականավոր հոգևորական ու հասարակական գործիչ, գերմանական ծավալապաշտության գաղափարախոսներից Ֆրիդրիխ Նաումանի կողմից դեռևս դարասկզբին 1890-ականների կեսի հայկական կոտորածների կապակցությամբ առաջին անգամ օգտագործած «արմենոցիդ» (հայասպանություն) բառը⁴¹, որը հետագայում որոշակի տարածում գտավ գերմանալեզու և հայալեզու հրատարակություններում: Արմենոցիդ եզրույթն իր մեջ ակնհայտորեն կրում էր հայրենազրկման իմաստը:

Եզրույթի առաջացումը նշանակում էր, որ ավարտվեց դեռևս 19-րդ դարի վերջերից Օսմանյան կայսրությունում հայկական

³⁸ Международный военный трибунал No 1: Обвинительное заключение. - Нюрнбергский процесс: Сборник материалов в 8-ми томах, т. 1, М., 1987, с. 293.

³⁹ J. N. Porter, Introduction: what is genocide? Notes toward a definition. - Genocide and human rights: a global anthology. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. 5.

⁴⁰ Raphael Lemkin on genocide. - Genocide and human rights: a global anthology. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. 317.

⁴¹ V. N. Dadrian, The convergent aspects of the Armenian and Jewish cases of genocide. A reinterpretation of the concept of holocaust. - Holocaust and Genocide Studies: an international journal. 1988, Vol. 3, No. 2, p. 163.

ջարդերի կապակցությամբ եվրոպական ու ռուսական հրապարակախոսության մեջ տեղ գտած «ողջ ազգի սիստեմատիկ ոչնչացման» մասին բարոյաէթիկական գնահատականների կոնցեպտուալ ձևակերպման գործընթացը: Չանդրադառնալով նրա առանձնահատկությունների ու հանգրվանների քննությանը, որը ինքնուրույն գիտական խնդիր է և կարող է առանձին հետազոտության⁴², նշենք միայն, որ այն, բացի նացիստական Գերմանիայի կողմից կազմակերպված հրեաների Չոլոքոսթի, մեծապես դրդվել էր նաև 1915 թ. Հայոց մեծ եղեռնի իրադարձությունների շուրջ խորհրդածություններով: Մասնավորապես, ցեղասպանության որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն միջազգային ոճրագործության և նրա կազմակերպիչների անձնական պատասխանատվության մասի իրավագիտական հասկացության հիմքերը դրվել էին 1915 թ. մայիսին հրապարակված Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի ու Ֆրանսիայի կառավարությունների համատեղ պաշտոնական հայտարարագրում⁴³: Ցավոք, Լենկինը հետագայում անտեսել էր այն փաստը, որ այդ պաշտոնական փաստաթղթում խոսվում էր հայ ժողովրդի կոտորածի մասին, որը տեղի էր ունենում Հայաստանում:

Ցեղասպանության միջազգային-իրավական հայեցակարգի մշակումը դարձավ նորաստեղծ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կարևոր խնդիրներից մեկը: Այդ հարցին ՄԱԿ-ը անդրադարձավ արդեն Գլխավոր ասամբլեայի առաջին նիստում: Նրա ընթացքում ընդունված 96 (I) բանաձևի նախաբանում նշվում էր, որ «ցեղասպանությունը (զենոցիդ) նշանակում է մարդկային խմբերի գոյության իրավունքի մերժում, այնպես, ինչպես որ մարդասպանությունը (հոմիցիդ) նշանակում է առանձին մարդկային եակի կյանքի իրավունքի մերժում»⁴⁴:

⁴² L. Kuper, Genocide: its political use in the twentieth century. New Haven and London, 1981, pp. 19-20.

⁴³ Ю. Г. Барсегов, Геноцид армян – преступление против человечества (о правомерности термина и юридической квалификации), Ереван, 1990, с. 18-28.

⁴⁴ Leo Kuper, Genocide: its political use in the twentieth century, New Haven and London, 1981, p. 23.

Գլխավոր ասամբլեան առաջարկեց ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդին հետազոտություններ ձեռնարկել ցեղասպանության վերաբերյալ հատուկ կոնվենցիայի նախնական տեքստ նախապատրաստելու նպատակով⁴⁵: Ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որը ՄԱԿ-ի քարտուղարության հետ ձեռնամուխ եղավ կոնվենցիայի տեքստի նախապատրաստմանը: Արդեն 1947 թ. մայիսին պատրաստ էր ՄԱԿ-ի Քարտուղարության նախապատրաստած կոնվենցիայի նախագիծը. մեկ տարի անց վերջնական տեքստ ստացավ նաև հատուկ հանձնաժողովի նախագիծը⁴⁶:

Ցեղասպանության իրավագիտական հայեցակարգի ստեղծման գործընթացը հիմնականում ավարտվեց 1948 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ընդունմամբ⁴⁷:

Այստեղ տեղ գտած ցեղասպանության բնորոշումը հիմնականում կրկնում է Ռ. Լեմկինի բնորոշումը մեկ կարևոր տարբերությամբ. ցեղասպանություն են համարվում ոչ միայն որևիցե «ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբ» լրիվ ոչնչացմանը նպատակաուղղված գործողություններ, այլ նաև՝ մասնակի ոչնչացմանը: Այս կատեգորիայի ներգրավումը ցեղասպանության բնորոշման մեջ արդարացված է հումանիստական տեսակետից,

⁴⁵ J. H. Tashjian. Genocide, the United Nations and the Armenians. - Genocide and human rights: a global anthology. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. 134.

⁴⁶ Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide - the Secretariat and Ad Hoc Committee drafts - first draft of the Genocide Convention, prepared by the UN Secretariat, [May] 1947 [UN Doc. E/447] and second draft Genocide Convention prepared by the Ad Hoc Committee of the Economic and Social Council (ECOSOC), meeting between April 5, 1948 and May 10, 1948 [UN Doc. E/AC.25/SR.1 to 28]. - William A. Schabas, Genocide in international law: the crime of crimes, Cambridge, UK, 2000, p. 553-564.

⁴⁷ Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide A/RES/260 A (III), 9 December 1948. - The United Nations: Blue Books series, Volume VII: The United Nations and Human Rights, 1945-1995. With an introduction by Boutros Boutros-Ghali, Secretary General of the United Nations. New York: Department of public information, United Nations, 1995, p. 151-153.

սակայն և հանգեցնում է որոշ գործնական բնույթի դժվարությունների, քանի որ հարց է առաջանում, թե խմբի որ մասի ոչնչացումն է համարվում ցեղասպանություն: Այդ դժվարությունը կարելի է հաղթահարել, ինչպես նշվում էր կոնվենցիայի առաջին մեկնաբանություններից մեկում՝ անդրադառնալով դիտավորության հանգամանքին⁴⁸:

Ցեղասպանության բնորոշումը վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում բազմիցս քննադատվել է հասարակագետների կողմից. համարվում է, որ այն չի արտացոլում պատմական իրականության ողջ բազմազանությունը: Պարբերաբար փորձեր են կատարվում վերանայել այն և առաջարկվում են նոր ձևակերպումներ, որոնք, սակայն, չեն արժանանում հավանության մասնագետների լայն շրջանների կողմից: Այսպես, օրինակ՝ վերջին տարիներին մի շարք ցեղասպանագետների կողմից ջանքեր են գործադրվում «ընդլայնելու» և «պարզեցնելու» ցեղասպանության բնորոշումը: Նմանատիպ մոտեցումների օրինակ կարող է ծառայել Ջեյն Սպրինգերի հետևյալ բնորոշումը. «Ցեղասպանությունը՝ անգն մարդկանցից բաղկացած որոշակի խմբի զանգվածային սպանություն է»⁴⁹: Նման մոտեցումների հետ չի կարելի համաձայնվել, քանի որ այս դեպքում անտեսվում է պետության որոշիչ դերը ցեղասպանության նախապատրաստման ու իրականացման մեջ:

ՄԱԿ-ի կոնվենցիայի ցեղասպանության բնորոշման հիմնական թերությունը իրավագիտական տեսակետից պետության պատասխանատվության հարցի շրջանցումն է: Բովանդակային առումով, մեր կարծիքով, ցեղասպանության բնորոշումը նույնպես լիարժեք չէ, քանի որ հայրենագրկումը չի նշվում որպես այդ հանցագործության առանձին տեսակ, որի իրականացումը հանգեցնում է առավել ծանրագույն հետևանքների:

⁴⁸ In favor of the ratification of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide. Presented to the Subcommittee on the Genocide Convention of the Senate Foreign Relations Committee. - Armenian Affairs: A Journal on Armenian Studies, 1950, Vol. 1, No. 2, p. 221.

⁴⁹ Jane Springer, Genozid: Aus dem Englischen von Birgit Fricke, Hildesheim, 2007, S. 11.

Հաջորդ ենթագլխում առաջարկվող նախացեղասպանության հայեցակարգը արձագանքում է վերը նշված բացթողումներին ժամանակակից ցեղասպանագիտության կողմից առաջարկվող տեսական հարթության վրա:

2. ՆԱԽԱՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Հեղինակի կողմից առաջ քաշվող նախացեղասպանության հայեցակարգի հիմնական դրույթների ձևակերպման տեսակետից կարևորվում է անդրադարձը ցեղասպանության հայեցակարգի երկու կարևոր բաղադրիչների՝ պետության դերի և դիտավորության հանգամանքի ավելի խորացված քննությանը:

Ցեղասպանության տեսական հետազոտությունների կարևորագույն և, թերևս, սակավ ուսումնասիրված ուղղություններից է պետության (state power) դերի իրականացման հետ կապված առանձին խնդիրների ընդհանրության պարզաբանումը:

Մասնագետների մեծ մասը հակված են պետությանը վերագրելու որոշիչ դեր ցեղասպանության նախապատրաստման և իրականացման մեջ: Խոսքը գնում է առաջին հերթին այն ցեղասպանությունների մասին, որոնք կազմակերպվում են պետության կողմից իր իսկ հպատակների դեմ: Անցյալ դարում նման ոճրագործությունների զոհ են գնացել շուրջ 120 միլիոն մարդ⁵⁰: Այդ կարծիքը կիսում են ցեղասպանության երևույթի եւ նրա առանձին կողմերի հետազոտման բնագավառի այնպիսի առաջատար դեմքեր, ինչպիսիք են վերևում արդեն հիշատակված Ֆ. Հ. Լիթլը, Հ. Ֆայնը⁵¹ և Ֆ. Չոքը⁵², Ռ. Հովհաննիսյանը⁵³, Իվ Թերնոնը⁵⁴, Ռ. Ու.

⁵⁰ I. L. Horowitz, Science, modernity and authorized terror: reconsidering the genocidal dtate. - Problems of genocide: proceedings of the international conference on "Problems of Genocide", April 21-23, 1995, Toronto, 1997, p. 135.

⁵¹ H. Fein, Testing Theories Brutally: Armenia (1915), Bosnia (1992) and Rwanda (1994). - Problems of genocide: proceedings of the international conference on "Problems of Genocide", April 21-23, 1995, Toronto, 1997, p. 181-190.

⁵² F. Chalk, Definitions of genocide and their implications for prediction and prevention. - Remembering for the future: working papers and agenda. Volume III: the impact of the holocaust and genocide on Jews and Christians. Oxford, 1989, p. 2377-2389.

⁵³ R. G. Hovannisian, Eighty years: memory against forgetting. - Problems of genocide: proceedings of the international conference on "Problems of Genocide", April 21-23, 1995, Toronto, 1997, p. 13-20.

⁵⁴ I. Ternon, The will to annihilate: for an approach of the concept of genocide. - Remembering for the future: working papers and agenda.

Սմիթը⁵⁵ եւ ուրիշները: Հետազոտվում են նաև ցեղասպանություն գործած պետության պատասխանատվության ենթարկելու ուղիները⁵⁶: Այս բնագավառի ուշագրավ աշխատություններից է Յու. Բարսեգովի հոդվածը⁵⁷:

Սակայն միայն Ի. Լ. Հորովիցն ու Լ. Քուփըրն էին, որոնք քայլեր կատարեցին այդ խնդրին տեսական հիմնավորում տալու ուղղությամբ: Հորովիցը առաջինը գիտական շրջանառության մեջ մտցրեց «ցեղասպան պետություն» (genocidal state) և «ցեղասպան հասարակություն» (genocidal society) հասկացողությունները եւ ձեռնամուխ եղավ դրանց որոշ կողմերի լուսաբանմանը⁵⁸: Իսկ Քուփըրը, հենվելով Հորովիցի ուսումնասիրությունների վրա, հարցին մոտեցավ հակառակ կողմից: Նա ձևակերպեց «ոչ ցեղասպան հասարակության» (non-genocidal society) հասկացողությունը և փորձեց տալ նրա բնորոշումը⁵⁹: Վ. Տատրյանը նույնպես իր ներդրումը բերեց այդ խնդրի ուսումնասիրմանը: Քննության առնելով երիտթուրքական կուսակցության ու օսմանյան պետության փոխհարաբերությունները նա դրա հիման վրա հանգեց որոշ կոնցեպտուալ բնույթի եզրահանգումների կառավարող կուսակցության որոշիչ նշանակության մասին⁶⁰:

Volume II: the impact of the holocaust on the contemporary world. Oxford, 1989, p. 2060-2067.

⁵⁵ R. W. Smith, State power and genocidal intent: on the uses of genocide in the twentieth century. - Problems of genocide: proceedings of the international conference on "Problems of Genocide", April 21-23, 1995, Toronto, 1997, p. 225-236.

⁵⁶ L. R. Beres, International law, selfhood and the prevention of genocide. - Remembering for the future: working papers and agenda. Volume II: the impact of the holocaust on the contemporary world. Oxford, 1989, p. 1236 - 1241.

⁵⁷ Ю. Г. Барсегов, Ответственность государства за геноцид в международном праве и в международной политике. - Геноцид - преступление против человечества (Материалы 1 Московского Международного Симпозиума 18-19 апреля 1995г.). Ом. ред. В. А. Микаелян, М., 1997, с. 90 - 101.

⁵⁸ Տե՛ս նրա արդեն հիշատակված մենագրությունը:

⁵⁹ Leo Kuper, Genocide: its political use in the twentieth century, New Haven and London, 1981, p. 186-208.

⁶⁰ Վ. Տատրեան. Պետութեան մը եւ պետական կուսակցութեան մը միաժող դերը հայկական ցեղասպանութեան մէջ. - Հայկական ցեղասպանութիւնը

Ցեղասպան պետության նշաններից է ցեղասպանության իրականացման պետական ծրագրերի առկայությունը: Իսկ ցեղասպանության ծրագրի կարևորագույն տարրերից գործոնը դիտավորության հանգամանքն է:

Ցեղասպանության կարևորագույն բնորոշիչներից մեկը դիտավորությունը ոչնչացնելու որևիցե ռասայական, ազգային կամ կրոնական խումբը, ինչպես արդեն նշել էինք նույնպես առաջինը մտցրել է գիտական և իրավագիտական շրջանառության մեջ Ռաֆաել Լեմկինը: Այդպիսով՝ նրան հաջողվել էր բացահայտել ցեղասպանության կարևորագույն բնորոշիչներից մեկը՝ մտադրվածությունը ոչնչացնելու ողջ ռասայական, ազգային կամ կրոնական խումբը: Դրանով հնարավորություն էր ստեղծվում տարբերազատելու կոտորածը, որի դեպքում նման մտադրվածություն չկա, ցեղասպանությունից, ինչից հետևում է, որ այդ երկու երևույթների միջեւ, հասարակագիտական կամ իրավագիտական տեսանկյունից (բայց, իհարկե, ոչ բարոյա էթիկական) դատելով, գոյություն ունի որակական տարբերություն, այլ ոչ միայն՝ զուտ քանակական⁶¹:

Իրավագիտական գործառնություններում դիտավորության հանգամանքը ունի որոշիչ նշանակություն: ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղարներից Բութրոս-Ղալիին բնութագրում է այն նույնիսկ որպես ցեղասպանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի «հիմնարար տարր»⁶²: Եթե չի հաջողվում այն բացահայտել և ապացուցել, ապա հնարավորություն է ստեղծվում ընդհանրապես խուսափել ցեղասպանության համար պատասխանատվությունից, ինչպես կոնկրետ օրինակների վերլուծության հիման վրա եզրակացնում է ցեղաս-

խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով. Watertatown, 1995, էջ 107 - 140.

⁶¹ L. A. Chorbajian, Massacre or genocide: an essay in personal biography and objective experience. - Genocide and human rights: a global anthology. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. 121.

⁶² Introduction by Boutros Boutros-Ghali, Secretary General of the United Nations. -The United Nations: Blue Books series, Volume VII: The United Nations and human rights, 1945-1995. With an introduction by Boutros Boutros-Ghali, Secretary General of the United Nations. New York: Department of public information, United Nations, 1995, p. 21.

պանագիտական հետազոտությունների առաջնեկ Լեո Քուփերը⁶³: Այսպես, օրինակ՝ բրազիլական կառավարությունը ժամանակին խուսափեց տեղաբնիկ առանձին ցեղերի դեմ ցեղասպանության մեջ մեղադրվելուց, քանի որ նրան հաջողվեց ցույց տալ, որ բնակչության այդ խմբերի անհայտացումը արդյունք էր սովի, որը չէր ծրագրվել կառավարության կողմից⁶⁴:

Այս տեսակետի կողմնակից որոշ իրավագետներ խստագույնս քննադատում են ՄԱԿ-ի բանաձևը, գտնելով՝ որ դիտավորության հանգամանքի առկայությունը զգալիորեն սահմանափակում է նրա իրական կիրառելիության շրջանակները, քանի որ չափազանց դժվար է հաստատել և վավերագրել այսպիսի դիտավորության գոյությունը, մանավանդ այն դեպքերում, երբ ցեղասպանության հեղինակը պետությունն է: ՄԱԿ-ի փաստաթղթերից մեկում նույնիսկ նշվում էր, որ արդեն ձևավորվել են երկու իրավագիտական դպրոց այս խնդրում. առաջինը գտնում է, որ դիտավորության բացահայտումն ու ապացուցումը բացարձակ անհրաժեշտություն է, իսկ երկրորդի կողմնակիցները ընդգծում են, որ դիտավորության հանգամանքը ցեղասպանության դեպքում հատուկ ապացուցելու անհրաժեշտություն չկա, քանի որ այն օբյեկտիվորեն բխում է բուն ցեղասպանական գործողություններից⁶⁵: Վերջին տարիներին միջազգային իրավագետների շրջանում տարածում է ստացել այն տեսակետը, թե դիտավորության հանգամանքի բովանդակային նշանակության բացահայտումը և ամրագրումը այն իրավագիտական խնդիրներից է, որոնք կարող են հետագա ավելի խորացված հետազոտությունների⁶⁶:

Իրավագետների շրջանում գոյություն ունեցող մոտեցումների տարբերությունները և բանավեճերը չնայած և տեղ գտան ՄԱԿ-ի

այնպիսի մասնագիտացված առյանների քննարկումներում, ինչպիսիք են Մարդու իրավունքների և Միջազգային իրավունքի հանձնաժողովները, սակայն այդպես էլ չստացան իրավագիտական ձևակերպում: ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիան մնում է անփոփոխ: Այս փաստը մեկ անգամ ևս հաստատվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից 1994 թ. նոյեմբերին ընդունված բանաձևով, որը պարունակում էր որոշում ստեղծել Ռուանդայում և հարևան երկրներում ցեղասպանության և միջազգային մարդասիրական օրենքների այլ բնույթի լուրջ խախտումների համար պատասխանատու անհատների պատիժը իրականացնող միջազգային դատարան: Այս փաստաթուղթը նույնությամբ կրկնում է 1948 թ. կոնվենցիայում տեղ գտած ցեղասպանության բնորոշումը⁶⁷:

Ինչպես ցույց է տալիս անդրադարձը իրավագիտական իրականությանը, ազգային իրավագիտական դպրոցները նախընտրությունը նույնպես տալիս են առաջին մոտեցմանը՝ միաժամանակ փորձելով դիտավորության հանգամանքին տալ ավելի ճշգրտված բնորոշում: Այսպես, օրինակ՝ երկարատև բանավեճերից հետո 1988 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսը, որոշում ընդունելով երկրում կիրառության մեջ մտցնել 1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան, այդ փաստաթղթում օգտագործվող ցեղասպանության բնորոշման մեջ տեղ գտած «դիտավորությամբ» եզրույթը փոխարինեց «որոշակի դիտավորությամբ» բառակապակցությամբ⁶⁸:

Ֆրանսիական քրեական նոր օրենսդրությունը գնում է ավելի հեռուն և սկզբունքային բնույթի նորանվանություն է կատարում:

⁶³ L. Kuper, *Genocide: its political use in the twentieth century*. New Haven and London, 1981, p. 33-35.

⁶⁴ F. G. Dufour, *Toward a socio-historical theory of persecution and an analytical concept of genocide*. - YCISS Occasional Paper, Nr. 67, October 2001, p 13.

⁶⁵ Ю. Г. Барсегов, *Геноцид армян - преступление по международному праву*. М., 2000, с. 93-121:

⁶⁶ C. Tournaye, *Genocidal intent before the ICTY*. - *International and Comparative Law Quarterly*, April 2003, vol. 52, No. 2, p. 447-462.

⁶⁷ Security Council resolution containing the decision to establish an international tribunal for the prosecution of persons responsible for genocide and other serious violations of international humanitarian law committed in Rwanda or in the territory of neighbouring States S/RES/955 (1994), 8 November 1994. - In: *The United Nations: Blue Books Series, Volume VII: The United Nations and Human Rights, 1945-1995*. With an introduction by Boutros Boutros-Ghali, Secretary General of the United Nations. New York: Department of Public Information, United Nations, 1995, p.490.

⁶⁸ F. Chalk and K. Jonassohn, *The history and sociology of genocide: analyses and case studies*. New Haven and London, 1990, p. 51.

Այստեղ «դիտավորություն» տերմինը փոխարինված է «համակարգված ծրագրի իրագործում» արտահայտությամբ⁶⁹: Իրավագիտական առումով այդ արտահայտությունը կոնկրետացնում է դիտավորության հանգամանքը: Սակայն եթե վերլուծենք այդ փաստաթուղթը պատմական քաղաքագիտության տեսանկյունից, ապա կարելի է եզրակացնել որ այսպիսով, ըստ էության, հստակեցվում է դիտավորության հանգամանքի բյուրեղացման գործընթացի պարագան, քանի որ «համակարգված ծրագիրը» հանդես է գալիս որպես այդ գործընթացի վերջնական հանգրվան:

Այլ պատկեր է ցեղասպանության՝ որպես հասարակագիտական երևույթի ուսումնասիրման բնագավառում: Անցած տասնամյակների ընթացքում ցեղասպանության հայեցակարգը բազմիցս վերանայվել ու լրացվել է մասնագետների կողմից, սակայն, ինչպես իրավագիտորեն նշում է ճանաչված կանադացի ցեղասպանագետ Քուրթ Յոնասոնը, դիտավորության հանգամանքը պահպանել է իր կենտրոնական նշանակությունը որպես ցեղասպանության «հիմնական չափորոշիչ»⁷⁰: Այսպես, օրինակ՝ ցեղասպանության հասարակագիտական բնորոշման մեջ, որը տրվել է Ֆրենք Չոքի և Քուրթ Յոնասոնի կողմից 1990 թ. և հետագայում լայն տարածում է ստացել, մտադրվածությունը պահպանում է իր կենտրոնական նշանակությունը. «Ցեղասպանությունը միակողմանի զանգվածային սպանության ձև է, որով պետությունը կամ այլ իշխանություն մտադրվում է (intends) ոչնչացնել որևիցե խումբ...»⁷¹:

Կարևոր եզրակացությունների է հանգում Ցեղասպանության ուսումնասիրության նյութորջյան ինստիտուտի տնօրեն Ջեյլեն Ֆայնը: Ցեղասպանության իր վաղ բնորոշումներից մեկում նա էլ ավելի էր պարզեցրել դիտավորության հանգամանքի բնութագրումը՝ առաջարկելով այն պարզապես փոխարինել «հաշվարկ-

ված» բառով⁷²: Հետագայում նա սկսեց այդ նույն իմաստով օգտագործել «նպատակաուղղված» բառը⁷³: Վերջերս նա հետագա ճշգրտումներ մտցրեց դիտավորության իր բնութագրման մեջ, առաջարկելով ցեղասպանության կարևոր բնորոշիչներից համարել այն հանգամանքը, երբ որևիցե մարդկային խմբի զանգվածային ոչնչացման քաղաքականություն՝ «սպանության դիտավորությամբ», ի հայտ է բերում վկայություններ առ այն, թե իշխանությունները «ծրագրել են, կազմակերպել են կամ էլ գիտակցում են» իրենց ցեղասպանական գործողությունները⁷⁴: Փաստորեն, այս բնութագրման մեջ տեղ են գտել դիտավորության հանգամանքի երեք դրսևորումներ, որոնք հաճախակի, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, ժամանակային առումով հանդես են գալիս միմյանցից անջատ:

Վերը իրշատակված հեղինակի դիտավորության հանգամանքի վերածնակերպումների բարեշրջության ուղղվածությունը բնութագրական է ժամանակակից ցեղասպանագիտության համար և վկայում է, որ հետազոտությունները այդ բնագավառում ընթանում են դիտավորության հանգամանքի կոնկրետացման ուղղությամբ՝ և՛ իմաստային, և՛ ժամանակային տեսանկյուններից:

Մասնավորապես, ինչպես ընդհանրացնում է իր վերջերս հրատարակած հետաքրքիր դիտարկումներում Հենրի Հաթենբախը, այս ոլորտում հետագա ուսումնասիրությունները տանում են դեպի դիտավորության տարբեր աստիճանների բացահայտում⁷⁵: Այսպես, օրինակ՝ Վահագն Տատրյանը դեռևս անցյալ դարի 90-ականներին

⁷² H. Fein, Testing theories brutally: Armenia (1915), Bosnia (1992) and Rwanda (1994). – Problems of genocide: proceedings of the international conference on “Problems of Genocide”, April 21-23, 1995, Toronto, 1997, p. 182.

⁷³ H. Fein, Testing theories brutally: Armenia (1915), Bosnia (1992) and Rwanda (1994). – Problems of genocide: proceedings of the international conference on “Problems of Genocide”, April 21-23, 1995, Toronto, 1997, p. 181.

⁷⁴ H. Fein, Denying genocide: from Armenia to Bosnia: a lecture delivered at the London School of Economics and Political Science on 22 January 2001. – London School of Economics and Political Science: Occasional Papers in Comparative and International Politics 1. London: Department of Government, [2001], p. 4-5.

⁷⁵ H. R. Huttenbach, From the editor: towards a conceptual definition of genocide. – Journal of Genocide Research, 2002, 4(2), p. 167–176.

⁶⁹ U. Makino, Final solutions, crimes against mankind: on the genesis and criticism of the concept of genocide. – Journal of Genocide Research, 2001, 3(1), p. 67.

⁷⁰ K. Jonassohn, Defining the perpetrator: seeking proof of intent. – MIGS Occasional Paper, March 1993, p. 1.

⁷¹ F. Chalk and K. Jonassohn, The history and sociology of genocide: analyses and case studies, New Haven and London, 1990, p. 23.

առաջարկեց «ցեղասպանության պարադիգմայի» հայեցակարգը, որտեղ տարբերազատում է դիտավորության երկու փուլեր՝ «նախնական» և «վերջնական»⁷⁶:

Դիտավորության հանգամանքի կիրառումը պատմագիտական հետազոտություններում հնարավորություն է ստեղծվում տարբերազատելու *կոտորածը* ցեղասպանությունից, ինչից հետևում է, որ այդ երկու երևույթների միջև, հասարակագիտական կամ իրավագիտական տեսանկյունից (բայց, իհարկե, ոչ բարոյական) դատելով, գոյություն ունի որակական տարբերություն:

Համաձայն ցեղասպանագիտության մեջ տարածում ստացած տեսակետի, կոտորածի պարագայում դիտավորության հանգամանքը բացակայում է⁷⁷: ժամանակին Լևոն Չորբաջյանը իրավացիորեն նշել էր, որ կոտորածը արտահայտվում է «վայրի սպանությունների» տեսքով՝ ի տարբերություն ցեղասպանությանը, որի դեպքում առկա է «ծրագրված» լինելու հանգամանքը⁷⁸:

Ինչպես հաճախ է պատահում իրական կյանքում, ծրագրերը մնում են մասնակի կամ նույնիսկ լիովին չիրականացված: Սակայն արդեն միայն ծրագրի գոյության փաստի առկայությունը վկայում է, որ տվյալ պետականությունը մտել է մի նոր փուլ, որը մենք առաջարկում ենք անվանել նախացեղասպանական:

Նախացեղասպանություն եզրույթն արդեն մեկ տասնամյակից ավելի է, ինչ օգտագործվում է ինչպես մասնագիտական, այնպես էլ հրապարակախոսական բնույթի գրականության մեջ: Առաջիններից Վահագն Տատրյանն էր, որը սկսեց օգտագործել այն՝ Աբդուլ Համիդի կողմից հարյուր հազարավոր հայերի սպանող բնութագրելու

նպատակով:⁷⁹ Սակայն նա խուսափեց հիմնավորել այդ եզրույթի օգտագործման անհրաժեշտությունը կամ էլ տալ նրա բացատրությունը:

Ճանաչված ցեղասպանագետի մման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նա, հենվելով հրեաների Յուդեոսթի և հայերի մեծ եղեռնի համեմատական հետազոտման վրա, ժամանակին իր տեսական բնույթի աշխատություններից մեկում հանգել էր սխալ եզրակացության, թե երկու դեպքում էլ «գլխավոր հանցագործը ոչ թե պետությունն էր, այլ քաղաքական կուռ կուսակցությունը»⁸⁰: Այստեղից բխում էր «տրամաբանական» եզրակացություն. քանի որ Աբդուլ Համիդի ժամանակներում Օսմանյան կայսրությունում բացակայում էր մման կուսակցություն, ապա նրա քաղաքականությունը հայերի նկատմամբ չի կարելի բնութագրել որպես ցեղասպանություն:

Այլ է թուրք հասարակագետ Հալիլ Բերքբայի մոտեցումը: Նրա կարծիքով՝ քանի որ ցեղասպանություն եզրույթը ստեղծվել է բնութագրելու համար հրեաների Յուդեոսթը, ապա Հայոց ցեղասպանությունը կարող է բնութագրվել միայն որպես նախացեղասպանություն⁸¹:

Այս մոտեցումը, փաստորեն, կրկնում է մի շարք հայտնի ցեղասպանագետների պնդումներն այն մասին, որ միայն հրեաների Յուդեոսթը կարող է անվանվել ցեղասպանություն, իսկ հայերի ցեղասպանությունը, լավագույն դեպքում, նրան «հարող» երևույթ է⁸²:

Ժամանակին հեղինակը անդրադարձել է մմանատիպ մոտեցումներին և ցույց տվել, որ դրանք հիմնվում են մեթոդապես սխալ

⁷⁶ V. N. Dadrian, Towards a theory of genocide: incorporating the instance of holocaust: comments, criticisms and suggestions. – Holocaust and Genocide Studies, 1990, Vol. 5, No. 2, p. 143.

⁷⁷ C. P. Scherrer, Towards a theory of modern genocide. Comparative genocide research: definitions, criteria, typologies, cases, key elements, patterns and voids. – Journal of Genocide Research, 1999, 1(1), p. 15.

⁷⁸ L. A. Chorbajian, Massacre or genocide: an essay in personal biography and objective experience. – Genocide and human rights: a global anthology. Edited by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. 121.

⁷⁹ V. N. Dadrian, The history of the Armenian genocide: ethnic conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Providence – Oxford, 1995, pp. 111 – 176.

⁸⁰ V. N. Dadrian, Towards a theory of genocide: incorporating the Instance of holocaust: comments, criticism and suggestions. – Holocaust and Genocide Studies, 1988, Vol. 5, No. 2, p. 139.

⁸¹ Kh. Mouradian, The Specter of the Armenian genocide: an interview with Halil Bertay. – Aztag daily, November 12, 2005.

⁸² Y. Bauer, Is the holocaust exlicable? – Remembering for the future: working papers and agenda. Volume II: the impact of the holocaust on the contemporary world. Oxford, 1989. p. 1970.

դրույթի վրա, համաձայն, որի գոյություն ունի միայն մեկ, «իդեալական» ցեղասպանության դեպք՝ հրեաների Յոլոթոսթը, որը մնացած բոլոր ցեղասպանության դեպքերի համար ծառայում է որպես «արխետիպ»:

Հրապարակախոսական գրականության մեջ «նախացեղասպանություն» բառը բավական հաճախ է օգտագործվում և սովորաբար նշանակում է ցեղասպանությանը ժամանակագրական առումով նախորդող և զոհերի ավելի փոքր քանակով բնորոշվող ցեղասպանական բնույթի երևույթ⁸³:

Հեղինակի կողմից առաջարկվող նախացեղասպանության հայեցակարգի հիմնաքարերը երկուսն են. ցեղասպանություն իրագործելու դիտավորության (intent, intention) առկայությունը և այն իրագործելու նպատակով գործողությունների բացակայությունը: Առաջին դեպքում հնարավոր է լինում տարբերազատել նախացեղասպանությունը զանգվածային կոտորածից, որի պարագայում դիտավորության հանգամանքը առկա չէ⁸⁴: Համապատասխան գործողությունների բացակայությունը հնարավորություն է տալիս տարբերազատելու նախացեղասպանությունը ցեղասպանությունից, քանի որ, համաձայն «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի՝ ցեղասպանության կարևորագույն տարրերից է գործողությունը, որի նպատակն է իրականացնել արդեն ի հայտ եկած դիտավորությունը⁸⁵:

Վերջին տարիներին իրավագետների և ցեղասպանագետների շրջանում լայնորեն քննարկվում են դիտավորության հանգամանքի գոյության փաստման ձևերը: Փորձեր են արվում դիտավորության

⁸³ K. Drum, Mass Graves...Does this matter? – Washington Monthly, July 19, 2004; David Pryce-Jones, Curse of the militias: what Balkanization has done to Iraq, Lebanon, and others. - National Review, March 27, 2006.

⁸⁴ Ch. P. Scherrer, Towards a theory of modern genocide comparative genocide research: definitions, criteria, typologies, cases, key elements, patterns and voids. - Journal of Genocide Research, 1999, 1(1), p. 15.

⁸⁵ Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide A/RES/260 A (III), 9 December 1948. – In: The United Nations: Blue Books series, Volume VII: The United Nations and human rights, 1945-1995. With an introduction by Boutros Boutros-Ghali, Secretary General of the United Nations. New York: Department of Public Information, United Nations, 1995, p. 151-153.

հանգամանքին տալ ավելի ճշգրտված բնորոշում: Այսպես օրինակ՝ երկարատև բանավեժերից հետո, 1988 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսը, որոշում ընդունելով երկրում կիրառության մեջ մտցնել 1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան, այդ փաստաթղթում օգտագործվող ցեղասպանության բնորոշման մեջ տեղ գտած «դիտավորությամբ» եզրույթը փոխարինեց «որոշակի դիտավորությամբ» բառակապակցությամբ⁸⁶:

Ֆրանսիական քրեական նոր օրենսդրությունը գնում է ավելի հեռուն և սկզբունքային բնույթի նորամուծություն է կատարում: Այստեղ «դիտավորություն» տերմինը փոխարինված է «համակարգված ծրագրի իրագործում» արտահայտությամբ⁸⁷: Իրավագիտական առումով այդ արտահայտությունը կոնկրետացնում է դիտավորության հանգամանքը: Սակայն, եթե վերլուծենք այդ փաստաթուղթը պատմական քաղաքականության տեսանկյունից, ապա կարելի է եզրակացնել, որ այսպիսով, ըստ էության, հստակեցվում է դիտավորության հանգամանքի բյուրեղացման գործընթացի պարագան, քանի որ «համակարգված ծրագիրը» հանդես է գալիս որպես այդ գործընթացի վերջնական հանգրվան:

Դիտավորության հանգամանքի վերածակերպումների էվոլյուցիայի ուղղվածությունը բնութագրական է ժամանակակից ցեղասպանագիտության համար և վկայում է, որ հետազոտություններն այդ բնագավառում ընթանում են դիտավորության հանգամանքի կոնկրետացման ուղղությամբ և իմաստային, և ժամանակային տեսանկյուններից:

Մասնավորապես, ինչպես ընդհանրացնում է վերջերս իրատարակած հետաքրքիր դիտարկումներում Հենրի Հաթենբախը, այս ոլորտում հետագա ուսումնասիրությունները տանում են դեպի դի-

⁸⁶ F. Chalk and K. Jonassohn, The history and sociology of genocide: analyses and case studies. New Haven and London, 1990, p. 51.

⁸⁷ U. Makino, Final solutions, crimes against mankind: on the genesis and criticism of the concept of genocide. - Journal of Genocide Research, 2001, 3(1), p. 67.

տավորության տարբեր աստիճանների բացահայտում⁸⁸։ Այսպես օրինակ Վահագն Տատոյանը դեռևս անցյալ դարի 90-ականներին առաջարկեց «ցեղասպանության պարադիգմայի» հայեցակարգը, որտեղ տարբերազատում է դիտավորության երկու փուլեր՝ «նախնական» և «վերջնական»⁸⁹։

Ցեղասպանագետների այս պարզաբանումները օգտակար են նախացեղասպանության հայեցակարգն ավելի խորացնելու տեսակետից։ Մասնավորապես, հենվելով դրանց վրա, հեղինակը ձևակերպում է հետևյալ տեսական դրույթները.

- դիտավորության հանգամանքի արտահայտման միջոցը ցեղասպանության ծրագիրն է,
- ցեղասպանության ծրագիրը կարող է գոյություն ունենալ վավերագրի տեսքով կամ էլ արտահայտվել ցեղասպանական գործողությունների ընդհանրությունում՝ հաղորդելով դրանց համակարգված բնույթ,
- ցեղասպանության ծրագիրն ունենում է մշակվածության տարբեր մակարդակներ, որոնք տարբերվում են միմյանցից հիմնականում նրանով, թե որքանով են արդեն նախատեսված զանգվածային կոտորածների իրականացման միջոցները։

Հենվելով այդ բնորոշումների վրա կարելի է բնութագրել «նախացեղասպանական իրավիճակ» երևույթը։ Այդպես կարելի է անվանել երկրում ստեղծված այնպիսի իրավիճակը, երբ արդեն գոյություն ունի ցեղասպանական բնույթի նախնական ծրագիր, սակայն այն դեռևս չի ստացել վերջնական տեսք, և չեն ընտրվել նրա իրականացման միջոցները։ Նախացեղասպանական իրավիճակի կարևոր առանձնահատկություններից է այն, որ նա իր մեջ պարունակելով հնարավորություն վերաճելու լայնածավալ ցեղասպանական իրադրության, որտեղ ցեղասպանությունը գոյություն ունի որպես իրականության բաղկացուցիչ մաս, ոչ միշտ է զարգանում այդ ուղղությամբ։ Այլ բառերով ասած՝ նախացեղասպանական իրավի-

ճակի պայմաններում ցեղասպանությունը հանդես է գալիս որպես քաղաքական խնդիրներ լուծելու հնարավորություններից մեկը, այլ ոչ թե միակը։

Այդ տեսական թեզը պատմական փաստերով հիմնավորելու նպատակով քննության են առնվում Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի արևմտամետ բարենորոգումների դարաշրջանում տեղ գտած զարգացումները։ Ցույց է տրվում, որ 1876 թ. մայիս - դեկտեմբեր ամիսներին, երբ արդեն ճնշված էր բուլղարների հզոր զինված ապստամբությունը, նրանք հանգեցրին նախացեղասպանական իրավիճակի առաջացմանը։ Այն, սակայն, չվերաճեց ցեղասպանության, քանի որ իշխող խմբավորումը նախընտրեց քրիստոնյաների ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարելու խնդրի լուծման այլ ուղի՝ սահմանդրական վերափոխումների ուղին։ Օսմանյան կայսրության օրինակը ցույց է տալիս նաև, որ նախացեղասպանությունը նախորդում է իր բնույթով հայրենազրկող ցեղասպանությանը։

⁸⁸ H. R. Huttenbach, From the editor: towards a conceptual definition of genocide - Journal of Genocide Research, 2002, 4(2), p. 167-176.

⁸⁹ V. N. Dadrian, Towards a theory of genocide: incorporating the instance of holocaust: comments, criticisms and suggestions. - Holocaust and Genocide Studies, 1990, Vol. 5, No. 2, p. 143.

**ԱՐԵՎՍՏԱՄԵՏ ԲԱՐԵՆՈՐՈՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ**

1. ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

18-րդ դարի վերջերից Օսմանյան կայսրության պատմության մեջ սկսվեց նոր շրջան, որի էությունն էր հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի անշեղ աճը և աստիճանաբար նրանց ազատագրումը թուրքական լծից: Օսմանյան պետության ղեկավարների համար առաջնային նշանակություն ձեռք բերեց երկրի տարածքային ամբողջականության պահպանումը, ինչը նրանցից պահանջեց նոր միջոցների որոնում քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումները չեզոքացնելու համար:

Կայսրության ռազմաքաղաքական հզորության շրջանում հիմնական միջոցը բռնի ռազմական ուժն էր: Դա բխում էր օսմանական ռազմա - ֆեոդալական բռնապետության պետական կարգի էությունից: Ինչպես ասում էին այն ժամանակվա թուրք գործիչները. «Պետությունը դաշույնով է ձեռք բերվել և միայն դաշույնով կարող է պահպանվել»⁹⁰:

Ռազմա-ավատական համակարգի քայքայումը օսմանական բանակի հզորության անկման պատճառ հանդիսացավ, որը սկսեց պարտություն կրել ոչ միայն եվրոպական տերության բանակների հետ ընդհարումների ժամանակ, այլև անկարող դարձավ երկրի ներսում արագ և խելամտորեն ճնշել զինված ապստամբությունները:

Այս պայմաններում 18-րդ դարի վերջերից սկսած օսմանյան բյուրոկրատական վերնախավի առանձին ներկայացուցիչներ սկսեցին զիտակցել անհրաժեշտությունը կանխելու քրիստոնյաների ապստամբությունները, այլ ոչ թե հույսը դնել նրանց ուժով ճնշելու վրա:

Այդ գաղափարը առաջին անգամ արտահայտված էր Ռումելիի Կադիասկեր Թաթարջըբ Աբդուլա էֆենդիի լյախայում

(զեկուցագրում), որը 1791 թ. նա ներկայացրել Սելիմ Երրորդ սուլթանին ի պատասխան նրա հրամանին՝ կազմել բարեփոխումների ծրագիր: Թաթարջըբ Աբդուլա էֆենդին գրում էր, թե շատ տարիներ առաջ, երբ ոչ մուսուլմաններից ջիզյեն գանձվում էր շարիաթի համաձայն, նրանք ապրում էին լիության մեջ, չզգալով որևէ բանի կարիք, և նույնիսկ իրենց դավանակիցները ուրիշ երկրներից նախանձում էին նրանց: Բայց այնուհետև սկսվեց ռայայի կեղեքումը, հարկային բեռի ուժեղացումը: Դա դժգոհություն առաջացրեց և 1770 թ. ապստամբության հիմնական պատճառ հանդիսացավ: Հեղինակը նշում էր, որ ռայայի դժգոհությամբ օգտվում են «մուսկովիտները»՝ դրդելով նրան իշխանության դեմ: Հեղինակը առաջարկում էր խստորեն պահպանել հարկադրման մասին շարիաթի բոլոր օրենքները և, այդպիսով, վերականգնել ռայայի վստահությունը օսմանյան պետության նկատմամբ⁹¹:

Այս գաղափարը իր վավերագրական ձևակերպումը ստացավ «Դաշնակցային պակտի» տեքստի մեջ, որն ընդունվել էր 1808 թ., այն ժամանակաշրջանում, երբ իշխանության գլխին գտնվում էր «ռուսչուկյան ընկերների» քաղաքական խմբավորումը՝ մեծ վեզիր Մուսթաֆա փաշա Բայրաքտարի գլխավորությամբ: Նրա 7-րդ կետում հատուկ նշված էր «ռայայի և աղքատների» չափավոր հարկադրման անհրաժեշտությունը⁹²:

Այն ժամանակ, երբ իշխանությունը գտնվում էր Մուսթաֆա փաշայի ձեռքում, ընդունվեց հրամանագիր, որն արժանի էր հատուկ ուշադրության: Պետերբուրգում լույս տեսնող «Վեստնիկ Եվրոպի» պարբերականը հայտնում էր, որ «Մուսթաֆա Բայրաքտարը հրաման արձակեց, որ մահմեդականները այլևս չօգտագործեն «գյավուր» (անհավատ) բառը, որովհետև յուրաքանչյուր քրիստոնյա, ինչ դավանանքի էլ պատկանար, հավատում էր միևնույն աստծուն, որին հավատում են մահմեդականները»⁹³:

Ձևականորեն այդ հրամանը չէր հակասում Ղուրանին: Սակայն 19-րդ դարի սկզբում նրա հրատարակումը օսմանյան Թուրքիա-

⁹⁰ А. Ф. Муллер, Мустафа паша Баурактар. М -А., 1947, с. 31.

⁹¹ R. Kaynar, Mustafa Reşit Paşa ve Tanzimat. Ankara, 1954, s. 172.

⁹² [Cevdet], Tarih-i Cevdet, C. 9, Dersaadet, 1309, s. 281.

⁹³ Вестник Европы, 1809, часть XVIII, N 1, с. 78-79.

յում, որտեղ գերիշխում էին մահմեդական մուսուլմանության և մահմեդականների գերազանցության գաղափարները, անկասկած ուշագրավ երևույթ էր: Սակայն այդ օրերնքը որևէ գործնական նշանակություն չունեցավ, և «գյավուր» բառի օգտագործումը շարունակվեց մինչև կայսրության կործանումը:

19-րդ դ. 20-ական թթ. սկսած, բալկանյան ժողովուրդների ազգային - ազատագրական շարժման վերելքի պայմաններում, որոշ օսմանյան պետական գործիչներ սկսեցին պնդել, որ ապստամբությունների կանխման նպատակով անհրաժեշտ է զնալ նվազագույն զիջումների: Արդեն 1827 թ. Բարձր դռան կողմից Ռումելիայի տեղական իշխանություններին ուղարկված հատուկ հրովարտական նշվում է քրիստոնյաների և նրանց ունեցվածքի ապահովության անհրաժեշտությունը⁹⁴:

Այդ գաղափարը իր հետագա զարգացումը ստացավ 1828 թ. կազմած զեկուցագրում, որի հեղինակներն էին հայտնի դիվանային բանաստեղծ և պետական գործիչ Քեչիջի-զադե Իզեթ Մուլլան և դեֆթերդարիի (ֆինանսների գերատեսչության) պաշտոնյա Բեջիս ֆենդին: Այստեղ գրված էր, որ անհրաժեշտ է ըմբոստացած քրիստոնյաներին զիջումներ անել⁹⁵: Դրա հետ մեկտեղ նրանք հենու են «ըմբոստացած գյավուրների» դրությունը բարելավելու ցանկությունից: Նրանց նպատակն էր օսմանցիների տիրապետության պահպանումը «անհավատների» նկատմամբ, որին հասնելու համար նրանք պատրաստ են զիջումներ անել և, այդպիսով, ժամանակ չահել: Օրինակ՝ նրանք առաջարկում են համաձայնվել ապստամբների հետ և մեկ տարվա ընթացքում ջիզիյեի հարկ չգանձել: Այդ միջոցը թույլ կտար թուլացնել ապստամբության կրակը, ինչից հետո կարելի էր այդ նույն հարկը գանձել ավելի մեծ չափով, քան առաջ:

Այդ առաջարկները չընդունվեցին և նրանց հեղինակներին սուլթան Մահմուդ Երկրորդը հրամայեց զրկել պաշտոններից և աքսորել:

⁹⁴ М. И. Тодорова, Англия, Россия и манзимат (вторая четверть XIX в.), М., 1983, с. 25.

⁹⁵ İ. Sungu, Mahnud II.nin İzzet Molla ve asakir-i mansure hakkında bir hattı. - Tarih Vesikalari, 1941-1942, 1. Cilt, III, s. 173.

Սակայն արդեն մեկ տարի անց (1829 թ.) Մահմուդ Երկրորդը, ձգտելով ինչ գնով էլ որ լինի պահել Դունաստանը Օսմանյան կայսրության կազմում, մահմեդական ղեկավարի տեսակետից ստիպված էր զգալի զիջումներ անել: 1245 թ. մուհարեմի վերջի (1829 թ. հուլիս) հրովարտական, դիմելիս Մորեայի հույներին, նա խոստացավ. «Այսուհետև ոչ մի տարբերություն չի դրվելու մահմեդականների և ռայայի միջև, և բոլորի ունեցվածքը, կյանքը և պատիվը ապահովված կլինեն սուրբ օրերնքով (շարիաթով) և իմ բարձր հովանավորությամբ»⁹⁶: Այս առաջին դեպքն էր օսմանյան պատմության մեջ, երբ սուլթանը խոստումներ տվեց ոչ մուսուլմաններին:

Մի կողմից հրովարտակը նպատակ էր հետապնդում «խաղաղեցնել» Մորեային, ամեն գնով պահպանել այն օսմանյան պետության կազմում, իսկ մյուս կողմից ձգտում էր հասնել Արևմուտքի աջակցությանը հունական խնդրի լուծման հարցում: Հատկանշական է, որ սուլթանը իր վրա պարտավորություն հանձն առավ միայն Մորեայի հույների նկատմամբ, քանի որ, այդպիսով, հույս ուներ «հանդարտեցնել» նրանց:

Սակայն սուլթանական հրովարտակը ուշացավ և արդեն չէր կարող ներգործել պատմության ընթացքի վրա. 1830 թ. ստեղծվեց անկախ հունական թագավորությունը:

Հրովարտակը այդպես էլ մնած թղթի մի կտոր: Սակայն այնտեղ առաջին անգամ արտահայտված գաղափարները դարձան թանգիմաթի հիմնական նշանաբաններից մեկը, որի նպատակն էր կասեցնել քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման հետագա ընդլայնումը:

1837 թ. ապրիլին բուլղարների հերթական հզոր ապստամբությունը ճնշելուց հետո սուլթանը այցելեց բուլղարական շրջանները և քրիստոնյա համայնքների ղեկավարների առջև իր ելույթներից մեկում հայտարարեց. «Մեր ցանկությունն է ... մեր պետության բոլոր բնակիչների, ինչպես մահմեդականների, այնպես էլ ռայայի, անվտանգության ապահովումը.. Դուք (այսինքն՝ քրիստոնյա հա-

⁹⁶ A. Prokesch-Osten, Geschichte des Abfalls der Griechen vom Türkischen Reiche im Jahre 1821 und der Gründung des Hellenischen Reiches. Aus diplomatischem Stand. Band 6, Wien, 1867, S. 57.

մայնքների ղեկավարները), նկատի ունենալով մեր ցանկությունը, պետք է հավատարիմ լինեք մեզ այդ գործում»⁹⁷:

Այսպիսով, խոստում տալով «հոգալ» ռայայի բարօրության մասին, սուլթանը փոխարենը պահանջում էր նրա հնազանդությունը: Այդ նույն տարում Մահմուդ II-ի ելույթ ունեցավ իր հայտնի հայտարարությամբ այն մասին, որ բոլոր հպատակները իր հարազատ գավակներն են, և նա նրանց վերաբերվում է հավասար մոտեցումով⁹⁸:

Մահմուդ II-ի կառավարման տարիները հիմք նախապատրաստեցին թանգիմաթի՝ ավելի ընդարձակ բարեփոխումների ժամանակաշրջանի համար:

Թանգիմաթի առաջին փուլը (19-րդ դարի 30-50-ական թթ. կեսերը) նշանավորվեց օսմանյան պետության մեջ քրիստոնյա ժողովուրդների կարգավիճակի մասին նոր գաղափարների առաջ գալով: Դրանց հեղինակն էր Մուսթաֆա Ռեշիդ փաշան՝ «Թանգիմաթի հայրը»: Նա համոզված էր, որ, միայն եվրոպական օրինակով բարեփոխումներ անցկացնելով, հնարավոր կլինի վերականգնել օսմանների պետության անցյալի հզորությունը: Այդ բարեփոխումների հիմնական թիրախը քրիստոնյա ժողովուրդների կարգավիճակն էր մուսուլմանական օսմանյան պետությունում: Մասնավորապես, ենթադրվում էր կյանքի, ունեցվածքի և պատվի երաշխիքի խոստումներ տարածել նաև ոչ մուսուլմանների վրա: Այդ մասին ասված էր բարեփոխումների նախագծի մեջ, որը պատրաստված էր նրա ղեկավարությամբ մի քանի նախարարների կողմից⁹⁹:

Այդ սկզբունքը հանդիսավոր ձևով հայտարարվում էր Գյուլիհանեի հաթթ-ը շերիֆի մեջ (1839 թ. նոյեմբերի 3), որի հեղինակն էր Ռեշիդ փաշան: Այնտեղ, մասնավորապես, ասվում էր. «Մենք (այսինքն՝ սուլթանը) պետության բոլոր բնակիչներին, առանց բացառության, կրոնական օրենքի համաձայն տալիս ենք իրենց կյանքի, ունեցվածքի կատարյալ ապահովություն»¹⁰⁰:

Ուշագրավ է, որ այս կետի հիմնավորումը զուտ կրոնական է. «կրոնական օրենքի համաձայն», այսինքն՝ շարիաթի համաձայն: Հարկ է նշել, որ Ռեշիդը փորձում էր խուսափել «որևէ ընդհարումներից ուլեմների հետ»¹⁰¹ և հաճախակի վկայակոչում էր Դուրանը և շարիաթը, հավաստիացնելով, որ իր կողմից առաջարկված կամ անցկացված բարեփոխումները ոչ մի դեպքում չեն հակասում նրանց¹⁰²:

Այդ պնդումը համապատասխանում էր իրականությանը: Ձևականորեն, թանգիմաթի առաջին փուլի բարեփոխումները մեծ մասամբ չէին հակասում շարիաթի օրենքներին, այլ նպատակ էին հետապնդում՝ ապահովել նրա դրույթների ավելի ճիշտ պահպանումը: Թանգիմաթի բարենորոգիչները կարծում էին, որ դա բավական է, որպեսզի խաղաղացնեն ռայային: Ինչպես ասվում էր հաթի նախաբանում, «այն ժամանակներում, երբ բոլոր սրբազան օրենքները ճիշտ էին պահպանվում, բոլոր հպատակների դրությունը, առանց բացառության» (այսինքն՝ ոչ մահմեդականների) լավ էր, այն սկսվեց վատանալ օրենքների չպահպանման հետևանքով¹⁰³: Ընդհանուր առմամբ, Գյուլիսանեի հաթթ իրենից ներկայացնում էր «խլամական ակտ» և, չնայած վերը նշված կետերի, չէր թաքցնում այն փաստը, որ աստվածապետական Օսմանյան կայսրության պետական կարգի հիմքում ընկած է իսլամիզմի գաղափարախոսությունը: Հաթթը ամրագրում էր մահմեդականների տիրող դրությունը: Ինչպես հայտարարեց Ռեշիդը խորհրդապահական զրույցի ժամանակ բարձրաստիճան ֆրանսիական պաշտոնյայի հետ, իր նպատակն է հանդիսանում Օսմանյան կայսրությունում իսլամի և այլ կրոնների հետևորդների միջև միայն անհավասարության «մեղմացումը», այլ

престол Абдул-Меджида до Парижского трактата в 1856 году. СПб., 1872, с. 275.

¹⁰¹ С. Палаузов, Мустафа Решид паша. СПб., 1858, с. 11.

¹⁰² F. E. Bailey, British policy and the turkish reform movement. A study in Anglo-Turkish relations: 1826-1853. Cambridge, 1942, p. 274.

¹⁰³ Д. Г. Розен, История Турции от победы реформы в 1826 г. до Парижского трактата в 1856 году. - Часть 2: От вступления на престол Абдул-Меджида до Парижского трактата в 1856 году. СПб., 1872, с. 274.

⁹⁷ H. Inalcik, Tanzimat ve Bulgar Meselesi (Doktora Tezi'nin 50. yılı, 1942-1992). İstanbul, 1992, s. 28.

⁹⁸ R. Kaynar, Mustafa Reşit Paşa ve Tanzimat. Ankara, 1954, s. 100.

⁹⁹ R. Kaynar, Mustafa Reşit Paşa ve Tanzimat. Ankara, 1954, s. 172.

¹⁰⁰ Д. Г. Розен, История Турции от победы реформы в 1826 г. до Парижского трактата в 1856 году. — Часть 2: От вступления на

ոչ թե հավասարեցումը¹⁰⁴: Ռեշիդ փաշայի արձագանքը 1856 թ. հաթթը հյուճնայունին, մանավանդ այն հողվածներին, որոնք տեսականորեն նախատեսում էին օրենքի առջև մահմեդականների և ոչ մահմեդականների լրիվ հավասարեցումը և վերջիններիս պետական ծառայության մեջ մուտքի իրավունքը, խիստ բացասական էր: Իր լրիվապես մեջ նա դատապարտեց հաթթի հեղինակներին՝ Ալիին և Ֆուադային, «իսլամի կրոնի դավաճանության» համար՝ անվանելով նրանց հավատը ուրացներ¹⁰⁵:

Ռեշիդ փաշան չէր կարող անգամ թույլ տալ նման մի միտք, որ քրիստոնյա հպատակները ստանային լրիվ իրավական հավասարություն երկրի «իսկական» տերերի՝ մուսուլմանների հետ: Դրա հետ մեկտեղ կայսրության բոլոր բնակիչների նկատմամբ «հավասար վերաբերմունքի» սկզբունքը առանց դավանության տարբերության իր մեջ պարունակում էր հետագա զարգացման հնարավորություն, ընդհուպ մինչև նրանց հավասարեցումը օրենքի առաջ (ինչ և հայտարարեցին երկրորդ սերնդի թանգիմաթի գործիչները) և անկասկած, ուներ իր ժամանակի համար առաջադեմ բնույթ: Պատահական չէ, որ, ինչպես նշում էին ժամանակակիցները, Ռեշիդի օգնականները հիմնականում հույները և հայերն էին, այսինքն՝ այն ազգերի ներկայացուցիչները, որոնք առավել շահագրգռված էին երկրի բուրժուական զարգացման մեջ¹⁰⁶:

40-ական թթ. «հավասար վերաբերմունքի» սկզբունքը արտացոլում գտավ որոշ օրենսդրական ակտերի մեջ: Այսպիսով՝ քրեական օրենքի նախաբանում (1840 թ. մայիսի 3-ին ընդունված) Գյուլխանյան ակտի դրույթի վերաբերյալ մեջբերում էր պարունակվում առանց բացառության պետության բոլոր հպատակների անվտանգության ապահովության մասին, իսկ առաջին հողվածից հետևում էր, որ օրենքի ազդեցությունը տարածվում է նաև ոչ մահմեդականների վրա¹⁰⁷:

Ռեշիդը առաջ քաշեց իր ժամանակի համար նոր՝ «սուլթանի բոլոր հպատակների միասնության» գաղափարը: Այդ գաղափարի արտահայտումը դարձավ նրա կողմից ստեղծված «թեբբաա»-

(«հպատակներ») նորաբանությունը՝ առաջին անգամ օգտագործված բարեփոխումների նախագծում, կազմված Ռեշիդի գլխավորությամբ նախարարների խմբի կողմից և ներկայացված սուլթանին: Այնտեղ ասվում է «Բարձր պետության հպատակներ»-ի (tebaa-i Devlet-i Âliyye): Այնուհետև հեղինակը միանգամից ճշգրտում է, թե ում է ուղղված այդ նոր հասկացությունը. «Բոլոր մահմեդականները և այլ միլլեթների ներկայացուցիչները»¹⁰⁸: Արտահայտությունն օգտագործվեց նաև Գյուլհանեի հաթթում և դրանից հետո ստացավ լայն տարածում:

Կայսրության բոլոր ազգերի «միասնության» պահպանման խնդիրը գտնվում էր Ռեշիդի ուշադրության կենտրոնում: Մի քանի տարի անց, 1846 թ., ելույթ ունենալով Ադրիանուպոլիսում քրիստոնյա համայնքների ղեկավարների առջև՝ նա հետևյալ կերպ փորձեց հիմնավորել նրա պահպանման անհրաժեշտությունը. «Կրոնի և ազանդի տարբերությունը յուրաքանչյուր անհատի գործն է, այն չի արտացոլվում նրա իրավունքների վրա...: Մենք բոլորս միևնույն կառավարության հպատակներն ենք, ծնվել և մեծացել ենք միևնույն երկրում: Պետք է միշտ հիշել դրա մասին և միմյանց խեթ չնայել...»¹⁰⁹: Այսպիսով՝ առաջին անգամ առաջ քաշվեցին «ընդհանուր տարածքի» և «ընդհանուր կառավարության» սկզբունքները, որպես բազմազգ Օսմանյան կայսրության բոլոր ազգերի միասնության հիմք, որոնք հետագայում լայնորեն օգտագործվում էին «նոր օսմանցիների կողմից»:

«Մուսուլմանների և քրիստոնյաների միասնության» գաղափարը հետզհետե սկսեց օգտագործվել կայսրության կառավարող շրջանների կողմից, որպես բնակչության համախմբման միջոց արտաքին թշնամիների դեմ պայքարում: «Կոնստանդնուպոլիսի, Էյուբի, Սկյութարի և Գալաթի բնակիչներին» ուղղված մեծ վեզիրի ուղերձում (1853 թ.) նշվում էր, այսուհետ բոլորը պետք է ձգտեն ապրել կատարյալ միասնության մեջ և ծառայել ընդհանուր հայրենիքին: Դիմումի մեջ հաստատվում էր, որ սուլթանները և Բարձր դուռը, իբրև թե, միշտ հոգում էին բոլոր հպատակների բարեկեցության

¹⁰⁴ Մասիս, 1853, թիվ 79:

¹⁰⁵ Cevdet Paşa, Tezakir, 1-12, Ankara, 1953, s. 8.

¹⁰⁶ С. Палайзов, Мысмафа Решид паша. СПб., 1858, с. 5-6.

¹⁰⁷ R. Kaynar, Mustafa Reşit Paşa ve Tanzimat. Ankara, 1954, s. 302 - 303.

¹⁰⁸ R. Kaynar, Mustafa Reşit Paşa ve Tanzimat. Ankara, 1954, s. 92.

¹⁰⁹ Z. Şakir, Büyük Türk inkilâbı. C. 1, İstanbul, 1956, s. 56.

մասին, որոնց իբրև թե շնորհվել էին կրոնական արտոնությունները և այլն: Դրանից ելնելով՝ ամբողջ բնակչությունը հրավիրվում էր համախմբվելու կառավարության շուրջ՝ արտաքին վտանգին ընդդեմ, քանի որ «հաջողության պայմաններից մեկը բոլոր բնակիչների միջև կատարյալ ներդաշնակության հասնելն է»¹¹⁰:

Ռեշիդի գաղափարները գնահատելիս հարկ է նշել, որ դրանք, անկասկած, կարևոր դեր խաղացին 19-րդ դարի Օսմանյան կայսրության հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ: Սակայն իրական քաղաքականության ասպարեզում այդ գաղափարները լիարժեք չմարմնավորվեցին: Բավական է նշել, որ նրա իշխանության գտնվելու ժամանակաշրջանում՝ 1846-1852 թթ. (ընդմիջումներով) չի ընդունվել որևէ պաշտոնական որոշում, որը վերաբերեր ոչ մահմեդական հպատակներին: Նրան չհաջողվեց եվրոպական օրինակով չափավոր բարեփոխումների միջոցով հասնել իր հիմնական նպատակին՝ կանգնեցնել հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների ծավալման գործընթացը: Դա ակնհայտ էր արդեն իր ժամանակակիցների համար¹¹¹: Նրա քաղաքականության սնանկությունը պարզ դարձավ, երբ բռնկվեց բուլղարացիների 1850 թ. խոշոր ապստամբությունը:

Քրիստոնյա ժողովուրդները պահանջում էին Գյուլիանեի հաթի խոստումների իրականացում, նրանց չէին կարող բավարարել դատարկ խոստումները: Իր հերթին, Ռեշիդը դաժանագույն կերպով ճնշում էր արդարությանը զենքով հասնելու քրիստոնյա ժողովուրդների ցանկացած փորձերը՝ նույնիսկ Գյուլիանեի հաթի շրջանակներում: Այսպես, օրինակ՝ 1850 թ. մեծ վեզիր Ռեշիդ փաշայի գրասենյակից գաղտնի շրջաբերական էր ուղարկվել Վեդիմոյի վալիին, որով նրան կարգադրվում էր ամենախիստ միջոցներով խոչընդոտել տեղի բուլղարական բնակչության ելույթները, որոնք պահանջում էին սուլթանի բոլոր հպատակների և այդ թվում քրիստոնյաների անվտանգության, պատվի և ունեցվածքի ապահովությանը վերաբերող «հաթթ-ը շերիֆի» դրույթների իրականացումը:

¹¹⁰ A. Vaillant, Solution de la Question d'Orient, Paris, 1853, p. 130.

¹¹¹ Galerie des contemporaines illustres. T. VII: Rechid Pacha, Paris, 1850, p. 1 - 5.

Վալին կարգադրություն էր ստացել անհրաժեշտության դեպքում դիմել «բռնի ուժի»¹¹²: Ընդհանուր առմամբ, ինչպես նշում էր ժամանակի մամուլը, թանգիմաթի արդյունքում քրիստոնյաների հալածանքները իրենց կրոնական համոզմունքների պատճառով չնվազեցին¹¹³:

Հարկ է նշել, որ թանգիմաթի առաջին փուլում ռայաների նկատմամբ կեղեքման առավել հնարամիտ մեթոդների վրա հիմնվող նոր քաղաքականություն վարելու հետ մեկտեղ թուրքական իշխանությունները և հատկապես, առավել պահպանողական տրամադրված գործիչները հաճախ դիմում էին ճնշման և հալածանքի ավանդական մեթոդների: Հաճախակի էին ժողովրդական զանգվածների շրջանում մահմեդական մոլեռանդության զգացմունքների բորբոքման դեպքերը: Ինչպես կենտրոնական կառավարությունում, այնպես էլ գավառներում մեջլիսների անդամների շրջանում, արմատականները, օգտագործելով մահմեդականների դժգոհությունը՝ հաթթ-ը շերիֆի մեջ «հավասար հարաբերությունների» սկզբունքի պաշտոնապես հայտարարման փաստը, հրահրեցին քրիստոնեական ջարդեր: Այդ պաշտոնից Ռեշիդին հեռացնելուց հետո, մեծ վեզիրի գրասենյակից գաղտնի շրջաբերականներ էին ուղղարկվում շրջաններ, որոնք փաստորեն չեղյալ էին հայտարարում թանգիմաթի բոլոր որոշումները: Քաղաքական ճգնաժամերի ժամանակ հատկապես ուժեղանում էր հին, ստուգված քաղաքականության մեթոդների վրա հենվելու ձգտումը: Օրինակ՝ այդպես էր 1852-1853 թթ., երբ կառավարությունը ուժգնորեն բորբոքում էր հակաքրիստոնեական տրամադրությունները երկիրը Ռուսաստանի հետ պատերազմելու նախապատրաստման նպատակով: Այնուամենայնիվ, չնայած վերը նշված փաստերի, նոր գաղափարները աստիճանաբար ճանապարհ էին հարթում:

¹¹² Документи за българската история. Т. 3: Документи из турските държавни архиви. Ч. 1: 1564 – 1872, Подбралъ и превелъ П. Дорев. София, 1940, с. 308.

¹¹³ F. E. Bailey, British policy and the turkish reform movement. A study in anglo-turkish relations: 1826–1853. Cambridge, 1942, p. 222.

2. «ՄԻԱԽԱՌՆՈՒՄ ՈՒ ՄԻԱԶՈՒԼՈՒՄ»

19-րդ դարի 50-ական թթ. կեսերից մինչև 70-ական թթ. սկիզբը ընկած ժամանակաշրջանը Թուրքիայի պատմության մեջ հայտնի է որպես թանգիմաթի երկրորդ փուլ: Այն ժամանակաշրջանի թուրք գործիչները՝ Մեհմեդ էմին Ալի փաշան և Մեհմեդ Ֆուադ փաշան, բարեփոխումների համար շարժման առաջնորդները, Արևմուտքի հետ մերձեցման քաղաքականություն էին վարում՝ դրանով իսկ հուսալով պահպանել ինչքան հնարավոր է շատ շրջաններ սուլթանի իշխանության տակ:

Կայսրության ամբողջականության համար գլխավոր վտանգն էր ճնշված քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը: Ալի փաշան և Ֆուադ փաշան անկասկած գիտակցում էին այդ և փորձում էին կանխել քրիստոնյաների զինված ապստամբությունները, հետևելով այն ավանդույթին, որի հիմնադիրներն էին նախաթանգիմաթի և թանգիմաթի սկզբնական փուլի նախորդ գլխում հիշատակված գործիչները: Այդպիսով՝ Ալին և Ֆուադը դարձան թուրք գործիչների նախորդ սերնդի գաղափարական ժառանգորդները:

Նրանց աշխարհայացքի ձևավորման վրա իր ազդեցությունը գործեց նաև եվրոպական իրականության հետ նրանց համեմատաբար ավելի լավ ծանոթությունը: Մահմեդականների և ոչ մահմեդականների «միաձուլման» անհրաժեշտությունը նրանք հիմնավորում էին եվրոպայի օրինակով: Օրինակ՝ Ալին գրում էր, որ այնտեղ «բոլոր անհատները ազատ են և հավասար... կրոնը և ծագումը ոչ մի դեր չեն խաղում և յուրաքանչյուր մարդ կարող է գրավել ամեն մի պաշտոն»¹¹⁴:

Սակայն, Ալին և Ֆուադը ոչ միայն կրկնեցին իրենց նախորդներին, այլև գնացին առաջ և ձևակերպեցին Օսմանյան կայսրության բոլոր բնակիչների, անկախ իրենց ազգային և կրոնական պատկանելության, «միախառնման ու միաձուլման» հայեցակարգը՝ դարձ-

նելով այն իրենց քաղաքականության հիմնական նպատակը: Նրանք համոզված էին, որ միայն այդպես կարելի է պահպանել օսմանյան պետության տարածքային ամբողջականությունը: 1867թ. մայիսին Ֆուադ փաշան հստակ ձևով հայտարարեց դրա մասին Կոնստանդնուպոլիսում Ռուսաստանի դեսպան Ն.Պ. Իգնատևին, որը այդ թուրք գործիչի հետ զրույցից հետո հաղորդում էր Պետերբուրգ. «Նա (այսինքն՝ Ֆուադը) պնդում է, որ կայսրության փրկությունը կայանում է միայն մահմեդական և քրիստոնյա ժողովուրդների միաձուլման մեջ, այլ ոչ թե նրանց զուգահեռ համագոյության մեջ»¹¹⁵:

«Միաձուլման» անհրաժեշտության մասին թուրք գործիչները հայտնում էին ոչ միայն օտարերկրյա տերությունների ներկայացուցիչներին: Կյանքի վերջում իր գաղտնի քաղաքական կտակում Ֆուադը մեկ անգամ ևս զգուշացրեց սուլթանին. «Առանց միաձուլման իրականացման Օսմանյան կայսրության գոյությունը ինձ անհնարին է թվում»¹¹⁶:

Փաշաները պնդում էին, որ միաձուլումը պետք է ընդգրկեր հասարակական հարաբերությունների ամբողջ ոլորտը, «բացառությամբ զուտ կրոնական գործերի»¹¹⁷: Միաժամանակ, ընդգծվում էր, որ ցանկացած ձևափոխությունների դեպքում չորս սյուները, որոնց վրա հիմնված է Օսմանյան կայսրության գոյությունը, պետք է մնան անփոփոխ. դրանք են՝ «մահմեդական միլլեթը, թուրքական պետությունը, օսմանյան սուլթանները և Ստամբուլը՝ որպես մայրաքաղաք»¹¹⁸:

Ալի փաշան հաճախ էր նոր ստեղծվող ինտեգրված հասարակության մեջ ընդգծում թուրք ժողովուրդի առանձնահատուկ դերը: Թուրքիայում Ֆրանսիայի դեսպան Տուվենելին ուղղված նամակում (1858) նա գրում էր . «Եթե մեր մեջ դեռ կա ժողովուրդ, որը

¹¹⁵ Н. П. Игнатъев - А. М. Горчакову, Константинополь, 25 апреля/7 мая 1867 г. - Архив Внешней Политики Росси́йской Империи (АВПРИ), ф. Канцелярия, 1867, д. 31, л. 489.

¹¹⁶ Fuad Pasha, Political testament. - J. L. Farley, Turks and Christians, London, 1876, p. 242.

¹¹⁷ Fuad Pasha, Political testament. - J. L. Farley, Turks and Christians, London, 1876, p. 243.

¹¹⁸ Cevdet Paşa, Tezakir, 1-12, Ankara, 1953, s. 85.

¹¹⁴ Ali Pascha, Memorandum. - [A. D. Mordtmann], Stambul und das moderne Türkenthum (Politische, sociale und biographische Bilder von einem Osmanen), B. 1, Leipzig, 1877, S. 84.

կարող է ղեկավարել ուրիշներին և ծառայել... հասարակության համար կապող օղակ, դա օսմանյան ժողովուրդն է» (այսինքն՝ թուրքերը)¹¹⁹: Փարիզում գտնվող Ջեմիլ փաշային (1862) ուղղված գաղտնի ուղերձում նա նորից կրկնեց իր միտքը. «Ես կարծում եմ..., որ միայն թուրքերը կարող են կապող օղակ ծառայել կամ... ցանկություն ունեն հաստատել իրենց իշխող դիրքը ուրիշների վրա...: Միայն դա կարող է փրկել կայսրությունը մշտական քառսից և քաղաքացիական պատերազմից»¹²⁰: Այսպիսով՝ Ալի փաշան իրադրության կայունացման միակ հնարավորությունը տեսնում էր թուրքերի իշխող դիրքի ապահովման մեջ: Ֆուադի մոտ «միաձուլման» քաղաքականության մեջ թուրքական տարրի վրա հենվելու ձգտումը ավելի քիչ է արտահայտված: Սակայն նա նույնպես կարծում էր, որ թուրքերը բոլորից ավելի հարմար են երկիրը կառավարելու համար¹²¹: Ինչպես երևում է վերը նշված փաստերից, Ալիի և Ֆուադի վերջնական նպատակը թուրքերի իշխող դիրքի պահպանումն և ամրացումն էր ապագա, «բարեփոխված» կայսրության մեջ:

Փաշաները առաջարկեցին նաև մի շարք միջոցների կիրառում, որոնք պիտի նպաստեին «միաձուլմանը»: Ամենազխտավոր միջոցը նրանք համարում էին իշխանություններին նվիրվածության միասնական ոգով կայսրության բոլոր ժողովուրդների դաստիարակումը: «Պետությունը կարող է խուսափել գաղափարական հակասություններից իր հպատակների միջև, եթե այն նրանց դաստիարակի միևնույն ոգով», - գրում էր Ալի փաշան¹²²: Այդ ճանապարհի վրա առաջին ուղենիշը համարվում էր առաջին երկու աստիճանների խառը ուսումնական հաստատությունների ստեղծումը, քանի որ Ֆուադը ընդգծում էր, որ «միաձուլումը սկսվում է դպրոցական նստա-

րանից»¹²³: Իսկ այդ «ընդհանուր ոգով դաստիարակումը» կշարունակվեր Գալաթասարայի նման լիցեյներում: Թուրքերենով իր քաղաքական կտակում Ալի փաշան վկայակոչում էր սուլթանին ինչքան հնարավոր է շատ բացել ևս մի քանի նման հաստատություններ, ինչը կարագացներ «միաձուլման» գործընթացը¹²⁴: Միասնական կրթությունը, նրա կարծիքով, «կմիացներ կայսրության տարբեր ժողովուրդների շահերը» և նրանց հավատարիմ նշարձներ օսմանյան կառավարության նկատմամբ, ինչը կփրկեր պետությունը մասնատումից¹²⁵:

«Միաձուլման» մեկ այլ կարևոր միջոց էր համարվում քրիստոնյաների զորակոչումը: Որոշ արևմտյան դիվանագետներ գտնում էին, որ այդ կլիմի միաձուլման ամենակարևոր միջոցը: Այսպիսով՝ Կ.Պոլսում Ավստրիայի դեսպան բարոն Փրոքեշը գրում էր. «Ոչինչ չէր ունենա այդքան մեծ ազդեցություն ռասաների միաձուլման իրականացման վրա, ինչքան ռազմական համակարգի մուտքը կյանք՝ հիմնված բոլոր հպատակներին զորակոչելու թույլտվության վրա»¹²⁶: Թուրք պետական գործիչներից դրա հիմնական կողմնակիցը Ֆուադն էր: Այս հարցը «Թուրքիայում ուշադրություն է գրավել» և քննարկվել է Բարձրագույն խորհրդում, տեղեկացնում էր Կ.Պոլսում գտնվող Ռուսաստանի ռազմական գործակալը¹²⁷: Թուրք նախարարների մեծ մասը ձգտում էր նրան, որ սպայական դիրքերը գրավեն թուրքերը¹²⁸: Նույնիսկ հատուկ հանձնաժողով էր

¹¹⁹ L. Thouvenel, Trois années de la Question d' Orient, 1856 -1859, Paris, 1897, p. 317.

¹²⁰ B. Lewis, Ali Pasha on nationalism. - Middle Eastern Studies, 1974, No. 10, p. 71.

¹²¹ P. Challemel-Lacour, Hommes d'état de la Turquie. Aali Pacha et Fuad Pacha. - Revue des deux mondes. 1868, XXXVIII année, 2 série, No. 78, p. 922.

¹²² Belgelerle Tanzimat: Osmanlı Sadriazamlarından Ali ve Fuad Paşaların siyasi vaziyetnameleri. Hazırlıyan: E. D. Akarlı, İstanbul, 1973, s. 47.

¹²³ Н. П. Игнатъев - А. М. Горчакову, Константинополь, 7/19 марта 1867 г. - АВПРИ, ф. Канцелярия 1867, д 31, л. 63.

¹²⁴ Ali Paşa, Vaziyetname. - Belgelerle Tanzimat: Osmanlı Sadriazamlarından Ali ve Fuad Paşaların siyasi vaziyetnameleri. Hazırlıyan: E. D. Akarlı, İstanbul, 1973, s. 47.

¹²⁵ Aali Pacha, Testament politique. - La Revue de Paris, 1910, T. 3, No. 9, p. 106.

¹²⁶ Observations du Baron Prokecsch sur le Memoire du cabinet francais. - Schopoff A. Les reformes et la protection des chretiens en Turquie, 1673 - 1904, Paris, 1904, p. 89.

¹²⁷ Военный агент в Константинополе о предполагаемом формировании воинских частей из христиан, 10/22 апреля 1861. - Российский Государственный Военно-Исторический Архив (РГВИА), 3.1. Коллекция Военно-ученного архива, 71 Турция, ф. 450, 1658 - 1917, оп. 66, л. 35.

¹²⁸ Там же, л. 36.

ստեղծվել այս հարցի բազմակողմանի ուսումնասիրության համար, սակայն վերջնական որոշումը այդպես էլ չընդունվեց¹²⁹: Այս գաղափարը հավանություն չստացավ ոչ քրիստոնյաների, ոչ էլ մահմեդականների կողմից¹³⁰: Կյանքի վերջում դրանից հիասթափվեց նաև Ֆուադը՝ շրջանցելով այն լուռությամբ իր քաղաքական կտակում:

«Միաձուլված» հասարակության ստեղծման ճանապարհին ամենակարևոր արգելքն էին հանդիսանում ոչ մահմեդական միլլեթները: Ամբողջ 19-րդ դարի առաջին կեսի ընթացքում հույների և հայերի խոշոր միլլեթներում տեղի էին ունենում գործընթացներ, որոնք վկայում էին բալկանյան ժողովուրդների և հայերի ազգային ինքնագիտակցության աճի մասին: Միլլեթների շարքային անդամները ազատություն և հավասարություն էին պահանջում մահմեդականների հետ: Ուժեղացավ քրիստոնյա ժողովուրդներին ինքնավարություն տրամադրելու շարժումը:

Այս գործընթացները անհանգստացնում էին կայսրության ղեկավարներին: Եթե թանգիմաթի առաջին շրջանում նրանք ջանում էին չսրել միլլեթների առաջնորդների հետ հարաբերությունները, ապա այժմ դրությունը փոխվել է: Թանգիմաթի երկրորդ շրջանի գործիչները եկան այն եզրակացության, որ միլլեթները օգտվում են չափազանց մեծ ինքնավարությունից, և որ այն պետք է սահմանափակել: Սակայն որոշվեց պահպանել միլլեթների ինստիտուտը:

Ըստ երկրորդ շրջանի թանգիմաթի գործիչների տեսակետի, միլլեթները պետք է վերափոխվեին կրոնական համայնքների, իսկ քաղաքացիական ոլորտում նրանց արտոնությունները պետք է վերացվեին: Այսուհետև քրիստոնյաները պիտի լինեին օսմանյան հպատակներ և ոչ թե կոնկրետ միլլեթի անդամներ: Նրանց անհանգստացնում էր այն, որ միլլեթները գործնականապես դարձել էին օրինական կազմակերպություններ, որոնք որոշ չափով նպաստում էին քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման ուժեղացմանը, և նրանք ձգտում էին պահել նրանց կա-

ռավարության անմիջական հսկողության տակ: «Ամեն մի համայնք (միլլեթ) կազմում է առանձին ամբողջություն,- գրում էր Ալի փաշան, - որը տարբերվում էր իր ոգով, լեզվով, սովորույթներով, ձգտումներով: Նրանց զարգացումը կարող էր դուրս գալ վերահսկողությունից...: Կառավարությունը պետք է ամեն մի համայնքին իրավունք տա զբաղվել միայն և միայն կրոնական հարցերով...»¹³¹: Ալիի այս դրույթը արտացոլվել էր 1856 թ. հաթթի-ը հյուժայունի մեջ:

Ալիի և Ֆուադի կողմից առաջարկված «միաձուլման» քաղաքականությունը պետք է հանգեցներ որոշակի փոփոխությունների երկրի քաղաքական կառուցվածքում: Նրանք գիտակցում էին այդ: Ֆուադը սուլթանին առաջարկում էր ինչքան հնարավոր է շուտ ձեռնարկել անհրաժեշտ բարեփոխումները¹³²: Իսկ Ալին, որպես ավելի շրջահայաց գործիչ, հասկանում էր, որ բարեփոխումների ուղիով առաջ գնալու «արագությունը», ինչպես ինքն էր ասում, «պետք է սահմանափակվի գայրույթ առաջացնելու վախով»¹³³: Նա կանխատեսում էր, որ «անհրաժեշտ է մոտավորապես մեկ դար՝ կայունության հասնելու համար»¹³⁴:

Գնահատելով Ալի փաշայի և Ֆուադ փաշայի լայնորեն պրոպագանդիզ «միաձուլումը»՝ գալիս ենք եզրակացության, որ այն ոչ այլ ինչ էր, եթե ոչ քրիստոնյա ժողովուրդների «խաղաղ» ապագայնացման և ուժացման փորձ և դրանով իսկ Օսմանյան կայսրությունում ազգային հարցի լուծում: Այսպիսին էր «ամենալիբերալ» թուրք գործիչների քաղաքական գաղափարների հիսունամյա զարգացման արդյունքը: Լինելով արտաքուստ արևմտամետ և առաջադեմ՝ նրանք իրականում մարմնավորում էին թուրքական հետադիմության թեթևակի արդիականացված տարբերակը: Պատահական չէր այն գնահատականը, որը տվել էր Իգնատևը Ալի փաշա-

¹²⁹ Н. П. Игнатъев - А. М. Горчакову, Константинополь, 21 марта/2 апреля 1867 г. - АВПРИ, ф. Канцелярия, 1867, д. 31, л. 159 об.

¹³⁰ Там же, л. 159.

¹³¹ Ali Pacha, Testament politique. - La Revue de Paris. 1910, t. 3, N. 9, p. 106.

¹³² Fuad Pasha, Poilitical testament. - J. L. Farley, Turks and Christians, London, 1876, p. 235-236.

¹³³ P. Challemel-Lacour, Hommes d'etat de la Turquie. Aali Pacha et Fuad Pacha. - Revue des deux mondes. 1868, XXXVIII annee, 2 serie, No. 78, p. 916-917.

¹³⁴ B. Lewis, Ali Pasha on nationalism. - Middle Eastern Studies, 1974, No. 10, p. 79.

յին «չնայած եվրոպական արտաքին գործելաձևի հոգով նա իսկական թուրք էր և դեմ էր եվրոպային»¹³⁵:

Թանգիմաթի շրջանի թուրք կառավարիչներից Ֆուադին լրջորեն մտախոհում էր կայսրությունում քրիստոնյա ազգերի թվաքանակի մեծացման փաստը, քանի որ նա մտավախություն ուներ, որ քրիստոնյաները կարող էին «կլանել» մահմեդականներին¹³⁶: Համաձայն լավատեղյակ անգլիացի Վ. Դենթոնի, որն ուսումնասիրել էր Օսմանյան կայսրությունում տեղակայված քրիստոնյական հյուպատոսների հաղորդագրությունները, դրան խանգարելու նպատակով Բարձր դուռը կազմակերպում էր քրիստոնյաների կանոնավոր կոտորածներ, որոնք «սարսափի մեջ էր գցում եվրոպային»¹³⁷:

Բացի այդ, 50-60-ական թթ. Օսմանյան կառավարությունը ձգտում էր պահպանել մահմեդականների քանակական մեծամասնությունը՝ Ռուսաստանից դեպի երկիր մահմեդական փախստականների զանգվածային մուտքը խրախուսելու միջոցով: Միայն առաջին տաս տարիների ընթացքում (1854-1864) նրանք թիվը կազմեց 595 հազար¹³⁸: Չերկեսների և թաթարների մեծամասնությունը տեղավորվեց բալկանյան վիլայեթներում՝ մահմեդականների թվաքանակի մեծացման նպատակով: Ալին և Ֆուադը ամեն հարմար պահի դիմում էին նաև ատելի «անհավատներից» ազատվելու թուրքական իշխանավորների հին փորձված միջոցին՝ բռնի իսլամացմանը:

Օսմանյան կայսրության բազմազգ բնակչության «միաձուլման» հայեցակարգի հիմնական դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ուղղված էր ոչ թուրք ժողովուրդների ուժացմանը: Հենց դա էր նրա գլխավոր նպատակը, իսկ այնտեղ պարունակվող մահմեդականների և ոչ մահմեդականների հավասարության, հպա-

¹³⁵ [Игнатъев Н. П.], Записки графа Игнатъева, 1864-1874.- Русская старина, 1915, т. 162, кн. 4, с. 19.

¹³⁶ В. Ф. Кожевников, Рушук (Русе), 7 января 1867 г. - АВПРИ, ф. Главный архив, II -18, 1855 -1867, д.1 (О турецких Хатм-у Хумаюнах, 1855 - 1857, 1866 - 1867), л. 193.

¹³⁷ В. Дентон, Христиане в Турции - Русский вестник, 1864, т. 50, No. 3 (март), с. 117.

¹³⁸ E. Z. Karal, Osmanlı Tarihi. VII cilt: Islahat Fermanı devri, 1861 - 1876. Ankara, 1956, s. 277-278.

տակ ժողովուրդների նկատմամբ «արդար» քաղաքականության մասին դրույթները իրենցից ներկայացնում էին միայն քող՝ գլխավոր նպատակը մթազեցնելու համար:

Ալին ու Ֆուադը մշակել էին երկար տարիների համար նախատեսված «միաձուլման» ծրագիր և փորձում էին նրա հիմնական դրույթները իրականություն դարձնել: Նրանց կառավարման շրջանում իրականացված օրենսդրական բարենորոգումների վերլուծությունը հաստատում է, որ նրանք գործում էին համաձայն այդ ծրագրի:

Ինչպես արդեն նշվել է, այդ ծրագրի մեջ կարևոր տեղ էին զբաղեցնում այն միջոցառումները, որոնք ուղղված էին միլլեթների փոխակերպմանը զուտ կրոնական ինստիտուտների՝ քաղաքացիական կառավարման բնագավառում նրանց ավանդական արտոնությունների ոչնչացման միջոցով: Պատահական չէ, որ 1856 թ. փետրվարի 18-ի հաթթ-ը հունայունի տեքստի մեջ արդեն ներգրավվել էր այն դրույթը, որն ուղղված էր այդ գաղափարի իրականացմանը. միլլեթների հոգևոր առաջնորդներին, որոնք ավանդապես իրականացնում էին իշխանությունը և հանդես էին գալիս որպես միջնորդ միլլեթների շարքային անդամների և թուրքական իշխանությունների իշխանությունների միջև, արգելվում զբաղվել քաղաքացիական գործերով: Վերջիններս էլ փոխանցվում էին հատուկ խորհուրդների (մեջլիսների) ղեկավարմանը, որոնք կազմված էին հոգևոր և աշխարհիկ անհատներից¹³⁹: Այսպիսով՝ հայրապետները զրկվեցին Բարձր դռանը իրենց կողմից ղեկավարվող համայնքի շահերի լիարժեք ներկայացման իրավունքից, իսկ նոր կազմված խորհուրդները չստացան: Այսուհետև, ոչ մահմեդականներին մնաց թուրքական իշխանությունների ճնշումներից պաշտպանություն փնտրելու միայն մեկ միջոց՝ դիմել դատարաններին, որոնք վերահսկվում էին հենց նույն իշխանությունների կողմից... Այդպիսով՝ հիմք դրվեց միլլեթների ներքին կյանքում ոչ մահմեդական ժողովուրդների ինքնավարությունը ապահովող համակարգի փլուզմանը և քաղաքացիական բնագավառում որևէ արտոնություններից զուրկ զուտ հոգևոր կազմակերպությունների համակարգով փոխա-

¹³⁹ Düstür. Cild-i evvel. İstanbul, 1289. s. 9.

րինմանը: Տասը տարի անց, 1866 թ. մարտին, հրատարակվեց կառավարական շրջաբերական գրությունը, որը հաստատեց հաթթը հունայունի այդ դրույթը. հոգևոր առաջնորդներին արգելվում էր Բարձր դռանը ներկայացնել այսպես կոչված, թաքրիրներ (թողոքներ), որոնք դուրս էին գուտ հոգևոր խնդիրներից:

Հաթթը հյունայունի մեջ արտահայտվեց ևս մեկ միտում. ոչ մահմեդական միլլեթների գործունեության վրա իշխանությունների անմիջական վերահսկման հաստատումը՝ օսմանյան վարչական համակարգի մեջ նրանց վերնախավի ներգրավման միջոցով. հաթի դրույթներից մեկով նախատեսված էր միլլեթների առաջնորդներին պետական ռոճիկի վճարում էրանով նրանք դառնում են պետական պաշտոնյաներ¹⁴⁰:

Կայսրության բոլոր բնակիչները անկախ նրանց ազգային և կրոնական պատկանելությունից, միավորվում էին հաթթը հյունայունի մեջ հետևյալ անվանումներով՝ «բարձր պետության հպատակներ», «սրբազան պետության հպատակներ», «սուլթանական հպատակներ»: Ինչպես նշում է ամերիկացի թուրքագետ Ռ. Դեվիսոնը, դա «միլլեթների միջև պատնեշների» վերացմանը նպատակաուղղված քայլ էր¹⁴¹:

Հաթթի տեքստում առաջին անգամ օգտագործված էր արտահայտություն, որը հավասարազոր էր «հայրենասիրություն» հասկացությանը՝ «vatanşilik»¹⁴² բառը: Այսպիսով՝ հաթթում իրենց արտացոլումը գտան այնպիսի հասկացություններ, որոնք հետագայում կազմեցին «օսմանյան ազգ» և «օսմանյան հայրենասիրություն» հայեցակարգերի հիմքը:

Սուլթանական հաթթի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ արդեն այնտեղ սաղմնային վիճակում պարունակվում էին «միաձուլման» քաղաքականության հիմնադրույթները: Սակայն հաթթը, ըստ էության, իրենից օրենսդրական ակտ չէր ներկայացնում. այնտեղ միայն նշված էին նորամուծություններ, որոնց

ներդրումը օրենսդրության մեջ ապագայի խնդիր էր: Դա արվեց էր 60-ական թթ.:

Թանգիմաթի գործիչները մեծ նշանակություն էին տալիս բարեփոխումներին վարչատարածքային կառավարման բնագավառում: Պատահական չէ, որ նրանց կողմից իրականացված վիլայեթների համակարգի բարեփոխումը դիտվում էր որպես «միաձուլման» անցկացման համար պայմանների նախապատրաստման ամենակարևոր քայլ:

Գնահատական տալով 1864 թ. ընդունված այսպես կոչված «Դանուբյան վիլայեթի մասին օրենքին», որը դրվեց 1867 թ. վիլայեթական օրենքի հիմքում՝ Ալի փաշան Փարիզում անանուն հրատարակված բրոշյուրում պնդում էր, որ այդ օրենքը համապատասխանում էր երկրի բնակչության շահերին, առանց ազգային և կրոնական տարբերության¹⁴³: Նրա բովանդակության վերլուծությունը հնարավորություն է տալիս երևան բերել թանգիմաթի գործիչների վարչատարածքային բարեփոխումների քաղաքականության հիմնական ուղղությունները և նպատակները:

Համաձայն այդ օրենքի՝ Բուլղարիայի նշանակալից մասը ընդգրկող Դանուբյան վիլայեթի բոլոր բնակիչները հայտարարվում էին «բարձր պետության հպատակներ», անկախ նրանից, թե որ համայնքին էին նրանք պատկանում: Դրանով իսկ օրենքով ամրապնդվում էր «միաձուլման» քաղաքականության կարևոր դրույթներից մեկը: Ոչ մահմեդականները ստանում էին բոլոր մակարդակների վարչական խորհուրդներում (վիլայեթների, սանջաքների և քաղաքների խորհուրդներ) ներկայացուցչության հավասար իրավունք¹⁴⁴: Սակայն, այն բանի պատճառով, որ վիլայեթի մահմեդական բնակչությունը ներկայացնում էին հիմնականում միայն թուրքերը, իսկ ոչ մահմեդականը, բացի բուլղարացիներից, ներկայացնում էին նաև հույները, հայերը, հրեաները և այլն, ապա մեջլիսներում մեծամասնությունը ինքնաբերաբար ստանում էին թուրքերը: Մահմեդականների և ոչ մահմեդականների «հավասար ներկայացուցչության»

¹⁴⁰ Düstür. Cild-i evvel, İstanbul, 1289. s. 9.

¹⁴¹ R. Davison, Reform in the Ottoman Empire 1856 -1876. Princeton, 1963, p. 56.

¹⁴² Düstür. Cild-i evvel, İstanbul, 1289. s. 9.

¹⁴³ [Un Impartial], Réponse a Son Altesse Moustapha Fazil Pacha au sujet de Sa lettre au Sultan. Paris, 1867, p. 19.

¹⁴⁴ Düstür. Tabı-i sani, Dersaadet, 1282. s. 517-536.

սկզբունքը Դանուբյան վիլայեթի պայմաններում, որտեղ ոչ մահմեդական արական սեռի ներկայացուցիչները երկու անգամ ավելի շատ էին¹⁴⁵, իրականում հետապնդում էր մեջլիսներում մահմեդականների անհամապատասխան մեծ ներկայացուցչությունը ապահովելու նպատակը:

Օրենքի համապատասխան հողվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած «հավասար ներկայացուցչության» հայտնի սկզբունքի հայտարարմանը, այնուամենայնիվ, այնտեղ ներառված էին դրույթներ, որոնցով օրինականացվում էր մահմեդականների էլ ավելի մեծ ներկայացուցչությունը նոր ստեղծված գավառական տարբեր մակարդակի մեջլիսներում: Նախատեսվում էր, օրինակ, վիլայեթական վարչական 11 հոգիանոց մեջլիսների ստեղծումը՝ վալիի ղեկավարությամբ: Նրանցից ընտրվում էին միայն 6 (3 մահմեդական և 3 ոչ մահմեդական), իսկ մնացած հինգը մտնում էին նրա կազմի մեջ «ըստ պաշտոնի»՝ վալի (մեջլիսի նախագահ), շարիաթական դատարանների տեսուչ, վիլայեթի ֆինանսների կառավարիչ, փոստային կառավարիչ և արտաքին հարաբերություններին կառավարիչ: Բոլոր այս վիլայեթական պաշտոնյաները բացարձակ մեծամասնությամբ թուրքեր էին: Այսպիսով՝ մեջլիսի 11 անդամներից միայն երեք-չորսն էին ոչ մահմեդական: Մոտավորապես այդպիսին էր հարաբերակցությունը նաև սանջաքների և քազաների մեջլիսներում:

1864 թ. օրենքի նպատակներից մեկը ինքնակառավարվող բուլղարական համայնքների ներքին գործերի ավանդական անկախության սահմանափակումն էր: Այսպես՝ մեջլիսների անդամները համարվում էին ոչ թե համայնքների, այլ բոլոր «օսմանցիների»¹⁴⁶ ներկայացուցիչներ: Համայնքային խորհուրդների փոխարեն ստեղծվում էին այսպիս, կոչված, ավագների խորհուրդներ, որոնք իշխանության ձեռքում հնազանդ գործիք էին և ապահովում էին բուլղարական համայնքների կյանքի ավելի արդյունավետ վերահսկում իշխանությունների կողմից:

Համաձայն օրենքի՝ ստեղծվեցին նաև խառը դատական խորհուրդներ, որոնք հետաքննում էին մահմեդականների և ոչ մահմեդականների միջև դատական գործերը: Նրանց գլխավորում էր թուրքական քաղին: խորհուրդների անդամները, այդ թվում նաև քրիստոնյաները, թուրքական իշխանությունների կողմից ռոճիկ էին ստանում, այսինքն՝ փաստորեն նրանք պետական ծառայողներ էին:

Ինչպես արդեն նշվել էր, ըստ 1864 թ. օրենքի, քրիստոնյաները իրավունք էին ստանում մեջլիսների անդամներ ընտրվել: Նրա տեքստում մեծ տեղ էր հատկացված տարբեր մակարդակի խորհուրդներում ընտրությունների կազմակերպման մասին դրույթներին (հողվածներ 67-82)¹⁴⁷: Համապատասխան հողվածների քննարկումը ցույց է տալիս, որ նրանք այնպես էին կազմված, որ ապահովեն իշխանություններին օգտակար անհատների ընտրությունը ոչ մահմեդականներից: Այսպիսով, ընտրությունների կազմակերպումը հանձնարարված էր իշխանություններին, որոնք էլ դրանով իսկ նրանց ընթացքը վերահսկելու հնարավորություն էին ստանում: Թեկնածուների համար սահմանվում էր բարձր գույքային ցենզ, ընդ որում այն մեջլիսի «բարձր» մակարդակից շատ ավելի բարձր էր: Դրանով իսկ շատ պարզ երևում էր, որ օրենքի հեղինակները ձգտում էին իրենց գործունեության մեջ հենվել բնակչության ունևոր շերտի վրա, այդ թվում նաև ոչ մահմեդականների:

«Միաձուլման» ոգով վերակազմավորման ենթարկվեցին նաև իշխանության կենտրոնական մարմինները: 1867 թ. մարտին Բարձրագույն իրավաբանական խորհրդի փոխարեն ստեղծվեցին երկու նոր մարմիններ. Պետական խորհուրդը և Արդարադատության խորհուրդը: Բարձր դուռը հատուկ նշանակություն էր տալիս Պետական խորհրդին: Նրա կանոնադրության առաջին հոդվածում նշվում էր, որ «այն վարչական կառավարման բնագավառում կայսրության կենտրոնական մարմինն է»¹⁴⁸: խորհուրդներում նշանակված էին նաև ոչ մահմեդականները: Սակայն խորհուրդների կազմը չէր արտացոլում կայսրության մեջ տարբեր ժողովուրդների և ազ-

¹⁴⁵ Н. Тодоров, Балканският город XV-XIX веков. М. 1978, с. 283.

¹⁴⁶ Düstür. Tabb-ı sani, Dersaadet, 1282. s. 520, 524.

¹⁴⁷ Düstür. Tabb-ı sani, Dersaadet, 1282. s. 531 - 534.

¹⁴⁸ Düstür. Cild-i evvel, İstanbul, 1289, s. 703.

գային-դավանական խմբերի միջև ստույգ հարաբերակցությունը: Այսպես՝ Պետական խորհրդի 41 անդամներից միայն 13-ն էին ոչ մահմեդական¹⁴⁹: խորհրդի նախագահ էր նշանակված Միդհատ-փաշան՝ «միաձուլման» քաղաքականության ջերմ կողմնակիցը: Ընդհանուր առմամբ, Պետական խորհուրդի ստեղծումը ևս մեկ քայլ էր դեպի «միաձուլման» գաղափարների արմատավորումը Օսմանյան կայսրության վարչա-պետական համակարգում:

«Միաձուլման» ծրագրում մեծ տեղ էր հատկացվում կայսրության ժողովուրդների «գաղափարական միաձուլմանը»: Ենթադրվում էր, որ նրանց՝ սուլթանին և «օսմանյան հայրենիքին» նվիրվածության ոգով դաստիարակումը հնարավորություն կստեղծի իրականացնել միաձուլումը: Այդ նպատակով առաջարկվում էին երկու միջոց՝ խառը մահմեդական-քրիստոնեական ժողովրդական կրթության համակարգ և խառը ռազմական կազմավորումներ:

1860 թ. հրատարակվեց կառավարական հրամանագիրը, որտեղ նշված էր քրիստոնյաների մուտքի անհրաժեշտությունը մահմեդական դպրոցներ, որը նրանց հնարավորություն կտար կրթություն ստանալ ամբողջությամբ «կառավարության ոգով» և հետագայում օգտագործվել որպես պետական ծառայողներ¹⁵⁰: Սակայն այդ հրամանագիրը լիակատար ձևով չհաջողվեց իրականացնել: Դրա դեմ դուրս եկան ինչպես մահմեդականները, որոնք կարծում էին, որ երեխաների խառը ուսուցումը հակասում է իսլամի ոգուն, այնպես էլ քրիստոնյաները, որոնք կռահեցին կառավարության իսկական նպատակը՝ «այդ միջոցով թուլացնել նրանց մեջ ազգության և կրոնի զգացումը»¹⁵¹:

1869 թ., զբաղեցնելով Կ.Պոլսում բարձր պետական պաշտոններից մեկը՝ Պետական խորհրդի նախագահի, Միդհատ փաշան զգալի դեր խաղաց նոր՝ «ժողովրդական կրթության մասին օրենքի»

¹⁴⁹ E. Z. Karal, Osmanlı Tarihi. VI cilt: Islahat Fermanı devri, 1856 -1861. Ankara, 1954, s. 148 - 149.

¹⁵⁰ В. Ф. Кожевников – Н. П. Игнатъеву, Рушук (Русе), 23 января 1866 г. - АВПРИ, ф. Посольство в Константинополе 1866, д. 21826 (Консульство в Русуке), л. 23 об.

¹⁵¹ В. Ф. Кожевников – Н. П. Игнатъеву, Рушук (Русе), 23 января 1866 г. - АВПРИ, ф. Посольство в Константинополе 1866, д. 21826 (Консульство в Русуке), л. 24.

նախապատրաստման մեջ: Այդ լայնածավալ փաստաթղթում, որը բաղկացած էր 196 հոդվածներից, իրենց ձևավորումը գտան «օսմանյան հայրենիքին» հավատարմության ոգով ոչ թուրք ժողովուրդների «նպատակասլաց դաստիարակման» մասին «միաձուլման» ջատագովների գաղափարները: Նրա վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու կրթության բնագավառում «միաձուլման» քաղաքականության երկու հիմնական ուղղությունները. մի կողմից, քրիստոնյա ժողովուրդների ժողովրդական կրթության զարգացած համակարգի քայքայումը և կառավարության վերահսկողության ուժեղացումը նրա հանդեպ, իսկ մյուս կողմից, ուսումնական հաստատությունների նոր ցանցի ստեղծումը, որը պետք է ծառայեր երկրի բոլոր բնակիչների «գաղափարական միաձուլմանը»:

Օրենքի համաձայն Օսմանյան կայսրության բոլոր դպրոցները ստորաբաժանվում էին երկու խմբերի. պետական ու մասնավոր¹⁵²: Ոչ մահմեդական երեխաների համար նախատեսված էին հիմնականում մասնավոր դպրոցները, օրենքի առաջին հոդվածով դրվում էին պետության անմիջական վերահսկողության տակ: Այնինչ, 1856 թ. հաթթ-ը հումայունը նախատեսում էր հատուկ մեջլիսների ստեղծում, որոնք պետք է վերահսկողություն իրականացնեին հպատակ քրիստոնյա ժողովուրդների դպրոցների նկատմամբ¹⁵³: 1869 թ. օրենքի հեղինակները, համարելով այդ դրույթը չափազանց «լիբերալ», որոշեցին ոչ մահմեդականների դպրոցները կառավարության անմիջական հսկողության տակ դնել:

Սակայն օրենքի հեղինակները դրանով չսահմանափակվեցին: Օրենքի տեքստի մեջ նրանք դրույթներ մտցրեցին, որոնք նպատակ ունեին խոչընդոտել կայսրության քրիստոնյաների մեջ լուսավորության գործի հետագա զարգացումը: Այդ առումով բնորոշ է 129-րդ հոդվածը, համաձայն որի՝ «մասնավոր» դպրոցի հիմնադրման թույլտվությունը կարող էին տալ միայն ժողովրդական կրթության նախարարությունը կամ վիլայեթի վալին: Ընդ որում դրվում էր հետևյալ նախնական պայմանը. նոր հիմնադրված դպրոցի ուսու-

¹⁵² Düstür. Cild-i sani, İstanbul, 1289, s. 184.

¹⁵³ Düstür. Tabı-i sani, Dersaadet, 1282, s. 11.

ցիչները պետք է անպայման ունենային պաշտոնական թույլտվություն կամ դիպլոմ՝ տրված ժողովրդական կրթության նախարարության կողմից: Դրանով իսկ դժվարանում էր նոր դպրոցների ստեղծումը:

1869 թ. օրենքի վերը նշված հոդվածները իրենցից ներկայացնում էին «միաձուլման» ծրագրի այն հատվածի արտացոլումը, որի նպատակն էր վերացնել քրիստոնյա ժողովուրդների ազգային լուսավորության հաստատությունների զարգացած համակարգի ինքնավարությունը:

Սակայն, ինչպես արդեն նշել էինք, «միաձուլման» քաղաքականության նախաձեռնողները հասկանում էին, որ միայն սահմանափակող միջոցներով արգելք հանդիսանալ ազգային-ազատագրական գաղափարախոսության աճին անհնարին է: Դրանից ելնելով նրանք առաջին անգամ առաջ քաշեցին սուլթանին և «օսմանյան հայրենիքին» հավատարիմ ոգով ոչ մահմեդական հպատակների «նպատակասլաց» դաստիարակման գաղափարը: Հենց այս նպատակին էին ծառայում մահմեդականների և ոչ մահմեդականների «խառը» ուսուցման մասին օրենքի դրույթները:

Այս սկզբունքը ներմուծվում էր սկսած երկրորդ աստիճանի դպրոցներից: Ինչպես երևում է 38-րդ հոդվածից, *իդադիյե* խառը դպրոցներում ոչ մահմեդականների երեխաների համար հատուկ առարկաներ, բացառությամբ, աստվածաբանության, նախատեսված չէին: Այսպիսով, այս դպրոցներում սովորող ազգությամբ ոչ թուրք երեխաները դատապարտված էին ապազգայնացման:

Օրենքի հեղինակները չհամարձակվեցին ներմուծել «խառը» ուսուցման սկզբունքը սկսած առաջին աստիճանի տարրական դպրոցներից: Ըստ ամենայնի, նրանք հաշվի էին առնում Դանուբյան վիլայեթում Միդիատ փաշայի անհաջող փորձը: Այն բնակավայրերում, որտեղ մեծ մասը կազմում էին քրիստոնյաները, օրենքը նախատեսում էր մահմեդականների համար *սըրբյան* դպրոցների հետ մեկտեղ ստեղծել մեկ պետական տարրական դպրոցներ միայն քրիստոնյա երեխաների համար: Առաջին հայացքից այդ դրույթը բարենպաստ էր հպատակ ժողովուրդների համար: Սակայն օրենքի 6-րդ հոդվածից երևում էր, որ դա ամենևին էլ այդպես չէր. այդ դպրոցներում չէին ուսուցանվում առարկաներ, որոնք

կապված են այն ժողովորդի պատմության և գրականության հետ, որի զավակները սովորում էին այդ դպրոցներում: Դեռ ավելին՝ օրենքը ընդգծում էր, որ այդ դպրոցների կառուցման համար անհրաժեշտ միջոցները պետք է հատկացվեին տեղական քրիստոնյա համայնքների կողմից...

Խառը կամ «զուտ» մահմեդական ուսումնարանները ավարտած քրիստոնյա երեխաները, 1869 թ. օրենքի համաձայն, իրավունք էին ստանում ընդունվել լիցեյներ, որոնք պետք է Բարձր դռանը հավատարիմ պաշտոնյաների կադրեր պատրաստեին: Նման տիպի հաստատություններից առաջինը հայտնի Գալաթասարայի լիցեյն էր, որի կանոնադրությունը Բարձր դուռը հրատարակեց 1868 թ.: Նրա առաջին հոդվածում լիցեյի ստեղծման նպատակը ձևակերպվում էր հետևյալ կերպ. «Երիտասարդ մարդկանց, որոնք պատկանում են օսմանյան պետության բոլոր դասի հպատակներին, ուսուցումը և դաստիարակումը՝ ի շահ կայսրության»¹⁵⁴: Այս ձևակերպումը արտացոլում է արևմտամետ բարենորոգիչների կարծիքը առ այն, որ համապատասխան «դաստիարակումից» հետո հնարավոր կլինեի ոչ մահմեդականներին թույլ տալ անցնել պետական ծառայության:

Ալին և Ֆուադը կրեցին անհաջողություն խառը ռազմական կազմավորումների ստեղծման գործում: Առաջին անգամ նման փորձ կատարվել էր 1855 թ. մայիսին, երբ հրապարակվեց սուլթանական իրադեն խարաջի վերացման և կայսրության բոլոր բնակչության վրա զինծառայության պարտքի տարածման մասին¹⁵⁵:

Այդ փաստաթղթում թանգիմաթի դարաշրջանին բնորոշ արտահայտություններով հաստատվում էր, որ քանի որ օսմանյան պետությունում ոչ մահմեդականները իրավունք ունեն օրենքի հովանու ներքո «բարգավաճել և բարեկեցիկ ապրել», ուրեմն նրանք մահմեդականներին հավասար պետք է ծառայեն բանակում: «Մինչև այժմ միայն մահմեդական հպատակներն էին կատարում այդ պարտքը, - ասվում էր իրադեում,- այնինչ հայրենիքի պաշտ-

¹⁵⁴ Düstür. Cild-i sani, İstanbul, 1289, s. 245.

¹⁵⁵ Eastern Papers: Correspondence respecting cristian privileges in Turkey, London, 1856, XVIII. p. 1-3.

պանությունը բոլորի պարտքն է»¹⁵⁶: Միաժամանակ, իրադեում վերապահություն էր արվում, որ «խառը» բանակում պետք է պահպանվի մահմեդականների գերիշխող դիրքը: Դա հիմնավորվում էր այն հանգամանքով, որ նրանք իբրև թե «վարժված» են գեներ կրել, ինչպես նաև նրանով, որ նրանք իբրև թե կազմում են կայսրության բնակչության մեծ մասը¹⁵⁷: Փաստորեն, օրենքով նախատեսվում էր օգտագործել ոչ մահմեդական հպատակներին որպես «թնդանոթի միս» քայքայվող կայսրությունը պաշտպանելու համար:

1855 թ. օրենքը ուժեղ դիմադրության հանդիպեց ինչպես մահմեդականների, այնպես էլ քրիստոնյաների կողմից: Մահմեդականների մեծամասնության մտքով անգամ չէր կարող անցնել այն փաստը, որ «գյավուրներին» թույլ կտան գեներ կրել: Մյուս կողմից, սուլթանի քրիստոնյա հպատակների մեծամասնությունը անհնարին էր համարում արյուն թափել հանուն ատելի պետականության պաշտպանության: Այդ պատճառով՝ 1855 թ. օրենքը այդպես էլ մնաց թղթի վրա, և նրա հրապարակումից հետո խառը ռազմական կազմավորումներ չստեղծվեցին: 60-ական թթ. սկզբին այս հարցը նորից դրվեց օրակարգում, սակայն վերջնական որոշում չընդունվեց¹⁵⁸: Այսպիսով՝ Ալիին և Ֆուադին չհաջողվեց հասնել իրենց նպատակին այս ոլորտում:

Ալիի և Ֆուադի՝ երկրի օրենսդրության մեջ «միաձուլման» հայեցակարգի ներդրման ջանքերի պսակը դարձավ 1869 թ. օսմանյան հպատակության մասին օրենքը¹⁵⁹: Այդ ակտի առաջին հոդվածի համաձայն, Օսմանյան կայսրության բոլոր բնակիչները, անկախ իրենց ազգային պատկանելությունից և կրոնադավանությունից, հայտարարվում էին «օսմանյան պետության հպատակներ»¹⁶⁰:

Արտաքուստ այդ օրենքը բարենպաստ էր ոչ մահմեդականների համար, քանի որ առաջին անգամ աստվածապետական Օսմանյան

¹⁵⁶ Eastern Papers: Correspondence respecting cristian privileges in Turkey, London, 1856, XVIII. p. 2.

¹⁵⁷ Eastern Papers: Correspondence respecting cristian privileges in Turkey, London, 1856, XVIII. p. 2.

¹⁵⁸ Н. П. Игнатъев - А. М. Горчакову, Константинополь, 21 марта/2 апрель 1867 г. - АВПРИ, ф. Канцелярия, д. 32, л. 159 об.

¹⁵⁹ Düstür. Cild-i evvel, İstanbul, 1289, s. 16-18.

¹⁶⁰ Düstür. Cild-i evvel, İstanbul, 1289, s. 16.

կայսրությունում օրենսդիր ձևով ձևակերպվում էր իրենց մահմեդականների հետ հավասար «հպատակներ» անվանելու իրավունքը, ձևականորեն վերացվում էր կրոնական խտրականությունը, որը դարերի ընթացքում համարվում էր մահմեդական պետությունների բնորոշ առանձնահատկությունը:

Սակայն այդ օրենքի իրական նշանակությունը այլ էր: Փաստորեն այն զրկում էր ոչ թուրք ժողովուրդներին ազգային ինքնության իրավունքից: Այսուհետև կայսրության բոլոր բնակիչները համարվում էին «օսմանյան հպատակներ», այլ ոչ թե հույներ, բուլղարացիներ, հայեր... Դրանով կարևոր քայլ էր արվում բազմազգ կայսրության բնակչության «միախառնման ու միաձուլման» ճանապարհին:

Եզրակացնելով՝ կարելի է նշել, որ «միախառնման ու միաձուլման» քաղաքականության նախաձեռնողները կարողացան օրենսդրական ձևակերպում տալ իրենց կողմից մշակված ծրագրերի միայն մեկ մասին: Շատ կարևոր դրույթներ մնացին չիրականացված: Չհաջողվեց ստեղծել հստակ գործող և խիստ կենտրոնացած վարչական համակարգ, որը կարող էր հիմք դառնալ «միաձուլման» համար: Լուսավորության և ռազմական ոլորտի բնագավառում իրականացված բարենորոգումները, որոնք նպատակաուղղված էին «ընդհանուր ոգու» առաջացմանը, լիովին չէին արտացոլում ամբողջ մտածվածը:

Հենց իրենք՝ «միաձուլման» քաղաքականության հեղինակները, գիտակցում էին այդ: Կյանքի վերջում, գնահատելով Ֆուադի հետ համատեղ գործունեության արդյունքները, Ալի փաշան ցավով արձանագրում էր. «Մենք անգոր եղանք...»:

Սակայն նույնիսկ այն, ինչ թանգիմաթի գործիչները կարողացան իրականացնել, վտանգ էր ներկայացնում քրիստոնյա ժողովուրդների հետագա ինքնուրույն գոյության համար: Նրանց նախաձեռնությամբ ընդունված օրենքները հող էին նախապատրաստում հպատակ ժողովուրդների «խաղաղ» ուժացման համար: Ուշագրավ է, որ «միաձուլումը» իրականացվում էր արևմտյան օրինակով բարեփոխումներ անցկացնելու և սուլթանի բոլոր հպատակների համար արդարացի կառավարման համակարգի հաստատման պատրվակով:

Բերված փաստերը ցույց են տալիս, որ թանգիմաթի տարիներին Բարձր դռան քաղաքականությունը ազգային հարցում, չնայած կառավարական ակտերում մի շարք առաջադեմ դրույթների հայտարարմանը, բնորոշվում էր նրա մեջ հետադիմական, հակաազգային, ճնշողական միտումների ուժեղացմամբ: Դա ստիպում է վերանայել արևմտյան և թուրքական պատմագրության մեջ լայն տարածում գտած թանգիմաթի շրջանում հպատակ ժողովուրդների նկատմամբ թուրք իշխանությունների քաղաքականության «լիբերալիզացիայի» մասին կարծիքը, ինչպես նաև այդ ժամանակաշրջանի գնահատականը ամբողջությամբ վերցրած: Կարելի՞ է արդյոք անվերապահորեն պնդել, որ թանգիմաթական նորամուծությունները առաջադիմական էին, եթե նրանք ուղղված էին քրիստոնյա ժողովուրդների ազգային ոգու ճնշմանը: Ըստ էության, թանգիմաթը, ինչպես դա ցույց է տրվում ստորև, հող նախապատրաստեց երկրում նախացեղասպանական իրադրության առաջացման համար: Պատահական չի կարելի համարել այն հանգամանքը, որ Ալիի և Ֆուադի կրտսեր գործընկերը՝ Միդիատը դարձավ Օսմանյան կայսրությունում առաջին ցեղասպանական բնույթի ծրագրի հեղինակը:

ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԺՈՒՄՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ

1. ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Ընդդիմադիր սահմանադրական շարժումը սկիզբ առավ «նոր օսմանցիների» գաղտնի խմբակից, որը ստեղծվեց 1865 թ. Կոնստանդնուպոլսում: Նրա անդամները իրենց գործունեության սկզբնական շրջանում գտնվում էին շեյխ Ահմեդի արմատական մուսուլմանական և ծայրահեղ հակաքրիստոնեական գաղափարների ազդեցության ներքո, ով ղեկավարն էր հակաթանգիմաթյան «Քուլեփի իրադարձություն» անվան տակ հայտնի դավադրության: «Նոր օսմանցիների» առաջնորդները բարձր գնահատեցին դավադիրների գործունեությունը: Նամըք Քեմալը (1842-1888)՝ նրանց գաղափարախոսը, իր կողմից հրատարակվող «Յյուրիյեթ» լրագրում նշում էր, որ Ահմեդը և նրա ընկերները ձգտում էին «փրկել պետությունը»¹⁶¹:

Այդ հանգամանքը ազդեց, ըստ երևույթին, սահմանադրականների ազգային հարցի վերաբերյալ այն մոտեցումների վրա, որոնք ձևակերպվեցին նրանց գործունեության առաջին տարիներին: Նրանք ընկալում էին ազգային հարցը որպես զուտ կրոնական: Քաղաքական խնդիրների ողջ բարդ համալիրը, որոնք բխում էին կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ իշխանությունների ծայրահեղ մեծապետական քաղաքականությունից, նրանց կողմից բնութագրվում էր որպես հակամարտություն իսլամի և քրիստոնյաների միջև:

«Նոր օսմանցիները», հիմնվելով շեյխ Ահմեդի գաղափարների վրա, կարծում էին, թե թանգիմաթյան բարեփոխումների հետևանքով մահմեդականների իրավունքները իբրև թե սահմանափակվել էին, իսկ քրիստոնյաները ստացել էին չափազանց մեծ առավելություններ: 1856 թ. հաթթ-ը հյուսնայունը, որն ազդարարեց թանգիմաթի երկրորդ

¹⁶¹ Hüriyet, 1869, No. 30.

փուլի սկիզբը, նրանք անվանում էին «առավելությունների մասին ֆիրման»¹⁶²: Նրանք գրում էին, որ թանգիմաթի դարաշրջանում Բարձր դռան քաղաքականությունը ուղղված էր «քրիստոնյաների բավարարմանը», ինչի հետևանքով մահմեդականները իբրև թե հայտնվել էին «հալածված համայնքի» դրության մեջ¹⁶³: Այդ պատճառով «նոր օսմանցիները» իրենց հայտարարեցին, ինչպես գրում էր նրանց պատկանող մեկ այլ պարբերաթերթ՝ «Սուլիբիդը», կայսրության մահմեդականների «ոտնահարված» իրավունքների պաշտպաններ¹⁶⁴:

«Նոր օսմանցիները» չէին հասկանում թանգիմաթի առաջնորդների քաղաքականության բուն նպատակները հպատակ քրիստոնյան ժողովուրդների նկատմամբ, անտեսում էին այն փաստը, որ այդ քաղաքականությունը ուղղված է կայսրության ամբողջականության պահպանմանը՝ նոր, ավելի ճկուն միջոցներով: Նրանք Ալի փաշային և Ֆուադ փաշային համարում էին «ղավաճաններ», քանի որ վերջիններս 1856 թ. հրապարակեցին, ինչպես գրում էր «Հյուրի-յեթի» խմբագիր Նամըք Քեմալը, «առավելությունների մասին հռչակավոր ֆիրմանը», որը քրիստոնյաներին դարձրեց «փաշաներ, անվանի և պատվարժան մարդիկ»¹⁶⁵:

Այդ տարիներին «նոր օսմանցիների» վերաբերմունքը կայսրության քրիստոնյա բնակչության նկատմամբ տարբերվում էր ծայրահեղ անհանդուրժողականությամբ: Պրուսացի դիվանագետ Ա.Սորդտմանը, որը մոտիկից ծանոթ էր նրանցից մի քանիսի հետ, հետագայում գրում էր, որ այդ կազմակերպության անդամները բացի Ալի փաշայի հեռացումից և եվրոպական օրինակով նորամուծությունների վերացումից, որոնք իրականացվում էին թանգիմաթի ժամանակաշրջանում, մտադիր էին նաև՝ «սուլթանի հպատակ քրիստոնյաների բացեիբաց ճնշում կազմակերպել»¹⁶⁶: Մասնավորապես, նրանք Բարձր դռան կողմից հայ լուսավորչական և հույն

¹⁶² Hürriyet, 1869, No. 12.

¹⁶³ Hürriyet, 1869, No. 14.

¹⁶⁴ Muhbir, 1867, No. 1.

¹⁶⁵ Hürriyet, 1869, No. 14.

¹⁶⁶ [A. D. Mordtmann], *Sambul und das moderne Türkenhum* (Politische, sociale und biographische Bilder von einem Osmanen), B. 1, Leipzig, 1877, S. 66.

ուղղափառ միլլեթների սահմանադրությունների հարկադրական ընդունումը համարում էին վնասակար նորամուծություն¹⁶⁷: Ինչպես հայտնի է, այդ սահմանադրությունների ընդունումը որոշակի դրական ազդեցություն ունեցավ հպատակ ժողովուրդների դրության վրա, նպաստեց հասարակական կյանքի աշխուժացմանը և նրանց քաղաքական և ազգային ինքնագիտակցությանը: Հենց դրա համար «նոր օսմանցիները» դատապարտեցին թուրք կառավարության այդ միջոցառումները: Հետագայում, Նամըք Քեմալը այդ նույն պատճառով Ալի փաշայի՝ հունական եկեղեցական նվիրապետությունից բուլղարացիների անջատման վերաբերյալ թույլտվության դեմ հանդես եկավ¹⁶⁸:

Թշնամական վերաբերմունքը հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման նկատմամբ բնորոշ էր «նոր օսմանցիների» առաջնորդներին իրենց ամբողջ գործունեության ընթացքում: Սակայն շարժման սկզբնական փուլում այն ընդունեց բացառիկ սուր ձև: Այդ տարիներին իրենց հասարակական գործունեությունը նոր սկսող Նամըք Քեմալը և նրա ընկերները դեռ բավականաչափ փորձված քաղաքագետների չէին, որպեսզի թաքցնեին իրենց իրական մտադրությունները: Դրա հետ մեկտեղ, նրանք, ինչպես նշվեց վերևում, գտնվում էին շեյխ Ահմեդի գաղափարների ազդեցության տակ:

Այդ տարիների «նոր օսմանցիների» հայացքները քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման նկատմամբ խտացրած տեսքով դրսևորվեցին այն դիրքորոշման մեջ, որը նրանք որդեգրեցին 1866–1869 թթ. Կրետե կղզու հույների ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ:

«Նոր օսմանցիների» կողմից հրատարակվող թերթերի էջերում Կրետեի հարցին մեծ տեղ էր հատկացվում: Այդ հրապարակումներում առաջ էր տարվում այն միտքը, որ ապստամբության ճնշումը մեծ նշանակություն կունենա Օսմանյան կայսրության ապագայի համար: «Սուլիբիդը» նույնիսկ գրում էր, որ դրանից է կախված «օս-

¹⁶⁷ А. Убичини, А. Куртеуль, Современное состояние Оттоманской империи, СПб., 1877, с. 168–170.

¹⁶⁸ М. С. Kuntay, Namik Kemal devrinin insanları ve olayları arasında. C. I, İstanbul, 1944, s. 150.

մանյան պետության անկախությունը»¹⁶⁹: եվ «Սուլիբիրը», և «Թասֆիր-ի էֆջարը», որի խմբագիրը Նամըք Քեմալն էր, խիստ քննադատում էին Բարձր դռան իբրև թե չափազանց «մեղմ» վերաբերմունքը ապստամբների նկատմամբ: Կրետեի հարցում Ալի փաշայի քաղաքականությունը նրանք բնութագրում էին որպես «քրիստոնյամետ», իսկ նրան անվանում էին դավաճան: Այն քննադատական մոտեցման բնորոշ օրինակ է երգիծական «Չաֆեր-նամե» պոեմը, որը գրել էր հայտնի բանաստեղծ և «նոր օսմանցիների» շարժման անվանի գործիչ Չիա փաշան (1825-1880): Այստեղ սուր քննադատության և ծաղրի էր ենթարկվում Ալիի «զիջումների» քաղաքականությունը ապստամբ կրետացիների նկատմամբ¹⁷⁰:

Չիջումների քաղաքականության փոխարեն Նամըք Քեմալը «Թասֆիր-ի էֆջարի» էջերից առաջարկում էր դիմել «բռնի ուժի սկզբունքին» և ոչնչացնել կղզում ապրող բոլոր քրիստոնյաներին: Միայն այդ ճանապարհով կարելի էր, նրա կարծիքով, վերականգնել «խաղաղությունը» Կրետեում: Նա բացառում էր քրիստոնյաների նկատմամբ թեկուզ ամենաչնչին զիջումների հնարավորությունը¹⁷¹: Կրետեի ճգնաժամի հետ կապված «Թասֆիր-ի էֆջարը» ծավալեց ուժեղ հակահունական կամպանիա: Հույները, որոնք բնակվում էին մայրաքաղաքում, մեղադրվում էին նրա կողմից «հակաթուրքական երգեր երգելու» միջոցով՝ այլ քրիստոնյաներին «խլամի միլլեթի» դեմ սադրելու մեջ¹⁷²: Նամըք Քեմալը կոչ էր անում կառավարությանը կայսրության հույների դեմ ընդունել պատժիչ միջոցներ, վտարել նրանց երկրից¹⁷³: Իսկ «Սուլիբիրը» Կրետեի մահմեդականներին աջակցող նյութեր էր տպագրում¹⁷⁴:

Ընդդիմադիրների շրջանում զայրույթի փոթորիկ առաջացրեց Բարձր դռան կողմից Բելգրադյան միջմաբերդի հարկադրված հանձնումը Սերբիային, ինպես նաև, Չերնոգորիայի անկախության

ճանաչումը: Ալի Սուլափին գրում էր «Սուլիբիրում». «Մեր նախնիները, աղյուս թափելով, թիզ առ թիզ նվաճել են այս հողերը, իսկ մենք, իրենց անարժան սերունդները, քայլ առ քայլ ամբողջը վերադարձնում ենք հետ»:

Բարձր դռան կողմից այս հարկադրված քաղաքական զիջումները, որոնց պատճառն էին կայսրության ընդհանուր թուլացումը և ռազմական հզորության անկումը, «նոր օսմանցիների» կողմից ընկալվում էին որպես զիջումներ «անհավատների», որպես քրիստոնեության առջև մահմեդականների թուլության փաստի ճանաչում: Նրանք ձգտում էին իրենց գրական-հրապարակախոսական ստեղծագործությունների միջոցով, օգտագործելով մարտական կոչերը՝ ուղղված քրիստոնեական աշխարհի դեմ, արթնացնել մահմեդականների անցյալի մարտական ոգին: Նամըք Քեմալը իր հայտնի «Երազ» հրապարակախոսական ստեղծագործությունում գրում էր. «Մեր մարգարեն ծառայում էր աշխարհին իր դաշույնով: Մենք նույնպես պետք է զնանք այդ ճանապարհով... Կաշխատենք ապացուցել, որ մենք պատկանում ենք օսմանյան ժողովորդին, որը ամբողջ աշխարհին ստիպում է դողալ իր առջև... Տույց տանք գյավուրների մեր ուժը, պատճառենք այդ հաճույքը մարգարեին»¹⁷⁵:

Ավելի վաղ, նման թեմաներ հայտնվեցին Իբրահիմ Շինասիի ստեղծագործություններում: Նա փառաբանում էր «իսկական օսմանցիների» մարտական ոգին, նրանց հաղթանակները «գյավուրների» դեմ¹⁷⁶: Իբրահիմ Շինասին հիմնադրեց առաջին զինվորական թերթը Թուրքիայի պատմության մեջ՝ «Չերիդե-ի Աքքերիեն»: Իր հողվածներում այդ թերթում նա ամեն կերպ զովաբանում էր օսմանցի թուրքերին՝ աշխարհի ամենառազմաշունչ ժողովորդին, որի յուրաքանչյուր ներկայացուցիչը մարտիկ է և մարտիկի որդի¹⁷⁷:

«Նոր օսմանցիների» գործունեության արդեն սկզբնական փուլում նրանք հանդես էին գալիս սահմանադրության հայտարարման միջոցով ազգային հարցի լուծման օգտին: Ընդ որում, ենթադրվում

¹⁶⁹ Muhbir, 1868, No. 41.

¹⁷⁰ E. J. W. Gibb, A history of Ottoman poetry, vol. VI, London, 1967, p. 371.

¹⁷¹ M. Kaplan, Namik Kemal: hayatı ve eserleri. İstanbul, 1948, s. 51.

¹⁷² M. C. Kuntay, Namik Kemal devrinin insanları ve olayları arasında. C. I, İstanbul, 1944, s. 59.

¹⁷³ M. C. Kuntay, Namik Kemal devrinin insanları ve olayları arasında. C. I, İstanbul, 1944, s. 62.

¹⁷⁴ Muhbir, 1868, No. 29.

¹⁷⁵ M. Kaplan, Namik Kemal: hayatı ve eserleri. İstanbul, 1948, s. 42.

¹⁷⁶ Tanzimat dönemi türk edebiyatı antolojisi. Hazır.: Ş. Kutlu. İstanbul, 1972, s. 17.

¹⁷⁷ Tanzimat dönemi türk edebiyatı antolojisi. Hazır.: Ş. Kutlu. İstanbul, 1972, s. 32-33.

էր, որ այդպիսով հնարավոր կլինի ապահովել կայսրության բազմադավան ու բազմազգ բնակչության միասնությանը: «Նոր օսմանցիներին» միացած եգիպտացի մեծատոհմիկ Յալիլ Շերիֆ փաշայի կողմից նախապատրաստած թուլցիկուն հաստատվում էր, որ «սահմանադրությունը անմիջապես կվերականգնի մահմեդական պետության հեղինակությունը՝...վերացնելով քաղաքական և սոցիալական տարբերությունները մահմեդականների և ոչ մահմեդականների միջև»¹⁷⁸: Ինչպես երևում է բերված հատվածից, պետության մահմեդական կերպարանքը ոչ միայն ենթադրվում էր թողնել անփոփոխ, այլ նաև սահմանադրության հայտարարման միջոցով ավելի ամրացնել նրա հեղինակությունը:

Բացի Յալիլ Շերիֆ փաշայից, «նոր օսմանցիների» շարժման մեջ մասնակցում էր այլ ականավոր եգիպտացի արիստոկրատ՝ Մուսթաֆա Ֆազլի փաշան, եգիպտոսի հեղիվ Իսմաիլ փաշայի եղբայրը: 1867 թ. սկզբին եվրոպական թերթերում տպագրվեց սուլթան Աբդուլ Ազիզին ուղղված նրա բաց նամակը¹⁷⁹: Նրա վերլուծությունը դրսևորում է հեղինակի հետևյալ ըմբռնումը. «Փառավոր ժամանակները», երբ «կայսրության ստեղծողները»՝ թուրքերը և նրանց հպատակ ժողովուրդները միմյանց հետ ներդաշնակության մեջ էին ապրում, մնացին անցյալում: Այժմ քրիստոնյա ժողովուրդները անհնազանդություն են ցուցաբերում, ըմբոստանում են սուլթանի դեմ: Դրա պատճառը, բացի եվրոպական տերությունների կողմից սադրանքներից, կայանում է նաև օսմանյան կառավարության վատ ղեկավարման մեջ: Ե՛վ մահմեդականները, և՛ քրիստոնյաները զայրույթով լի են: Սակայն մահմեդականների դրությունը զգալիորեն ավելի ծանր է, քանի որ նրանք այդքան առավելություններ և պաշտպաններ չունեն, ինչքան քրիստոնյաները: Պետությունը կործանումից փրկելու համար հեղինակը առաջարկում է հաստատել «ազատ և արդար», վայելուչ բնույթ ունեցող համակարգ, որը վերջ կտար ճնշմանը, կբավարարեր բոլոր հպատակների սպասումները, անկախ նրանց կրոնական պատկա-

նելությունից, և կվերականգներ նրանց միջև նախքին ներդաշնակությունը¹⁸⁰:

Ընդհանուր առմամբ, Մուսթաֆա Ֆազլի փաշայի և մյուս «նոր օսմանցիների» գաղափարների միջև տարբերությունը մեծ չէ: Մուսթաֆա Ֆազլի փաշան նրանց պես շեշտը դնում է քրիստոնյաների համեմատ մահմեդականներին ավելի շատ ճնշելու վրա, առաջարկում է վերացնել բոլոր այն առավելությունները, որոնք նրանք իբրև թե ունեն: Դրա հետ մեկտեղ, ուշադրություն է դարձնում հետևյալ հանգամանքը. բաց նամակում ոչինչ չի ասվում այն մասին, որ շարիաթը պետք է մնա Օսմանյան կայսրության պետական կարգի հիմք, այլ ընդհակառակը, հաստատվում է, որ կրոնը չպետք է պետության քաղաքական հիմք կազմի: Այդ դրույթը միանգամայն հակասում է «նոր օսմանցիների» այն հիմնական գաղափարին, որ «եթե մեր պետությունը (այսինքն՝ Օսմանյան կայսրությունը –Ռ.Ս.) ցանկանում է լինել հզոր, ապա այն պետք է հետևի շարիաթին և շարունակի մնալ իսլամական պետություն»¹⁸¹:

Մուսթաֆա Ֆազլի փաշայի կողմից առաջ քաշված հայրենասիրության հայեցակարգը ավելի աշխարհիկանացված էր, հիմնված էր ոչ թե կրոնական, այլ ազգայնական զգացմունքների վրա: Նա բազմիցս գրում է «վեհ զգացմունքների մասին, որոն հատուկ են թուրքական ռասային», այլ ոչ թե ոչ մահմեդականներին ընդհանրապես: Ֆազլի փաշան տարբերվում է «նոր օսմանցիների» այլ առաջնորդներից, որոնք հանդես էին գալիս, հատկապես իրենց գործունեության սկզբնական փուլում, ոչ թե թուրք ժողովրդի անունից, այլ ողջ մահմեդական միլլեթի անունից:

Ըստ էության, «նոր օսմանցիների» կողմից արդեն նրանց գործունեության սկզբնական փուլում սաղմային տեսքով ձևակերպվեցին թուրքական ազգայնականության երկու մեկնաբանություն. մեկը ավելի մեծ տեղ էր հատկացնում իսլամին, որպես նրա հենք, մյուսի հիմքում գտնվում էր ազգի գաղափարը, իհարկե, դեռևս լիովին տեսական հիմնավորում չստացած տեսքով: Առաջին տարբե-

¹⁷⁸ Ю. А. Петросян, Младотурецкое движение (вторая половина XIX – начало XX в.). М., с. 65.

¹⁷⁹ Z. Şakir, Büyük Türk inkılabı. İstanbul, 1956, s. 68–78.

¹⁸⁰ Z. Şakir, Büyük Türk inkılabı. İstanbul, 1956, s. 70-72.

¹⁸¹ Hüriyet, 1868, No. 18.

րակը տեսական հիմք հանդիսացավ ցեղասպանության առաջին ծրագրի համար, իսկ երկրորդը՝ հետագա ծրագրերի համար:

Այդ տարիներին «նոր օսմանցիների» հայացքները իրենց առավել ամբողջական արտահայտումը գտան Նամըք Քեմալի՝ Կ.Պոլսում հրատարակվող իշխանամետ «Գազեթթ օյու Լևան» թերթի խմբագրին ուղղված բաց նամակում¹⁸²: Այն իրենից ներկայացնում էր, ըստ էության, «նոր օսմանցիների» ծրագրի հիմնական դրույթների շարադրանք:

Նամակում հիմնական ուշադրությունը ուղղված է ազգային-դավանական հարցին, որը դիտարկվում է իմնականում որպես դավանական խնդիր: Յեղիմակը հանդես է գալիս մահմեդականների անունից, որոնք, ինչպես նա գրում է, «հանդիսանում են կայսրության գերիշխող միլլեթ»: Բերվում են «նոր օսմանցիների» արդեն սովորական դարձած փաստարկները քրիստոնյաների իբրև թե ավելի արտոնյալ դիրքի մասին: Թեև Քեմալը ստիպված է ընդունել, որ ոչ մահմեդականները զրկված են «որոշ իրավունքներից», սակայն դա, իր կարծիքով, փոխհատուցվում է մեծ տերությունների հովանավորությամբ, զինվորական ծառայությունից ազատումով: «Նոր օսմանցիների» գաղափարախոսի մոտ հատուկ վրդովմունք է առաջացնում քրիստոնյաների ձգտումը՝ մասնակցելու երկրի ղեկավարմանը: Ընդունելով բարեփոխումների անհրաժեշտությունը՝ Նամըք Քեմալը կոչ է անում իրականացնել դրանք ինչպես մահմեդականների, այնպես էլ ոչ մահմեդականների միջավայրում և ուշադրությունը չկենտրոնացնել որևիցե առանձին մի միլլեթի վրա, ինչպես մինչ այդ անում էր կառավարությունը, որը, քրիստոնյամետ քաղաքականություն է վարում:

Նամակում առաջին անգամ հստակ ձևակերպված է ազգային հարցում «նոր օսմանցիների» գլխավոր նպատակը: Նամըք Քեմալը գրում է. «Այժմ հարցի անենակարևոր կողմի մասին: «Գազեթթ օյու Լևանը» գրում է մեր հայրենիքի բոլոր ժողովուրդների միաձուլման անհրաժեշտության մասին: *Մենք ընդունում ենք այդ անհ-*

¹⁸² M. C. Kuntay, Namık Kemal devrinin insanları ve olayları arasında. C. I, İstanbul, 1944, s. 183-187, 290-291.

րաժեշտությունը» (ընդգծումը՝ մերն է - Ռ. Ս.)¹⁸³: Այսպիսով՝ «նոր օսմանցիները», չնայած ազգային հարցում թանգիմաթի առաջնորդներ Ալի փաշայի ու Ֆուադ փաշայի կառավարության քաղաքականության կատարի քննադատության, սակայն, փաստորեն, համաձայնվում են նրա անենակարևոր նպատակի՝ կայսրությունում բնակվող ժողովուրդների «միաձուլման» իրականացման անհրաժեշտության հետ: Նամակում ոչինչ չէր ասվում այդ նպատակին հասնելու միջոցների մասին: Միայն նշվում է, որ քրիստոնյաներին ոչ մի դեպքում չի կարելի թուլատրել ներգրավվելու պետության կառավարման համակարգի մեջ:

Արտասահմանում գտնվելու տարիները մեծ նշանակություն ունեցան «նոր օսմանցիների» աշխարհայացքի ձևավորման համար: Այդ ժամանակահատվածում նրանք ծանոթացան եվրոպական լուսավորիչների ստեղծագործություններին, ուսումնասիրեցին պետական իրավունք, ինչպես նաև եվրոպայի երկրների պետական կարգը: Դրա արդյունքը եղավ իսլամի ոգուն համապատասխան սահմանադրական փոխակերպումների անցկացման ճանապարհով սուլթանական ինքնակալության սահմանափակման գաղափարի առաջարկումը:

Նրանց առաջնորդները ձևակերպեցին իրենց ժամանակի համար նոր երկու գաղափարական-քաղաքական հայեցակարգեր՝ «օսմանյան ազգի» (կամ «օսմանյան համայնքի») և «օսմանյան հայրենասիրության»: Դրանց քննարկումը կարևոր նշանակություն ունի «նոր օսմանցիների» գաղափարախոսության առանձնահատկություններն ըմբռնելու տեսակետից:

«Օսմանյան ազգ» հասկացությունը համարվում էր նրանց ուսմունքի կենտրոնական հասկացություններից մեկը: Այն օգտագործվում էր կայսրության բոլոր ժողովուրդների ամբողջությունը բնութագրելու նպատակով, ընդ որում այդ առասպելական «ազգի» մեջ ընդգրկվում էին ինչպես մահմեդականները, այնպես էլ ոչ մահմեդականները: Զիա փաշան «Զաֆեր-նամե» պոեմի մեկնաբանություններում այդ հասկացությանը տալիս է այսպիսի սահմանում.

¹⁸³ M. C. Kuntay, Namık Kemal devrinin insanları ve olayları arasında. C. I, İstanbul, 1944, s. 186.

«օսմանյան ազգ» արտահայտությունը ընդգրկում է բոլոր ժողովուրդներին, որոնք համարվում են օսմանյան պետության հպատակներ, ինչպես մահմեդականներին, այնպես էլ ոչ մահմեդականներին»¹⁸⁴:

Նույն իմաստով օգտագործվում էր «օսմանյան համայնք» արտահայտությունը: «Նոր օսմանցիներից» մի քանիսը, առաջին հերթին Նամըք Քեմալը, պնդում էին, որ հենց «համայնք» (ուլմեթ) արտահայտությունը պետք է օգտագործվի Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին բնութագրելու համար, անկախ իրենց կրոնադավանական պատկանելությունից¹⁸⁵: Նա հակադրում էր «ուլմեթը»՝ «միլլեթին», պնդելով, թե առաջինը նշանակում է մեկ պետության բոլոր հպատակների ամբողջություն, իսկ երկրորդը՝ մեկ կրոնի հետևորդների ամբողջություն: Քննադատելով Բարձր դռանը պաշտոնական փաստաթղթերում եզրույթների շփոթության համար՝ նա գրում էր «Չյուրիեթ» թերթում, որ Բարձր դռնը «չի տարբերում միլլեթը ուլմեթից, չգիտի նրանց տարբերությունը»¹⁸⁶: Սակայն հարկ է նշել, որ հենց Նամըք Քեմալը ինքն էր հաճախ շփոթում այդ հասկացությունները, չհետևելով հենց իր կողմից հաստատված սահմանումներին, ընդ որում, նման շփոթումները երբեմն տեղի էր ունենում նույնիսկ մեկ հոդվածի սահմաններում: Այդ ամենը վկայում է «օսմանյան ազգի» տեսության թույլ նշակվածության մասին: Պահանջվեց գրեթե մեկ ամբողջ տասնամյակ, մինչև 70-ական թթ. վերջերին այդ արտահայտություններից մեկը՝ «օսմանյան ազգը» դարձավ համընդունելի:

Չետաքրքրական է նաև իմաստի էվոլյուցիան, որը ներդրված է «միլլեթ» հասկացության մեջ: Ղուրանում այն օգտագործվում էր երկու նշանակությամբ. որպես կրոն ընդհանրապես և որպես «իսկական կրոն», այսինքն՝ իսլամ: Չետագայում արաբերենում այն օգտագործվում էր որպես «զիմմի» արտահայտության, որը նշանակում էր մահմեդական պետության հովանավորությունից օգտվող ոչ մահմեդականների այսինքն՝ քրիստոնյաների և հրեաների ամ-

բողջություն, հականիշ¹⁸⁷: Օսմանյան կայսրությունում միլլեթը կրոնական համայնք էր՝ պաշտոնապես ճանաչված սուլթանի կողմից: Սուննիյան հավատքի մահմեդականները համարվում էին «զերիշ-խող միլլեթ», իսկ ոչ մահմեդական միլլեթները արհամարհանքով անվանվում էին «մնացած միլլեթներ»: «Միլլեթ» բառը հաճախ օգտագործվում էր ոչ մահմեդականների նկատմամբ, իսկ կայսրության մահմեդականները գերադասում էին իրենք իրենց անվանել «ուլմեթ»:

Թուրքական միջավայր եվրոպական գաղափարների ներթափանցման հետ մեկտեղ «միլլեթ» բառը հետզհետե ենթարկվում է իմաստային ձևափոխության և, կորցնելով իր ավանդական նշանակությունը («կրոնական համայնք»), ինչպես նաև ազատվելով «կրոնական» երանգից, ձեռք է բերում նոր իմաստ՝ հարաբերակցվող ֆրանսերեն «nation»՝ «ազգ», «ժողովուրդ» բառի հետ: Թանգիմաթի նախածեռնողներից մեկը, 30-40-ական թթ. հայտնի գործիչ Սադրը Ռիֆաթ փաշան առաջինն էր, ով սկսեց օգտագործել «միլլեթ» բառը նման իմաստով: Նրա մոտ հանդիպում են հետևյալ արտահայտությունները՝ «միլլեթի շահերը», «ժառայել միլլեթին» և այլն¹⁸⁸: Ընդ որում, Սադիկ Ռիֆաթ փաշան չէր ճշտում, թե արդյո՞ք խոսքը գնում է մահմեդականների, թե ոչ մահմեդականների մասին: Նրա մոտ «միլլեթ» բառը ձեռք բերե հավաքական իմաստ:

Թանգիմաթական բարեփոխումների երկրորդ փուլում պաշտոնական գրագրությունում հայտնվում է նոր արտահայտություն՝ «բարձր պետության օսմանյան միլլեթ» (այսինքն՝ Օսմանյան կայսրության), ինչի տակ սկզբնական շրջանում հասկացվում էին, գլխավորապես, մահմեդականները՝ օսմանյան սուլթանի հպատակները: Չետագայում, «միաձուլման» քաղաքականության ակտիվացման հետ համատեղ այդ արտահայտությունը սկսեց տարածվել նաև ոչ մահմեդականների վրա:

Իբրահիմ Շինասիի հրապարակախոսության և պոեզիայի մեջ «միլլեթ» բառը ենթարկվում էր հետագա վերաիմաստավորմանը,

¹⁸⁴ Ş. Kurgan, Ziya Paşa: hayati, sanati, eserleri. Istanbul, 1962, s. 121.

¹⁸⁵ B. S. Baykal, Namık Kemal'e göre Avrupa ve biz. — Namık Kemal hakkında, Istanbul, 1942, s. 194.

¹⁸⁶ Hürriyet, 1868, No. 19.

¹⁸⁷ F. Buhl, Millet — Islam Ansiklopedisi, 2. B., C. 8, Istanbul, 1971, s. 317.

¹⁸⁸ Ş. Mardin, The Genesis of Young Ottoman thought: a study in the modernization of turkish political ideas. Princeton, 1962, p. 189.

ավելի մոտեցավ ֆրանսիական «nation» բառին: Առաջին անգամ Շինասին սկսեց օգտագործել այսպիսի արտահայտություններ, ինչպիսին են «նվիրվածություն միլլեթին», «միլլեթի գաղափար», ինչպես նաև «միլլեթի խորհուրդ» և այլն¹⁸⁹: Դրանք փոխառնվեցին այլ «նոր օսմանցիների» կողմից և սկսեցին լայնորեն օգտագործվել նրանց մանուկում: Հետագայում դրանք ամրացան թուրքերենում՝ դասվելով թուրքական ազգայնականության գաղափարախոսության հիմնական արտահայտությունների թվին:

Շինասին իրեն համարում էր «օսմանցիների» շահերի արտահայտիչ: Նրա կողմից հրատարակված «Թասֆիր-ի էֆթյար» թերթը անվանվում էր «օսմանյան թերթ»¹⁹⁰: Իբրահիմ Շինասիի հրապարակախոսության մեջ սկիզբ է առնում «օսմանցիների» ստորաբաժանման միտումը «իսկականների», որոնց տակ ենթադրվում էին թուրքերը, և մնացածի կամ երկրորդականների, որոնց շարքին դասվում էին ոչ մահմեդականները: Նրա կողմից հրատարակված մեկ այլ՝ «Թերջյունան-ի ախվալ» թերթի առաջին համարի առաջնորդող հոդվածում, այդ թերթը բնութագրվում էր որպես «իսկական օսմանյան»՝ ի տարբերություն ոչ մահմեդական ժողովուրդների պարբերականների: Շինասիի համար «իսկական օսմանյանին» պատկանելության չափանիշը թուրքերեն լեզուն էր¹⁹¹:

Օսմանյան պետության բոլոր ժողովուրդների՝ մահմեդականների և ոչ մահմեդականների, միասնական «օսմանյան ազգի» կազմի մեջ միաձուլման անհրաժեշտությունը «նոր օսմանցիները» հիմնավորում էին եվրոպական երկրների և Միացյալ Նահանգների օրինակով: Նամըք Քեմալը, «ժողովուրդների միաձուլում» հոդվածում օրինակ բերելով Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան, Պորտուգալիան, Բելգիան և այլ եվրոպական պետությունները, պնդում էր, որ ազգության, լեզվի, հավատքի մեջ տարբերությունները «երբեք չեն կարող խոչընդոտ կամ արգելք հանդիսանալ միավորման համար»¹⁹²:

¹⁸⁹ M. Kaplan, Namık Kemal: hayatı ve eserleri. İstanbul, 1948, s. 45 – 46.

¹⁹⁰ R. Özdem, Tanzimattan beri yazı dilimiz. Fikrî nesir dilimizin gelişmesi. – Tanzimat I. İstanbul, 1940, s. 880.

¹⁹¹ H. R. Ertuğ, Basın ve yayın hareketleri tarihi, İstanbul, 1959, s. 160.

¹⁹² M. Kaplan, Namık Kemal: hayatı ve eserleri. İstanbul, 1948, s. 110 -111.

«Նոր օսմանցիները», կեղծելով Օսմանյան կայսրության պատմությունը՝ պնդում էին, որ այնտեղ հենց սկզբից ստեղծված էին բարենպաստ պայմաններ ոչ մահմեդական ժողովուրդների զարգացման համար: «Հյուրիեթը» գրում էր. «Ամնիջապես Ստամբուլի գրավումից հետո, մենք բոլոր եկեղեցական ներկայացուցիչներին տվեցինք բացարձակապես հավասար իրավունքներ»¹⁹³:

«Օսմանյան ազգի» հայեցակարգի առանցքային գաղափարը Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին մեկ՝ օսմանյան ազգի կազմի մեջ մտցնելն էր: Ընդ որում, միայն թուրքերն էին համարվում «առաջին կարգի» օսմանցիներ, ինչպես այդ ոչ ուղղակի ձևով փորձում էր պնդել Իբրահիմ Շինասին¹⁹⁴: Հետևաբար, կայսրության քրիստոնյա ժողովուրդները համարվում են նրա բաղադրիչ մասերը կամ «տարրերը»: Ըստ էության, «օսմանյան ազգի» հայեցակարգը պահպանում էր քրիստոնյա ժողովուրդների ստորադաս դրությունը, դարձնելով նրանց վիճակը ավելի ծանր:

«Նոր օսմանցիները» գտնում էին, որ մի շարք գործոններ նպաստում են «օսմանյան ազգի» տարրերի միջև միասնության պահպանմանը: Այդ գործոնների թվին էին պատկանում, ըստ «նոր օսմանցիներ» հետևյալները.

- «աշխարհագրական պայմանների» նմանությունը,
- «շահերի» համընկնումը, այդ թվում նաև տնտեսական,
- «համաօսմանյան գաղափարի» առկայությունը:

Այդ գործոնների քննարկումը հնարավորության է տալիս ավելի խորը հասկանալ «նոր օսմանցիների» գաղափարախոսության որոշ առանձնահատկություններ:

«Օսմանյան ազգի» գոյության կարևոր նախապայմանը համարվում էր աշխարհագրական միջավայրը: Նամըք Քեմալը, հավանաբար Մոնտեսքյոյի հայտնի տեսակետի ազդեցության տակ, հակված էր այդ գործոնին հատուկ նշանակություն տալ: Նա գրում էր. «Բոլոր տարրերը, որոնք ապրում են մեր երկրում, աշխարհագրական տեսակետից հանդիսանում են մեկ մարմնի մասեր... և այդ իսկ պատճառով հիմնովին կորցրել են առանձին գոյատևելու ունա-

¹⁹³ Hürriyet, 1869, No. 50.

¹⁹⁴ H. R. Ertuğ, Basın ve yayın hareketleri tarihi, İstanbul, 1959, s. 160.

կությունը, ինչպես նաև ազատության հասնելու անհրաժեշտ ուժը»¹⁹⁵: Դրանով իսկ ի սկզբանե ժխտվում էր ոչ թուրք ժողովուրդների անկախ գոյության իրավունքը և եզրակացություն էր արվում, որ նրանք ի վիճակի չեն անջատվել Օսմանյան կայսրությունից:

«Նոր օսմանցիները» համարում էին, որ նման աշխարհագրական պայմաններում երկար ապրելու հետևանքով «օսմանյան ազգի տարրերի» մոտ ի հայտ եկան ընդհանուր շահեր: Ոչ մահմեդականներին դիմելիս՝ «Մուհեբիթը» հատուկ նշում էր, որ նրանց շահերը համընկնում են մահմեդականների շահերի հետ¹⁹⁶: Նամըք Քեմալը գրում էր «օսմանյան ազգի» բաղադրյալ մասերի «շահերի ընդհանրության» մասին¹⁹⁷:

Ալի Սուլալիի հրապարակախոսության մեջ «օսմանյան ազգի տարրերի» շահերի ընդհանրության թեզը գտավ իր կոնկրետացումը: Նա գրում էր «նյութական շահի» ընդհանրության մասին, որն ավելի ուժեղ էր կապում միմյանց կայսրության ժողովուրդներին: Այսպիսով՝ «նոր օսմանցիները» փորձում էին համոզել ընթերցողներին, որ ոչ թուրք ժողովուրդների համար «նյութական» տեսակետից ավելի շահավետ կլինեի լինել «օսմանյան ազգի» կազմի մեջ, քան ստեղծել իրենց ազգային պետությունները:

«Նոր օսմանցիների» առաջնորդները մեծ ուշադրություն էին դարձնում միասնության գործոնին: Տարբեր հեղինակների մոտ այն ստանում էր տարբեր անվանումներ: Նամըք Քեմալը գրում էր «գաղափարների» միասնության մասին¹⁹⁸, իսկ Ջիա փաշան՝ «օսմանյան նվիրվածության» մասին¹⁹⁹: Համարվում էր, որ հենց դա էր բոլոր «օսմանցիների» համար միասնական նպատակ ծնում. աշխատել «օսմանցիության» բարօրության համար:

Այս դրույթը չէր բացատրում քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման գոյության փաստը: «Նոր օսման-

ցիների» առաջնորդները փորձեցին ելք գտնել ու հայտարարեցին, որ այդ միասնությունը «օսմանցիների» միջև գոյություն է ունեցել անցյալում, կայսրության հզորության ժամանակներում: Այս մոտեցումը իր արտացոլումը գտավ, օրինակ, հայտնի լրագրող և գրող Ահմեդ Միդհատի «Չեղափոխության հիմք» գրքում: Ահմեդ Միդհատը մաս էր կազմում «նոր օսմանցիների» շարժման և իր այդ գրքում արտահայտում էր նրանց հայացքները: Այստեղ հեղինակը փորձում է ապացուցել, որ հենց իր առաջացման պահից սուլթանների կայսրությունը ոչ միայն իսլամական կամ թուրքական պետություն էր, այլ նաև իրենից ներկայացնում էր «միասնական հայրենիք» բոլոր օսմանցիների համար, անկախ նրանց կրոնական և ազգային պատկանելությունից²⁰⁰: Այդ ժամանակ կայսրության բոլոր ժողովուրդների միջև գոյություն ուներ լիարժեք «հոգևոր միասնություն»:

Սակայն հետագայում այդ «միասնությունը», գտնում էին «նոր օսմանցիները» դադարեց գոյություն ունենալ: Նամըք Քեմալը արձանագրում էր. «Մեր միջև (նկատի ուներ «օսմանցիներին») գաղափարական միասնություն չստացվեց»²⁰¹: Հենց այդ պատճառով էլ, ինչպես կարծում էին «նոր օսմանցիները», հնարավոր դարձան քրիստոնյա ժողովուրդների ազատագրական ելույթները:

«Նոր օսմանցիների» կարծիքով «հոգևոր միասնության» խախտման պատճառներն էին. եվրոպական տերությունների՝ գլխավորապես Ռուսաստանի սադրիչ նպատակաուղղված քաղաքականությունը Բարձր դռան քրիստոնյա հպատակների նկատմամբ, և թանգիմաթի դարաշրջանի օսմանյան գործիչների դավաճանությունը շարիաթի սկզբունքներին, որը ի հայտ եկավ, մասնավորապես, ոչ մահմեդականներին չափազանց մեծ առավելություններ շնորհելու մեջ:

«Հոգևոր միասնության» վերականգնման համար «նոր օսմանցիների» առաջնորդների կողմից առաջարկվում էր փոփոխություններ կատարել պետական-իրավական համակարգում: Մի կողմից

¹⁹⁵ E. Z. Karal, *Namik Kemal ve Şark Meselesi*. – *Namik Kemal hakkında*. İstanbul, 1942, s. 289.

¹⁹⁶ *Muhbir*, 1868, No. 28.

¹⁹⁷ M. Kaplan, *Namik Kemal: hayatı ve eserleri*. İstanbul, 1948, s. 110.

¹⁹⁸ B. Boran, *Namik Kemal'in sosyal fikirleri*. – *Namik Kemal hakkında*. İstanbul, 1942, s. 272.

¹⁹⁹ Ş. Kurgan, *Ziya Paşa: hayatı, sanatı, eserleri*, İstanbul, 1962, s. 121.

²⁰⁰ Ahmet Midhat, *Üss-ü inkilâp*. K. 1, İstanbul, 1294, s. 9–11.

²⁰¹ B. Boran, *Namik Kemal'in sosyal fikirleri*. — *Namik Kemal hakkında*. İstanbul, 1942, s. 272.

դրանք պիտի վերականգնեին շարիաթի բոլոր դրույթները: Փաստորեն, «նոր օսմանցիները» կոչ էին անում հրաժարվել թանգիմաթի արևնտամետ նորամուծություններից: Մյուս կողմից նրանք պնդում էին, որ ժամանակակից պայմաններում սահմանադրության հռչակումը և բուրժուական ոգով որոշ բարեփոխումների անցկացումը հանդիսանում են ազգային խնդրի լուծման միակ միջոց: Սահմանադրական վերափոխումների անհրաժեշտությունը նրանք հիմնավորում էին իսլամի կրոնի դրույթներով:

Սակայն դրանով չէր սպառվում «նոր օսմանցիների» ծրագիրը «օսմանյան ազգի» անդամների «հոգևոր միասնության» ամրապնդման մասին: Նրանց կողմից առաջարկվող միջոցների մեջ կարևոր տեղ էր հատկացվում ոչ մահմեդականների նպատակաուղղված դաստիարակմանը «օսմանյան ազգին» հավատարիմ ոգով, նրանց մեջ «օսմանյան հայրենասիրության» արմատավորմանը: Դրա համար հիմնական միջոց էր համարվում «խառը», քրիստոնյա-մահմեդական, կրթական հաստատությունների ցանցի ստեղծումը, որտեղ մահմեդականների և քրիստոնյաների երեխաները կսովորեին միասին և կդաստիարակվեին «միասնության» ոգով: Առաջարկվում էր արդեն իսկ դպրոցական նստարանից ներարկել տարբեր ազգությունների երեխաներին «օսմանյան ազգին» հավատարմության զգացումներ:

Ահա թե ինչ էր գրում Նամըք Քեմալը «Ժողովուրդների միաձուլում» հոդվածում, որը հրատարակվեց «Իբրեթ» թերթում. «Մարդկանց հոգևոր միաձուլումը առաջանում է մանկության ժամանակ, հատկապես դպրոցում, շփման հետևանքով: Այդ իսկ պատճառով, մեզ անհրաժեշտ է աշխատել այնպիսի դպրոցների ստեղծման վրա, ուր կընդունեին բոլոր ազգերի և հավատքների ներկայացուցիչներին»²⁰²: Նման մտքեր արտահայտվել էին ժամանակին Ալի Սուլալիի կողմից «Մուհբիր» թերթի էջերում. «Ստամբուլը պետք է ընդունի կառավարման սահմանադրական ձևը, երկրում պետք է ստեղծվեն միանման դպրոցներ, որտեղ ուսուցումը կանցկացվի նույն ձևով: Բոլորը պետք է ավարտեն միանման դպրոցներ: Այսպի-

²⁰² B. Boran, Namik Kemal'in sosyal fikirleri. – Namik Kemal hakkında. İstanbul, 1942, s. 274.

սով, տարբեր ազգերի ներկայացուցիչները կունենան միևնույն մտածելակերպ: Ամեն մարդ կասի. «Ես օսմանցի եմ...»²⁰³:

«Նոր օսմանցիները» մեծ նշանակություն էին տալիս լեզվին՝ որպես «օսմանյան ազգի» միաձուլման միջոցի: «Գրականության վերաբերյալ որոշ պատկերացումներ» հոդվածում Նամըք Քեմալը եզրակացություն արեց այն մասին, որ լեզուն ծնունդ է ազգային միասնության: Այդ հոդվածում լեզուն դիտարկվում է նաև որպես հասարակության վրա «ազդելու» միջոց, որի միջոցով կարելի է վերահսկել մարդկանց գործունեությունը, ներշնչել ուզած զաղափարներ²⁰⁴: Լեզուն, որը կարող էր կատարել այս բոլոր գործառույթները, նրանց կարծիքով թուրքերենն էր: Միայն այն կարող էր դառնալ «օսմանյան ազգի» ընդհանուր լեզուն: Այդ իսկ պատճառով Ալի Սուլալին, որը համարում էր, որ թուրքերենը «վեր է բոլոր լեզուներից»²⁰⁵, առաջարկում էր կայսրության բոլոր դպրոցներում դասավանդման միակ լեզուն դարձնել թուրքերենը: Թուրքերենի ամենայն տարածումը հպատակ ժողովուրդների շրջանում աստիճանաբար կվերացներ, «նոր օսմանցիների» կարծիքով, «օսմանյան ազգի» անդամների միջև տարբերությունները: Այն մասին, որ Ալի Սուլալին շատ լավ գիտակցում էր իր առաջարկի վերջնական արդյունքները, վկայում է նրա պնդումը այն մասին, որ «թուրքերեն խոսողը թուրք է»:

«Նոր օսմանցիների» ղեկավարները հաճախ գրում էին թուրքերի «վեհության», նրանց «քաղաքակրթական առաքելության» մասին: Ընթերցողներին ներշնչվում էր այն միտքը, որ հենց թուրքերը պետք է ղեկավարեն Օսմանյան կայսրությունը, քանի որ օժտված են բացառիկ հատկություններով: «Թուրքական տարրը» պետք է դառնար իշխող ուժ «օսմանյան ազգի» այլ անդամների համար. այսպիսին էր «նոր օսմանցիների» հիմնական պատակը ազգային խնդրում:

²⁰³ C. O. Tütengil, Yeni Osmanlılardan bu yana İngiltere'de Türk gazeteciliği: 1867–1967. İstanbul, 1969, s. 42.

²⁰⁴ B. Boran, Namik Kemal'in sosyal fikirleri. – Namik Kemal hakkında. İstanbul, 1942, s. 273–274.

²⁰⁵ H. Dizdaroğlu, Ali Suavi'de dil anlayışı. — Türk Dili, 1958, c. VII, No. 80, s. 376.

«Նոր օսմանցիների» մյուս հիմնական գաղափարական-քաղաքական հայեցակարգը այսպես կոչված, «օսմանյան հայրենասիրության» հայեցակարգն էր: Նրա հիմնական հասկացություններն էին. «օսմանյան հայրենիք», «սերը դեպի հայրենիք», «հավատը և հայրենասիրությունը»:

«Օսմանյան հայրենիք» հասկացությունը աշխարհագրական տեսանկյունից ընդգրկում էր Օսմանյան կայսրության ամբողջ տարածքը: Այն շրջանները, որտեղ չկար թուրքական բնակչություն, նույնպես ընդգրկվում էին այդ հասկացության մեջ: Նույնիսկ մի կտոր հողի կորուստը, որը ոչ մի կապ չունի բուն թուրքական շրջանների հետ, համարվում էր որպես դավաճանություն «օսմանյան հայրենիքի» նկատմամբ: Իսլամ բեյը՝ Նամըք Քեմալի «Հայրենիք» կամ «Սիլիստրիա» պիեսի հերոսը, արտահայտելով հեղինակի միտքը, բացականչում էր. «Եթե մենք կորցնենք Դանուբը, ապա հայրենիքը այլևս գոյություն չի ունենա: Մեր հայրենիքը Դանուբն է»²⁰⁶: Այս տեսանկյունից, Ալի փաշայի և Ֆուադ-փաշայի կողմից բելգրադյան միջնաբերդի հարկադրված «զիջումը» որակավորվում էր որպես դավաճանական քայլ «օսմանյան հայրենիքի» նկատմամբ:

Սերը դեպի հայրենիք Նամըք Քեմալի և այլ «նոր օսմանցիների» համար առաջին հերթին պայմանավորված է նրանց պատկանելությամբ իսլամին: Բնորոշ է «Յուրիեթ» թերթի առաջին համարում խմբագրական հոդվածի անվանումը՝ «սերը դեպի հայրենիքը իսկական հավատքի արդյունք է»:

Վերը նշված հայեցակարգերով սպառվում է հիմնականում «նոր օսմանցիների» ուսմունքի գաղափարական բովանդակությունը: Նրանց վերլուծությունը հնարավորություն է տալիս ի հայտ բերել այդ ուսմունքի քաղաքական ուղվածությունը: «Օսմանյան ազգի» ստեղծումը իրականում իրենից ներկայացնելու էր Օսմանյան կայսրության բազմազգ բնակչության թուրքացման ճանապարհին կատարած սկզբնական քայլ: Նրա իրականացմանը նպատակաուղղված միջոցառումները հետապնդում էին նաև քրիստոնյա

ժողովուրդների ազգային-ազատագրական շարժմանը «խաղաղ» ճանապարհով հարված հասցնելու նպատակը:

70-ական թթ. կեսերին Օսմանյան կայսրությունում ստեղծված ճգնաժամային իրավիճակը նպաստում էր «նոր օսմանցիների» գործունեության ակտիվացմանը: Նրանք անմիջական պայքարի մեջ մտան սահմանադրության հռչակման և իրենց ծրագրի այլ դրույթների իրականացման համար:

1876 թ. սահմանադրությունում²⁰⁷ արտացոլվելին «նոր օսմանցիների» գաղափարական բնույթի մի շարք դրույթներ: Այսպես, ըստ 8-րդ հոդվածի, բոլոր հպատակները հայտարարվում էին «օսմանցիներ», որոնք այսուհետև, անկախ ազգային և եկեղեցական պատկանելության, հավասար իրավունքներ էին ստանում (հոդված 17): Դրանով իսկ քայլ էր կատարվում դեպի հայտնի «օսմանյան ազգի» ստեղծումը: Ամրապնդվում էր թուրքերի և իսլամական կրոնի իշխող դիրքը. թուրքերենը հայտարարվում էր պետական լեզու, իսկ իսլամը՝ պետական կրոն (հոդվածներ 16 և 1): Բացի այդ, պառլամենտի երկու պալատներում էլ թուրքերենը հռչակվում էր միակ աշխատանքային լեզու, որի չիմացությունը խորհրդարան ընդտվելու արգելքներից մեկն էր (հոդվածներ 68 և 57):

Սահմանադրության մեջ իր արտացոլումը գտավ նաև «նոր օսմանցիների» ուսմունքի մյուս՝ ռեպրեսիվ կողմը: Ըստ 16-րդ հոդվածի կայսրության բոլոր դպրոցները, այդ թվում նաև քրիստոնյա ժողովուրդների դպրոցները, դրվում էին պետության անմիջական վերահսկողության տակ:

²⁰⁷ A. Ş. Gözübüyük, S. Kili, Türk Anayasa metinleri. Ankara, 1957, s. 25–38.

²⁰⁶ Namık Kemal, Vatan, yahut Silistre. - Külliyyat. I, Ankara, 1960, s. 21.

2. ԹՈՒՐԲ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Ազատական հոսանքը Օսմանյան կայսրության հայերի հասարակական-քաղաքական կյանքում առաջ է եկել 19-րդ դարի 40-ական թվականներին: Երբ թուրքական միջավայրում սկսեց ձևավորվել «նոր օսմանցիների» սահմանադրական շարժումը, այն արդեն լիովին ձևավորված հոսանք էր, որն ի դեմս անրապնդվող հայկական ազգային բուրժուազիայի ուներ իր պատկառելի բազան և տնօրինում էր պարբերական մամուլի զգալի մասը և հասարակական կազմակերպությունները Կ.Պոլսում և Ձմյուռնիայում: Միաժամանակ, հայ ազատականներից շատերը Օսմանյան կայսրության խոշոր պետական պաշտոնյաներ էին: Այդ տարիների օսմանյան քաղաքական համակարգում նրանց նշանակության և տեղի մասին պատկերացում է տալիս այն փաստը, որ 1867 թ. Օսմանյան կայսրության պատմության մեջ առաջին անգամ նշանակված քրիստոնյա նախարարը պոլսահայ ազատական շրջանակների նշանավոր ներկայացուցիչներից Գրիգոր Աղաթոնն էր²⁰⁸:

Արևմտահայ ազատականների գաղափարական-քաղաքական հայացքների յուրահատկությունները մանրակրկիտ չդիտարկելով՝ նշենք միայն, որ նրանք հույս ունեին հասնելու հայ ժողովրդի վիճակի բարելավմանը Օսմանյան կայսրությունում՝ արևմտյան օրինակով բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով: Այդ պատճառով նրանք ամեն կերպ աջակցում էին թանգիմաթի արևմտամետ բարենորոգումների քաղաքականությանը: Արտաքին քաղաքականության մեջ նրանք կողմնորոշվում էին դեպի Արևմուտքի երկրներ: Ահա մի քանի բնորոշ օրինակներ այդ թեմայով ազատական մամուլի հրատարակումներից: Ձմյուռնիայում հրատարակվող հեղինակավոր «Արշալույս Արարատյան» ամսագիրը գրում էր. «...Հայերը Թուրքիայի բոլոր ազգություններից (ի նկատի ունի ոչ մուսուլմանական - Ռ.Ս.) ամենահավատարիմն են, ամենագործունյան և ա-

մենաքաղաքակիրթը, և այդ պատճառով էլ մուսուլմանները շատ սիրում և հարգում են նրանց»²⁰⁹: «Մասիս» թերթը՝ ամենաազդեցիկ ազատական պարբերական հրատարակությունը 19-րդ դարի մի քանի տասնամյակների ընթացքում, Օսմանյան կայսրության հայերի առջև ծառայած կարևորագույն խնդիրն էր համարում «անքակտելի կապերի ամրապնդումը օսմանյան կառավարության հետ»²¹⁰ և համոզում էր իր ընթերցողներին, որ «...օսմանյան ազգն ունի բացարձակ վստահություն հայ ազգի նկատմամբ»²¹¹: Այդ տարիների հայտնի լիբերալ գործիչներից Հ. Ոսկանը նույնիսկ կազմեց Օսմանյան կայսրությունում բարեփոխումների մի ամբողջական ծրագիր, որոնք պետք է «վերածնենին թուրքական կայսրությունը» և այդպիսով բարելավեին հայ ժողովրդի դրությունը²¹²:

1867 թ. եվրոպական մամուլում տպագրվեց բարձրաստիճան օսմանյան պաշտոնյա Մուսթաֆա Ֆազլը փաշայի բաց նամակը սուլթան Աբդուլ Ազիզին²¹³: Այն պարունակում էր արևմտյան օրինակով բարեփոխումների ծրագիր և մեծ արձագանք գտավ թուրքական մամուլում՝ հզոր ազդակ հանդիսանալով թուրքական միջավայրում սահմանադրական շարժման առաջ գալու համար: Այն ընկալվեց որպես «նոր օսմանցիների» ընդդիմադիր շարժման առաջին ծրագրային բնույթի փաստաթուղթ:

Մուսթաֆա Ֆազլը փաշայի նամակին նշանակալի տեղ տվեց նաև ազատական հայկական մամուլը՝ գլխավորապես մայրաքաղաքային «Մասիս» թերթը²¹⁴: Նա դրվատելի էր համարում այն փաստը, որ Ֆազլը փաշան, ի տարբերություն այլ թուրք բարեփոխիչների, այդ նամակում ոչ մի խոսք չէր ասել Օսմանյան կայսրությունում իսլամի և մուսուլմանների առաջատար դերի պահպանման մասին: «Մասիսը» գրում էր, որ Մուսթաֆա Ֆազլը փաշայի նամակը վկայում է, որ «նոր օսմանցիները» վերջապես հասկացան, որ այն ժամանակները, երբ մուսուլմանները թույլ չէին տալիս քրիս-

²⁰⁹ Արշալույս Արարատյան, 1861, թիվ 655:

²¹⁰ Մասիս, 1867, թիվ 786:

²¹¹ Սույն տեղում:

²¹² C. Oscanyan, The Sultan and his people. New York, 1857, p. 444 - 448.

²¹³ Ebuzziya Tevfik, Yeni Osmanlılar tarihi. Istanbul, 2006, s. 27 - 40.

²¹⁴ Տե՛ս, օրինակ, Մասիս, 1867, թիվ 12, թիվ 783, թիվ 784:

²⁰⁸ Չհասցնելով անցնել իր աշխատանքային պարտականությունների կատարմանը, մի քանի ամիս անց նա վախճանվեց Փարիզում: Տե՛ս Հ. Ասատուր, Աշխարհաբար մատենագիտության պատմություն, էջ 177 (Չեռագիր). – ՀՀ Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի պետական թանգարան, Թ. Ազատյանի ֆոնդ, Բ. I, 17:

տոնյաներին կառավարել երկիրը, անցել են, և քրիստոնյաները պետք է ունենան հավասար ներկայացուցչություն օսմանյան կառավարությունում²¹⁵։

Հատկանշական է, որ ի տարբերություն հայկական պահպանողական թերթերի, «Մասիս» ավելի մեծ ուշադրություն էր հատկացնում նաև երիտասարդ լրագրողներ Նանըք Քեմալի և Ալի Սուլավիի հրապարակախոսական գործունեության լուսաբանմանը, որոնք եվրոպա մեկնելուց հետո կազմեցին «նոր օսմանցիների»՝ առաջին թուրք սահմանադրականների կազմակերպության ղեկավար կորիզը։ «Մասիսը» պարբերաբար տեղեկացնում էր ընթերցողներին իր կարծիքով ամենահետաքրքիր հրապարակումների մասին, որոնք լույս էին տեսնում նրանց հրատարակած «Թասֆիր-ի էֆջարի» (խմբագիր՝ Նանըք Քեմալ) և «Մուհթիր» (խմբագիր՝ Ալի Սուլավի) թերթերում, երբեմն տեղ էր հատկացնում այդ հրատարակությունների հոդվածների մանրամասն վերապատմելուն։ Այսպես՝ այն դրական գնահատեց ու վերապատմեց «Թասֆիր-ի էֆջարի» հոդվածն այն մասին, որ ներկայումս դժվար է ամբողջությամբ մերժել եվրոպայի միջամտությունը երկրի գործերին, ուստի Բարձրագույն Դուռը պետք է հնարավորինս փորձի համաձայնեցնել եվրոպացիների պահանջները թուրքական օրենքների հետ²¹⁶։

«Մասիս» թերթի որոշ նյութեր պարունակում էին նաև ինքնատիպ փոխկանչ «նոր օսմանցիների» գաղափարներին։ Այսպես՝ Սեբաստիա քաղաքի բնակչության ծանր դրությունը նկարագրելիս նա ընդգծում էր, որ «այդ քաղաքի ինչպես մուսուլման, այնպես էլ քրիստոնյա բնակչության աղքատությունն ու կարիքն արդեն արմատավորվել են»²¹⁷։ դրանով իսկ համերաշխվելով «նոր օսմանցիների»՝ Օսմանյան կայսրությունում «քրիստոնյաների և մուսուլմանների միանման կեղեքման մասին» հայտնի դրույթի հետ²¹⁸։

²¹⁵ Մասիս, 1867, թիվ 784։

²¹⁶ Մասիս, 1867, թիվ 786։

²¹⁷ Մասիս, 1867, թիվ 784։

²¹⁸ Ժամանակ առ ժամանակ, հատկապես իրենց գործունեության սկզբնական շրջանում, նրանք նաև գրում էին «կայսրության մահմեդականների առավել ծանր դրության մասին՝ ի համեմատ քրիստոնիաների»։

«Մասիս» առանց ուշադրության չէր թողնում «նոր օսմանցիներին»՝ որևէ դրական հայտարարություն քրիստոնյաների և հայերի մասին և միշտ գտնում էր դրան արձագանքելու հնարավորություն։ Այսպես նա հայտնեց իր «երջանկությունը» «Թասֆիր-ի էֆջարի» հոդվածներից մեկի կապակցությամբ, որտեղ զարմանքն էր արտահայտվում այն մասին, թե ինչպե՞ս կարող է թուրք ժողովուրդը այս լուսավոր դարում ճնշման ենթարկել քրիստոնյաներին²¹⁹։ Նույն համարում նա նշում էր, որ և «Թասֆիր-ի էֆջարը», և «Մուհթիրը» զովետտով էին արտահայտվում հայ ազգի «հավատարմության» մասին²²⁰։

Երբեմն նկատվում է «Մասիսի» ձգտումը խուսափելու «նոր օսմանցիների» հետ ուղղակի բանավեճի մեջ մտնելուց։ Այսպես՝ նա վերապատմեց Նանըք Քեմալի դրույթը քրիստոնյաներին պետական ծառայության մեջ օգտագործելու հնարավորության մասին՝ թողնելով, սակայն, առանց մեկնաբանության նրա այն պահանջը, որ նրանք պետք է տիրապետեն կայսրության «պաշտոնական» լեզվին²²¹։

Որոշ դեպքերում հայ ազատականները բավական հստակ արտահայտում էին իրենց անհամաձայնությունը «նոր օսմանցիների» գաղափարների հետ։ Բերենք համապատասխան օրինակ։ Ինչպես հայտնի է, «նոր օսմանցիները» հանդես էին գալիս շարիաթի պահպանման օգտին և կարծում էին, որ նրա հիման վրա հնարավոր է ստեղծել իրավական հավասարություն մուսուլմանների և քրիստոնյաների միջև։ Իսկ «Մասիսը» գրում էր, որ մուսուլմանների և քրիստոնյաների հավասարության սկզբունքնը հակասում է շարիաթին²²²։ Կամ այլ օրինակ. ինչպես արդեն նշել էինք սույն գրքում, «նոր օսմանցիները» կողմնակից էին Օսմանյան կայսրության ժողովուրդների «միաձուլման» քաղաքականությանը։ Իսկ «Մասիսը» գրում էր. «Ամեն ազգ ունի իր ազգությունը, լեզուն, սովորույթները, դարավոր ավանդույթները, հազարավոր սեփական որակներ և իր կրոնը»²²³։

²¹⁹ Մասիս, 1867, թիվ 786։

²²⁰ Մասիս, 1867, թիվ 786։

²²¹ Մինչև 1876 թվականի սահմանադրության ընդունումը Օսմանյան կայսրությունում գոյություն չի ունեցել պետական կամ պաշտոնական լեզու։

²²² Մասիս, 1867, թիվ 787։

²²³ Մասիս, 1867, թիվ 779։

«Մասիսն» անուշադրության չէր մատնում նաև կառավարության կողմից Նամըք Քենալի և Ալի Սուլավիի հետապնդումը, տեղեկացնում էր իր ընթերցողներին այդ մասին: Այսպես՝ նա հայտարարում էր, որ «Մուհբիր» պարբերականի հրատարակությունը «կառավարության ուժեղ քննադատության» համար դադարեցված է²²⁴: Հաջորդ համարում նա գրում էր, որ «Մուհբիր» խմբագիր Ալի Սուլավին աքսորված է Քաստամոնու²²⁵: Նա տեղեկացնում էր նաև այն մասին, որ Նամըք Քենալը՝ «Թասֆիր-ի էֆքյարի» նախկին խմբագիրը, նշանակվել է Էրզրումի վիլայեթի վալիի (նահանգապետ) մուավին (օգնական)²²⁶:

Բերված փաստերը թույլ են տալիս հետևություն անել այն մասին, որ արդեն սկզբնական փուլում «նոր օսմանցիների» շարժումը իր վրա էր հրավիրել հայ ազատականների ուշադրությունը: «Նոր օսմանցիների» հրապարակումներն ուշադիր ուսումնասիրվում էին, վերապատմվում և մեկնաբանվում, որոշ դեպքերում նրանց տրվում էր հակահարված:

Սակայն «նոր օսմանցիների» հետ հարաբերություններ հաստատելու կամ համագործակցության գնալու ձգտում հայ ազատականները այդ տարիներին չդրսևորեցին: Մեր կարծիքով՝ կար երկու պատճառ: Նախ, նրանք կարծում էին, որ այդ շարժումը թույլ է և իրենից չի ներկայացնում լուրջ քաղաքական ուժ: Դրա մասին է վկայում «Մասիս» լրագրի հրապարակումներից մեկը, որտեղ նշվում էր, որ «Երիտասարդ թուրքիան» չունի մեծ ազդեցություն²²⁷:

Երկրորդը, ազատականները կարծում էին, որ Բարձր Դռան կողմից անցկացվող բարեփոխումների քաղաքականության բարենպաստ հնարավորությունը հայերի համար դեռևս չի սպառվել: Ընդգծենք, որ կարևոր դեր էին խաղում նաև նրանց անձնական բարեկամական հարաբերությունները երկրի ղեկավարների՝ Ալի փաշայի և Ֆուադ փաշայի հետ, որոնց դեմ հրապարակայնորեն ելույթ էին ունենում «նոր օսմանցիները»: Պատահական չէ, որ այդ շրջա-

նում «Մասիսը» մեկ անգամ ևս ընդգծում էր. «Մեր բոլոր հույսերն ու բարության սպասումները մեր հարազատ երկրի համար կապված են միայն կայսերական կառավարության հետ»²²⁸:

«Նոր օսմանցիների» Եվրոպա մեկնելուց հետո հայ ազատականների հետաքրքրությունը նրանց գործունեության և նրանց քարոզած գաղափարների հանդեպ թուլացավ: Այն չունեղացավ նաև բարեփոխիչներ Ֆուադ փաշայի (1869 թ.) և Ալի փաշայի (1871 թ.) մահից հետո:

Հայկական ազատական մամուլը հիմնականում դրական էր գնահատում «նոր օսմանցիների» հետ համագործակցող Միդատի փաշայի գորխունեությունը նորաստեղծ Դանուբյան վիլայեթի վալիի պաշտոնում: «Մասիսն», օրինակ՝ գրում էր, որ նրան հաջողվեց երկու տարում հասնել «որոշակի արդյունքների»²²⁹:

Միդատի դեպքում էլ իրենց դերը խաղացած հայ ազատականների անձնական կապերը: Դեռ երիտասարդ տարիներին գտնվելով Կ. Պոլսում՝ նա ընկերացավ հայ ազատականների առաջնորդներ Գ. Աղաթոնի և Գ. Օտյանի հետ²³⁰: Վերջինս Դանուբի վիլայեթում Միդատ փաշայի վստահված անձանցից և աշխատակիցներից մեկն էր՝ 1864-1868 թթ. զբաղեցնելով վիլայեթի «արտաքին գործերի տնօրենի» պաշտոնը²³¹:

Գ. Օտյանի համագործակցությունը Միդատ փաշայի հետ շարունակվեց նաև հետագա տարիներին և նշանակալի դեր խաղաց սահմանադրության հռչակման համար պայքարի շրջանում հայ ազատականների և թուրք սահմանադրականների միջև սերտ կապերի հաստատման գործում:

Հայկական աղբյուրները տեղեկացնում են նաև ազատական հոսանքի այլ հայտնի ներկայացուցչի և գիտնական-գյուղատնտեսի՝ Գ. Սթինարաջյանի մասին, ով համագործակցում էր Միդատ

²²⁴ Մասիս, 1867, թիվ 16:

²²⁵ Մասիս, 1867, թիվ 17:

²²⁶ Մասիս, 1867, թիվ 20:

²²⁷ Մասիս, 1867, թիվ 784:

²²⁸ Մասիս, 1867, թիվ 786:

²²⁹ Մասիս, 1867, թիվ 18:

²³⁰ Հ. Մ. Նուրիխան, Ժամանակակից պատմություն, 1868-1878, Մասն Գ, Վենետիկ, 1907, էջ 354:

²³¹ A. Beylerian, Krikor Odian (1834-1887): un haut fonctionnaire ottoman, homme des missions secrètes. – Revue du Monde Arménien, 1994, Tome I, p. 45-86.

փաշայի հետ և զբաղեցնում էր Դանուբի վիլայեթի «առևտրական և գյուղատնտեսական հարցերով տնօրենի» պաշտոնը²³²:

Ջարմանալի չէ, որ Միդիատի նշանակումը մեծ վեգիրի պաշտոնում 1872 թ. հայերի կողմից ընդունվեց ցնծությամբ: Այսպես՝ Ջմյուռնիայում տպագրվող «Արևելյան մամուլը» գրում էր, որ Միդիատ փաշայի նշանակումով սկսվում է նոր դարաշրջան Թուրքիայի վերակառուցման մեջ²³³, իսկ պատրիարք Մկրտիչ Խրիմյանը նրա հետ կապում էր Արևմտյան Հայաստանի վիլայեթների հայ բնակչության վիճակի բարելավման հույսերը²³⁴:

Այդ սպասումները անհիմն էին:

Միդիատ փաշան, լինելով սահմանադրական վերափոխումների կողմնակից միաժամանակ աչքի էր ընկնում իր հակաքրիստոնեական հայացքներով, որոնք ժամանակ առ ժամանակ դառնում էին տիրապետող այդ գործչի քաղաքական գործունեության մեջ²³⁵:

1875 թ. Միդիատը զլխավորեց սուլթան Աբդուլ Ազիզի դեմ ուղղված դավադրությունը, որի նպատակն էր գահ բարձրացնել թուրք սահմանադրականների դրածո և մասոնական կազմակերպության անդամ արքայազն Մուրադին, որը պետք է հռչակեր սահմանադրական վերափոխումների սկիզբը: Հայ ազատականները ոչ միայն անմասն չմնացին այդ դավադրությունից և հետագա սահմանադրական պայքարից, այլև, ինչպես վկայում են որոշ փաստեր, խաղում էին զգալի դեր: Կարելի է առանձնացնել նրանց մասնակցության մի քանի ուղղություն:

Դա, նախ և առաջ, աշխատանքն էր սահմանադրական շարժման տարբեր փաստաթղթերի, այդ թվում նաև սահմանադրության նախագծերի վրա, հաճախ անդրկուլիսյան և անանուն: Այստեղ, անշուշտ, առաջին հերթին հարկ է նշել Գրիգոր Օտյանին: Նա եղել

²³² A. Beylerian, Krikor Odian (1834-1887): un haut fonctionnaire ottoman, homme des missions secrètes. – Revue du Monde Arménien, 1994, Tome I, p. 48.

²³³ Արևելյան մամուլ, 1872, թիվ 8, էջ 357–358:

²³⁴ Դիվան հայոց պատմության, գիրք ԺԳ. Հարստահարություններ Տաճկահայաստանում (Վավերագրեր 1801-1888). Հավելվածներով. ժանոթագրություններով և բազրթով. Հրատ. Գ. Աղանյան, Թիֆլիս, 1915, էջ 247:

²³⁵ Այդ մասին տես հաջորդ մասերում:

է, ինչպես պարզել էր Կ.Պոլսում ռուսական դեսպանը, սահմանադրության համար պայքարի շրջանի նշանակալի փաստաթղթերից մեկի՝ «Մուսուլման-հայրենասերների հրովարտակի» համաեղինակը²³⁶: Կան էլ, ինչպես գրում են հայկական աղբյուրները, եղել է այն հողավածների հեղինակը, որոնք հրատարակվում էին Փարիզում և Լոնդոնում Միդիատ փաշայի ստորագրությամբ²³⁷: Կան վկայություններ այն մասին, որ նա վճռական դեր է խաղացել սահմանադրության վերջնական տեքստի նախապատրաստման աշխատանքներում²³⁸: Այս հանգամանքը նշում են նաև թուրք պատմաբանները²³⁹: Հետաքրքիր է, որ նույնիսկ սուլթան Աբդուլ Համիդ երկրորդն էր իր օրագիր-հուշատետրում գրում, որ Օտյանը եղել է Միդիատի «ուղեցույցը» սահմանադրական պայքարի հարցերում²⁴⁰:

Սահմանադրական շարժման շրջանում Գրիգոր Օտյանը կատարում էր նաև կարևոր դիվանագիտական բնույթի հանձնարարություններ: Այսպես՝ նա Միդիատ փաշայի կողմից ուղարկվեց Փարիզ գաղտնի առաքելությամբ²⁴¹:

Սահմանադրական պայքարի շրջանում հայերի անդրկուլիսյան ակտիվությանն առնչվող փաստերի թվին է պատկանում թուրք սահմանադրականների ֆինանսավորումը ազատականորեն տրամադրված սարաֆների (դրամատերերի) կողմից²⁴²: Համաձայն թուրք մասնագետ Մ. Ջ. Քունթայի՝ հայ մեծահարուստ Մկրտիչ Մու-

²³⁶ Н. П. Игнатъев – Н. К. Гурцу, Константинополь, 24 мая/5 июня 1876 года. – АВПРИ, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л. 204.

²³⁷ Մինաս Չերազ, Կենսագրական միսիոներ. Փարիզ, 1920, էջ 21:

²³⁸ Հ. Մ. Նուրիխան, Ժամանակակից պատմություն, 1868-1878. Մասն Գ, Կենտրոն, 1907, էջ 355:

²³⁹ E. Z. Karal, Non-Muslim representatives in the first constitutional assembly. – Christians and Jews in the Ottoman Empire: the functioning of a plural society. Ed. by B. Braude and B. Lewis, Vol. I: The Central Lands, New York – London, 1982, p. 391.

²⁴⁰ [Abdulhamit II], İkinci Abdulhamidin hatıra defteri. İstanbul, 1960, s. 117.

²⁴¹ B. S. Baykal, Midhat Paşanın gizli bir siyasi teşebbüsü. – III Türk Tarih Kongresi, Ankara, 15-20 Kasım 1943. Ankara, 1948, s. 470 – 477; Beylerian A. Krikor Odian (1834-1887): un haut fonctionnaire ottoman, homme des missions secrètes. – Revue du Monde Arménien, 1994, No. I, p. 54-55.

²⁴² M.C. Kuntay, Namik Kemal devrinin insanları ve olayları arasında. C. 1, İstanbul, 1944, s. 262-263.

րադիոլուն եղել է արքայազն Մուրադի և Նամըք Քեմալի անձնական բանկիրը, ընդ որում, գումարը պարտք էր տալիս շատ շահավետ պայմաններով և հաճախ պարտքը հետ չէր վերցնում: Սկրտիչը ազատական հայացքների տեր մարդ էր և կիսում էր սահմանադրականների մոտեցումները: Չի բացառվում, որ այդ գումարներով ֆինանսավորվում էին սոֆթաների (մուսուլմանական ուսումնական հաստատությունների ուսանողների) ցույցերը սուլթան Աբդուլ Ազիզի և քրիստոնյաների դեմ²⁴³: Այդ ցույցերին կանդոդառնանք աշխատության չորրորդ մասում:

Գրիգոր Օտյանը ակտիվորեն մասնակցում էր նաև սահմանադրության հռչակման համար մղվող հրապարակային քաղաքական պայքարին՝ ե՛վ հակասուլթանական ցույցերին²⁴⁴, ե՛վ սահմանադրական հանձնաժողովի աշխատանքներին²⁴⁵:

Հայ ազատականների աջակցությունը թուրք սահմանադրականներին, արտացոլվել է նաև 1875-1876 թթ. վերջի հայկական թերթերի էջերում: Նրանք սկսեցին ավելի բացահայտ խոսել Օսմանյան կայսրությունում արմատական վերափոխումներ կատարելու անհրաժեշտության մասին: Մայրաքաղաքում հրատարակվող «Նորագիրը» նշում էր. «Հայի բացարձակ նպատակն է թուրքիայում տեսնել հավասարության և արժանապատվության հաղթանակը»²⁴⁶, իսկ «Մասիսը» գրում էր. «իշխանությունների հավասարակշռության» սկզբունք մտցնելու անհրաժեշտության մասին²⁴⁷:

Միաժամանակ, առկա էր նաև ազատական մամուլի զգուշավոր մոտեցումը թուրք սահմանադրականների խոստումներին: Այսպես՝ «Արևելյան մամուլը» 1875 թ. նշում էր, որ սուլթանական հրովարտակը սահմանադրության հռչակման մասին միայն այն դեպքում կարող է օգտակար լինել, եթե իսկապես կյանքի կոչվի²⁴⁸:

Թուրքական կառավարության կողմից սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը պաշտոնական ճանաչելուց հետո արդեն գրեթե բոլոր հայկական թերթերը, այլ ոչ թե միայն ազատականները, ողջունեցին սահմանադրության շուտափույթ հռչակումը: Դրա հետ մեկտեղ, ազատական «Մասիսը» բավականին զգույշ արտահայտվեց սահմանադրության հեռանկարների մասին: Նա գրում էր, որ միայն այն դեպքում, եթե «սահմանադրությունը կիրառվի ամենայն ճշգրտությամբ», այն կարող է բացել «նոր դարաշրջան»²⁴⁹:

Ազատականները սահմանադրական պայքարի շրջանում ևս շարունակում էին մամուլի էջերից վստահեցնել իրենց ընթերցողներին, դրա հետ մեկտեղ նաև թուրքական իշխանություններին, որ հայերն իրենց ճակատագիրը կապել են Օսմանյան կայսրության հետ²⁵⁰ և որ նրանք կարող են պաշտպանել իրենց իրավունքները միայն «Թուրքիայի հետ սերտ դաշինքով և թուրք ժողովրդի հետ բարեկամական համաքաղաքացիությամբ»²⁵¹: Ազատականների ազդեցության տակ գտնվող Կ.Պոլսի Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը 1876 թ. ամռանն ուղերձ հղեց հայ ժողովրդին՝ համոզելով նրան ամեն կերպ օգնել բարեփոխումների ուղղու վրա կանգնած օսմանյան կառավարությանը²⁵²:

Միաժամանակ, հայ ազատականների մամուլի չէր կորցնում երկրում ստեղծված իրավիճակը իրատեսորեն գնահատելու ունակությունը: «Մասիսն», օրինակ, արձանագրում էր, որ թուրքական թերթերում նկատվում է սովորականից ավելի ուժեղ «կրոնական ֆանատիզմ»²⁵³: 1876 թ. օգոստոսին երիտասարդ ազատական Մինաս Չերազը գրում էր, որ հայերն ունեն աստամբելու ավելի շատ պատճառներ, քան բալկանյան ժողովուրդները, սակայն նրանք գիտեն, որ «կան շատ հիվանդություններ, որոնք ժամանակը կարող է բուժել»²⁵⁴:

²⁴³ Y. T. Öztuna, Başlangıcından zamanımıza kadar Tütkiye tarihi, C. 12, 1967, s. 54.

²⁴⁴ Մինաս Չերազ, Կենսագրական միսիոներ. Փարիզ, 1929, էջ 23:

²⁴⁵ R. H. Davison, Reform in the Ottoman Empire, 1856 -1876. Princeton, 1963, p. 48.

²⁴⁶ Նորագիր, 23 հոկտեմբերի 1876:

²⁴⁷ Մասիս, 1876, թիվ 1835:

²⁴⁸ Արևելյան մամուլ, 1875, թիվ 12, էջ 480:

²⁴⁹ Մասիս, 1876, թիվ 1894:

²⁵⁰ Մասիս, 1876, թիվ 1848:

²⁵¹ Մասիս, 1876, թիվ 1895:

²⁵² Մարութան, Հայկական խնդիրն և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում (1860 - 1910), Հ. Ա., Թիֆլիս, 1912, էջ 115-117:

²⁵³ Մասիս, 1876, թիվ 1841:

²⁵⁴ Ա. Ավարյան, Մինաս Չերազ. իր կյանքը և գործը. իր 60 ամյա հոբելյանի առթիվ. Գահիրե, 1927, էջ 114:

**ՆԱԽԱՅԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ
ԱՌԱՋԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ**

1. ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ազատականները չէին կորցնում հույսը, որ համագործակցելով թուրք սահմանադրականների հետ հնարավոր կլինի հասնել պետական օրենսդրական համակարգի աշխարհիկացմանը և շարիաթի կիրառման ուղրոտի սահմանափակմանը: 1876 թ. ամռանը սովորաբար զգուշավոր «Մասիսը» շարիաթը ենթարկեց սուր քննադատության և իշխանություններին զգուշացրեց, որ այն «կարող է երկրի ժողովուրդներին վերածել իրար նկատմամբ թշնամական երկու բանակի»²⁵⁵:

Հայ ազատականների և թուրք սահմանադրականների համագործակցության գաղափարական հենքը «օսմանյան հայրենասիրության» գաղափարախոսությունն էր: Երկու հոսանքներն էլ ընդունում էին այն, սակայն հանդես էին գալիս նրա տարբեր մեկնաբանություններով: Հայ ազատականները քննադատում էին նրա մեջ առկա մեծապետական միտումները և ազնվորեն հավատում էին, որ սահմանադրության հռչակումով հնարավոր կլինի իրականություն դարձնել Օսմանյան կայսրության ժողովուրդների «եղբայրությունն ու հավասարությունը»: «Նոր օսմանցիները», ինչպես ցույց տրվեց նախորդ գլխում, սահմանադրությունը դիտարկում էին միջոց՝ թուրքերի իշխանությունը հպատակ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ «օսմանացման» և «միաձուլման» ճանապարհով պահպանելու համար:

Այս առումով հատկանշական է հայտնի գործիչ Ս. Փափագյանի ելույթը Ազգային ժողովի նիստում 1876 թ. դեկտեմբերին՝ սահմանադրության հռչակումից մի քանի օր առաջ, որտեղ այդ գաղափարական հակասությունը ներկայացված է հստակ ձևով: Փափագյանը հայտարարեց. «Բացեիքաց ասենք մեր օսմանյան ցեղակիցներին և ջանանք, որ նրանք հասկանան, որ մենք հայ ենք և որ մենք կպահպանենք մեր ազգությունը նույնիսկ օսմանյան դրոշի տակ: Միաձուլման ձգտումը օգտակար չի լինի մեզից ոչ մեկի համար...այնուհանդերձ մենք (ի նկատի ունի Օսմանյան կայսրության ժողովուրդներին - Ռ. Սաֆրաստյան) ունենք հետաքրքրությունների ընդհանրություն, դրա համար էլ մենք՝ որպես Օսմանյան կայսրության քաղաքացիներ հանդիսանում ենք միասնական ամբողջություն ...»²⁵⁶:

Օսմանյան պետության ծագումնաբանության խնդիրը կարևորվում է նրանով, որ, ինչպես ընդգծում են ժամանակակից մասնագետներից շատերը, օսմանյան պետության հետագա պատմական զարգացման առանձնահատկությունները զգալիորեն պայմանավորված էին ծագումնաբանության փուլի առանձնահատկություններով²⁵⁷:

Օսմանյան պետության ծագումնաբանության առանձնահատկությունները բացատրող երկու հիմնական տեսություններ կան, որոնք առաջ են քաշվել դեռևս անցյալ դարում, սակայն մինչև այսօր չեն կորցրել իրենց նշանակությունը: Նրանցից առաջինի հեղինակն է բրիտանացի օսմանագետ Փոլ Վիթեքը, որը գտնում էր, որ օսմանյան պետությունը իր գոյության առաջին փուլում հանդես էր գալիս որպես ղազինների պետություն (Ghazi State), այդպիսով՝ նախապատվություն տալով իսլամի կրոնի ռազմատենչ մեկնաբանության վրա հիմնված գաղափարական միասնությանը՝ որպես գլխավոր պետականաստեղծ գործոնի²⁵⁸:

Անցյալ դարի 80 - ական թվականներին այս տեսակետը սուր քննադատության ենթարկվեց ինչպես թուրք, այնպես էլ մի քանի արևմտյան օսմանագետների կողմից: Քննադատները հիմնականում բերում էին հետևյալ, պատմական իրականությանը չհամապատասխանող փաստարկը. ինչպես՞ս կարող էին օսմանյան պետության հիմնադիրները լինել մոլեռանդ ու քրիստոնյաների նկատմամբ անհանդուրժող ռազմատենչ ղազիններ, եթե օսմանյան այդ պե-

²⁵⁵ Մասիս, 1876, թիվ 1841:

²⁵⁶ Ատենագրությունը Ազգային ժողովո, 1876-1877, Կ. Պոլիս, 1876, էջ 326:

²⁵⁷ W. Pfaff, The wrath of nations: civilization and the furies of nationalism. New York, 1994, p. 102.

²⁵⁸ P. Wittek, The rise of the Ottoman Empire. London, 1938.

տությունը աչքի էր ընկնում «կրոնական հանդուրժողականությամբ»²⁵⁹:

Փոլ Վիթեքի տեսությունն ունի նաև իր կողմնակիցները մեր օրերի օսմանագետների շրջանում: Նրանցից առանձնանում է ԱՄՆ-ում բնակվող, ազգությամբ թուրք պատմաբան Ջեմալ Քաֆադարը, որը մասնակի ընդունելով Վիթեքի տեսությունը, ընդգծում է, թե օսմանյան պետության ծագումնաբանությունը պետք է դիտարկել որպես երկարատև, շուրջ հարյուր հիսուն տարի տևած գործընթաց, որի ընթացքում օսմանյան նվաճողները գերիշխանության հասնելու ու պահպանելու նպատակով օգտագործում էին բազմաթիվ միջոցներ, այդ թվում նաև դազիական գաղափարախոսությունն ու քաղաքականությունը²⁶⁰:

Մյուս տեսությունը ստեղծել է թուրք պատմաբան Ֆուադ Քյոփրյուլյուն: Համաձայն վերջինիս, օսմանյան պետության առաջացումը պայմանավորված էր առաջին հերթին թուրքական էթնիկական գործոնով²⁶¹: Այդ տեսությունը մեծաթիվ կողմնակիցներ ունի հիմնականում թուրք պատմաբանների շրջանում²⁶²:

Նախապատվությունը տալով Պ. Վիթեքի տեսությանը՝ հեղինակը ընդգծում է, որ այն պետք է լրացվի անդրադարձով ուժային միջոցների կիրառման առանձնահատկություններին: Իրենց պատմության ամենավաղ շրջանից սկսած, օսմանյան թուրքերը ընկալում էին իրենք իրենց որպես առաջամարտիկներ քրիստոնյաների դեմ պայքարում: Այդ ստեղծում էր նրանց միջավայրում համապատասխան ավանդույթների և հաստատությունների առկայության պայմաններում հակաքրիստոնեական ռազմատենչ մոլեռանդության յուրահատուկ մթնոլորտ և թելադրում էր մեկ գերխնդիր նվաճումներ ջիհադի քողի ներքո: 13 -14-րդ. օսմանյան պետությանը բնորոշ էին համեմատաբար միատարր բնույթը, կրոնական մոլեռանդությունը ու գերռազմականացումը: Նրա գոյությունը հիմնականում ապահովվում էր զինված

թալանի միջոցով, իսկ պետական գաղափարախոսությունը արտաքին ու ներքին ջիհադի հայեցակարգն էր:

14-15-րդ դարերում ձևավորվեցին օսմանյան պետական կառույցի ու սոցիալական կառուցվածքի հիմնական բաղադրամասերը, ի հայտ եկան քաղաքական ու գաղափարական բնույթի մի շարք առանձնահատկություններ, որոնք իրենց խորը կնիքը դրեցին այդ պետության պատմության ողջ ընթացքի վրա:

Օսմանյան կայսրության սկիզբը դրվեց քայքայվող Իկոնիայի սելջուկյան սուլթանության կազմում գտնվող ոչ մեծ ուլթեյությունում (սահմանամերձ տիրույթում) 13-րդ դարում: Այն պատկանում էր օղուզ թյուրքերի քայքայեցողի մաս կազմող Օսմանի տոհմին: Ս. Շոուի բնորոշմամբ՝ այդ վաչկատուն ցեղը չունեի արմատներ և պատրաստ էր իր ծառայությունները առաջարկել այն տիրոջը, որից ակնկալում էր ավելի մեծ շահ²⁶³: Այն քոչել էր Միջին Ասիայից եւ Իկոնիայի սելջուկյան սուլթանների կողմից նրանց մի մասի առաջնորդ էրթողուլը, Օսմանի հայրը, որպես ուլթեյություն ստացել էր քրիստոնյաներով բնակեցված տարածք Փոքր Ասիայի հյուսիս -արևմուտքում:

Սկզբնական շրջանում օսմանցիների թվաքանակը չէր անցնում 400 ընտանիքից²⁶⁴: Նրանց գոյության հիմնական աղբյուրը, ինչպես նաև զլխավոր զբաղմունքը, տեղաբնակ քրիստոնյա խաղաղ հողագործ բնակչության կողոպուտն ու ասպատակությունն էր, որին մասնակցում էր ողջ ցեղը, կանայք և երեխաները ներառյալ, ինչպես դա ընդունված էր քոչվոր ցեղերի մոտ: Սակայն արդեն Օսմանի օրոք որոշում է ընդունվում ավելի կազմակերպված բնույթ հաղորդել ռազմական գործողություններին, այդ նպատակով ստեղծվում են *աքընջընների* հեծելազորային ստորաբաժանումները: Այդ ոչ կանոնավոր ջոկատները, փաստորեն, լավ զինված հրոսակախմբեր էին, որոնք աչքի էին ընկնում իրենց դաժանությամբ: Հետագայում աքընջընները դարձան օսմանյան բանակի կարևոր ստորաբաժանումներ, որոնք սկսում էին իրենց գործողություն-

²⁵⁹ H. Inalcik, The Ottoman Empire: the classical age, 1300 -1600. London - New York, 1973, p. 7.

²⁶⁰ C. Kafadar, Between two worlds: the construction of the Ottoman State. Berkeley, 1995, p. 121.

²⁶¹ F. Köprülü, Osmanlı devletinin kuruluşu. Ankara, 1959.

²⁶² M. T. Gökbilgin, Rumelide yürükler, Tatarlar ve Evlâd-ı Fatihan, İstanbul, 1957.

²⁶³ St. J. Show, History of the Ottoman Empire and modern Turkey. Vol. I: empire of the Gazis: the rise and decline of the Ottoman Empire, 1280-1808. Cambridge, 1977, p. 13.

²⁶⁴ D. Avcioğlu. Türklerin tarihi. Birinci Kitap. Dördüncü Basım. İstanbul, 1982, s. 162.

ները հիմնական գորքից երկու օր առաջ²⁶⁵։ Նրանց հիմնական խնդիրն էր ոչնչացնել եւ թալանել հակառակորդի գույքը²⁶⁶, հրկիզել հանդիպակաց քաղաքները և գյուղաքաղաքները²⁶⁷ և ոչ մեծ ջոկատներով ցրվելով հակառակորդի երկրում, սարսափ տարածել բնակչության շրջանում²⁶⁸։

Ուչբեյությունը չուներ հստակ սահմաններ, այդ պատճառով օսմանցիների ասպատակությունների զոհ էին դառնում ինչպես իրենց անմիջական իշխանության տակ գտնվող քրիստոնյաները, այնպես էլ հարևան բեյությունների կամ էլ սահմանակից Բյուզանդիայի հպատակները։

Օսմանյան ուչբեյությունը սկզբնական շրջանում ոչնչով չէր տարբերվում Իկոնիայի սելջուկյան սուլթանության արևմտյան սահմանամերձ տարածքներում գոյություն ունեցող այլ ուչբեյություններից²⁶⁹։ Այստեղ լիովին իշխում էին կառավարման աշիրեթային (տոհմա-ցեղային) ձևերը²⁷⁰, որոնք համապատասխանում էին թյուրքական ցեղերի այն ժամանակվա մակարդակին եւ նպատակաուղղված էին զինված կողոպուտի առավել օպտիմալ կազմակերպմանը։ Սոցիալական կառուցվածքը պարզունակ էր։ Փաստորեն, օսմանյան ուչբեյությունում ողջ ցեղը իրենից ներկայացնում էր իշխող խավ, տեղաբնակ քրիստոնյա բնակչության կոլեկտիվ հարստահարիչ²⁷¹։ Նրա անդամների միջև էր բաժանված ողջ հողատարածքը *իքթաների* (պայմանական տիրույթների) տեսքով։

²⁶⁵ İ. H. Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilatından kapukulu ocakları. II. Ankara, 1944, s.255.

²⁶⁶ Ş. Sami, Kamus-i Türki. Dersaadet, 1318, s. 45 - 46.

²⁶⁷ Ahmet Rasim, Resimli ve haritalı osmanlı tarihi. 2. Cild, 2. Tabı, İstanbul, 1328-1330, s. 149 - 150.

²⁶⁸ M. Z. Pakalın, Osmanlı tarih deyimleri ve terimleri sözlüğü. I, İkinci Basılış, İstanbul, 1971, s. 39.

²⁶⁹ P. A. Гусейнов, Уджу – военно-феодалный институт в Малою Азии в XI - XII вв. – Тюркологический сборник 1974. М., 1978, с. 213-229.

²⁷⁰ İ. H. Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilâtına medhal. İstanbul, 1941, s. 143.

²⁷¹ С. Ф. Орешкова, Государственная власть и некоторые проблемы формирования социальной структуры османского общества. – Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М., 1986, с. 5.

Սակայն, օգտվելով իրենց աշխարհագրական դիրքի ընձեռած հնարավորություններից անմիջական սահման այն ժամանակվա քրիստոնյա աշխարհի առաջատար ուժի Բյուզանդական կայսրության հետ, օսմանյան բեյերը կարողացան իրենց նվաճողական նկրտումներին հաղորդել *ջիհադի* կամ *ղազավաթի* («անհավատների դեմ սրբազան պատերազմի») ձև և հանդես գալ որպես ողջ մահմեդական աշխարհի ներկայացուցիչներ։ Դա նրանց հնարավորություն տվեց կենտրոնացնել իրենց ձեռքբերում զգալի ուժ և հիմք նախապատրաստել լայնածավալ էքսպանսիայի համար։

Օսմանյան բեյությունը դարձավ մոլեռանդ եւ արկածախնդիր անհատ *ղազիների* "անհավատների" դեմ զինված պայքարի առաջամարտիկների կամ էլ նրանց այլևայլ խմբավորումների հավաքատեղի, որոնք այստեղ են համախառնվում Փոքր Ասիայի այլ բեյություններից²⁷²։ Միջնադարյան թուրք պատմիչ ու բանաստեղծ *Աշրք Փաշազադեն* իր տարեգրության մեջ, բացի դազիներից, հիշատակում է նաև երեք այլ համանման խմբավորումներ՝ լավ կազմակերպված, մահմեդական աշխարհի տարբեր տարածաշրջաններում լայնորեն տարածված ու մեծ համբավ վայելող *դերվիշներից* և *ախիներից*, ինչպես նաև *մարտնչող կանանցից* կազմված²⁷³։ Դրանց պետք է ավելացնել նաև մահմեդական զանազան *թարիքաթների* (միստիկական եղբայրությունների) բազմաթիվ ներկայացուցիչներին²⁷⁴։

Այդ կազմակերպությունները կարևոր դեր կատարեցին օսմանյան պետականության կայացման մեջ։ Մասնավորապես *ախիները* նպաստեցին կործանումից փրկված քաղաքների կյանքի վրա թուրքերի հսկողության հաստատմանը²⁷⁵։ Մյուսները, համալրում էին *ուլենաների* դասի շարքերը, որոնց դերը օսմանյան բեյությունում չափազանց մեծ էր։ Այդ մահմեդական ֆանատիկոս կղերները ղեկավարում էին ձևավորվող պետական կառույցների մեծ մասը։ Սակայն

²⁷² P. Wittek, The rise of the Ottoman Empire. London, 1938, p. 41.

²⁷³ Шамсутдинов А. М., Проблемы становления османского государства по турецким источникам XIV-XV вв. – Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М., 1986, с. 36 - 37.

²⁷⁴ F. Köprülü, Osmanlı devletinin kuruluşu. Ankara, 1959, s. 95 -102.

²⁷⁵ S. Yerasimos, Azgelişmişlik sürecinde Türkiye. 1. Cilt: Bizanstan Tanzimatı. İstanbul, 1977, s.194.

նրանց զլխավոր խնդիրն էր զենքի ուժով «տարածել իսլամը անհավատների» շրջանում: Նրանցից շատերը մասնակցում էին ռազմական գործողություններին և, ինչպես գրում է թուրք պատմաբանը, «մի բուռ մյուրիղների (աշակերտների-Ռ.Ս.) հետ միասին ճգնում էին հազարավոր թշնամիների»²⁷⁶: Նույն ախիները, ինչպես նաև կղերականները մեծ նշանակություն ունեցան օսմանյան բանակի առաջին կիսականոնավոր ու կանոնավոր ստորաբաժանումների ստեղծման համար: Մասնավորապես, *կադիների* ղեկավարության ներքո կազմավորվեցին առաջին *ենիչերիական* ջոկատները²⁷⁷:

Օսմանյան առաջին բեյերը նույնիսկ պաշտոնապես էին դիմում Փոքր Ասիայի այլ թյուրքական բեյությունների ղեկավարներին, խնդրելով զինված օգնություն ցուցաբերել իրենց արևմուտքում "սրբազան պատերազմ" վարելու համար, և աջակցություն էին ստանում նրանցից շատերից²⁷⁸:

Օսմանյան բեյության հզորացման մեջ կարևոր դեր կատարեցին նաև Փոքր Ասիայից այստեղ մեծ քանակությամբ քոչված *յուրյուկները* և *թաթարները* (վաչկատուն թյուրքական ցեղեր): Նրանց այստեղ գրավում էր հարուստ ավարի հնարավորությունը: Ինչպես վկայում է թուրք պատմաբանը, նրանց միջավայրում նույնպես ակտիվություն էին ցուցաբերում ֆանատիկոս *դերվիշները*, որոնք դարձել էին զարգացման շատ ցածր մակարդակի վրա գտնվող եւ շամանիզմի ազդեցությունից դեռևս լիովին չձեռքազատված այդ քոչվորների հոգեւոր առաջնորդները²⁷⁹: Այդ դերվիշների բարոյական հատկանիշների մասին պատկերացում է տալիս օսմանյան վաղ միջնադարի լավագույն գիտակներից մեկի Ֆուադ Զյուփրյուլյուի *քալենդերիյե* թարիքաթին պատկանողների բնութագիրը, համաձայն որի նրանք այժի էին ընկնում իրենց «*նիհիլիզմով*» եւ «*ահավոր իմնորալիզմով*»²⁸⁰:

Օսմանյան բեյերին եւ հետագայում սուլթաններին հաջողվեց յուրյուկների ու թաթարների խոշոր զանգվածների առկայությունը օգտագործել, ինչպես նշում է մեկ այլ թուրք պատմաբան, «պետության համար ամենաբարենպաստ ծեւով»²⁸¹: Այդ «բարենպաստ» ծեւերից էին նրանց օգտագործումը նվաճված հողերի գաղութացման համար, ինչպես նաև, որպես հիմնական զինուժ: Յուրյուկների և թաթարների մի մասին նվաճված տարածքներից հատկացվում էին ոչ մեծ հողակտորներ (*չիֆթլիք*), նրանց վրա պարտավորություն էր դրվում մշակել այն և անհրաժեշտության դեպքում մասնակցել զինված գործողություններին *յայաների* ու *մյուսելլեմների* նորաստեղծ ջոկատներում, դրա փոխարեն նրանք ազատվում էին հարկերի վճարումից, իսկ ռազմական գործողություններին մասնակցելու ընթացքում ստանում էին ռոճիկ²⁸²: Այդ ստորաբաժանումները ստեղծվեցին համաձայն նախապես պատրաստված ծրագրի, որի հեղինակն էր ուլլեմների դասի ներկայացուցիչ *Ջենդերելի Քարա Չալիլը*, որը կապված էր *ախիների եղբայրության* հետ²⁸³: Պատահական չէր նաև այն հանգամանքը, որ *յայաները* ու *մյուսելլեմները* ստացան *հատուկ համազգեստ*, որը կրկնօրինակում էր *ախիների* հագուստը: Այդ համազգեստը, գրում էր մեկ այլ ուլլեմա՝ Յոջա Սադեդդինը, որը վկայում էր նրանց *արտոնյալ դիրքի* մասին²⁸⁴:

Վերը նշված ստորաբաժանումների ստեղծումը օսմանյան պետության ձեւավորման պատմության վաղ շրջանի կարևոր և բազմանշանակ իրադարձություններից էր: Այն բարձրացրեց բանակի մարտունակությունը, հնարավորություն տվեց ներգրավելու քոչվորների մի մասին պետական կառույցների մեջ, նպաստեց նրանց նստակյաց կյանքի անցմանը: Այդպիսով սկիզբ է դրվում օսմանյան գյուղացիությանը:

Արդեն սկսած 14-րդ դարից օսմանյան բեյերը մահմեդականացման քողի ներքո սկսեցին իրականացնել քրիստոնյաների

²⁷⁶ S. Yerasimos, Azgelişmişlik sürecinde Türkiye. 1. Cilt: Bizanstan Tanzimata. İstanbul, 1977, s. 101.

²⁷⁷ И. Е. Петросян, К истории создания янычарского корпуса. – Тюркологический сборник 1978. М., 1984, с. 194.

²⁷⁸ M. Akdağ, Türkiye'nin iktisadi ve içtimai tarihi, C. 1: 1243-1453. İstanbul, 1974, s. 153.

²⁷⁹ F. Köprülü, Osmanlı devletinin kuruluşu. Ankara, 1959, s. 97 - 102.

²⁸⁰ F. Köprülü, Osmanlı devletinin kuruluşu. Ankara, 1959, s.99.

²⁸¹ M. T. Gökgilgin, Rumelide Yürükler, Tatarlar ve Evlad-ı Fatihan. İstanbul, 1957, s.19.

²⁸² И. Е. Петросян, К истории создания янычарского корпуса. – Тюркологический сборник 1978. М., 1984, с. 192.

²⁸³ Там же.

²⁸⁴ D. Avcioğlu Türklerin tarihi. Birinci Kitap. Dördüncü Basım. İstanbul, 1982, s. 163

ստրկացման և թուրքացման քաղաքականություն: Այս ոլորտում օսմանյանների վաչկատուն տոհմը իր գոյության հենց սկզբից հանդես բերեց բացառիկ մոլեռանդություն ու հետևողականություն: Նա օգտագործում էր ջիհադի հայեցակարգը տեղաբնիկ նստակյաց, հողագործությամբ զբաղվող, քրիստոնյա ազգաբնակչության վրա իր իշխանությունը հաստատելու և պահպանելու նպատակով²⁸⁵:

Մուրադ I սուլթանության շրջանում մտցվեց փենչիքի համակարգը, համաձայն որի՝ քրիստոնյա գերիների ընդհանուր թվաքանակի մեկ հինգերորդին 2-3 տարով ուղարկում էին փոքրասիական թյուրքական ցեղերի մոտ, որտեղ նրանց դավանափոխ էին անում, սովորեցնում թուրքերեն եվ օգտագործում էին ծանր ֆիզիկական աշխատանքների համար²⁸⁶: Դրանից հետո նրանք վերադարձվում էին սուլթանի արքունիք համալրելով նրա անձնական ծառաների եւ նոր ստեղծված ենիչերիական զորքի կազմը²⁸⁷: Փենչիքը համապատասխանում էր Ղուրանի պատգամին. «Եվ իմացեք, եթե դուք վերցրել էք ավար, ապա Ալլահինն է հինգերորդ մասը, և նրա կողմից ուղարկվածինը...»²⁸⁸: Շարիաթի հարկային համակարգում նա մահմեդականներից պետության կողմից գանձվող ամենակարևոր հարկերից մեկն էր²⁸⁹: Այն գանձվում էր նաեւ Փոքր Ասիայի այլ թյուրքական բեյություններում²⁹⁰: Սակայն օսմանցիները հարմարեցրին այն ռազմական պահանջներին, ինչը նրանց տվեց հսկայական առավելություն մնացած բեյությունների նկատմամբ:

²⁸⁵ С. Ф. Орешкова, Государственная власть и некоторые проблемы формирования социальной структуры османского общества – Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М., 1986, с. 6.

²⁸⁶ W. Eton, A survey of the Turkish Empire. London, 1798, p. 62.

²⁸⁷ И. Е. Петросян, К истории создания янычарского корпуса. – Тюркологический сборник 1978. М., 1984, с. 193 - 196.

²⁸⁸ Сура 8: Добыча, 42. - Коран. Перевод и комментарий И. Ю. Крачковского. М., 1986, с. 157.

²⁸⁹ Г. М. Керимов, Шариад и его социальная сущность. М., 1978, с. 173-179.

²⁹⁰ К. А. Жуков, Эгейские эмираты в XIV - XV вв. М., 1988, с. 126.

Ջեթագայում, երբ պակասեց ռազմագերիների հոսքը, մոտավորապես 14-րդ դարի կեսերից սկսվեց կիրառվել *ղեշիրմենի* (մանկահավաքի) համակարգը, որի իրականացման ընթացքում ծնողներից խլում և ստրկացնում ու թուրքացնում էին օսմանյան իշխանության տակ գտնվող քրիստոնյաների արու զավակներին²⁹¹: Դեշիրմեն, ինչպես նշվել է մասնագետների կողմից, հակասում էր շարիաթին²⁹²: Դիմելով դեվշիրմենյին առաջին թուրք սուլթանները լուծում էին կարևորագույն խնդիր. ոչ միայն հզորացնել բանակը, այլ նաև պահպանել իրենց իշխանությունը քրիստոնյա բնակչության վրա: Նույն նպատակին էին ծառայում հենց իրենք՝ ենիչերիները, որոնք օգտագործվում էին նաև Բալկանների մահմեդականացման գործընթացում²⁹³: Քրիստոնյաների բռնի մահմեդականացումը կազմում էր հպատակ ժողովուրդների նկատմամբ օսմանյան իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության բաղկացուցիչ մասը, որը իր վերջնական տեսքով հանդես եկավ ավելի ուշ, Կոնստանդնուպոլսի գրավումից հետո, երբ, ինչպես նշում էր ժամանակին օսմանյան թուրքիայի լավ գիտակներից մեկը, այն վերածեց «կազմակերպված մոլեռանդության» համակարգի²⁹⁴:

Ի տարբերություն ավելի ուշ շրջանի Օսմանյան կայսրության՝ բեյության բնակչության կազմը ավելի միատարր էր: Վերնախավը կազմում էին թյուրքական տարբեր ցեղերի ներկայացուցիչները *ղազիները*, օսմանյան տոհմի և հոգևոր զանազան եղբայրությունների ու թարիքաթների անդամները: Նրանց ձեռքում էր կենտրոնանում ռազմավարի հինական մասը: Նրանք էին տիրապետում անըդիատ ընդլայնվող երկրի հիմնական հողային և մարդկային ռեսուրսներին *իթթաների* միջոցով, նրանք էլ ձեւավորվող պետության ռազմական ու հոգևոր ղեկավարներն էին: Կարելի է համա-

²⁹¹ Ս. Կ. Ջուլայյան, Դեվշիրմեն (մանկահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական եւ հայկական աղբյուրների. - ՊԲՀ, 1959, 2-3, էջ 247 – 256:

²⁹² Ս. Կ. Ջուլայյան, Արեվմտյան Հայաստանը XVI-XVIII դդ. Երեվան, 1980, էջ 328.

²⁹³ E. Werner, Die Geburt einer Grossmacht - Die Osmanen (1300-1481). Berlin, 1966, S. 12-14.

²⁹⁴ R. R. Madden, The Turkish Empire in its relations with Christianity and civilisation. London, 1862, p. 7.

ծայնվել Քյոփրյուլյուի հետ, երբ նա գրում է, որ 14-րդ դարի բոլոր խոշոր պետական գործիչները թյուրքեր էիմ²⁹⁵: Այդպես սկսեց ձևավորվել օսմանյան իշխող ռազմաֆեոդալական դասակարգը: Ղականափոխ քրիստոնյաների ներգրավումը իշխող դասակարգի մեջ 13-14 դդ. կրում էր եզակի բնույթ:

Այդ դասակարգի իշխանությունը հիմնվում էր զինված ուժի օգտագործման ամենադաժան ձևերի վրա: Որպես օժանդակ, սակայն կարևոր միջոց, հանդես էր գալիս քրիստոնյաների բռնի մահմեդականացումը, որը հասել էր մեծ չափերի: Իրականությանը չի համապատասխանում նույն հեղինակի պնդումը այն մասին, որ այդ շրջանում մահմեդականությունը կրում էր «սահմանափակ բնույթ և ընթանում էր դանդաղ»²⁹⁶, քանի որ, ինչպես նշում է հենց թուրք միջնադարագետներից մեկը, սովորաբար թուրքական նվաճումներից արդեն 10 -15 տարի անց բալկանյան քաղաքները ստանում էին թուրքական տեսք²⁹⁷: Քրիստոնյաների որոշակի քանակի պահպանումը պայմանավորված էր զուտ տնտեսական պատճառներով, քանի որ թյուրքական քոչվոր ու կիսաքոչվոր ցեղերը դեռևս չունեին տնտեսավարման անհրաժեշտ ունակություններ:

Չիֆթչիները (չիֆթլիկների տերերը), որոնք, ինչպես նշել էինք վերևում, ներկայացնում էին զարգացման ավելի ցածր մակարդակի վրա գտնվող թյուրքական ցեղեր, կազմում էին միջանկյալ խավ: Հետագայում, երբ յայաների ու մյուսելլեմների ջոկատները կորցրեցին իրենց ռազմական նշանակությունը, նրանք զրկվեցին իրենց արտոնություններից ու համալրեցին մահմեդական գյուղացիության շարքերը:

Ստորին խավը կազմում էին կենդանի մնացած քրիստոնյաները: Նրանց թիվը այդ շրջանում համեմատաբար մեծ չէր, քանի որ ռազմավարի մեծ չափերի եւ հասարակության ու պետության պարզունակ կառուցվածքի պայմաններում օսմանյան իշխող դասակարգը չուներ մեծ շահագրգռվածություն նրանց աշխատանքի արդյունքների մեջ:

Այսպիսով՝ եզրակացնենք: Իրենց պատմության ամենավաղ շրջանից սկսած օսմանյան թուրքերը ընկալում էին իրենք իրենց որպես առաջամարտիկներ քրիստոնյաների դեմ պայքարում: Այդ ստեղծում էր նրանց միջավայրում համապատասխան ավանդույթների և հաստատությունների առկայության պայմաններում հակաքրիստոնեական ռազմատենչ մոլեռանդության յուրահատուկ մթնոլորտ և թելադրում էր մեկ գերխնդիր նվաճումներ ջիհադի քողի ներքո: 13-14-դդ. օսմանյան պետությանը բնորոշ էին համեմատաբար միատարր բնույթը, կրոնական մոլեռանդությունը ու գերռազմականացումը: Նրա գոյությունը հիմնականում ապահովվում էր զինված թալանի միջոցով, իսկ պետական գաղափարախոսությունը արտաքին ու ներքին ջիհադի կոնցեպցիան էր: Չի կարելի համաձայնվել Հ. Ինալչըքի հետ, երբ նա գրում է Օսմանյան բեյությանը բնորոշ հատուկ կրոնական հանդուրժողականության մասին²⁹⁸: Այն, ըստ էության, ինչպես և Փոքր Ասիայի արևմուտքում առաջացած այլ թյուրքական բեյությունները, *ղազիական* կամ *ղազիների պետություն* (Ghazi State) էր²⁹⁹: Սակայն նա միակ ղազիական բեյությունն էր, որը վերաճեց կայսրության՝ պահպանելով իր էությունը: Այն դարերի ընթացքում ենթարկվեց բազմաթիվ ձևափոխումների, սակայն պահպանեց իր մոլեռանդ ու ռազմատենչ բնույթը: Որոշ պատմական ժամանակաշրջաններում այն դժվար նշմարելի էր, որոշներում հանդես էր գալիս իր էության դաժան կերպարանքով:

Այդպես եղավ, օրինակ, սուլթան Սելիմ Յավուզ I իշխանության շրջանում 16-րդ դարի սկզբում, երբ համաձայն նրա հրամանների կայսրության ասիական տարածների կառավարիչները կազմեցին քրզըլբաշների ցուցակները և համաձայն այդ ցուցակների հետագայում, ինչպես խոստովանում է նույնիսկ «պաշտոնական պատմագիտության» հիմնադիրներից Ի. Հ. Ուզունչարշըլըն, 40 հազար մարդ համարյա միաժամանակ ձերբակալվեց ու սպանվեց, քանի որ մտավախություն կար, որ նրանք կարող են աջակցել Սեֆյանների կայսրությանը՝ վերջինիս դեմ մախապատրաս-

²⁹⁵ F. Köprülü, Osmanlı devletinin kuruluşu. Ankara, 1959, s. 83.

²⁹⁶ F. Köprülü, Osmanlı devletinin kuruluşu. Ankara, 1959, s. 82.

²⁹⁷ İ. H. Uzunçarşılı, Osmanlı tarihi. I. Cilt: kuruluştan İstanbul'un fethine kadar. Ankara, 1947, s. 267.

²⁹⁸ H. Inalcik, The Ottoman Empire: The Classical Age, 1300-1600, London and New York, 1973, p. 7.

²⁹⁹ Այս հասկացության հեղինակը Պ. Վիտտեկն է:

վող պատերազմում³⁰⁰: Այս գործողությունը ժամանակակից ցեղասպանագիտության տեսանկյունից կարող է բնութագրվել որպես ցեղասպանական քաղաքականության դրսևորում, քանի որ այստեղ առկա են և կանխամտածվածության հանգամանքը, ինչը արտահայտվում է պետության կողմից նախապես պատրաստված ցուցակների գոյության փաստով, և նրա իրականացման ընթացքում ցուցաբերված համակարգված գործելակերպով: Այս ցեղասպանական բնույթի գործողությունը սկզբունքորեն տարբերվում է միջնադարում օսմանցի թուրքերի կողմից որպես երկրի տարածքային ամբողջականությունը պահպանելու միջոց պարբերաբար իրականացվող զանգվածային կոտորածներից և ավելի շատ հիշեցնում է 19-րդ դարի վերջի – 20-րդ դարի սկզբի հայերի ցեղասպանությունը:

Պատահական չէ, որ այն ձեռնարկել էր հենց սուլթան Սելիմը, քանի որ ի տարբերություն շատ թուրք սուլթանների, նա «պետական գործերում շարժվում էր որոշակի ծրագրի համաձայն» և ինչպես սուլթան Աբդուլ Ռամիդ II երկրի ներսում ու դրսում ուներ լրտեսների «կազմակերպված» ցանց³⁰¹:

Հայկական աղբյուրները վկայում են, որ նմանատիպ գործողությունների վտանգը պահպանվում էր նաև միջին դարերի ավելի ուշ ժամանակաշրջանում³⁰²:

Միջնադարում Օսմանյան կայսրության տիրակալները լայնորեն կիրառում էին նաև ժողովուրդների բռնի տեղահանությունների քաղաքականություն, այդպիսով փոխելով որոշակի տարածաշրջանների ազգաբնակչության էթնիկական ու դավանական կազմը և նպաստելով նրա թուրքացմանը: Այդ քաղաքականությունը միջնադարում կիրառվում էր հիմնականում բալկանյան քրիստոնյաների դեմ: Տեղահանությունների էին ենթարկվում բնակչության մեծ զանգվածներ: Թուրք պատմաբան Մ. Թ. Գյոքբիլգի-

նը, կատարելով մոտավոր հաշվարկներ, գրում է, թե Բալկանների զավթումից հետո միայն առաջին 80-90 տարիների ընթացքում օսմանյան իշխանությունները այնտեղ տեղափոխեցին 3,5 միլիոն մահմեդականների, սակայն նա խուսափում է նշել կայսրության ասիական տարածքներ թշված քրիստոնյաների թիվը³⁰³: Այդ բռնի տեղահանությունների քաղաքականությունը շատ արագ հնարավորություն էր տալիս փոխել գրավված տարածաշրջանների էթնիկական պատկերը: Թուրք պատմաբանները հպարտությամբ նշում են, որ թուրքական նվաճումից արդեն 10-15 տարի հետո բալկանյան քաղաքները հիմնականում ստացել էին «թուրքական» տեսք³⁰⁴:

Այդ քաղաքականության զոհ էին դառնում նաև, ինչպես գրում են թուրք պատմաբանները, արաբները, որոնք որոշակի տարացքների վրա փոխարինվում էին թուրքական քոչվոր ցեղերով³⁰⁵: Հետագայում այն սկսեց կիրառվել նաև տեղաբնիկ հայ ազգաբնակչության դեմ³⁰⁶:

Բռնի տեղահանությունները անվանվում էին սյուրգյուն՝ աքսոր: Այդ քաղաքականությունը թուրք պատմաբան Ջ. Օրհոնլուն բնութագրում է որպես կազմակերպված ձեռով իրականացվող բնակեցման քաղաքականության, որի նպատակն էր «միախառնել» բնակչության տարբեր խմբեր³⁰⁷: Հետաքրքիր է նշել, որ հայերի տեղահանությունները, որոնք ցեղասպանական քաղաքականության իրականացման ձևն էին և նպատակ ունեին աքսորյալների ոչ թե միախառնում, այլ բնաջնջում, նույնպես անվանվում էին սյուրգյուն:

³⁰³ M. T. Gökbilgin, Rumelide Yürükler, Tatarlar ve Evlad-i Fatihan. İstanbul, 1957, s. 18.

³⁰⁴ İ. H. Uzunçarsılı, Osmanlı tarihi. I. Cilt: Kuruluştan İstanbul'un fethine kadar. Ankara, 1947, s. 267.

³⁰⁵ N. Sevinç, Gaziantep'de yer adları ve Türk boyları, Türk aşiretleri, Türk oymakları. İstanbul, 1983, s. 17.

³⁰⁶ Տես այդ մասին. Մելքոնյան Ա. Ա., Եղեռնի քաղաքականության ձևավորման ակունքներում. - Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ), Խմբագիր՝ Պ. Հ. Հովհաննիսյան, Երևան, 2001, էջ 35 – 54:

³⁰⁷ C. Orhonlu, Osmanlı İmparatorluğunda Derbend teşkilâtı. İkinci baskı. İstanbul, 1990, s. 101.

³⁰⁰ İ. H. Uzunçarsılı, Osmanlı tarihi. II. Cilt: İstanbulun fethinden Kanunî Sultan Süleymanın ölümüne kadar. Ankara, 1949, s. 246:

³⁰¹ İ. H. Uzunçarsılı, Osmanlı tarihi. II. Cilt: İstanbulun fethinden Kanunî Sultan Süleymanın ölümüne kadar. Ankara, 1949, s. 289.

³⁰² A. M. Aivazian, The Armenian rebellion of the 1720s and the threat of genocidal reprisal, Erevan: AUA, 1997.

Կարելի է արձանագրել, որ ցեղասպանության քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում ուներ խորը պատմական աղբյուրներ՝ ինչպես բովանդակության, այնպես էլ ձևի տեսակետից: Միդիատները, աբդուլհամիդները և թալեաթները իրենց նախնիների բարեխիղճ աշակերտներն էին, որոնք, սակայն գերազանցեցին իրենց միջնադարյան ուսուցիչներին...

2. ՀԱԿԱՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ

Արևմտամետ բարենորոգումները բացասաբար ընդունվեցին Օսմանյան կայսրության թուրքական ազգաբնակչության կողմից: Առավել դժգոհություն առաջացրեցին թանգիմաթի առաջնորդների հայտարարությունները և բարենորոգումների փորձերը, որոնք ուղղված էին մուսուլմանների ու քրիստոնյաների միջև ձևական իրավահավասարության հաստատմանը, քանի որ այդ քաղաքական գիծը ընկալվում էր որպես անհարկի զիջում հպատակ քրիստոնյա ժողովուրդներին, որոնք ժամանակին նվաճվել էին թուրքերի կողմից և դրանից հետո բնակվում էին Օսմանյան կայսրությունում որպես ստորադաս դասի ներկայացուցիչներ³⁰⁸:

Այդ համատարած դժգոհության մթնոլորթի պայմաններում երկրի քաղաքական կյանքում ձևավորվում և գնալով ուժեղանում է հակաքրիստոնեական հոսանքը, ստանալով տարբեր դրսեւորումներ, մասնավորապես, հակասլավոնական ու հակառուսական, և զուգորդվելով մահմեդական արմատականության ու համախլամականության գաղափարների հետ: Այն հետզհետե դառնում է կարեւորագույն գործոն, իր դրոշմը թողնելով թանգիմաթի և նրան հետևած տարիներին տեղի ունեցած շատ իրադարձությունների վրա: Նրա տրամաբանական ծնունդն էր 1876 թ. Օսմանյան կայսրությունում առաջացած սկզբունքորեն նոր քաղաքական իրադրությունը, որը մենք բնութագրում ենք որպես նախացեղասպանական:

Դեռևս հատուկ չեն ուսումնասիրված այդ երևույթի բոլոր պատճառները³⁰⁹: Եղած փաստերը վկայում են, որ այն ուներ խորը արմատներ և լայն ընդգրկում: Նրա հիմքը կազմում էին իսլամի հակաքրիստոնեական պատվիրանները: Այսպես, օրինակ, մանա-

³⁰⁸ R. Kaynar, Mustafa Reşit Paşa ve Tanzimat. Ankara, 1954, s. 189; Cevdet Paşa, Tezakir 1-12. Ankara, 1953, s. 8.

³⁰⁹ R. H. Davison, Reform in the Ottoman Empire 1856 -1876. Princeton, 1963, p. 270 - 278; И. А. Фадеева, Новые тенденции в политике Порты начала 70-х годов XIX в. – Тюркологический сборник 1878. М., 1984, с. 229 – 234; И. А. Фадеева, Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм - панисламизм): XIX - начало XX в. М., 1985, с. 97- 100.

վանդ գավառներում մահմեդականները շարժվում էին, ինչպես նշում էին ժամանակակիցները, Մուհամեդի հայտնի բնորոշմամբ, որ միայն մուսուլմաններն են մարդիկ³¹⁰: 1839 թ. և 1856 թ թանգիմաթի հաթթերը դարձան գործոններ, որոնք մեծապես նպաստեցին գոյություն ունեցող հակաքրիստոնեական տրամադրությունների ուժեղացման ու «գաղափարականացման» համար: Այդ գործընթացը ուղղորդվում էր մուսուլման հոգևորականության ու կառավարող վերնախավի որոշակի խմբերի կողմից: Հետագայում հակաքրիստոնեությունը դարձավ այնպիսի ընդդիմադիր շարժումների գաղափարախոսության հիմնական կամ կարևոր բաղկացուցիչ մասը, ինչպիսիք էին «Կուլեիի իրադարձության» կամ էլ «նոր օսմանցիների» դավադրությունների մասնակիցները:

Ակզբնական փուլում թանգիմաթին առավել ակտիվ հակազդեցություն ցույց տվեցին մահմեդական հոգևորականները, որոնք մզկիթներում զրգռում էին բնակչությանը թանգիմաթի դեմ և նույնիսկ վկայակոչում էին երազում հայտնված Մուհամեդի դժգոհությունը³¹¹ և հորդորում էին չենթարկվել թանգիմաթի հաթթերին ու զանազան ֆիրմաններին և շարունակել իշխել քրիստոնյաների վրա համաձայն Մուհամեդի պատվիրանների ու շարիաթի օրենքների³¹²: Այսպես, օրինակ՝ Կարինում տեղակայված Մեծ Բրիտանիայի հյուպատոսը հայտնում էր, որ երբ 1841 թ. Տրապիզոնի հույները, համաձայն թանգիմաթի բարենորոգումների, ստացան իրավունք վերանորոգել իրենց եկեղեցին, ինչը արգելված էր շարիաթով, և օգտվեցին այդ իրավունքից, ապա թուրքական ամբոխը քաղիի ղեկավարությամբ ավերեց եկեղեցու վերանորոգված հատվածը՝ այդպիսով ցուցաբերելով վճռականություն չենթարկվել թանգիմաթին և շարունակել որպես օրենքի միակ աղբյուր ճանաչել շարիաթը³¹³: Բրիտանացի դիվանագետը հայտնում է նաև, որ թուրքե-

րին զրգռում է նաև նահանգապետ Օսման փաշան, որը ձգտում է «դաս տալ քրիստոնյաներին, որոնք չափից ավելի շատ են օգտվել հաթթ-ի շերիֆից»³¹⁴:

Նմանատիպ դիվանագիտական հաղորդագրություններ էին ստացվում Օսմանյան կայսրության եվրոպական հատվածից: Թուրք ազգաբնակչության տարբեր խավերի ներկայացուցիչները բացեիբաց հայտարարում էին, որ նրանք չեն ճանաչում «ռայաների ազատությունները կամ իրավահավասարությունը «ուղղահավատների» հետ, և ապագայում էլ չեն ճանաչի», հաղորդում էր ավստրիացի հյուպատոսը բուլղարական Ռուսե քաղաքից³¹⁵:

1856 թ. հրապարակվեց սուլթանական հերթական հրովարտակը հաթթ-ի հունայունը, որով նախատեսվում էին ավելի հեռուն գնացող արևմտամետ բարենորոգումներ: Մուսուլմանների, մասնավորապես, տեղական իշխանությունների դժգոհությունը այս դեպքում ավելի ընդգծված էր: Պրուսիայի հյուպատոսը հաղորդում էր մի բնութագրական դեպքի մասին, որը տեղի է ունեցել Վիդին քաղաքում, հաթթը հյունայունի հրապարակային ընթերցման ժամանակ. թուրք զապտիյեն (ոստիկանը) ծեծի է ենթարկել քրիստոնյա բնակչին միայն այն բանի համար, որ նա ուրախության նշաններ է ի հայտ բերել այդ հաթթի կապակցությամբ³¹⁶:

Հետզհետե դիմադրությունը թանգիմաթին և հակաքրիստոնեությունը ընդունում են ավելի կազմակերպված բնույթ և կազմվում է դավադրություն սուլթանի և թանգիմաթի առաջնորդների դեմ: Այդ դավադրությունը ընդունված է անվանել «Քուլեիի իրադարձություն»:

³¹⁰ L. Farley, *Turks and Christians*. London, 1876, p.153.

³¹¹ R. Kaynar, *Mustafa Reşit Paşa ve Tanzimat...*, s. 187.

³¹² F. Bianconi, *La Question d'Orient dévoilée ou la vérité sur la Turquie*. Paris, 1876, p.39 - 40, 42 - 43.

³¹³ Brunt to Palmerston, Erzeroom, July 22, 1841. - Հայաստանի ազգային արխիվ, Ֆոնդ 450, Հայկական Հարց, Ցուցակ 2, Գործ 196, Public Record Office (FO 195/812. x/p 9440), p. 1. (copy).

³¹⁴ Brunt to Palmerston, Erzeroom, July 22, 1841. - Հայաստանի ազգային արխիվ, Ֆոնդ 450, Հայկական Հարց, Ցուցակ 2, Գործ 196, Public Record Office (FO 195/812, x/p 9440), p. 3. (copy).

³¹⁵ Rössler - An den Graf Buol, Ruße, 19. August 1853. - Документи за Българията история. Т. VI: Документи за Новата история на България народ из Виенските държавни архиву: 1830 - 1877. Ч. II. Събрал П. Ников. София: БАН, 1951. с. 67.

³¹⁶ М. Калиш - Вилденбруху, Русе, 12 марта 1856. - Документи за Българията история из германски архиву (1829 - 1877). Съст. и ред. Хр. Христов и В. Паскалева. София, 1963, с. 288.

Օսմանյան կայսրության պատմությունը չի է դավադրություններով, հաջողված ու չհաջողված հեղաշրջումների փորձերով: Սակայն դրանցից և ոչ մեկը չի առաջացրել այնքան գիտական ու քաղաքական հետաքրքրություն և միաժամանակ՝ իրարամերժ մեկնաբանությունների տարափ, ինչքան 1859 թ. սեպտեմբերին Կ.Պոլսում բացահայտված սուլթան Աբդուլ Մեջիդի դեմ ուղղված դավադրությունը:

Այդ ամսվա կեսերին մայրաքաղաքում ձերբակալվեց դավադիրների մի խումբ: Նրա անդամները բանտարկվեցին «Քուլեի» անվանումը կրող զորանոցում, երեք-չորս շաբաթվա ընթացքում հարցաքննվեցին ու շատ արագ դատվեցին պետական բարձրաստիճան այրերից կազմված հատուկ դատական ատյանի կողմից: Նրանցից չորսը դատապարտվեցին մահվան, իսկ մնացյալները՝ տարբեր ժամկետների ազատազրկման կամ աքսորի: Սուլթան Աբդուլ Մեջիդի կարգադրությամբ մահապատիժները փոխարինվեցին աքսորով:

Հետազոտողների հետաքրքրությունը այս առաջին հայացքից նախորդ բազմաթիվ դավադրություններից ոչնչով չտարբերվող իրադարձության նկատմամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ դավադիրները ստեղծել էին ժամանակակից հասկացողությամբ առաջին քաղաքական կազմակերպությունը թուրքիայի պատմության մեջ: Այն ուներ իր քաղաքական ծրագիրը, որի շուրջ համախմբվել էին կազմակերպության անդամները³¹⁷:

Սակայն այդ կարևոր իրադարձությունը լուսաբանող աղբյուրները զարմանալիորեն աղքատիկ են, մասնավորապես, դեռևս չի հայտնաբերվել դավադիրների ծրագրի տեքստը: Գերմանացի հետազոտող Բ. Շտեռնը Օսմանյան կայսրությունում ծավալված բարենորոգչական շարժմանը նվիրված իր գրքում նույնիսկ մեջբերում է կատարել դավադիրների ծրագրից, սակայն չի նշել որևիցե աղբյուր³¹⁸:

³¹⁷ T. Z. Tunaya, Türkiye'de siyasi partiler (1859 -1952). İstanbul, 1952, s. 89 – 90.

³¹⁸ B. Stern, Jungtürken und Verschwörer. Die innere Lage der Türkei unter Abdul Hamid II. Leipzig, 1901, S. 110.

Հետազոտողներին հայտնի աղբյուրների հիմնական զանգվածը գիտական շրջանառության մեջ է դրվել անցյալ դարի 30-60-ական թթ. և հետագայում նշանակալի լրացումներ չի ունեցել: Նրա հիմքը դրել է թուրք պատմաբան Ուլուղ Իդդեմիրը, որի մենագրությունում օգտագործված և հրատարակված են հեղինակի կողմից օսմանյան պետական արխիվի «Փաստաթղթերի զանձարան» (Hazine-i Evrak) հավաքածուի պահոցում հայտնաբերված դավադիրների դատավարության պաշտոնական արձագրությունների տեքստերը³¹⁹: Իդդեմիրի գրքի հրատակումից մի քանի տարի հետո մեկը մյուսի հետևից լույս տեսան անվանի պատմաբաններ Թարըք Չաֆեր Թունայայի, Էնվեր Ջիյա Քարալի և Իսմաիլ Համի Դանիշմենդի օսմանյան աղբյուրների վրա հիմնված ընդհանրացնող բնույթի աշխատությունները, որտեղ հատուկ տեղ էր հատկացված «Քուլեիի իրադարձության» լուսաբանմանը³²⁰:

Հետագա տարիներին դավադրության ուսումնասիրմանը անդրադարձան արտասահմանցի մասնագետները՝ փորձելով լրացնել նրա աղբյուրագիտական հենքը արևմտյան ու ռուսական արխիվային նյութի ներգրավմամբ: Մոսկվացի թուրքագետ Վերա Շախլովան առաջինն էր, որը այդ նպատակով ձեռնարկեց ռուսական դիվանագիտական աղբյուրների հետազոտումը, հրատակելով ընդամենը մեկ ոչ ծավալուն հոդված, որը, սակայն, պահպանել է իր գիտական նշանակությունը մինչև մեր օրերը³²¹: Ավելի ուշ ռուսական դիվանագիտական վավերագրերին հպանցիկ անդրադարձել է նաև Իռմա Ֆադեևան³²²:

«Քուլեիի իրադարձության» հետ առնչվող արևմտյան դիվանագետների պաշտոնական գրագրությանը ծանոթացել է ամերիկացի

³¹⁹ U. İğdemir, Kuleli Vak'ası hakkında bir araştıma. Ankara, 1937.

³²⁰ T. Z. Tunaya, Türkiyede siyasi partiler (1859-1952). İstanbul, 1952, s. 89 – 90; E. Z. Karal, Osmanlı Tarihi. VI cilt: Islahat Fermanı devri, 1856 -1861. Ankara, 1954, s. 95 – 97; İ. H. Danişmend, İzahlı Osmanlı tarihi kronolojisi. Cilt: 4, 1703 – 1924. İstanbul, 1955, s. 188–190.

³²¹ В. И. Шпилькова, Антимонархический заговор 1859 г. в Турции. – Проблемы востоковедения, 1959, No. 1, с. 100–104.

³²² И. А. Фадеева, Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм - панисламизм): XIX – начало XX в. Москва, 1985, с. 76.

թուրքագետ Ռոդերիկ Դեվիսոնը, որը ուսումնասիրել է բրիտանական, ֆրանսիական, ավստրիական, շվեդական և ամերիկյան արխիվները: Նա ներգրավել է նաև ժամանակիցների որոշ հուշագրություններ և մամուլի հաղորդագրություններ: Դեվիսոնի գրչին պատկանող օսմանյան բարենորոգումներին նվիրված հիմնարար մենագրությունում տեղ է գտել է այդ իրադարձության սեղմ, սակայն կարևոր նկարագրությունը³²³:

Հիմնականում վերը նշված աշխատությունների շնորհիվ է ձևավորվել «Քուլեիի իրադարձության» հետազոտման աղբյուրագիտական հենքը: Այն ունի մի շարք կարևոր բացեր. թերի են ուսումնասիրված օսմանյան արխիվները, ժամանակակիցների և մամուլի վկայություններից շատերը մասնագետների համար մնում են անհայտ: Արդեն շրջանառության մեջ գտնվող աղբյուրները նույնպես թերի են: Այսպես, օրինակ՝ Ու. Իդդեմիրի գրքում հրատարակված հարցաքննությունների ընթացքում դավադիրների տված պատասխանները կցկտուր բնույթ ունեն և լրիվ չեն³²⁴: Չի կարելի բացառել, որ նրանց զգալի հատվածը ավելի ուշ ոչնչացվել է իշխանությունների կողմից: Դիվանագիտական փաստաթղթերի օգտագործումը շատ դեպքերում նույնպես չի նպաստում հարցերի պարզաբանմանը, քանի որ Կ.Պոլսի օտար դեսպանատների գեկույցները իրենց կառավարություններին հաճախ հիմնվում են կասկածելի լրատվության աղբյուրների վրա: Այդ փաստը ժամանակին արձանագրել է արևմտյան դիվանագիտական արխիվների այնպիսի լավ գիտակ, ինչպիսին արդեն հշատակված Ռ. Դեվիսոնն է, գրելով, թե դեսպանատները դավադրության մասին ստացել էին «իրար հակասող» հաղորդագրություններ³²⁵: Նրա այդ եզրահանգումը հաստատվում է թեկուզ այն փաստով, որ ուսումնասիրելով ռուսական դիվանագիտական գրագրությունը Վ. Շպիլկովան և Ի. Ֆադեևան հանգել են իրարից զգալի տարբերվող եզրակացությունների:

³²³ R. Davison, *Reform in the Ottoman Empire, 1856-1976*. Princeton, 1963, p. 100-103.

³²⁴ U. İğdemir, *Kuleli Vak'ası hakkında bir araştırma*. Ankara, 1937, s. 34-37.

³²⁵ R. Davison, *Reform in the Ottoman Empire, 1856-1976*. Princeton, 1963, p. 102.

Ըստ էության, հետագա բոլոր հետազոտողները հենվել են վերը նշված աշխատությունների վրա և կախված իրենց պատմագիտական մոտեցումներից ու քաղաքական նախասիրություններից՝ առաջարկել «Քուլեիի իրադարձության» այս կամ այն մեկնաբանությունը: Աղբյուրների պակասը լուրջ խոչընդոտ է այդ կարևոր իրադարձության ավելի խորը և հիմնավորված վերլուծության համար:

Այդ բացը որոշ չափով կարելի է լրացնել ներգրավելով ժամանակի հայկական մամուլի նյութերը: Որոշ դեպքերում նրա հրապարակումները կրկնում են արդեն հայտնի փաստերը, սակայն քիչ չեն նաև նոր ուշագրավ տեղեկություններ պարունակող հաղորդագրությունները: Այսպես, օրինակ՝ Կ. Պոլսի «Մասիս» շաբաթաթերթի էջերում տեղ գտած լուրերից կարելի է եզրակացնել, որ դավադրությանը նախորդող ժամանակահատվածում Օսմանյան կայսրության թուրք ազգաբնակչության շրջանում նկատվում էր հակաքրիստոնեական տրամադրությունների լուրջ աճ, ինչը որոշ դեպքերում արտահայտվում էր քրիստոնյաների նկատմամբ արյունալի հաշվեհարդարների տեսքով³²⁶:

«Մասիսի» կողմից արձանագրված են նաև կառավարության կողմից որդեգրած արևմտամետ բարենորոգումների քաղաքականության դեմ ուղղված զանգվածային ընդվզումների դեպքեր, որոնք սովորաբար ղեկավարվում էին մահմեդական հոգևորական դասի ներկայացուցիչների կողմից: Այդ տեսակետից հատկանշական են իրադարձությունները Խարբերդ նահանգի Ակն գյուղաքաղաքում: Համաձայն «Մասիսի»՝ որը այդ լուրը արտատպել է հայատառ թուրքերեն «Մեջնուայը հավադիսից», Ակնի մահմեդականները մուֆթիի առաջնորդությամբ ընդվզել են կառավարական հրովարտակի դեմ, որով թույլ էր տրվում եկեղեցիներում դողանջել զանգերը: Այդ հրովարտակը մաս էր կազմում կառավարության կողմից թանգիմաթի բարենորոգումների շրջանակներում իրականացվող քաղաքականության և հակասում էր շարիաթին, ինչը և օգտագործում էր մուֆթին՝ հրահրելով ամբոխին քրիստոնյաների և արևմտամետ կառավարության դեմ: Լրագիրը վկայում է, որ ամբոխը պահանջում էր ոչնչացնել ոչ միայն «գյավուրների» եկեղեցիները:

³²⁶ Տես, օրինակ, Մասիս, 1859, 23 հուլիսի:

րը, այլ նաև կառավարության հրամանները և նրանց տեղ հասցնողներին³²⁷: Նման իրադարձությունների մանրամասն նկարագրումները թույլ են տալիս հստակ պատկերացում ստանալ այն մթնոլորտի մասին, որը տիրում էր Օսմանյան կայսրությունում և ազդում էր դավադիրների մտածելակերպի վրա:

Մինչև մեր օրերը շարունակվում է բանավեճը «Քուլեիի իրադարձության» բնույթի վերաբերյալ: Հետազոտողներից շատերը, հետևելով թուրքիայի նոր շրջանի պատմության «գերարևմտականացված պարադիգմին», բնութագրում են դավադրությունը որպես «հակամիսլամական», նշում են, որ նրա մասնակիցները ունեին «ազատական» ու «սահմանադրական» հայացքներ և համարում են այն Օսմանյան կայսրությունում սահմանադրական շարժման առաջին արտահայտումը³²⁸: Թուրքիայում այդ մոտեցումը ժամանակին ստացել է Աթաթյուրքի հավանությունը և տեղ է գտել թուրքական պատմականգիտական ընկերության կողմից հրատարակված պաշտոնական պատմության էջերում³²⁹:

Դավադիրների սահմանադրական հայացքների մասին գրել են նաև որոշ ժամանակակիցներ: Սակայն նրանք չեն հիմնվել արժանահավատ փաստերի վրա: Այսպես, օրինակ՝ 1859 թ. դավադրությանը անդրադարձել է այդ ժամանակաշրջանում Բելգրադում տեղակայված ֆրանսիական հյուպատոս Է. Էնգելհարդտը: Տարիներ անց նա հրատարակեց հուշագրական բնույթի ստվարածավալ մի գիրք, որտեղ պաշտպանվում է Ֆրանսիայի պաշտոնական քաղաքականությունը Օսմանյան կայսրության նկատմամբ, որի նպատակն էր արևմտամետ բարենորոգումների միջոցով պահպանել նրա տարածքային ամբողջականությունը: Այստեղ նշված է, որ դավադրության նպատակը խորհրդարանի հռչակումն էր, ընդ որում, այն պիտի

³²⁷ Մաւիւ, 1859, 13 օգոստոսի:

³²⁸ В. И. Шпилькова, Антимонархический заговор 1859 г. в Турции. – Проблемы востоковедения, 1959, No. 1, с. 100–104; N. Berkes. Türkiye'de çağdaşlaşma. İstanbul, 1978, s. 241–244; R. Karadağ. Muhtesem imparatorluğu yıkandı. 4. Baskı. İstanbul, 1991, s. 177, 85–93.

³²⁹ Tarih III: Yeni ve Yakın Zamanlar: T.T.T. Cemiyeti tarafından yazılmıştır. İstanbul, 1933, s. 252.

կազմված էին և մահմեդականներից, և քրիստոնյաներից³³⁰: Այդ կարևոր տեղեկության աղբյուրը, համաձայն Էնգելհարդտի, ոմն «անանուն հրապարակախոս» էր³³¹: Ցավոք, այս կասկածելի տեղեկատվությունը հետագայում բազմիցս օգտագործվել է մասնագիտական գրականության մեջ՝ չենթարկվելով լուրջ քննության:

Կան նաև մասնագետներ, որոնք կապ են տեսնում դավադիրների և առաջին թուրք սահմանադրականներ՝ «նոր օսմանցիների» գաղտնի կազմակերպության միջև, կամ էլ նույնիսկ համարում են դավադրությունը հեղափոխական երիտթուրքական շարժման սկզբնավորումը ազդարարող իրադարձություն³³²:

Հետազոտողների մեկ այլ, բավական մեծաթիվ խումբ գտնում է, որ դավադիրների հիմնական նպատակն էր վերջ դնել թանգիմաթի արևմտամետ բարենորոգումներին ու վերականգնել քրիստոնյաների ստորադաս իրավական դրությանը Օսմանյան կայսրությունում ամրագրող շարիաթի օրենքները իրենց «անաղարտ» տեսքով³³³: Այդ տեսակետների կողմնակիցները հենվում են ինչպես ձերբակալվածների ցուցմունքների, այնպես էլ այն հանգամանքի վրա, որ դավադիրներից շատերը պատկանում էին մուսուլմանական հոգևորական դասին:

³³⁰ E. Engelhardt, La Turquie et le Tanzimat ou histoire des réformes dans L'Empire Ottoman depuis 1826 jusqu'à nos jours. Paris, 1882, p. 159.

³³¹ E. Engelhardt, La Turquie et le Tanzimat ou histoire des réformes dans L'Empire Ottoman depuis 1826 jusqu'à nos jours. Paris, 1882, p. 158.

³³² A. B. Kuran, İnkılâp tarihimiz ve İttihad ve Terakki. İstanbul, 1948, s. 20; A. B. Kuran, Osmanlı İmparatorluğunda ve Türkiye Cumhuriyetinde inkılâp hareketleri. İstanbul, 1959, s. 62.

³³³ L. Collas, Histoire de L'Empire Ottoman jusqu'à la révolution de 1909. Paris, [s.d.], p. 139; R. Davison, Turkish attitudes concerning Christian – Muslim equality in the nineteenth century. – The American Historical Review, 1954, Vol. LIX, No 4, p. 861; İ. H. Danişmend, İzahlı Osmanlı tarihi kronolojisi. Cilt: 4, 1703 – 1924, İstanbul, 1955, s. 188 – 189; R. Davison, Reform in the Ottoman Empire, 1856-1976. Princeton, 1963, p. 102; F. H. Tökin, Türkiye'de siyasi partiler ve siyasi düşüncenin gelişmesi, 1839 – 1965. İstanbul, 1965, s. 16 – 17; M. Türköne, Siyasi ideoloji olarak İslamcılığın doğuşu. 2. Baskı. İstanbul, 1994, s. 145; H. Çelik, Ali Suavi ve dönemi. İstanbul, 1994, s. 21; M. Bardakçı, 139 sene önceki şeriat komplosunun hikâyesi. – Hurriyet, 8 Kasım 1998.

Այս վերջին մեկնաբանությունը ոչ ուղղակի կերպով հաստատվում է հայկական մամուլի հրապարակումներով: Օրինակ՝ «Մասիս» էջերում զետեղված մի հետաքրքիր նյութից պարզվում է, որ դավադրության բացահայտումից անմիջապես հետո սուլթան Աբդուլ Մեջիդը, որը դավադիրների գլխավոր թիրախն էր, Թոփ Քափուլի իր պալատում շուտափույթ կատարել է «Ոսկյա խողովակի փոփոխման»³³⁴ կրոնական մեծահանդես ծիսակատարությունը՝ ձգտելով այդպիսով վերականգնել թանգիմաթի բարեփոխումների հետևանքով ուղղափառ մահմեդականների աչքերում իր սասանված հեղինակությունը³³⁵:

Դավադիրները եղել են լավ կազմակերպված և ունեցել են բազմաթիվ համախոհներ: Համաձայն ձեռքբերվածների ցուցմունքների՝ դավադրությանը պատրաստ էին միանալ տասնյակ հազարավոր զինվորականներ և կրոնական կազմակերպությունների անդամներ³³⁶: Մատնության հետևանքով այն բացահայտվելուց հետո տեղի ունեցան ձեռքբերվածություններ: «Մասիսը», դեռևս չունենալով պաշտոնական տվյալներ, զգուշորեն հայտնում էր «բազմաթիվ» ձեռքբերվածությունների մասին³³⁷, իսկ Թիֆլիսի «Մեդու Ղայաստանի» շաբաթաթերթը, հենվելով ռուսական աղբյուրների վրա, գրում էր երկու հարյուր «բանտ դրվածների» մասին³³⁸: Սակայն կառավարությունը արագ սթափվեց ու ամեն կերպ փորձեց կոծկել դավադրության իրական չափերը՝ այդ նպատակով պաշտոնական հաղորդագրություններում զետեղելով ձեռքբերվածների ակնհայտորեն նվազեցված թվեր: «Մասիսի» համապատասխան հրապարակման մեջ կարդում ենք, թե համաձայն պաշտոնական տվյալների, նրանց թիվը կազմում էր ընդամենը 34 մարդ³³⁹:

³³⁴ Այդ խողովակի մեջ պահվում էին Մեքքայի մզկիթի վրայից հավաքված անձրևի «սրբազան» կաթիլները:

³³⁵ Մասիս, 1859, 10 սեպտեմբերի:

³³⁶ U. İğdemir, Kuleli Vak'ası hakkında bir araştıma. Ankara, 1937, s. 59–63.

³³⁷ Մասիս, 1859, 10 սեպտեմբերի:

³³⁸ Մեդու Հայաստանի, 1859, 10 հոկտեմբերի:

³³⁹ Մասիս, 1859, 17 սեպտեմբերի:

«Մեդու Ղայաստանի» կողմից տպագրված հաղորդագրություններից մեկը ցույց է տալիս, թե անհրաժեշտության դեպքում ինչ արագ էր կողմնորոշվում ու գործում օսմանյան կառավարությունը և ինչպես էր հասնում իր տեսանկյունից նպաստավոր լուրերի տարածմանը: Լրագիրը գրում է, թե Փարիզի թուրքական դեսպանատունը դավադրության բացահայտումից երկու օր չանցած Կ. Պոլսից ստացավ հեռագիր, որտեղ ընդգծվում էր, թե դավադրությունը ուղղված է եղել սուլթանի դեմ և նրանում «երևելի բան չկար», թե դավադիրների թիվը քառասունից չէր անցնում և նրանց մեծամասնությունը «չէր քեզներ ու քրդեր էին»³⁴⁰: Այս դրույթները, որոնք զգալիորեն տարբերվում են և դավադիրների ցուցմունքներից, և մի շարք այլ վկայություններից, հետագայում դրվեցին «Քուլելի իրադարձության» պաշտոնական մեկնաբանության հիմքում և մեծապես ներազդեցին որոշ հետազոտողների մոտեցումների վրա³⁴¹: Այնպես որ, հայկական լրագրի վերևում հիշատակված հաղորդագրությունը, օսմանյան արխիվների և ժամանակի արտասահմանյան մամուլի դժվար հասանելիության պայմաններում ունի կարևոր աղբյուրագիտական նշանակություն:

Դավադրությունը բացահայտվելուց հետո, համաձայն ոչ պաշտոնական հաղորդագրությունների, տեղի ունեցան մի քանի իրադարձություն, որոնք լրացուցիչ լույս են սփռում նրա մասնակիցների բուն նպատակների վրա: Դրանցից մեկի մասին տեղեկացնում է «Մեդու Ղայաստանին», գրելով, թե մայրաքաղաքի եվրոպական թաղամասում հայտնաբերվել է «այրող մեքենա», որի նպատակն էր «կրակ տալ ֆրանկների թաղը»³⁴²: Այսպիսով մեկ անգամ ևս հաստատվում է այն կարծիքը, որ դավադրությունը իր էությամբ հակաքրիստոնյա ու հակաարևմտյան էր: Այս լուրը վկայում է նաև, որ դավադիրների ձեռքբերվածություններից հետո ազատության մեջ էին մնացել նրանց հա-

³⁴⁰ Մեդու Հայաստանի, 1859, 17 հոկտեմբերի:

³⁴¹ Համաձայն պաշտոնական տվյալների, ձեռքբերվածների վերջնական թիվը հասել էր քառասուն մեկի: St' u İ. H. Danişmend, İzahlı Osmanlı tarihi kronolojisi. Cilt: 4, 1703 – 1924. İstanbul, 1955, s. 189.

³⁴² Մեդու Հայաստանի, 1859, 7 նոյեմբերի:

մախտհները, որոնք փորձում էին գործել: Ուշագրավ է, որ որոշ թուրք հեղինակներ ժամանակին նույնպես նշել են այդ հանգամանքը³⁴³:

Իրադրությունը մայրաքաղաքում դավադրությունը բացահայտելուց հետո առաջին մի քանի շաբաթվա ընթացքում չափազանց լարված էր: Սադրազամ Ալի փաշայի ղեկավարած կառավարությունը, որը գտնվում էր մեծ տերությունների լուրջ ճնշման ներքո, շտապում էր հանգստացնել և արտասահմանյան դեսպանատներին, և երկրի քրիստոնյա հպատակներին, պնդելով, թե դավադիրները թեպետ հանդես էին գալիս արևմտամետ բարենորոգումների դեմ, սակայն չէին ծրագրել վնաս հասցնել քրիստոնյաներին: Այդ նպատակով, նախքան հետաքննության արդյունքների պաշտոնական հրապարակումը, իշխանությունները կազմակերպեցին լրատվության արտահոսք: Իշխանամետ «Մասիսը», չնշելով լրատվության աղբյուրը, գրում էր, թե հայտնի է դարձել, որ «այս դավադրությունը հին գաղափարի տեր անձանց գործ է, այսուամենայնիվ [դավադիրները – Ռ.Ս.] տերության քրիստոնյա ժողովուրդացը գեշութուն ընելու դիտավորություն չունեին»³⁴⁴:

Ուշագրավ է, որ սուլթանի հրամանով ստեղծված և Ալիի կողմից ղեկավարվող հանձնաժողովի կատարված հետաքննության պաշտոնական արդյունքները այդպես էլ լիովին չրահարատարակվեցին, այլ ամփոփվեցին հատուկ տեղեկագրի մեջ և հանձնվեցին սուլթան Աբդուլ Մեջիդին: «Մասիսը» վկայությամբ այդ «մեծահատոր գրքի» մեջ տեղ էին գտել ինչպես հետաքննության մանրամասները և մեղադրյալների հարցաքննությունների արդյունքները, այնպես էլ եզրահանգումներ դավադրության բնույթի վերաբերյալ³⁴⁵: Լրագիրը ենթադրում էր, որ այն լիովին կիրառարակվի մի քանի օր հետո³⁴⁶: Սակայն կառավարությունն արտոնեց հրատարակել այդ գրքի միայն այն փոքրածավալ հատվածը, որտեղ ներկայացված

³⁴³ Ձերբակալություններից խուսափողների թիվը այդպես էլ մնաց անհայտ: St' u l. H. Danişmend, İzahlı Osmanlı tarihi kronolojisi. Cilt: 4, 1703 – 1924. İstanbul, 1955, s. 189.

³⁴⁴ Մասիս, 1859, 19 նոյեմբերի:

³⁴⁵ Մասիս, 1859, 29 հոկտեմբերի:

³⁴⁶ Մասիս, 1859, 29 հոկտեմբերի:

էին ձերբակալվածների անունները և նրանց մասին որոշ տեղեկություններ, որոնք, ի դեպ, արդեն վաղուց հայտնի էին³⁴⁷:

Դավադրությունը բացահայտելուց հետո օսմանյան իշխանությունները դիմեցին կտրուկ միջոցների, որոնց նպատակն էր բացառել նման միջադեպերի կրկնության հնարավորությունը³⁴⁸: Հայկական մամուլի էջերում տեղ գտած տեղեկատվությունը այդ գործունեության մասին հետաքրքիր է առաջին հերթին նրանով, որ որոշ դեպքերում նրա հաղորդած փաստերը տեղ չեն գտել այլ աղբյուրներում և հետազոտողների համար մնացել են անհայտ: Այսպես, օրինակ, «Մասիս» հրապարակումից պարզվում է, որ շեյխ-ուլ իսլամի կարգադրությամբ ստեղծվել էր նոր «հանձնարարական ժողով», որը պիտի հետևեր սոֆթաների (հոգևոր ուսումնական հաստատությունների ուսանողների) վարքին և դրա հիման վրա նրանց տար համապատասխան բնութագրեր: Բացասական բնութագրեր ստացողներին պիտի անհապաղ վտարեին ուսումնական հաստատություններից ու վերադարձնեին իրենց ծննդավայրերը³⁴⁹: Այս նախադեպը չունեցող որոշումը փաստում է, թե որքան մեծ էր իշխանությունների անհանգստությունը սոֆթաների միջավայրում ստեղծված իրադրությամբ:

Վերևում շարադրված փաստերը հնարավորություն են տալիս եզրակացնել, որ ժամանակի հայկական մամուլի հրապարակումները հաստատում են այն տեսակետը, «Քուլեիլի» դավադիրների գործողությունները պայմանավորված էին հակաթանզիմաթյան ու հակաքրիստոնյա ընկալումներով:

Ռուսական հյուպատոսները նշում էին, որ «Քուլեիլի» դավադրության բացահայտումից հետո և 1860-ական թթ. սկզբին Աբդուլ Ազիզի գահ բարձրանալուց հետո, երկրի եվրոպական շրջաններում ակտիվացան թուրքական բնակչության ամենաֆանատիկոս և մոլեռանդ տարրերը: Մասնավորապես, հակաքրիստոնեական ակ-

³⁴⁷ Մասիս, 1859, 5 նոյեմբերի:

³⁴⁸ R. Davison, Reform in the Ottoman Empire, 1856-1976. Princeton, 1963, p. 102.

³⁴⁹ Մասիս, 1859, 19 նոյեմբերի:

տիվ քարոզչություն էին վարում էին դերվիշները³⁵⁰։ Կայսրության մուսուլմանների շրջանում գնալով ուժեղացող հակաքրիստոնեական տրամադրությունների արդյունք էին երկրի տարբեր ծայրամասերում տեղի ունեցած քրիստոնյա խաղաղ բնակչության կոտորածները։ Այսպես, օրինակ՝ 1867 թ. ռուսական դիվանագիտության կողմից պատրաստած հուշագրում հատուկ նշվում էին կոտորածները Բոսնիայում, Յերցեգովինայում եւ Սիրիայում³⁵¹։

Դրանցից արժե հիշատակել 1860 թ. Դամասկոսի կոտորածը։ Փաստերը վկայում են, որ այն կազմակերպված էր թուրքական իշխանությունների կողմից։ Ժամանակին այդ կարծիքին են եղել և օտարերկրյա դիվանագետները, և լավատեղյակ ականատեսները։ Այսպես, օրինակ՝ Օսմանյան կայսրությունում ռուսական դեսպանը համոզված էր, որ ջարդարարների գործողությունները գաղտնի դեկավարվում էին մայրաքաղաքից³⁵², իսկ լավատեղյակ ժամանակակիցները գրում էին, որ «սիրիական սպանությունները» մտադրվել և նախապատրաստվել էին կայսրության մայրաքաղաքում՝ «կարևորագույն մարդկանց» կողմից, որոնց գործողությունների դրդապատճառը եղել է ազրեսիվ հակաքրիստոնեությունը³⁵³։ Նշվում էր, որ օսմանյան կառավարությունում կան մարդիկ, ովքեր երազում են այն ժամանակների մասին, երբ «ուղղափառ հողի վրա չի մնա ոչ մի գյավուր»³⁵⁴։ Հետագայում նրանցից մեկը Ռուսթեմ փաշան նշանակվեց մեծ վեզիր³⁵⁵։

1860 թ. Սիրիայի եւ Լիբանանի կոտորածների գոհ գնաց, անգլիացի ականատես գնդապետ Չերչիլի վկայությամբ, շուրջ 11 հա-

³⁵⁰ М. Хитрово – Лобанову-Ростовскому, Монастырь (Битоля), 30 июня 1861 г. - АВПРИ, ф. Посольство в Константинополе, 1861, д. 1415, лл. 1412-1426.

³⁵¹ Записка (без подписи) "Замечания на французский проект реформ", [1867]. – АВПРИ, Фонд Главный архив, II -18, 1855-1867, д.1 (О турецких Хатт-и Хумаюнах, 1855 – 1857, 1866 - 1867), л. 60.

³⁵² М. Т. Панченкова, Политика Франции на Ближнем Востоке и сирийская – экспедиция 1860–1861 гг. М., 1966, с. 111.

³⁵³ С. Н., Константинопольские письма (1861 – 1864). – Русский вестник, 1867, т. 69, май, с. 36.

³⁵⁴ Там же.

³⁵⁵ Там же, с. 58.

գար քրիստոնյա³⁵⁶։ Նույն դիտորդը գրում է, որ այդ կոտորածը կազմակերպված էր նահանգապետ Խուրշիդ փաշայի կողմից, որը, փաստորեն, իրականացրեց դրանից շուրջ քսան տարի առաջ նույն նահանգի նահանգապետ Նեջիբ փաշայի մտահղացումը, համաձայն որի թուրքական իշխանությունը Սիրիայում կարող է պահպանվել միայն «մորթելով» քրիստոնյաներին³⁵⁷։

Բարենորոգումներին համընթաց շարունակվում էին արծանագրվել քրիստոնյաների մահմեդականացման դեպքեր, որոնք խրախուսվում էին օրենքների և իշխանությունների կողմից։ Այսպես, օրինակ, ռուսական հյուպատոսը Բիտոլում 1861թ. նշում էր, որ իրեն հայտնի վեց մահմեդականություն ընդունված դեպքերից մեկը հաստատ բռնի էր³⁵⁸։

Դրան իրենց մասնակցությունն են ունենում և կենտրոնական ու տեղական իշխանությունները, և հոգևորական ու մտավորական շրջանակները, և մահմեդական ազգաբնակչության զանգվածները՝ բոլորը իրենց հատուկ գործելակերպով։ Իհարկե, կարևագույն դերը պատկանում էր իշխանություններին։ Նույնիսկ Օսմանյան կայսրությունում գտնվող անգլիական հյուպատոսներից Սենիորն էր հանգել այն եզրակացության, որ թուրք ժողովրդի կրոնական ֆանատիզմի դաժան պոռթկումները պայմանավորված էին տվյալ նահանգի նահանգապետի «ֆանատիկ ձգտումներով»³⁵⁹։

Պաշտոնական զրագրության մեջ իշխանությունները քրիստոնյաներին շարունակում էին անվանել «գյավուրներ»³⁶⁰։

Առավել սաստիկ բնույթ են ընդունում այդ երևույթները Բուլղարիայի տարածքում։ Այստեղ գնալով ավելի հաճախակի բնույթ են

³⁵⁶ J. H. Tashjian, Turkey: author of genocide. The centenary record of Turkey, 1822 - 1922. Boston, 1965, p. 7.

³⁵⁷ J. H. Tashjian, Turkey: author of genocide. The centenary record of Turkey, 1822 - 1922. Boston, 1965, p. 7.

³⁵⁸ М. Хитрово – А. Б. Лобанову-Ростовскому, Монастырь (Битоля), 30 июня 1861 г. - АВПРИ, ф. Посольство в Константинополе, 1861, д. 1415, лл. 1412-1426

³⁵⁹ В. Денмон, Християне в Турци. – Русский вестник, 1864, No. 3, с. 117.

³⁶⁰ Золотарев, Адрианаполь, 14/26 декабря 1866 г. - АВПРИ, Главный архив, II -18, 1855-1867, д.1 (О турецких Хатт-и Хумаюнах, 1855 – 1857, 1866 - 1867), л. 145 об.

ՆԱԽԱՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

1. ՁՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Թանգիմաթի բարենորոգումների առաջին փուլի ընթացքում օսմանյան կառավարությունը փորձեց Բուլղարիայում իրականացնել որոշ սահմանափակ բնույթի բարեփոխումներ և այդպիսով կասեցնել բուլղարների ազատագրական շարժման վերընթաց զարգացումը: Սակայն այդ քաղաքականությունը մատնվեց անհաջողության, քանի որ 1850 թ. բռնկվեց լայնածավալ զինված ապստամբություն թուրքական բռնապետության դեմ: Թեև այն հաջողվեց ճնշել միայն մեծ ջանքերի շնորհիվ՝ օգտագործելով և՛ կանոնավոր բանակը և բաշիբոզուկներին (զինված ելուզակներին), սակայն իշխանությունները ամեն ինչ արեցին, որ հեռու պահեն մահմեդական ազգաբնակչությանը ապստամբների դեմ զինված գործողությունների մեջ ներգրավվելուց: Վիդինի վիլայեթի նորանշանակ վալի Ալի Ռեզա փաշային տրվեցին համապատասխան զրավոր ցուցումներում³⁶⁴:

Հետագայում Բուլղարիան մնում էր թուրքական իշխանությունների ուշադրության կենտրոնում: Այդ պատճառով թանգիմաթի երկրորդ փուլի տարիների «միաձուլման» քաղաքականությունը իր ամբողջ ծավալով նրա նախածեռնողները որոշեցին առաջինը փորձարկել Բուլղարիայում:

Այդ ընտրությունը պատահական չէր: Հաջողությունը հնարավորություն էր տալիս Բարձր դռանը ցույց տալու Արևմուտքին և Ռուսաստանին, որ նա ոչ միայն կարող է կատարել 1856 թ. հաթթի հումայունի խոստումները, այլև կարող է արդյունավետ կառավա-

³⁶⁴ Տե՛ս սուլթանի կողմից Ռեզա փաշային տրված "բարձրագույն ցուցումներում" պարունակող փաստաթղթի տեքստում, որը հրապարակել է թուրք ճանաչված միջնադարագետ Հալիլ Ինալչըրը. Ferikan-ı kiramdan bu def'a memuriyet-i mahsusa ile Vidin canibine izam buyrulacak Rıza Paşa hazretlerine talimat-ı seniyye müsvedesi. - H. Inalcık, Tanzimat ve Bulgar Meselesi (Doktora Tezi'nin 50. yılı, 1942-1992). İstanbul, 1992, Vesikalar V, s. 124.

ստանում մանկահասակ երեխաների բռնի առևանգումների ու նրանց մահմեդականացման դեպքերը, ընդ որում, իշխանությունները թողնում են դրանք անհետեւանք³⁶¹: Դեռ ավելին՝ բուլղարացի գիտնականները շրջանառության մեջ են դրել Դանուբի վիլայեթի նահանգապետության հրահանգը Սոֆիայի մյութեսարըֆության գրասենյակին, որով ցուցմունք է տրվում ավելի ոյուրին դարձնել «կամավոր» մահմեդականություն ընդունելու արարողությունը³⁶²: Հայկական մամուլը նշում էր մահմեդական մոլեռանդության աճի մասին Արևմտյան Հայաստանում: Այսպես՝ «Մշակը» 1872 թ. փաստեր էր բերում Վանում հայերի նկատմամբ «թուրք ժողովրդի բարբարոս վարմունքի» վերաբերյալ³⁶³:

Սույն գլխում նշված հակաքրիստոնեական տրամադրությունները ներազդեցին «նոր օսմանցիների» ընդդիմադիր շարժման դեկավարների գաղափարախոսության վրա և նրանց բազմաթիվ հրապարակախոսական հրապարակումների միջոցով ներթափանցեցին հասարակական-քաղաքական գաղափարախոսության ոլորտ, սկիզբ դնելով արմատական քաղաքական իսլամականության հոսանքի ձևավորմանը Թուրքիայում: Այդ հոսանքի ռազմատենչ, «ղազիական» տարբերակը դարձավ Օսմանյան կայսրությունում առաջին ցեղասպանական բնույթի ծրագրի գաղափարական հենքը:

³⁶¹ По следите на насилюето: Документи и материали за налагане на усяма. Съст.: П. Петров, Ч. Пъ рва, София, 1987, с. 182.
³⁶² По следите на насилюето: Документи и материали за налагане на усяма. Съст.: П. Петров, Ч. Пъ рва, София, 1987, с. 182 -183.
³⁶³ Մշակ, 1872, թիվ 28, էջ 4:

րուն իրագործել եվրոպական թուրքիայի առավել զարգացած և պայթյունավտանգ շրջաններից մեկուն: Ալին և Ֆուադը ձգտում էին նաև իրապես ստուգել բուլղարական ժողովրդի վերելքում գտնվող ազգային-ազատագրական շարժման հետ պայթարի նոր մեթոդները: Այդ որոշման ընդունման վրա ազդեց նաև այն հանգամանքը, որ Բուլղարիան գտնվում էր մայրաքաղաքից ոչ հեռու, ինչը և կենտրոնական իշխանություններին հնարավորություն էր տալիս անմիջապես վերահսկելու և կանոնավորելու տեղական ղեկավարության քաղաքականությունը:

Ուժացման քաղաքականությունը Բուլղարիայում սկսեց անցկացվել նոր վիլայեթական համակարգի ներմուծմամբ: 1864 թ. նոյեմբերի 8-ին սուլթանական իրադեյով Նիշի, Վիդինի և Սիլիստրիայի էլիեթների տեղը ստեղծվել էր Դանուբյան վիլայեթը³⁶⁵: Այն ընդգրկում էր նախկին Բուլղարիայի թագավորության տարածքի մեծ մասը. Դանուբյան և Արևմտյան Բուլղարիան՝ ներառյալ Կուստենջյան շրջանը³⁶⁶: Նորաստեղծ վիլայեթի մակերեսը կազմում էր 86 հազ. քա. կմ., իսկ բնակչությունը՝ մոտ 3 մլն. 700 հազ. մարդ³⁶⁷: Բնակչության մեծ մասը կազմում էին բուլղարացիները³⁶⁸:

Դանուբյան վիլայեթի վալի նշանակվեց Միդհատ փաշան: Այդ նշանակումը պատահական համարել սխալ կլիներ: Միդհատը մինչ այդ ժամանակը հասցրել էր «եվրոպականացված» հայացքներով եռանդուն և գործունյա նահանգապետի համբավ ձեռք բերել, ինչը Ալիի և Ֆուադի համար ոչ պակաս կարևոր էր: Այդ գործիչների կողմից նա նույնիսկ ներգրավվել էր Դանուբյան վիլայեթի մասին օրենքի տեքստի նախապատրաստման աշխատանքներին³⁶⁹:

³⁶⁵ Loi Constitutive du Département formé sous le nom de Vilayet du Danube. - АВПРИ, ф. Главный архив, II -18, 1855-1867, д.1 (О турецких Хамт-и Хумаюнах, 1855 – 1857, 1866 - 1867), л. 73 - 86.

³⁶⁶ Ф. Канитц, Дунайская Болгария и Балканский полуостров. Пер. с нем., СПб, 1876, с. 120.

³⁶⁷ Там же.

³⁶⁸ А. А. Попова, Политика Турции и национально-освободительная борьба болгарского народа в 60-х годах XIX века. - Вопросы истории, 1953, No. 10, с. 53.

³⁶⁹ Midhat Paşa, Hayat-ı siyasiyesi, hedi'mati, menfaa hayati. K. 1: Tabsira-i İbret, İstanbul, 1325, s. 23.

Գոյություն ուներ ևս մեկ համգամանք, որը ազդեց երիտասարդ փաշային այդչափ կարևոր պաշտոնին նշանակման մասին որոշման վրա. ժամանակին նա շահել էր բուլղար ժողովրդի համակրանքը: «Չկար այնպիսի մի բուլղարական հաստատություն, որտեղ կախված չլիներ բուլղարացիների սիրելի՜ Միդհատ փաշայի նկարը», - հաստատում է ժամանակակիցը: Մարդիկ նույնիսկ երգ էին հորինել, որը սկսվում էր հետևյալ բառերով. «Միդհատ փաշա, բարի հոգի...»³⁷⁰: Իր հռչակով նա պարտական էր նրան, որ 1857թ գտնվելով Տիրնովո քաղաքում որպես հատուկ լիազորություններով տեսուչ՝ նա բանտից ազատեց «անմեղ դատապարտյալ շատ բուլղարացիների»³⁷¹ և իշխանությունների ուշադրությունը դարձրեց տեղական ուղղափառ քահանայապետի չարաշահություններին: Բուլղարացիները նրա նշանակման հետ իրենց դրության բարելավման և նույնիսկ Միդհատի գլխավորությամբ անկախ բուլղարական իշխանության ստեղծման հույսեր էին կապում³⁷²:

Սակայն այդ հույսերը միանգամայն անհիմն էին...

Նոր վիլայեթի հենց անունն արդեն վկայում էր Բուլղարիայի անկախության նույնիսկ հեռավոր ակնարկը վերացնելու նրա ստեղծման նախաձեռնողների (նրանց մեջ էր նաև Միդհատը) ձգտումի մասին: Իշխանությունները վիլայեթի մայրաքաղաք ընտրեցին ոչ մեծ, փոքրիկ Ռուսշուկ (Ռուսե) քաղաքը, թեև իր դիրքով և նշանակությամբ առավել հարմար էր Տիրնովոն, որը այն տարիներին բուռն զարգացման շրջան էր ապրում և որը Բուլղարիայի առևտրական և մշակութային կենտրոնն էր: Այդ որոշման ընդունման վրա ազդեց նաև այն հանգամանքը, որ Տիրնովոն բուլղարացիների աչքերում ազգային անկախության խորհրդանիշ էր (նա եղել էր Բուլղարական թագավորության վերջին մայրաքաղաքը): Հավանաբար, իր դերը խաղաց նաև այն, որ այդ քաղաքը եկեղեց-

³⁷⁰ П. П. К., Мидхатъ паша и опитваннето му да потурчи българските училища. - Българска Сбирка, 1898, г. V, кн. I, с. 57.

³⁷¹ П. Кусимов, Медхадъ паша. Първи турски реформаторъ. - Българска Сбирка, 1898, г. V, кн. II, с. 800.

³⁷² П. П. К., Мидхатъ паша и опитваннето му да потурчи българските училища. - Българска Сбирка, 1898, г. V, кн. I, с. 56.

ցական ինքնավարության համար բուլղարական ժողովրդի պայքարի կենտրոնն էր³⁷³:

Սուլթանական իրադեի և Դանուբյան վիլայեթի կազմավորման մասին օրենքի հիմքում դրված գաղափարները գլխավորապես ուղղված էին կայսրության այդ շրջանի քրիստոնյա ազգաբնակչության «միաձուլման» գործընթացի ուժեղացմանը: Այսպիսով՝ իրադեում, որը Միդիատը հանդիսավոր ձևով կարդաց Ռուսշուկի բնակիչների և օտարերկրյա հյուպատոսների առջև, ասվում էր կառավարման «կենտրոնացման անհրաժեշտության մասին, և, այն մասին, որ «բոլոր քաղաքական, ֆինանսական և վարչական հաստատությունները պետք է բերվեն միասնական, լավ կարգավորված վիճակի և մշտապես վերահսկվող կարգի»³⁷⁴:

Այդպիսին էին Միդիատի կողմից ստացված հրահանգները: Նրան հատուկ եռանդով և համառությամբ նա փորձեց իրականացրեց դրանք իր նահանգապետության ամբողջ շրջանի ընթացքում: Իր հիմնական խնդիրը նա տեսնում էր նրանում, որ, ինչպես նա գրում էր հետագայում՝ անքակտելի ձևով միացնել բոլոր ժողովուրդներին, նրանց համար ստեղծել «ընդհանուր հայրենիք», «որը կպահպաներ նրանց դրսի ազդեցությունից»³⁷⁵:

Այդ նպատակոն հասնելու համար Միդիատը աշխատեց առաջին հերթին ստեղծել բուլղարական չորբաջիներից (խոշոր առևտրական և վաշխառուական բուրժուազիայի ներկայացուցիչներից) կազմված սոցիալական հենակետ իր քաղաքականության համար՝ ձգտելով ավելի ամուր կապել նրանց նոր վիլայեթական իշխանություններին: Այդ նպատակով օգտագործվում էր բարձր գույքային ցեմզը՝ սահմանված մեջլիսի թեկնածուների համար:

Ըստ օտարերկրյա հյուպատոսների վկայության, որոնք գտնվում էին վիլայեթի տարբեր քաղաքներում, թուրք իշխանությունների նպատակն էր թույլ չտալ, որ մեջլիսների կազմում ընտրվեն այն անձինք, որոնք իսկապես ներկայացնում էին բուլղարա-

կան բնակչության շահերը: Այսպես է նկարագրում ընտրությունների ընթացակարգը Վիդինում (համանուն սանջակի գլխավոր քաղաքում) ռուսական հյուպատոս Ս. Բայկովը. նախ մյուսիքները (նահիյեների կառավարիչները) տեղական «վստահելի» հարուստներից թեկնածուների ցուցակ էին կազմում, ստիպում էին գյուղի բնակիչներին քվեարկել նրանց օգտին, իսկ այնուհետև՝ իրենց հայեցողությամբ այդ ցուցակից մեջլիսի անդամների թեկնածուներ էին ընտրում և ուղարկում կայմակամին (կազայի կառավարչին) հաստատման համար³⁷⁶: Նույն դիվանագետը հայտնում էր նաև, որ կայմակամ Սաբրի փաշան ունեցած ցուցակից ընտրեց նրանց, ովքեր հավաքեցին ծայրերի ամենաքիչ քանակը, այսինքն՝ ժողովրդի մեջ բոլորից քիչ ճանաչվածներին:

Ընտրությունների ընթացակարգի նկարագրումը, տված Կյուստենջի նավահանգստային քաղաքում անգլիացի փոխհյուպատոս Սենկլիի կողմից, հակընկնում է վերը նշվածի հետ. մյութեսսարիֆը (սանջակի կառավարիչը) թեկնածուների ցուցակ է կազմում, որը ուղարկվում է ամբողջ սանջակով մեկ, այնուհետև քվեարկություն է տեղի ունենում, որտեղ մասնակցում են միայն կանխապես ընտրված քվեարկողները, ընդ որում՝ նրանք իրավունք չունեն այդ ցուցակում ավելացնել նոր անուններ³⁷⁷:

Խառը մահմեդական-քրիստոնեական առևտրական դատարանների անդամների ընտրությունները անցկացվում էին նման ձևով³⁷⁸: Ռուսշուկում տեղակայված ռուս հյուպատոս Վ. Կոժնիկովը իր զեկույցներից մեկում գրում էր. «Թուրքական քաղաքականությունը երբեք չի թույլատրի, որ քրիստոնյաների կողմից դատարանի անդամ ընտրվի խելոք, անշահախնդիր, իր հայրենակիցների անհուսալի դրությունը հասկացող և քաղաքացիների կողմից հար-

³⁷³ П. П. К., Мидхатъ паша и опитваннето му да помурчу Българскитъ училища. - Българска Сбирка, 1898, г. V, кн. I, с. 56.

³⁷⁴ Düstür, Cild-i Evvel, İstanbul, 1289, s. 515.

³⁷⁵ Midhat Pacha, La Turquie: son passé, son avenir. Paris, 1878, p. 14.

³⁷⁶ М. Бауков, Вудин, 16 февраля 1867 г. - АВПРИ, ф. Главный архив, II -18, 1855-1867, д. 1 (О турецких Хамм-и Хумаюнах, 1855 - 1857, 1866 - 1867), лл. 216-216 об.

³⁷⁷ Reports Received from Her Majesty's Ambassador and Consuls Relating to the Condition of Christians in Turkey, 1867, London, 1867, p. 4.

³⁷⁸ Reports Received from Her Majesty's Ambassador and Consuls Relating to the Condition of Christians in Turkey, 1867, London, 1867, p. 4.

զանք վայելող մարդ. նման մարդիկ վտանգավոր են տեղական իշխանությունների համար»³⁷⁹:

Ձարմանալի չէ, որ մեջլիսներ և դատական պալատների անդամներ ընտրվում էին «մեծ մասամբ մարդիկ, որոնք ժողովրդի կողմից հարգանք չէին վայելում, բայց դրա փոխարեն վայելում էի թուրք իշխանությունների վստահությունը»³⁸⁰: Ինչպես մեջլիսների, այնպես էլ դատական պալատների անդամները իշխանության կողմից ստանում էին որոշակի վճար: Իրենց ընտրվելու համար պարտական լինելով միայն տեղական թուրքական կայմականի կամ մյութեսսարիֆի քնահաճությանը, նրանք դառնում էին կույր գործիք թուրքերի ձեռքում՝ ոչ մի օգուտ չբերելով իրենց ժողովրդին: Գոյություն ունեն ժամանակակիցների բազմաթիվ վկայություններ, որոնց համաձայն քրիստոնյաները՝ վարչական, դատական մեջլիսների անդամները, ոչ մի հարցում չհամարձակվելով հակաճառել տեղական իշխանությունների ներկայացուցիչներին՝ առանց նայելու իրենց ստորագրություններն էին դնում այդ մարմինների որոշումների վրա³⁸¹:

Նման իրադրություն էր ստեղծվել նաև ավագանիների խորհուրդներում, որոնք, փաստորեն, համայնական խորհուրդների պարտականություններն էին կատարում գլխավորապես բուլղարներով բնակեցված շրջաններում: Դրանց նիստերի ժամանակ երրորդական կարևորություն ունեցող հարցեր էին քննարկվում³⁸²: Այդ խորհուրդներին հետևյալ բնութագրում է տվել Վիդինում Ռուսաստանի հյուպատոս Ս. Բայկովը. «Գյուղերում հիմնված «իիթիյար մեջլիսները» (այսինքն՝ ավագանիները - Ռ. Ս.), կազմված անգրագետ անդամներից, ոչ մի օգուտ չտվեցին, ընդհակառակն, ավելի

³⁷⁹ В. Ф. Кожевников, Рушук (Русе), 7 января 1867 г. - АВПРИ, ф. Главный архив, II -18, 1855-1867, д.1 (О турецких Хатм-у Хумаюнах, 1855 - 1857, 1866 - 1867), л. 187.

³⁸⁰ М. Бауков, Видин, 16 февраля 1867 г. - АВПРИ, ф. Главный архив, II -18, 1855-1867, д.1 (О турецких Хатм-у Хумаюнах, 1855 - 1857, 1866 - 1867), л. 216 об.

³⁸¹ Reports Received from Her Majesty's Ambassador and Consuls Relating to the Condition of Christians in Turkey, 1867, London, 1867, p. 4.

³⁸² S. G. B. St. Clair and Brophy, Residence in Bulgaria or notes on the resources and administration of Turkey. 1, 1869, p. 380 - 381.

շատ ուժ տվեցին թուրքերին բուլղարների բերանը այդ հարուստ ծերունիների միջոցով փակ պահելու համար»³⁸³:

Ընդհանուր առմամբ՝ տարբեր տիպի խառը խորհուրդները, ստեղծված ի կատարումն 1864 թ. վիլայեթական օրենքի պահանջների, դարձան թուրքական կառավարության կողմից բուլղարներին ճնշելու քաղաքականության ևս մեկ գործիք:

Դանուբյան վիլայեթում Միդիատ փաշայի կառավարման ոճի համար բնորոշ դարձան վարչական ապարատի մեջ բուլղար չորբաջիների դասի ներկայացուցիչների անմիջական ներգրավումը և նրանց նշանակումը որոշ ոչ կարևոր պաշտոնների: Այսպիսով՝ նրա նախաձեռնությամբ վալիի օգնականները (մուավիդները) նշանակվում էին չորբաջիների թվից: Նրանք հիմնականում պաշտոնական մատնիչների դեր էին տանում, և թուրք աստիճանավորները այդպես էլ անվանում էին նրանց՝ «մուհալի» (մատնիչ)³⁸⁴: Լինում էին դեպքեր, երբ Միդիատի հրամանով բուլղարները նույնիսկ կայմականներ էին նշանակվում, ինչը նույնպես անցյալում տեղի չէր ունեցել³⁸⁵: Սակայն ընդհանուր առմամբ, Միդիատը չէր վստահում բուլղարներին, և նրա ամենամոտ օգնականների մեջ վիլայեթի վարչությունում նրանք չկային: Բայց դրա փոխարեն նա հատուկ «հոգատարություն» էր ցուցաբերում մահմեդականների և ոչ մահմեդականների «հավասարության» նկատմամբ: Բուլղարացիները, որոնք գտվում էին քաղաքացիական կամ կառավարական ծառայության մեջ, աղա և էֆենդի կոչվելու պատվին արժանացան և, այսպիսով, «հավասարվեցին» թուրք պաշտոնյաներին³⁸⁶:

Միդիատը մեծ ուշադրություն էր հատկացնում բուլղարական կրթական հաստատությունների և դպրոցների «օսմանացմանը», ինչը Բարձր դռան կողմից հանդիսավոր ձևով հայտարարված

³⁸³ М. Бауков, Видин, 9 марта 1867 г. (Дополнение к предыдущему). - АВПРИ, ф. Главный архив, II -18, 1855-1867, д.1 (О турецких Хатм-у Хумаюнах, 1855 - 1857, 1866 - 1867), л. 226.

³⁸⁴ П. Кусимов, Медхадъ паша. Първи турски реформаторъ. - Българска Сбирка, 1898, V, кн. II, с. 804.

³⁸⁵ П. П. К., Мидхатъ паша и опитваннето му да потуричи българските училища. - Българска Сбирка, 1898, г. V, кн. I, с. 57.

³⁸⁶ П. Кусимов, Медхадъ паша. Първи турски реформаторъ. - Българска Сбирка, 1898, V, кн. II, с. 801.

«միաձուլման» քաղաքականության կարևորագույն բաղադրիչ մասն էր կազմում: Մի կողմից, այդպիսով ուժեղ հարված էր հասցվում բուլղար ժողովրդի լուսավորության գործին, որը թանգիմաթի շրջանում մեծ հաջողությունների էր ասել, մյուս կողմից «օսմանացումը» նպաստում էր բուլղարներին «օսմանյան հայրենիքին» հավատարմության ոգով դաստիարակմանը և «օսմանական ազգի» մեջ նրանց ներառմանը:

Սկզբում թուրքական իշխանությունները Միդիատի գլխավորությամբ փորձեցին գործել բացահայտ հարկադրման միջոցով: 1865 թ. ամռանը Տիրնովո քաղաքի բնակիչներին «առաջարկվեց» մահմեդական-քրիստոնեական ուսումնարանի շենք կառուցել: Նրանք հրաման ստացան փակել տեղական ազգային ուսումնարանը և այսուհետև նրա պահպանման համար համայնքի կողմից հավաքվող միջոցները փոխանցել կրթության քաղաքային վարչության տնօրինության ներքո³⁸⁷: Դրանով իսկ քաղաքում, որտեղ բուլղարացիները կազմում էին բնակչության 65 տոկոսը³⁸⁸, նրանք զրկվում էին իրենց ուսումնարանը ունենալու իրավունքից: Ձարմանալի չէ, որ Տիրնովոյի բուլղարական համայնքը մինչև այդ չտեսնված համառություն դրսևորեց և միահամուռ կերպով մերժեց իշխանությունների պահանջը³⁸⁹: Միդիատը ստիպված եղավ ժամանակավորապես հրաժարվել իր նախաձեռնությունից:

Ղետազայում վալին ավելի «նրբամտորեն» էր գործում՝ փորձելով սկզբից այդ միջոցառման մեջ ներգրավել բուլղարական բնակչության ներկայացուցիչներին, ընդգրկելով նրանց խառը բուլղարական-թուրքական հանձնաժողովի կազմի մեջ՝ ստեղծված համապատասխան բարեփոխման նախագծի մշակման նպատակով³⁹⁰:

³⁸⁷ В. Ф. Кожевников – Н. П. Игнатъеву, Рушук (Русе), 23 января 1866 г. - АВПРИ, ф. Посольство в Константинополе 1866, д. 21826 (Консульство в Рушук), л. 25.

³⁸⁸ Н. Тодоров, Балканскии город XV-XIX веков. М., 1978, с. 316, табл. 24.

³⁸⁹ В. Ф. Кожевников – Н. П. Игнатъеву, Рушук (Русе), 23 января 1866 г. - АВПРИ, ф. Посольство в Константинополе 1866, д. 21826 (Консульство в Рушук), л. 25.

³⁹⁰ П. П. К., Мидхатъ паша и опитваннето му да помурчи българските училища. - Българска Сбирка, 1898, г. V, кн. I, с. 59.

Չնայած այն հանգամանքին, որ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էին հատուկ ընրտված մարդիկ, սակայն երկար ժամանակ չէր հաջողվում հասնել փոխըմբռնման: Միայն ուժեղ ճնշում գործադրելով հանձնաժողովի բուլղարացի անդամների վրա Միդիատին հաջողվեց հասնել նախագծի հաստատմանը³⁹¹:

Այդ ընդարձակ փաստաթղթի հիմքում՝ բաղկացած 72 կետից, դրված էր 1860 թ. ընդունված խառը ուսուցման մասին կառավարական հրամանագիրը: Այն բովանդակում էր նաև դրույթներ, որոնց հեղինակը հենց Միդիատն էր: Օրինակ, առաջարկում էր լիովին վերացնել քրիստոնյաների բուլղար ուսումնարանները՝ թողնելով միայն, այսպես կոչված, առաջին աստիճանի «լանկաստերյան» ուսումնարանները, որոնք ավարտելուց հետո քրիստոնյաների երեխաները կշարունակեին ուսումը խառը մուսուլմանական-քրիստոնեական ուսումնարաններում: Այդ ուսումնարանները պահելու համար քրիստոնյա համայնքների կողմից տրամադրված միջոցները պետք է այսուհետև փոխանցվեին կառավարական դրամարկո: Խառը ուսումնարանների կառուցումը իրականացվում էր հենց համայնքների միջոցով, այլ ոչ թե իշխանությունների: Միջոցների պակասի դեպքում Միդիատը առաջարկում էր մտցնել լրացուցիչ հարկ³⁹²:

Ակնհայտ է, որ Միդիատի առաջարկները հակաբուլղարական բնույթ էին կրում և նպատակ ունեին լիովին վերացնելու երկրորդ աստիճանի բուլղարական ազգային ուսումնարանների լայնորեն ճյուղավորված ցանցը: Դրանում էր կայանում այն նորը, որը նա մտցրեց 1860 թ. կառավարական հրամանագրի բովանդակության մեջ:

Նախագծի հաստատումից հետո Միդիատը մեկնեց Կոնստանդնուպոլիս և Բարձր դռանը ներկայացրեց այդ մասին զեկույց: Նախագիծը հավանության արժանացավ³⁹³:

³⁹¹ В. Ф. Кожевников – Н. П. Игнатъеву, Рушук (Русе), 23 января 1866 г. - АВПРИ, ф. Посольство в Константинополе 1866, д. 21826 (Консульство в Рушук), л. 24.

³⁹² В. Ф. Кожевников – Н. П. Игнатъеву, Рушук (Русе), 23 января 1866 г. - АВПРИ, ф. Посольство в Константинополе 1866, д. 21826 (Консульство в Рушук), л. 24 об.

³⁹³ Г. Плетньов, Съпротивата на българския народ против османизирането на родните училища в Дунавския вилает. – Трудове

Վերադառնալով Ռուսշուկ՝ Միդիատը սկսեց իր ծրագրի իրագործումը: Ելույթ ունենալով բուլղարական ու թուրքական համայնքների ներկայացուցիչների առջև, նա հայտարարեց, որ այդ ծրագրի արագ իրականացումից է կախված ինչպես թուրք, այնպես էլ բուլղարացի երեխաների երջանկությունը, և որ հենց դրա մասին է «մտածում օսմանյան կառավարությունը»³⁹⁴:

Վիլայեթում ստեղծվեցին մի քանի խառը ուսումնարաններ: Դրանցից ամենահայտնին համարվում էր ռուսշուկյանը: Վերջինիս նկարագրումներից՝ թողնված ժամանակակիցների կողմից, հետևում էր, որ այդ «օրինակելի» ուսումնարանում ուսուցումը գտնվում էր չափազանց ցածր մակարդակի վրա, որակյալ ուսուցիչների և դասագրքերի պակաս կար, ուսումնական ծրագրերը կազմված էին հապճեպ և այն զգալիորեն զիջում էր բուլղարական ուսումնարաններին³⁹⁵: Նշենք, որ բուլղարերենը՝ որպես ուսումնական առարկա, ծրագրից հանված էր, քանի որ, ինչպես պնդում էր Միդիատը, միայն թուրքերենի ուսումնասիրումը կարող է բուլղարացի երեխաներին երաշխավորել երջանիկ ապագա...

60-ական թթ. ստեղծված խառը ուսումնարանները շարունակեցին գործել նաև հետագա տասնամյակում՝ մինչև Բուլղարիայի ազատագրումը թուրքական լծից: Սակայն նրանցում անշեղորեն կրճատվում էր բուլղարացի աշակերտների թիվը: Փորձելով խանգարել դրան՝ 1872 թ. վիլայեթական իշխանությունները օրենք ընդունեցին, համաձայն որի պետական ծառայության կարող էին ընդունվել ոչ մահմեդականներից միայն այն անձինք, որոնք ունեին խառը ուսումնարանների ավարտական վկայական³⁹⁶:

на Великотърновския Университет "Кирил и Методиус", 1974 - 1975. т. XII, кн. 3, Факултет за история, с. 124.

³⁹⁴ В. Ф. Кожевников - Н. П. Игнатъеву, Рушук (Русе), 23 января 1866 г. - АВПРИ, ф. Посольство в Константинополе 1866, д. 21826 (Консульство в Русуке), л. 28.

³⁹⁵ Г. Плетньов, Съпротивата на българския народ против османизирането на родните училища в Дунавския вилает. - Трудове на Великотърновския Университет "Кирил и Методиус", 1974 - 1975. т. XII, кн. 3, Факултет за история, с. 142 - 144.

³⁹⁶ Г. Плетньов, Съпротивата на българския народ против османизирането на родните училища в Дунавския вилает. - Трудове

Եթե թուրքական իշխանություններին խառը ուսումնարանների ստեղծման գործում հաջողվեց հասնել որոշակի հաջողությունների, ապա տարրական կրթության բնագավառում դրությունը այլ էր: Միդիատը նախապատրաստեց տարրական կրթության համակարգի բարեփոխումների նախագիծ, որը նախատեսվում էր 8-10 տարեկան երեխաների համար ստեղծել խառը դպրոցներ, և «լրջորեն ձեռնամուխ եղավ վիլայեթի խոշոր քաղաքներում խառը տարրական դպրոցների ստեղծմանը»³⁹⁷: Սակայն նա լուրջ դիմադրության հանդիպեց, քանի որ բուլղար բնակչության մեծամասնությունը կարողացավ կռահել իշխանության բուն նպատակները: Դիմադրությունը այնքան համառ էր, որ իշխանությունները ստիպված եղան հրաժարվել իրենց ծրագրից:

Վիլայեթական իշխանություններին չհաջողվեց հաջողությունների հասնել նաև խառը մահմեդական-քրիստոնեական ռազմական ստորաբաժանումների ստեղծման գործում, ինչը համարվում էր «միաձուլման» կարևոր ուղղություններից մեկը: Միդիատը ծրագրել էր ստեղծել վիլայեթում խառը ոստիկանական զորամասեր: Սակայն այդ նախաձեռնությունը ձախողվեց³⁹⁸: Միդիատը ստեղծեց լավ զինված 40 հազարանոց բանակ, որը տաս տարի անց օգտագործվեց բուլղարների Ապրիլյան ապստամբությունը ճնշելու և կոտորածներ կազմակերպելու նպատակով:

Վերը նշված նոր միտումների հետ մեկտեղ վիլայեթի իշխանությունների քաղաքականության մեջ նկատվում էին երևույթներ, որոնք վկայում էին այն մասին, որ նրանք չիրաժարվեցին ավանդական մեթոդներից՝ հպատակ ժողովուրդներին սուլթանի իշխանության տակ պահելու համար:

Շարունակվում էր բուլղարացիների բռնի իսլամացումը, արձանագրվում էին աղջիկների և պատանիների թուրքացման բազմա-

на Великотърновския Университет "Кирил и Методиус", 1974 - 1975. т. XII, кн. 3, Факултет за история, с. 146.

³⁹⁷ В. Ф. Кожевников - Н. П. Игнатъеву, Рушук (Русе), 12/24 января 1866 г. - АВПРИ, ф. Посольство в Константинополе 1866, д. 21826 (Консульство в Русуке), л. 13.

³⁹⁸ Документи за българската история, Т. IV: Документи из турските държавни архиви, Ч. II: 1863 - 1909. Подбралъ П. Дорев, София, 1942, с. 187

թիվ դեպքեր³⁹⁹: Փաստերը վկայում են, որ իսլամացումը հաճախ կազմակերպված բնույթ էր կրում և հովանավորվում էր ինչպես կենտրոնական վիլայեթական իշխանությունների, այնպես էլ սանջակներում և կազաներում թուրքական վարչության ներկայացուցիչների կողմից⁴⁰⁰: Այդ տարիներին վիլայեթում «սարսափելի» չափերի հասավ քրիստոնյաների կեղեքումը «թուրք ավագակների» կողմից, որոնք գտնվում էին մահմեդական հոգևորականների անմիջական հովանավորության ներքո⁴⁰¹:

Երբ «խաղաղ միաձուլման» քաղաքականությունը չէր հասնում իր նպատակներին, և բուլղարացիները դիմում էին զենքի, իշխանությունները առանց տատանվելու կիրառում էին ամենադաժան միջոցները: Իր դաժանություններով հատկապես հայտնի դարձավ «առաջադեմ» գործչի համբավ վայելող Միդհատ փաշան⁴⁰²: Այդ պատճառով օրինաչափ է, որ իր նահանգապետության վերջում նա զրկվեց ժողովրդական զանգվածների այն համակրանքից, որով նա օգտվում էր իր գործունեության սկզբնական ժամանակաշրջանում: Միայն չորբաջիության առանձին ներկայացուցիչներ, «վախենալով իրենց դրության համար» պաշտպանում էին Միդհատի «միաձուլման» քաղաքականությունը⁴⁰³:

Չնայած դրան՝ բարեփոխումների կողմնակիցները կենտրոնական կառավարությունում բարձր գնահատեցին Միդհատի գործունեությունը:

Ֆուադ փաշան իր հուշագրերից մեկում հատուկ նշեց նրա հաջողությունները Ղանուբյան վիլայեթում⁴⁰⁴: Կառավարության կող-

մից վերահսկվող մամուլը ամեն կերպ գովաբանում էր վիլայեթական նոր համակարգը, գրում էր, թե, իբր, այն «ապահովում է ժողովուրդների միջև հավասարություն»⁴⁰⁵: Փորձը հաջող ճանաչվեց, և վիլայեթական նոր համակարգը հետզհետե սկսեց ներդրվել կայսրության այլ շրջաններում:

Միդհատի քաղաքականության մասին գովեստով խոսեցին նաև «նոր օսմանցիները»: Նամըք Քեմալը «Յուլուրիեթ» թերթի էջերում նշում էր, որ Միդհատը լավագույնս կյանքի կոչեց կառավարման նոր վիլայեթական համակարգ⁴⁰⁶: Նա կարծում էր, որ Միդհատի քաղաքականության արդյունքում հաջողվեց կանխել բուլղար ժողովրդի համընդհանուր ապստամբությունը⁴⁰⁷: Մի քանի տարի անց ի հայտ եկավ այդ կանխատեսման ողջ սնանկությունը:

Միդհատի մեկնելուց հետո «միաձուլման» քաղաքականությունը չէր անցկացվում նախկին նպատակաուղղվածությամբ, ինչը պայմանավորված էր առաջին հերթին «միախառնման ու միաձուլման» հայեցակարգի ու քաղաքականության հեղինակներ Ալի փաշայի և Ֆուադ փաշայի կյանքից հեռացումով և թանգիմաթի ավարտով:

Գնահատելով թուրք իշխանությունների քաղաքականության արդյունքները Ղանուբյան Բուլղարիայիում անհրաժեշտ է ընդգծել, որ այն իր նպատակին չհասավ: Չհաջողվեց կանգնեցնել ազգային-ազատագրական շարժման աճի գործընթացը: Բուլղարացիներին սուլթանին հավատարիմ ոգով «ղաստիարակելուն» և «օսմանական ազգի» կազմում նրանց «միաձուլմանը» նպատակաուղղված միջոցառումները որևէ նշանակալի արդյունքների չհասան: Բուլղար ժողովուրդը պատասխանեց նրանց իր ազգային ազատագրման համար պայքարի ուժեղացմամբ: 1867 և 1875 թթ. տեղի ունեցան զինված ընդվզումներ թուրքական բռնապետության դեմ, որոնք դաժանորեն ճնշվեցին:

Առավել վտանգավոր համարվեց վերջինը: Նրա ճնշման նպատակով իշխանությունները օգտագործեցին ոչ միայն բանակային

³⁹⁹ Ассимиляторската политика на турските завоеватели. Сборник документов. София, 1964, с. 256.

⁴⁰⁰ По следите на насието. Документи за помохамеданчвания и потурчвания. Съст. П. Хр. Петров. София, 1972, с. 58-59.

⁴⁰¹ В. Ф. Кожевников, Рушук (Русе), 7 января 1867 г. - АВПРИ, ф. Главный архив, II -18, 1855-1867, д.1 (О турецких Хатм-у Хумаюнах, 1855 - 1857, 1866 - 1867). л. 183.

⁴⁰² И. Е. Фадеева, Мидхат-паша: Жизнь и деятельность. М., 1977, с. 37.

⁴⁰³ В. Ф. Кожевников - Н. П. Игнатьеву, Рушук (Русе), 12/24 января 1866 г. - АВПРИ, ф. Посольство в Константинополе 1866, д. 21826 (Консульство в Рушук), л. 14 об.

⁴⁰⁴ A. Schopoff, Les réformes et la protection des chrétiens en Turquie, 1673-1904. Paris, 1904, p. 56.

⁴⁰⁵ Н. П. Игнатьев - А. М. Горчакову, Константинополь, 7/19 марта 1867 г. - АВПРИ, Канцелярия, 1867, д. 31, л. 65 об.

⁴⁰⁶ Hürriyet, 1868, No. 22.

⁴⁰⁷ Hürriyet, 1868, No. 4.

ստորաբաժանումները, այլ նաև ներգրավեցին մահմեդական ազգաբնակչությանը՝ բաժանելով նրանց զենք⁴⁰⁸։ Սա անուղղակի վկայություն է առ այն, որ նրանք նախապատրաստվում էին իրականացնել շատ ավելի լայնածավալ գործողություն, քան թե պահանջվում էր այդ սահմանափակ ապստամբությունը ճնշելու համար։

Ուշագրավ է, որ ապստամբությունը ճնշելուց հետո էլ իշխանությունները շարունակում էին ձեռնարկել «ակտիվ միջոցառումներ», ինչպես նշվում էր Ադրիանապոլսում բրիտանական փոխ հյուպատոսի կողմից ստացված հաղորդագրության մեջ, մասնավորապես, նրանք սկսել էին «զինյալների հավաքագրումը»⁴⁰⁹։ Մեկ այլ գեկուցագրում, նույն բրիտանացի դիվանագետը նշում է, որ Յենի Ջագորայի թուրքական իշխանությունները լիովին զինել են այդտեղի մահմեդական տղամարդկանց⁴¹⁰։

Ըստ երևույթին, այդ և նմանատիպ հաղորդագրությունների ազդեցության տակ Կ. Պոլսում գտնվող Մեծ Բրիտանիայի դեսպան Յ. Էլիոթը և Ռուսաստանի դեսպան Ն. Պ. Իզմատևը, կանխազգալով բուլղարներին սպառնացող վտանգի հասունացումը, ձեռնարկեցին որոշակի քայլեր՝ նպատակ ունենալով կասեցնել այդ գործընթացը։ Նրանք գործադրեցին ճնշում սուլթան Աբդուլ Ազիզի և մեծ վեզիր Մահմուդ Նեդիմ փաշայի վրա և հորդորեցին կայսրության բարձրագույն ատյաններին այս անգամ ապավինել բարենորոգումների

⁴⁰⁸ Н. Геров – Н. П. Игнатъеву, 22 марта 1876 г. Приложение. – Документи за българската история. Т. 2 : Архив на Науден Геров. Ч. 2, София, 1932, с. 153.

⁴⁰⁹ Rev. J. Clarke to Vice Consul J. H. Dupuis, Samakov, October 15, 1875 (Extract). – British documents on foreign affairs: reports and papers from the foreign office confidential print. General editors: Kenneth Bourne and D. Cameron Watt. Part I: from the mid-nineteenth century to the First World War. Series B: the Near and Middle East, 1856-1914. Editor: David Gillard. Volume 2: the Ottoman Empire: revolt in the Balkans, 1875 -1876. Bethesda, 1984, p. 137-138.

⁴¹⁰ Vice Consul J. H. Dupuis to Sir H. Elliot, Adrianople, October 13, 1875. – British documents on foreign affairs: reports and papers from the foreign office confidential print. General editors: Kenneth Bourne and D. Cameron Watt. Part I: from the mid-nineteenth century to the First World War. Series B: the Near and Middle East, 1856-1914. Editor: David Gillard. Volume 2: the Ottoman Empire revolt in the Balkans, 1875 -1876. Bethesda, 1984, p. 135.

վրա, այլ ոչ թե կիրառել ֆիզիկական բնաջնջման քաղաքականություն⁴¹¹։

Սուլթանը ի պատասխան հրապարակեց է հատուկ հրովարտակ և ազդարարեց է բարենորոգումները շարունակելու իր կամքը, իսկ մեծ վեզիրը հեռագիր ուղարկեց վալիներին ու հրամայեց դադարեցնել քրիստոնյաների հետապնդումները⁴¹²։

Ուշագրավ է, որ մեծ վեզիրի որդեգրած մոտեցման հետ իրենց անհամաձայնությունն են հայտնում և հրաժարական են տալիս այդ տարիների ականավոր պետական գործիչներ Յուսեյն Ավնի փաշան և Միդհատ փաշան։ Երկուսն էլ կողմնակից էին Բալկաններում և, մասնավորապես, Բուլղարիայում բռնի ուժի օգտագործման վրա հիմնված քաղաքականության⁴¹³։ Յետագայում, ինչպես ցույց է տրվում ներքևում, այս գործիչները, նորից հայտնվելով կառավարության կազմում, մշակեցին բուլղարներին ոչնչացնելու քաղաքականության ծրագիր։

Ինչպես երևում է Փիլիպոլիսում ռուսական փոխ հյուպատոսի գեկուցագրից, Յուսեյն Ավնին ու Միդհատը միայնակ չէին բուլղարների նկատմամբ ֆիզիկական հաշվեհարդարի քաղաքականություն իրականացնելու ցանկության մեջ։ Տեղական իշխանությունները և հատկապես *զապտիյեները*⁴¹⁴ ոչ միայն չէին ենթարկվում մայրաքաղաքից ստացված հրամանին, այլև էլ ավելի էին ուժեղացնում բռնությունները բուլղարների դեմ⁴¹⁵։ Չեկուցագրում հատուկ ընդգծում էր, որ աննախադեպ շատացել է զապտիյեների կողմից իրականացվող սպանությունների թիվը։ Երբ Կ.Պոլսից ստացվեցին

⁴¹¹ R. Davison, Reform in the Ottoman Empire, 1856-1876. Princeton, 1963, p. 315 -317.

⁴¹² Н. Геров – Н. П. Игнатъеву, 3 ноября 1875 г. – Документи за българската история. Т. 2 : Архив на Науден Геров. Ч. 2, София, 1932, с. 126.

⁴¹³ R. Davison, Reform in the Ottoman Empire: 1856—1876. Princeton, 1963, p. 317.

⁴¹⁴ Այդպես էին անվանվում ոստիկանական զինված ստորաբաժանումների անդամներին։

⁴¹⁵ Н. Геров – Н. П. Игнатъеву, 3 ноября 1875 г. – Документи за българската история. Т. 2 : Архив на Науден Геров. Ч. 2, София, 1932, с. 126.

համապատասխան հրամաններ, նրանց առջևից վերացավ վերջին՝ թեկուզ և թույլ պատճենը, և նրանք անցան գործի, որի արդյունքն էին տասնյակ հազարավոր սպանված անմեղ բուլղարացի երեխաներ, ծերունիներ, կանայք...

Բուլղար ժողովրդի ընտրությունը օսմանյան կառավարության կողմից որպես ցեղասպանական ծրագրի թիրախ պայմանավորված էր ոչ միայն իրավիճակային բնույթի հակազդեցությամբ Ապրիլյան ապստամբությանը, այլ նաև, ինչպես ցույց տրվեց սույն և նախորդ գլուխներում, այն զարգացումներով, որոնք շուրջ երկու տասնամյակների ընթացքում տեղի էին ունենում և Օսմանյան կայսրությունում, և նրա կազմում գտնվող Բուլղարիայում:

2. ԳՐԱԺԱՄ

19 դ. 70-ական թթ. սկզբին Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում տեղի են ունենում կարևոր տեղաշարժեր: Համեմատաբար կայուն իրավիճակը, որը հաստատվել էր երկրում 1869 թ. Կ.Պոլսի կոնֆերանսից հետո և արդյունք էր հաջորդաբար մեծ եպարքոսի պաշտոնը զբաղեցրած Ֆուադ փաշայի եւ Ալի փաշայի երկարամյա ճկուն արտաքին ու ներքին քաղաքականության, ավարտվում է⁴¹⁶:

Նրանց կյանքից հեռանալուց հետո (Ֆուադը մահանում է 1869 թ., իսկ Ալին՝ 1871 թ.) իշխանության բարձրագույն ոլորտներում ծավալվում է կատաղի պայքար կառավարող բյուրոկրատական վերնախավը ներկայացնող պաշտոնյաների առանձին խմբավորումների միջև, որը իր գագաթնակետին հասավ 1876 թ., երբ այդ տարի գահակալած երեք սուլթաններից մեկը դավադրության արդյունքում հեռացվեց իշխանությունից և հետագայում սպանվեց, իսկ մյուսը հայտարարվեց անգործունակ և նույնպես հեռացվեց իշխանությունից: Նրանցից միայն Աբդուլ Համիդ Երկրորդի խորամանկ ու դաժան սուլթանին հաջողվեց պահպանել գահը:

Կենտրոնական իշխանության մասնատվածության ու թուլացման պայմաններում սրվում են բազմազգ ու բազմադավան կայսրության սոցիալ-քաղաքական կյանքի ամենատարբեր ոլորտներում առկա բազմաթիվ հակամարտությունները, առաջին հերթին, իհարկե, ազգային-դավանական հարցը:

Ամենևին էլ պատահական չէ, որ այդ տարիներին Օսմանյան կայսրությունում ստեղծված իրավիճակին անդրադարձել են մի շարք առաջատար օսմանագետներ: Որոշ մասնագետներ 1871-1875 թթ. բնորոշում են որպես «քաոսի շրջան»⁴¹⁷: Մյուսներն էլ, ընդհանուր առմամբ ճիշտ բնութագրելով այդ տարիները որպես Օսմանյան կայսրության ներքին քաղաքական կյանքում մի շարք նոր միտումների առաջացման շրջան, դժվարանում են առանձնաց-

⁴¹⁶ [Н. П. Игнатъев], Записки графа Н. П. Игнатъева, 1864 - 1874. - Русская старина, 1915, т. 162, кн. 4, с. 15.

⁴¹⁷ R. H. Davison, Reform in the Ottoman Empire 1856-1876. Princeton, 1963, p. 270.

նել դրանցից կարևորները կամ էլ անտեսում են նրանցից մի քանիսի գոյությունը⁴¹⁸:

Միայն մեծ վերապահումներով կարելի է համաձայնվել վերը նշված մոտեցումների ու գնահատականի հետ: Արտաքնապես քառասային տեսք ունեցող քաղաքական կյանքի ընդերքում ձևավորվում էին գործընթացներ, որոնց վիճակված էր մոտակա ապագայում ստանալ որոշիչ դեր և հանգեցնել 1876 թ. նախացեղասպանական իրավիճակի առաջացմանը:

Ըստ էության, վերը նշված տեսակետների հիմքում գտնվում էր թուրքական պաշտոնական պատմագիտության հիմնասյուններից էնվեր Ջիյա Քարալի կողմից դեռևս անցյալ դարի կեսերին մշակված Օսմանյան կայսրության հետթանգիմաթյան շրջանի պատմության մեկնաբանությունը, համաձայն որի՝ այդ շրջանի առաջատար գործիչներից և մեծ վեգիրներից Մահմուդ Նեդիմ փաշան վերջ դրեց թանգիմաթի արևմտամետ բարենորոգումների քաղաքականությանը՝ նպատակ ունենալով շահել Ռուսաստանի «վստահությունը և բարյացակամությունը»⁴¹⁹: Հանրապետական Թուրքիայի պաշտոնական պատմագրության հիմնասյուններից մեկը իր բազմաթիվ անդրադարձների շնորհիվ այդ շրջանի պատմական իրադարձություններին կարողացել է իր տեսակետները դարձնել ընդունելի շատ օսմանագետների համար⁴²⁰:

⁴¹⁸ Այս մոտեցումը բնորոշ է, մասնավորապես, մոսկվացի օսմանագետ Իրմա Ֆադևայի աշխատություններին: St'u И. А. Фадеева, Новые тенденции в политике Порты начала XIX в. - Тюркологический сборник 1978. Москва, 1984, с. 224-236; И. А. Фадеева, Официальные доктрины в идеологии и политике Османской империи /Османизм-панисламизм/: XIX - XX в. М., 1985, с. 97-129.

⁴¹⁹ E. Z. Karal, Osmanlı Tarihi. Cilt VII: Islahat Fermanı Devri, 1861-1876. Ankara, 1956, s. 70.

⁴²⁰ E. Z. Karal, La transformation de la Turquie d'un empire oriental en un état moderne et national. - Cahiers d'histoire mondiale, 1957, Vol. IV, No. 1, p. 426-441; E. Z. Karal, Obstacles rencontrés pendant le mouvement de modernisation de l'Empire Ottoman. - Economie et sociétés dans l'Empire Ottoman (Fin du XVIII-e - Début du XX-e siècle). Actes du colloque de Strasbourg (1-er - 5 juillet 1980). Publiés par J-L. Bacqué-Grammont et P. Dumont, Paris, 1983. p. 11-12; E. Z. Karal, Gülhane Hatt-ı Hümayununda Batının etkisi. - Belleten TTK, 1964, No. 112, s. 581-601.

Այս մոտեցումը, մեր կարծիքով, գերազնահատում է սուբյեկտիվ գործոնը պատմական գործընթացներում և անտեսում է այն կատարողի հակագոյեցությունը թանգիմաթին, մասնավորապես նրա հիմքում դրված մահմեդականների ու քրիստոնյաների որոշակի իրավահավասարության գաղափարին, որը առկա էր թուրքական հասարակության ամենալայն շրջանակներում, այդ թվում, նաև վերնախավի մոտ, և որը իրեն լիովին արտահայտեց Ալի փաշայի ու Ֆուադ փաշայի քաղաքական թատերաբեմից հեռանալուց հետո: Այդ երևույթը մենք բնութագրել ենք որպես հակաքրիստոնեություն:

Այդ երևույթն առկա էր Օսմանյան կայսրությունում պատմության ողջ ընթացքում: Հանդես գալով սկզբում ջիհադի տեսության ու պրակտիկայի տեսքով՝ այն կատարեց պետական գաղափարախոսության դեր նրա պատմության այսպես կոչված «ղազիական» շրջանում, երբ քրիստոնյաներից նվաճված տարածքների վրա դրվում էր օսմանյան թուրքերի պետականության հիմքը. Ստեղծման պահից, որոշ պատմական ժամանակաշրջաններում այն կատարել է պետական գաղափարախոսության դեր: Եզնաժամային տարիներին տեղի ունեցած զարգացումները գնալով ուժեղացրին հակաքրիստոնեությունը ջիհադային սրության մակարդակի: Շարքային թուրքերից շատերն սկսեցին ընկալել իրենք իրենց որպես ղազիներ, որոնք սրբազան պատերազմի են դուրս եկել ներքին քրիստոնյա թշնամու դեմ: Նախորդ գլխում ցույց տրվեցին հանգամանքները, որոնք նպաստեցին այդ ծայրահեղ հակաքրիստոնեական տրամադրությունների կենտրոնանալուն բուլղարների վրա:

Եթե այդ տեսանկյունից դիտարկենք 1871-1876 թթ. ժամանակաշրջանը, ապա հնարավոր կլինի առանձնացնել ճգնաժամի հասունացման միտումների ընդհանուր պատկերի մեջ այն երևույթները, որոնք անմիջականորեն նպաստեցին ցեղասպանական բնույթի ծրագրի առաջացմանը:

Մասնավորապես, ուշագրավ է այն հանգամանքը, 1870-ականների սկզբից Օսմանյան կայսրությունում սկսում են տարածվել համախլամականության գաղափարները: Ըստ երևույթին, դրան նպաստեց Ջենալեդդին Աֆղանի գործունեությունը, որը նա ծավալել էր մայրաքաղաքում այդ տարիներին: Համախլամականությունը այդ շրջանում դեռ չէր դառել պետական քաղաքականություն,

ինչպես դա տեղի ունեցավ Աբդուլ Չամիդի սուլթանության շրջանում, այլ հանդես էր գալիս որպես հակաքրիստոնեական տրամադրությունների դրսևորումներից մեկը: Չամախլամականության բնույթի գաղափարները հատուկ էին նաև «նոր օսմանցիների» որոշ ղեկավարներին, մասնավորապես Ալի Սուլալիին ու Նամըք Քեմալին: Այսպես, օրինակ՝ վերջինս «Իբրեթ» լրագրում տպագրել էր հոդված «Իսլամի միությունը» վերնագրով, որտեղ նա հանգում էր եզրակացության, որ Օսմանյան կայսրության հզորությունը կարող է վերականգնել ողջ մահմեդականների միության շնորհիվ «ավագ եղբայրների», այսինքն՝ օսմանյան թուրքերի ղեկավարության ներքո⁴²¹:

Այդ տարիների ամենակարգացվող լրագիրը Կ.Պոլսում հրատարակվող «Քասիբեթն» էր, որը այդ դիրքին հասել էր շնորհիվ իր բազմաթիվ հոդվածների, որտեղ փառաբանվում էին պանիսլամիստական ու հակաքրիստոնեական գաղափարները⁴²²: Նրա խմբագիրը՝ Էսսադ բեյը, այդ տարիներին հեղինակեց պանիսլամիզմին նվիրված առաջին գիրքը Թուրքիայում, որտեղ կոչ էր անում ամբողջ աշխարհի մուսուլմաններին հավաքվել Մեքքայում և սկսել տարածել իսլամը աշխարհով մեկ:

1875 թ. սկսած մահմեդական մուլեռանդությունը Օսմանյան կայսրությունում էլ ավելի է ուժեղանում: Գերմանական «Ալգեմայնե Ցայտունգ» լրագիրը արձանագրում էր, որ վկայությունները դրա մասին գալիս են երկրի տարբեր նահանգներից⁴²³: Հակաքրիստոնեության կրողները, օրինակ՝ գրում էին. «Մենք (այսինքն՝ մահմեդականները - Ռ.Ս.) հնազանդեցրել ենք քրիստոնյաներին և դաշույնով նվաճել ենք երկրներ: Մենք չենք ցանկանում բաժանել նրանց հետ կայսրության ղեկավարությունը»⁴²⁴:

⁴²¹ Ş. Mardin, The genesys of Young Ottoman thought: a study in the modernization of Turkish political ideas. Princeton, 1962, p. 332.

⁴²² [A. D. Mordtmann], Stambul und das moderne Türkenthum (Politische, sociale und biographische Bilder von einem Osmanen), Leipzig, B. 1, 1877, S. 241-242

⁴²³ Մեղու Հայաստանի, 1875, 6 դեկտեմբերի:

⁴²⁴ Le Baron Lermot, La Turquie demasque et rehabilitation de l'Europe. Paris, 1877, p. 51, n. 1.

Այս պայմաններում երկրի քաղաքական կյանքում ի հայտ եկավ նոր երևույթ՝ սոֆթաների (մուսուլմանական կրթական հաստատությունների ուսանողների) քաղաքական ակտիվությունը, որը հանդես էր գալիս մայրաքաղաքում նրանց զանգվածային ցույցերի տեսքով: Այդ ցույցերն ունեին բացահայտ հակաքրիստոնեական ուղղվածություն: Ականատեսի վկայությամբ, ցույցերի ընթացքում սոֆթաները սպառնում էին բնաջնջել երկրի երեսից «գյավուրներին»⁴²⁵: Այդ ցույցերի ընթացքում տեղի էին ունենում բազմաթիվ վայրագություններ քրիստոնյաների նկատմամբ և մշտապես վտանգ կար, որ նրանք կվերածվեն քրիստոնյաների լայնածավալ ջարդերի, քանի որ սոֆթաները զինված էին⁴²⁶: Սոֆթաներին օգտագործում էին Միդհատի ղեկավարած ուժերը՝ իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար: Նրանք ուղղակի վճարում էին սոֆթաներին⁴²⁷:

1875 թ. և 1876 թ. կայսրությունը կանգնած էր փլուզման եզրին: Աղետալի սովը, որը խլեց տասնյակ հազարավոր կյանքեր հիմնականում եվրոպական հատվածում, ծանրագույն ֆինանսական ճգնաժամը, որի հետևանքով պետությունը հայտարարեց իրեն սնանկ և իհարկե քրիստոնյաների ապստամբությունները Բալկաններում՝ Չերցեզովինայում, Բոսնիայում, հետագայում և Բուլղարիայում, այդ ճգնաժամի նշաններն էին:

Թուրքական հասարակությունը արձագանքեց այդ ծանր իրավիճակին, ինչպես արդեն նշել էինք, հակաքրիստոնեական արմատական տրադիցիաների ուժեղացմամբ, իսկ կառավարությունը՝ զինելով 1875թ Բալկաններում բնակվող մուսուլման ազգաբնակչությանը, ստեղծելով նրանցից զինված ջոկատներ և պատրաստվելով օգտագործել նրանց ապստամբ քրիստոնյաների դեմ:

1875 թ. բռնկվեց հերթական բուլղարական ապստամբությունը: Նրա ճնշման նպատակով իշխանություններ օգտագործեցին ոչ միայն բանակային ստորաբաժանումները, այլ նաև ներգրավվեցին

⁴²⁵ E. A. Рагозина, Из дневника русскою в Туецуи перед воиноу в 1877 – 1878 гг. – Русская старина, 1915, т. 162, кн. 4, с. 94.

⁴²⁶ E. A. Рагозина, Из дневника русскою в Туецуи перед воиноу в 1877 – 1878 гг. – Русская старина, 1915, т. 162, кн. 4, с. 291.

⁴²⁷ A. V. Clician, Son Altesse Midhat-Pacha, grand Vizir. Paris, 1909, p. 44.

մահմեդական ազգաբնակչությանը՝ բաժանելով նրան զենք⁴²⁸։ Այս անուղղակի վկայությունն է առ այն, որ նրանք նախապատրաստվում էին իրականացնել շատ ավելի լայնածավալ գործողություններ, քան թե պահանջվում էր այդ սահմանափակ ապստամբությունը ճնշելու համար։

Կարևոր է նշել այն հանգամանքը, որ՝ համաձայն օտարագրիների վկայությունների, ապրիլյան ապստամբությունը դեռ չէր սկսել, սակայն թուրքական իշխանություններն արդեն հրամայել էին մահմեդական գյուղացիներին սպանել իրենց հարևան քրիստոնյաներին։ Բրիտանացի ականատեսը իր գրքում բերում է մահմեդական մի կնոջ պատմությունը, համաձայն որի, նրա ամուսինը սուլթանի անունից ստացել էր հրաման՝ սպանել իր հարևաններին, որը և ստիպված նա իրականացրել էր⁴²⁹։ Տեղական թուրքական իշխանությունների կողմից խաղաղ բուլղար ազգաբնակչության զանգվածային սպանությունները իրականացնելու նպատակով օգտագործվում էին նաև *բաշըբոզուկների* ավազակախմբերը⁴³⁰։

Այս հաղորդագրությունները փաստում են թուրքական իշխանությունների շրջանում լայնածավալ բռնությունների քաղաքականություն իրականացնելու մտադրվածության ձևավորման վաղ փուլը, որը, դեռևս չունենալով «ցեղասպանական դիտավորություն», միաժամանակ, ազդարարում էր «ավանդական» միջնադարյան կոտորածների քաղաքականության՝ ցեղասպանության քաղաքականության վերածման գործընթացի սկիզբը։

Ամիսներ անց իշխանությունների հրամանով ստեղծվեցին զինված հրոսակախմբեր, որոնք կազմված էին բացի թուրքերից նաև ավանաղիներից և փախստականներից Հյուսիսային Կովկասից և ենթարկվում էին տվյալ տեղանքում տեղակայված կանոնավոր զինված

ուժերի հրամանատարությանը։ Նրանք օգտագործվեցին բուլղարների դեմ՝ 1876 թ. ապրիլյան ապստամբությունը ճնշելու նպատակով։ Այդ ջոկատների անդամները անվանվում էին բաշիբոզուկներ և մեծապես նմանվում էին դեռևս միջնադարում թուրքական նվաճումների ժամանակ օգտագործված ջոկատներին։ Նրանց դաժանությունների մասին լայնորեն գրեց ժամանակի եվրոպական մամուլը։

«Թուրքերի գաղափարը հետևյալն էր. կոտրել բուլղարների ոգին և այդպիսով կանխել ապստամբությունը», - գրում էր բրիտանացի ականատեսը⁴³¹։ Իր երկու նամակներում, որոնք տպագրվել էին լոնդոնյան «Դեյլի Նյուս» օրաթերթում, նա նշել էր 60 բուլղարական գյուղերի անունները, որոնց բնակչությունը ոչնչացվել էր։

Առավել արյունալի կոտորածը, որն ուղեկցվել է ահավոր վայրագություններով, տեղի է ունեցել 1876 թ. մայիսի առաջին մի քանի օրվա ընթացքում բուլղարական Բաթաք գյուղում, որի զոհ է գնացել շուրջ ութ հազար խաղաղ բնակիչ, մեծմասամբ, կանայք, երեխաներ և ծերեր։ Ամերիկացի արևելագետ – ցեղասպանագետ Ջեյմս Ռիդը, որը հատուկ ուսումնասիրել է Բաթաքի կոտորածը, հանգել է եզրակացության, որ այն ուներ ցեղասպանական բնույթ⁴³²։

Պատահական չէ, որ առաջին ցեղասպանական ծրագիրը ընդունվել է մայրաքաղաքում Բաթաքի սպանդից շուրջ երկու շաբաթ հետո։ Ցեղասպանական ծրագրի քննարկումը և ընդունումը կառավարության կողմից հնարավոր էր դարձել միայն այն բանից հետո, երբ սոֆթաների զինված ջոկատների ճնշման ներքո, որոնք գրավել էին մայրաքաղաքի կենտրոնական փողոցները և պահանջում էին մտցնել Միդատին կառավարության կազմի մեջ, սուլթանը մայիսի 12-ին ստիպված էր եղել ցրել հին կառավարությունը և կազմել նորը՝ Մեհմետ Ռյուշդի փաշայի ղեկավարությամբ⁴³³, որի մեջ ընդգրկվել էր նեկ շաբաթ անց է Միդատը՝ դառնալով նրա փաստացի ղեկավարը։

⁴²⁸ Տե՛ս այդ մասին վերևում։

⁴²⁹ E. Pears, *Forty Years in Constantinople*. London, MCMXVI (1916), p. 16.

⁴³⁰ Vice Consul J. H. Dupuis to Sir H. Elliot, Adrianople, October 13, 1875. - *British documents on foreign affairs: reports and papers from the foreign office confidential print*. General editors: Kenneth Bourne and D. Cameron Watt. Part I: from the mid-nineteenth century to the First World War. Series B: the Near and Middle East, 1856-1914. Editor: David Gillard. Volume 2: the Ottoman Empire revolt in the Balkans, 1875 -1876. Bethesda, 1984, p. 135.

⁴³¹ E. Pears, *Forty Years in Constantinople*. London, MCMXVI (1916), p. 17.

⁴³² J. M. Reid, *Batak 1876: A massacre and its significance*. - *Journal of genocide research* (2000), 2(3), p. 375-409.

⁴³³ H. Maynard to H. Fish, 1876, December 26, Constantinople. - *Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1877*. Washington, 1877, p. 550.

Այդ օրվանից սկսած Միդիատ փաշան ստանձնեց որոշիչ դեր կայսրության ներքին կյանքում և, ըստ երևույթին, իր գործունեությամբ նպաստեց նախացեղասպանական իրավիճակի առաջացմանը:

Միդիատը համարվում է Թուրքիայի նոր շրջանի պատմության ամենադրական և առաջադեմ գործիչներից մեկը, ազատական և արևմտամետ հայացքների տեր անհատականություն, որի քաղաքագետի տաղանդի շնորհիվ հնարավոր եղավ հռչակել օսմանյան առաջին սահմանադրությունը:

Սակայն նրա գործունեությունը Դանուբի վիլայեթում, նպատակաուղղված բուլղարներին «միծուլելուն», մանավանդ այն անասելի դաժանությունը, որը նա ցուցադրել էր ճնշելով բուլղարների ապստամբությունները, ստիպում են չհամաձայնվել այդ գնահատականների հետ: Իրականում, նա Օսմանյան կայսրության փլուզման շրջանի բարձրաստիճան թուրք պաշտոնյա էր, որը տարբերվում էր մյուսներից ոչ թե իր առաջադեմ հայացքներով, այլ աչքի էր ընկնում առաջին հերթին իր դաժանությամբ ու խորամանկությամբ, որը հասնում էր բացարձակ ցինիզմի: Միաժամանակ, նա աչքի էր ընկնում համակարգված մտածելակերպով և հետևողականությամբ՝ այնպիսի հատկություններով, որոնք հազվադեպ էին պատահում օսմանյան կառավարող վերնախավի շրջանում: Միդիատ փաշայի հայացքների մասին պատկերացում կարելի է ստանալ նրան անձամբ ճանաչող ֆրանսիացի Բենուա Բրունսվիկի գրքից, որտեղ հեղինակը գրում է, թե իրականում Միդիատը այն կարծիքին էր, որ թուրք ղեկավարների ներկա սերնդի «նախնիները սխալվեցին՝ չստիպելով մեր հպատակներին ... ընդունել իսլամ: Այդ պետք է սկսել: Այսուհետև պետք է օգտագործել բոլոր հնարավորությունները, որպեսզի փոխենք ի օգուտ մեզ երկու կրոնների [ի նկատի ունի իսլամը և քրիստոնեությունը] – Ռ. Ս.] միջև գոյություն ունեցող թվային հարաբերակցությունը»⁴³⁴:

Միդիատը այն գործիչն էր, ով որոշիչ դերակատարում ունեցավ օսմանյան Թուրքիայում ցեղասպանության՝ որպես պետական քաղաքականության որդեգրման մեջ: Նրանով է սկսում թուրքական պատմության արդուլիսանիդների ու թալեաթների շարքը:

3. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՈՒՋԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Մեր գրքի առաջին, տեսական, մասում արդեն տվել ենք նախացեղասպանական իրավիճակի բնորոշումը: Համաձայն այդ բնորոշման, երկրում ստեղծված քաղաքական իրավիճակը ձեռք է բերում նախացեղասպանական բնույթ այն դեպքում, երբ արդեն առկա է ցեղասպանություն իրագործելու ծրագիր:

Ինչպես ցույց է տրվում ստորև, նման ծրագիր ընդունվել է օսմանյան կառավարության կողմից 1876 թ. մայիսին: Այդ ծրագրի բնորոշմանը դեռևս չի հայտնաբերվել՝ մեր ձեռքի տակ է միայն հաղորդագրություն նրա հիմնական կետերի մասին, որը մենք հայտնաբերել ենք Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվում և որի պատճենը գտնվել է այդ հաղորդագրության հեղինակի՝ ռուս դիվանագետի անձնական արխիվում: Այդ հաղորդագրության հիմնական կետերի համադրումը մեզ հայտնի այլ փաստերի հետ հաստատում է նրա լրատվության հավաստիությունը:

Այդ հաղորդագրության հեղինակը Փիլիպոլիսի ռուսական փոխ հյուպատոս Նայդեն Գերովն էր: 1876 թ. մայիսի կեսերին, երբ նա ժամանակավորապես գտնվում էր մայրաքաղաքում, նրան հաջողվել էր օգտագործելով իր անձնական կապերը կառավարության անդամներից մեկից ստանալ կարևոր լրատվություն, որը միանշանակորեն հաստատում էր տեղեկությունները բուլղարներին բնաջնջելու ծրագրի գոյություն ունենալու մասին և լույս էր սփռում նրա որոշ կարևոր մանրամասների վրա: Այդպիսով՝ հայտնի էր դարձել առաջին ցեղասպանության ծրագրի մասին, որի մանրամասն բնութայանը մենք կանդրադառնանք ստորև

Առաջին ցեղասպանական բնույթի պետական ծրագիրն ուղղված է եղել բուլղարների դեմ և, ըստ էության, հակազդեցություն էր բուլղարների ապրիլյան ապստամբությանը: Այդ ծրագիրը գիտական շրջանառության մեջ է դրվել մեր կողմից⁴³⁵:

⁴³⁴ Ռ. Սաֆրաստյան, Թուրքական իշխանությունների հակազդեցությունը 1876 թ. բուլղարական ապստամբությանը. նոր մտտեցում. - Արևելագիտական ժողովածու, հատոր V, Երևան, 2004, էջ 310-318:

⁴³⁴ B. Bruswick, La vérité sur Midhat Pacha. Paris, 1877, p. 4.

Այն, որ նման ծրագիր պիտի գոյություն ունենար, մեզ հուշել են համեմատաբար վերջերս հրատարակված անգլիական դիվանագիտական փաստաթղթերը, որոնք մինչև այդ համարվել են կոնֆիդենցիալ և տեղ չեն գտել հայտնի «Կապույտ գրքերում»: Այսպես օրինակ՝ Ադրիանապոլսի բրիտանական փոխխուպատուսի ստացած տեղեկության համաձայն՝ կառավարության կողմից հանձնարարականներ են ուղարկվել տեղական իշխանություններին, որոնցով ցուցում է տրվել նրանց «ոչնչացնել բուլղարներին» և սպանել վեց տարեկանից ցածր բոլոր արու մանուկներին: Այդ միջոցառումներով, նպատակ է դրվել «բնաջնջել ցեղը (race) և ստիպել մնացածին արտագաղթել»⁴³⁶: Այդ կարևոր տեղեկության աղբյուրն է եղել օսմանյան բյուրոկրատիայի ազգությամբ ալբանացի մի ներկայացուցիչ: Այն թվագրված է մայիսի 19-ով: Ուշագրավ է, որ դրանից մի քանի օր առաջ բուլղարացի քաղաքական գործիչ ու հրապարակախոս Թոդոր Բուրմովը, լավ տեղեկացված լինելով բուլղարական ապրիլյան ապստամբության ճնշման նպատակով թուրքական իշխանությունների ձեռնարկած գործողությունների մանրամասների մասին, հանգել էր եզրակացության, թե «դժբախտ ազգաբնակչության կոտորածը տեղի է ունենում սուլթանական կառավարության նախապես մտածված ծրագրով»⁴³⁷: Նա այդ ժամանակ գտնվում էր Կ. Պոլսում ու կատարում էր ռուսական դեսպանատան թարգմանչի պարտականությունները: Պարզ է, որ իր այդ դիտարկումը նա կիսել է նաև դեսպան կոմս Ն. Իգնատևի հետ, սակայն արխիվային փաստաթուղթ այդ մասին չի պահպանվել:

⁴³⁶ Vice Consul J. H. Dupuis to Sir H. Elliot, May 19, 1876, Adrianople. – British documents on foreign affairs: reports and papers from the foreign office confidential print. General editors: Kenneth Bourne and D. Cameron Watt. Part I: from the mid-nineteenth century to the First World War. Series B: the Near and Middle East, 1856-1914. Editor: David Gillard. Volume 2: the Ottoman Empire: revolt in the Balkans, 1875-1876. Bethesda, 1984, p. 234.

⁴³⁷ St'ս նրա նամակը պատմաբան պրոֆեսոր Նիլ Պոպովին, որը միաժամանակ Մոսկովյան սլավոնական կոմիտեի քարտուղարն էր. Письмо болгарского журналиста Т. Бурмова Н. А. Попову, 1876г. мая 15. - Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875-1877. Под ред. С. А. Никитина, В. Д. Конобеева, Ал. К. Бурмова, Н. Т. Тодорова. Москва, 1961, с. 222.

Մեր կողմից շրջանառության մեջ դրվող արխիվային փաստաթուղթը ոչ միայն հաստատում է օսմանյան պաշտոնյայի հայտնած տեղեկությունը և բուլղարացի գործի իրադրության վերլուծության արդյունքը, այլ նաև նշում է ցեղասպանական բնույթի մի շարք կետեր: Այն իրենից ներկայացնում է օսմանյան կառավարության նիստի արդյունքում ընդունված որոշման շարադրանք: Ստորև ներկայացնում ենք այդ հաղորդագրությունը.

«Թուրքական կառավարությունը որոշում է ընդունել ապստամբության ճնշման պատրվակով ոչնչացնել լիովին բուլղարական այն... բնակավայրերը, որոնց բնակիչները առավել առաջընթաց են ապրել, իսկ մնացյալ գյուղերը ու քաղաքները ավերել բաշիրոզուկների ասպատակությունների միջոցով, քաղաքային բնակչության լավագույն ներկայացուցիչներին ոչնչացնել այս կամ այն ձևով, բնաջնջել ողջ մտավորականությանը և կենդանի չթողնել Ռուսաստանում կրթություն ստացած ոչ մի ուսուցչի, փակել ուսումնարանները և այնպես ճնշել ժողովրդին, որ նա հնարավորություն չունենա երեկից վերականգնվի ու վերադառնա ներկայիս վիճակին, երբ նա վտանգ է ներկայացնում թուրքերի տիրապետության համար, և վերջապես, թուրքացնել նրա մի մասին, որ էլ ավելի թուլացնի նրան»⁴³⁸:

Մինչդեռ ռուսական դիվանագիտությանը հաջողվել էր պարզել, որ բացի Միդիատից այդ ծրագրի հեղինակությունը պատկանում էր նաև Յյուսեյն Ավնի փաշային, իսկ վերջնական որոշումը ընդունվել էր կառավարության նիստի ընթացքում⁴³⁹: Ռուս դիվանագետները հայտնում էին, որ կառավարության որոշումը վերաբերում էր ոչ միայն բուլղարների բնաջնջմանը, այլ նաև Բալկանյան թերակղզու ողջ սլավոնական ազգաբնակչության «սիստեմատիկ կոտորելուն»⁴⁴⁰:

⁴³⁸ Вице-консул в Филипполе - Послу в Константинополе, 17 мая/29 мая 1876 г., копия, прил.к предыд. – АВПРИ, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 159 об – 160.

⁴³⁹ Вице-консул в Филипполе - Послу в Константинополе, 17 мая/29 мая 1876 г., копия, прил.к предыд. – АВПРИ, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л. 159об.

⁴⁴⁰ Из донесения Н. Даскалова (Варна) генеральному консулу России в Русе В. Т. Кожевникову, 24 августа 1876 г. – По следите на

Այդ ամիսներին Կ. Պոլսում գտնվող երիտասարդ ռուս թուրքագետ Վասիլի Սմիռնովը⁴⁴¹, հենվելով «ստամբուլյան հարաբերություններին լավ ծանոթ մարդկանցից» ստացված տեղեկությունների վրա, տալիս է երեք թուրք պետական գործիչների անունները, որոնք կազմում էին, ըստ իր բնութագրման, «բուլղարական սարսափների դժոխքային երյակը»։ Նրանք էին բացի Միդիատ փաշայից այդ տարիների խոշոր պետական գործիչ ու ճանաչված բառարանագետ Ահմեդ Վեֆիք փաշան եւ «նոր օսմանցիների» շարժման առաջնորդներից Ալի Սուավին⁴⁴²։ Նրանք, ըստ Սմիռնովի, նպատակադրվել էին «սխտեմատիկորեն ոչնչացնել իրենց համար ատելի բուլղարներին և ... համառորեն հետևում են իրենց ծրագրին...»:

Շարունակելով հետաքրքրվել այդ խնդրով ռուսական դիվանագետները կարողացան բացահայտել այդ ցեղասպանական ծրագրի մի շարք այլ մանրամասներ: Համաձայն Ռուսե քաղաքի ռուսական գլխավոր հյուպատոս Վ. Ֆ. Կոժնիկովի ստացած տեղեկությունների՝ կայսրության մայրաքաղաքում Միդիատ փաշայի ղեկավարությամբ գործում է գաղտնի կոմիտե՝ «Սյուփյուրգեի» («Ավել») անվանումով: Ըստ այդ տեղեկության՝ «Սյուփյուրգեի» թիրախը միայն բուլղարները չէին, նրա նպատակն էր ոչնչացնել երկրի ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը⁴⁴³:

Այդ ոճրագործ խմբակի գոյության մասին ռուսական դիվանագիտությանը հայտնի էր դարձել 1876 թ. նոյեմբերին: Սակայն, ըստ

насилието: Документи и материали за налагане на ислам. Част първа. Съставител Петър Петров, София, 1987, с. 184.

⁴⁴¹ Վերադառնալով հայրենիք, Վ. Սմիռնովը ծավալեց բեղմնավոր գիտամանկավարժական գործունեություն և դասվեց ռուսական թուրքագիտության ճանաչված դեմքերի շարքին: Նրա գիտական գործունեության ու պատմագիտական հայացքների մասին տես. А. С. Твертунова, В. Д. Смирнов - историк Турция (К 125-летию со дня рождения). - Советская тюркология, 1971, 4, с. 103 -114.

⁴⁴² В. Смирнов, Официальная Турция в лицах. - Вестник Европы, 1878, кн. 1, с. 311.

⁴⁴³ В. Ф. Кожевников - Н. П. Игнатъеву, 12 ноября 1876 г., Приложение. - Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875-1877. Под ред. С. А. Никитина, В. Д. Конобеева, Ал. К. Бурмова, Н.Т. Тодорова. Москва, 1961, с. 501.

երևութին, այն ստեղծվել էր ավելի վաղ, դեռևս այդ նույն տարվա մայիսին, երբ կառավարությունը Միդիատի և Հյուսեյն Ավնիի ճնշման ներքո ընդունել էր վերոհիշյալ որոշումը բուլղարներին ոչնչացնելու մասին: Հետագայում, Հյուսեյն Ավնիի սպանությունից հետո (նույն թվականի հունիսի 15-ին) այն համալրվել էր նոր անդամներով (հայտնի են Վեֆիք փաշայի և Ալի Սուավիի անունները), սակայն, ինչպես վկայում է հաղորդագրությունը «Սյուփյուրգեի» մասին, Միդիատը պահպանել էր իր ղեկավար դիրքը:

Հանցավոր քառյակի անդամներից միայն Վեֆիքը խուսափեց բռնի մահից: Միդիատը տարիներ անց սպանվեց իր ոխերին թշնամի սուլթան Աբդուլ Համիդի հրամանով, Ավնին այդ տխրահռչակ կառավարության նիստից մեկ ամիս չանցած սպանվեց մահափորձի հետևանքով, իսկ Սուավին սպանվեց երկու տարի անց՝ Աբդուլ Համիդի դեմ ապստամբության ընթացքում:

Անդրադառնանք փաստաթղթին: Դժվար չէ եզրակացնել, որ վերը նշված կետերի ընդհանրությունն իրենից ներկայացնում է, ըստ էության, ոչ միայն ապստամբության ճնշման ծրագիր, այլև բուլղարների հիմնովին բնաջնջման ծրագիր: Այստեղ նշված են և՛ գլխավոր նպատակը, և՛ այն իրականացնելուն միտված որոշակի գործողություններ: Այդ գործողությունները հետևյալն էին.

- ոչնչացնել անհնազանդություն ցուցաբերող բուլղարական բնակավայրերի բնակիչներին և հավասարեցնել նրանց հողին,
- մնացյալ բուլղարական բնակավայրերը ենթարկել բաշիբոզուկների ասպատակություններին,
- «այս կամ այլ միջոցով» ոչնչացնել բուլղարների քաղաքական, տնտեսական ու ինտելլեկտուալ ընտրանուն,
- այս քաղաքականության հիմնական թիրախը դարձնել մտավորականությանը, մասնավորապես, Ռուսաստանում կրթություն ստացած ուսուցիչներին,
- փակել բուլղարական ուսումնարանները,
- հնարավորինս ուժեղացնել բուլղարների թուրքացման գործընթացը:

Ժամանակակից ընկալումներից ելնելով՝ այս գործողությունների ընդհանրությունը բացահայտում է պետության դիտավորությունը

բնաջնջել որոշակի էթնիկական խումբ և կարող է բնութագրվել որպես ցեղասպանություն: Քանի որ, նրա նպատակն է բնաջնջել այդ խմբին իր հայրենիքի տարածքի վրա, ապա այն կարելի է դիտարկել որպես հայրենագրկման նպատակով իրականացվելիք ցեղասպանության:

Ծրագիրը չհաջողվեց իրականացնել, բանի որ 1876 թ. քաղաքական առումով բացառիկ անկայուն տարի էր: Միայն այն փաստը, որ այդ տարվա ընթացքում Օսմանցիների գահը զբաղեցրել են հաջորդաբար երեք սուլթան, շատ բանի մասին է խոսում: Տարին ավարտվեց սահմանադրության հռչակումով, ինչը, փաստորեն, դարձավ երկընտրանք ցեղասպանության քաղաքականության: Միդհատ փաշան և նրա համախոհների նեղ խմբակը, որոնք այդ տարվա ընթացքում հանդիսանում էին Օսմանյան կայսրության հիմնական կառավարող ուժը, վերջին պահին, հաշվի առնելով նաև Մեծ Բրիտանիայի դեսպանի կարծիքը, նախապատվությունը տվեցին կայսրության տարածքային ամբողջականության պահպանման սահմանադրական վերափոխումների ճանապարհին:

Միաժամանակ, այդ ամիսների ընթացքում կայսրության քաղաքական կյանքում առկա էր իրադարձությունների զարգացման մեկ այլ միտում, որը հնարավոր էր դարձնում ցեղասպանության ծրագրի իրականացմանը նպատակաուղղված քայլերի ձեռնարկումը կառավարության կողմից այն ժամանակահատվածում, երբ նրա ղեկավարն էր Միդհատ փաշան: Այդ միտումի գոյությունը կարողացել էր շոշափել Ռուսաստանի դեսպան կոմս Իգնատևը: Հոկտեմբերին նա հաղորդում էր կանցլեր Ալեքսանդր Գորչակովին, «որ լիովին հիմնավորված է վախը ներքին կոտորածներից»⁴⁴⁴:

Երկրում ստեղծված նախացեղասպանական իրավիճակի կարևոր առանձնահատկությունն էր հակաքրիստոնեական տրամադրությունների կտրուկ և անկասելի աճը ողջ 1876 թ. ընթացքում: Այս երևույթը զգալի չափով արդյունք էր մահմեդական հոգևորականության հակաքրիստոնեական քարոզչության, որը գնալով սաստկանում է: Այդ փաստը արժանագրել է ժամանակի մանուլը⁴⁴⁵:

Հետզհետե այն ընդունում է քրիստոնյաներին ֆիզիկական բնաջնջման կոչերի ձև: Այդ փաստը չէր վրիպել ռուսական դիվանագետների ուշադրությունից: «Խոջաները, - գրում էր դեսպան Իգնատևը ցարին, - սկսում են բացեփրաց հանդես գալ «զյավուրներին» ոչնչացնելու կոչերով»⁴⁴⁶:

Նկատվում է գործողությունների և քարոզչության որոշակի համակարգում բարձրագույն իշխանությունների և մահմեդական հոգևորականության գործողությունների միջև: Սակայն տարակուսանք չի հարուցում, որ նախաձեռնությունը պատկանում էր կառավարությանը, և պատճառը ոչ միայն և ոչ այնքան մահմեդական մոլեռանդությունն էր, որը դարեր շարունակ գոյություն ուներ Օսմանյան կայսրության մահմեդական ազգաբնակչության միջավայրում, այլ երկրի բարձրագույն իշխանությունների՝ նոր քաղաքականությունը բուլղարների և այլ քրիստոնյաների նկատմամբ: Այս կարևոր հանգամանքը ընդգծել է դեռևս այդ իրադարձությունների մեզ անհայտ ժամանակակիցը՝ դեսպան Իգնատևի անձնական ֆոնդում այլ ձեռագրերի հետ պահվող անստորագիր վերլուծական տեղեկագրի հեղինակը: Նա գրում է. «Առաջներում քրիստոնյաներին ճնշում ու ջարդում էին մահմեդականները, այժմ նրանց ճնշում ու ջարդում է կառավարությունը»⁴⁴⁷: Այդ տեսակետը կիսում էր նաև Իգնատևը: Պետերբուրգ ուղարկած իր զեկուցագրերից մեկում նա ընդգծում է, որ ուժեղացող մահմեդական մոլեռանդության պատճառը թուրքական կառավարման համակարգի ներկայացուցիչների մեծ մասի գործողություններն են՝ ամենավերևում գտնվողից մինչև ամենաստորինը⁴⁴⁸:

Փաստերը վկայում են, որ 1876 թ. վերջին ամիսներին թուրքական իշխանությունները պատրաստվում էին կազմակերպել լայնածավալ կոտորած նաև հայ ժողովրդի դեմ: Արդեն հոկտեմբերի

⁴⁴⁴ Н. П. Игнатъев – А. М. Горчакову, Константинополь, 13/25 октября 1876 г. - АВПРИ, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 27.

⁴⁴⁵ Տե՛ս, օրինակ, Մեղու Հայաստանի, 3 հուլիսի 1876:

⁴⁴⁶ Н. П. Игнатъев - Царю, Константинополь, 21 мая/2 июня 1876 г. - АВПРИ, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л. 153 об.

⁴⁴⁷ Записка (без подписи) "О смысле кризиса, происходящего в настоящее время в Турецкой империи и о влиянии происходящих в ней реформ на ее государственную строй". - Государственный Архив РФ, ф. 730 (фонд Н. П. Игнатъева), оп. 1, ед. хр. 706.

⁴⁴⁸ Н. П. Игнатъев - А. М. Горчакову, Константинополь, 18/30 октября 1876 г. - АВПРИ, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 150.

սկզբներին հայկական մամուլը արձանագրեց հայերի դեմ ուղղված մահմեդական մոլեռանդության ուժեղացման փաստը, միաժամանակ զգուշորեն ենթադրելով, որ այդ տեղի է ունենում տեղական իշխանությունների թողտվության պայմաններում⁴⁴⁹: Նույն ժամանակահատվածում թուրքական մամուլը, մասնավորապես կառավարության շեփորը հանդիսացող «Բասիրեթ» լրագիրը, մեղադրում է հայերին, թե իբր նրանք, Պոլսի պատրիարքի ղեկավարությամբ, նախապատրաստում են զինված ապստամբություն⁴⁵⁰, այդպիսով՝ հող նախապատրաստելով նրանց կոտորածի համար:

Ռուսական դիվանագիտական աղբյուրները հնարավորություն են տալիս պատկերացում ստանալու այդ ծրագրի որոշ մանրամասների մասին: Հոկտեմբերին Գորչակովին հղած իր զեկուցագրերից մեկում Իզնատը, հենվելով Պոլսո հայ պատրիարքի կողմից իրեն հայտնած տեղեկության վրա, գրում է, որ Միդիատը մեղադրել է հայերին, թե իբր նրանք մեծ քանակությամբ զենք են գնել արտասահմանում և նախապատրաստում են ապստամբություն Ռուսաստանի հետ սահմանամերձ շրջաններում, որպեսզի «ապահովեն Ռուսաստանի միջամտությունը»⁴⁵¹:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կոտորածը իրականացվելու էր հենց այդ պատրվակով: Նմանությունը «երիտասարդ» կամ «նոր օսմանցիների» առաջնորդի և երիտթուրքերի պարագլուխների գործելակերպի միջև ակնառու է: Հետաքրքիր է նշել, որ Ռուսաստանի գործոնը մեծ դեր է խաղացել նաև Միդիատի հակաբուլղարական ծրագրերում: Իզնատի զեկուցագրերից մեկում բերված են Միդիատ փաշայի հետևյալ խոսքերը՝ ուղղված բուլղարների ներկայացուցիչներին. «Դուք ձեր հույսը դնում եք Ռուսաստանի վրա, սակայն երբ նա վերջիվերջո կգա, նա կգտնի միայն ավերակներ»⁴⁵²:

⁴⁴⁹ Մեղու Հայաստանի, 2 հոկտեմբերի, 1876:

⁴⁵⁰ Այդ մասին հաղորդում էր նույն «Մեղու Հայաստանի» լրագիրը իր հոկտեմբերի 23-ի համարում, հղելով Պոլսո "Նորագիրը":

⁴⁵¹ Н. П. Игнатъев - А. М. Горчакову, Константинополь, 18/30 октября 1876 г. - АВПРИ, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 137об - 138.

⁴⁵² Н. П. Игнатъев - Н. К. Гурсу, 24 мая/5 июня 1876 г. - АВПРИ, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л. 153 об.

Նոյեմբերի վերջերին Կ. Պոլսի ռուս դեսպանը մեկ անգամ ևս հայտնեց Պետերբուրգին, թե հյուպատոսները հաղորդում են, որ Օսմանյան կայսրության ողջ տարածքի վրա շարունակվում է քրիստոնյաների «աղաղակող ճնշումը», ընդ որում՝ և ոչ միայն սլավոնների, այլ նաև «Փոքր Ասիայի քրիստոնյաների»⁴⁵³:

Ահա այս պայմաններում էր, որ տեղի ունեցավ Վանի՝ դեկտեմբերի 1-ի հայտնի հրկիզումը՝ կազմակերպված տեղի թուրքական իշխանությունների կողմից: Այդ իրադարձությանը հայրենական պատմագիտությունը բազմիցս անդրադարձել է, սակայն դիտարկել է այն որպես մեկուսի երևույթ: Մինչդեռ, ինչպես վկայում է իր կոնֆիդենցիալ զեկուցագրում Իզնատին վերջինիս գաղտնի գործակալ Պ. Անինոն, որը Միդիատի օգնականն էր և անձնական թարգմանիչը և, այդպիսով, լավատեղյակ էր երկրի անցուդարձի, այդ թվում նաև այնպիսի իրադարձություններից, որոնք իշխանությունները պահում էին գաղտնի, համարյա միաժամանակ թուրքական կանոնավոր բանակը իրականացրեց «զազանություններ Յոզղատի հայկական գյուղերում»⁴⁵⁴: Անտարակույս, բանակը ստացել էր համապատասխան հրաման: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ հայերի դեմ նախապատրաստվող կոտորածի վտանգը բավական իրական էր:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ 1876 թ. Օսմանյան կայսրությունը մոտ էր կանգնած ժամանակակից հասկացողությամբ լայնածավալ ցեղասպանություն իրականացնելու գործընթաց սկսելուն: Առկա էին ոճրագործը՝ ի դեմս պետական բարձրաստիճան գործիչներից բաղկացած մի խմբակի, զոհը՝ բուլղարները, ցեղասպանություն իրականացնելու դիտավորությունը՝ արտահայտված այդ ոճրագործ խմբակի կողմից նախապատրաստած ցեղասպանության ծրագրի տեսքով: Նախատեսվում էր, բարենպաստ պայմանների դեպքում, իրականացնել նմանատիպ գործողություններ նաև կայսրության այլ քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես, հայերի դեմ: Սակայն բարենպաստ պայմաններ չստեղծվե-

⁴⁵³ Н. П. Игнатъев - А. М. Горчакову, 18/30 ноября 1876 г. - АВПРИ, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 539-539 об.

⁴⁵⁴ П. Анино - Н. П. Игнатъеву, 1876 г. - Государственный Архив РФ, ф. 730 (фонд Н. П. Игнатъева), оп. 1, ед. хр. 917.

ցին: Իր էությանը ցեղասպանական ծրագիրը իրականացվեց միայն մասամբ: Բուլղար ժողովուրդը փրկվեց զանգվածային բնաջնջումից: Այլ խոսքերով՝ նախացեղասպանական իրավիճակը չվերածեց ցեղասպանության: Դա տեղի ունեցավ ավելի ուշ, սուլթան Աբդուլ Յամիդի անմիջական ղեկավարությամբ, երբ 1890-ականների լայնածավալ կոտորածներով սկիզբ առավ հայոց ցեղասպանության՝ շուրջ երկու տասնամյակ տևած գործընթացը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ՝ ՈՒՂՂԱԾ ՅԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՍ

1. ՅԱՄԻԴՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԹՈՒՐԲԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Աշխատության սույն հատվածում քննության կառնվեն ցեղասպանության պետական ծրագրերը, որոնք ստեղծվել են Օսմանյան կայսրության գոյության վերջին տասնամյակների ընթացքում և որպես թիրախ ունեցել են հայ ժողովուրդը:

Առաջին հակահայկան ցեղասպանական բնույթի ծրագիրը ստեղծվեց 19-րդ դարի 90-ականների կեսերին: Նրա իրականացումը հանգեցրեց Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածների, որոնց զոհ գնացին շուրջ 300 հազար մարդ: Այդ կոտորածների՝ պետության կողմից կազմակերպված լինելու մասին պահպանվել են սպանդի ականատեսների բազմաթիվ վկայություններ:

Կան վկայություններ նաև այն մասին, որ որոշումները ընդունվել են սուլթանական պալատում, որը, փաստորեն, իշխանության բարձրագույն մարմինն էր: Աբդուլ Յամիդի անձնական քարտուղարը իր հուշերում գրում է, որ սուլթանը որոշել էր «հայերի դեմ վարել բռնությունների քաղաքականություն»⁴⁵⁵: Յամաձայն վկայությունների՝ Իզզեթ փաշան, որը նշանակվել էր սուլթանի կողմից պատասխանատու այդ քաղաքականության համար, գտնում էր, որ Յայկական հարցին կարելի է վերջ տալ՝ վերացնելով հայերին⁴⁵⁶: Նմանատիպ արտահայտությունների հանդիպում ենք 1915 թ. թուրքական պաշտոնական վավերագրերում: Կային նմանություններ նաև նպատակներն իրականացնելու ճանապարհների մեջ: Տեղե-

⁴⁵⁵ [Tahsin Paşa], Sultan Abdülhamid: Tahsin Paşanın Yıldız hatıraları. İstanbul, 1990, s. 182.

⁴⁵⁶ T. Akçam, Siyasi kültürümüzde zulüm ve işkence, İstanbul, 1992, s. 301.

կությունները դրա մասին բազմաթիվ են, այդ թվում նաև վավերագրական բնույթի ականատեսների վկայությունները⁴⁵⁷։

Արդուլ Չամիդի հակահայկական քաղաքականության ցեղասպանական բնույթը տարակուսանք չի առաջացնում։ Չամենատելով 1876 թ. հետ՝ կարելի է հանգել եզրակացության, որ անցած երկու տասնամյակի ընթացքում թուրքական պետական մեքենան ավելի հմտացավ խաղաղ բնակչության զանգվածային սպանդ կազմակերպելու գործում։ Սակայն այն հանգամանքը, որ ցայսօր չի հայտնաբերվել համիդյան իշխանությունների ցեղասպանական ծրագրերը արտացոլող որևիցե պաշտոնական փաստաթուղթ, զրկում է մեզ հնարավորությունից ավելի մանրամասն վերլուծելու այդ շրջանի պետական քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության գործընթացի շրջանակներում։

Անցնենք երիտթուրքերի իշխանության շրջանում ցեղասպանության պետական ծրագրի քննությանը։ Նրա թիրախը նույնպես հայ ժողովուրդն էր։ Այն գոյություն է ունեցել ոչ թե մեկ, այլ երեք փաստաթղթի տեսքով։ Այդ վավերագրերի համար ընդհանուր է ինչպես ցեղասպանության իրականացման դիտավորության, այնպես էլ այդ հանցագործությունը իրագործելու կոնկրետ միջոցների առկայությունը։

Այդ փաստաթղթերից առաջինը իրենից ներկայացնում է Առաջին աշխարհամարտի տարիների Օսմանյան կայսրության մի խումբ ղեկավար գործիչների՝ Թալեաթի ղեկավարությամբ, գաղտնի հանդիպման ժամանակ ընդունված որոշումների գրառում և հայտնի է որպես «10 պատվիրաններ»։

Չամբությանը նրա գոյության մասին հայտնի է դարձել 1919 թ. Կ.Պոլսի հայկական լրագրերի հրապարակումներից, որոնք տպագ-

⁴⁵⁷ Տես, օրինակ, The Massacre at Egin: How it was planned and carried out. By Mrs. Rendel Harris. From the "Daily News", December 11th, 1896. - Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ 411, Գ.Փ.Բ. ԼսԿ, ցուցակ 1, գործ 230, The Sultan and the Armenians: an official document. Reported from the "Manchester Guardian", December 13th, 1897. - ՀԱԱ, ֆոնդ 411, Գ.Փ.Բ. ԼսԿ, ցուցակ 1, գործ 231:

րել է նրա հայերեն թարգմանությունը⁴⁵⁸։ Հետագայում այն «Վերջին լուր» լրագրից արտատպել է իր մենագրություններից մեկում հայտնի պատմաբան Լեոն⁴⁵⁹ և ավելի ուշ՝ ֆրանսահայ պատմաբան Արթուր Բեյլեյանը իր կողմից հրատարակված ֆրանսիական արխիվային փաստաթղթերի ժողովածուի ներածությունում հրապարակել է նրա ֆրանսերեն թարգմանությունը⁴⁶⁰։ Ամերիկահայ ցեղասպանագետ Վահագն Դադրիանը անցյալ դարի վերջերին մանրակրկիտ հետազոտեց անգլիական արխիվները և բացահայտեց մի շարք կարևոր փաստեր՝ կապված փաստաթղթի ստեղծման ու հայտնաբերման հանգամանքների հետ⁴⁶¹։ Մասնավորապես, պարզվեց, որ խորհրդակցությանը ներկա են եղել ներքին գործերի նախարար և երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Թալեաթը, կենտրոնական կոմիտեի անդամներ և "հատուկ կազմակերպության" ղեկավարներ Բեհեմեդին Շաքիրը ու Նազըմը, ներքին գործերի հասարակական անվտանգության վարչության պետ Իսմաիլ Ջանփոլադը և օսմանյան բանակի զխավոր շտաբի քաղաքական վարչության պետ գնդապետ Սեյֆին։ Խորհրդակցությանը որպես քարտուղար ներկա է եղել ներքին գործերի նախարարության հետախուզական վարչության պետ գնդապետ Էսադը, որը և գրի է առել փաստաթուղթը։

Ստորև ներկայացնում ենք Վահագն Դադրյանի կողմից հրապարակված անգլերեն տեքստի թարգմանությունը։

⁴⁵⁸ «Ճակատամարտի» տպագրությունը տե՛ս Մ. Հովսեփյան, ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլը (1909 - 1924թթ.), Երևան, 2009, էջ 69:

⁴⁵⁹ Տես. 1934 թ. Փարիզում հրատարակված այդ աշխատության վերահրատարակումը. Լեո, Թիրքահայ յեղափոխութեան գաղափարաբանությունը, հատոր Բ. Երևան, 1994, էջ 151-152:

⁴⁶⁰ Վերջերս Հայաստանում հրատարակվեց այդ արժեքավոր ժողովածուի հայերեն թարգմանությունը, որտեղ ներկայացված է ծրագրի հայերեն թարգմանությունը։ Տես. Մեծ տեղությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում։ Հատոր I: Աշխատասիրությամբ Արթուր Պեյլեյանի։ Առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի։ Ֆրանսերենից թարգմանեց Վարուժան Պողոսյանը։ Երևան, 2005, էջ 27-28:

⁴⁶¹ V. N. Dadrian, The secret Young - Turk Ittihadist conference and the decision for the World War I Genocide of the Armenians. - Holocaust and genocide studies, 1993, Volume 7, No. 2, p. 173-201.

1. «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կանոնակարգի 3-րդ ու 4-րդ կետերն օգտագործելով՝ փակել բոլոր հայկական միությունները և ձերբակալել բոլոր նրանց, ովքեր երբևիցե գործել են կառավարության դեմ, և ուղարկել նրանց այնպիսի նահանգներ, ինչպիսիք են Բաղդադը կամ Մոսուլը, և ոչնչացնել նրանց ճանապարհին կամ տեղում:
2. Բռնագրավել գեներերը:
3. Համապատասխան ու հատուկ միջոցներով գրգռել մահմեդականների կարծիքը հայերի դեմ. այնպիսի վայրերում, ինչպիսիք են Վանը, Էրզրումը, Ադանան, որտեղ հայերը փաստորեն արդեն արժանացել են մահմեդականների ատելությանը, հրահրել կազմակերպված կոտորածներ՝ ինչպես ռուսները արեցին Բաքվում:
4. Էրզրումի, Վանի, Մամուրեթ ու Ազիզի ու Բիթլիսի նահանգներում թողնել գործադրումը ժողովուրդին, ի հակառակ դրան այնպիսի տեղերում, ինչպիսիք են Ադանան, Սըվասը, Բուրսան, Իզմիրը ու Չանկիրիան ակտիվորեն օգնել մահմեդականներին կանոնավոր զինված ուժերով (այսինքն՝ ժանդարմերիայով):
5. Իրականացնել միջոցառումներ՝ մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, հոգևորականներին և ուսուցիչներին ոչնչացնելու նպատակով՝ թողնելով աղջիկներին և երեխաներին՝ մահմեդականացնելու նպատակով:
6. Տեղահանել բոլոր նրանց ընտանիքներին, ում կհաջողվի փրկվել, և իրականացնել միջոցառումներ՝ նրանց բոլոր կապերը իրենց ծննդավայրերի հետ կտրելու նպատակով:
7. Զանի որ հայ պաշտոնյաները կարող են լինել լրտեսներ, նրանց լիովին հեռացնել բոլոր պետական գերատեսչություններից կամ պաշտոններից:
8. Օգտագործելով համապատասխան միջոցներ՝ սպանել բանակում գտնվող բոլոր հայերին՝ թողնելով դրա իրականացումը զինված ուժերին:
9. Բոլոր գործողությունները ամենուրեք սկսել միաժամանակ, այդպիսով ժամանակ չթողնելով նախապատրաստելու պաշտպանական միոցառումներ:

10. Ուշադրության դարձնել այս հրահանգների հույժ գաղտնի բնույթի վրա, դրանք չպիտի հայտնի լինեն 2-3 հոգուց ավելի մարդկանց⁴⁶²:

Փաստաթղթի վրա ամիս-ամսաթիվ նշված չէ: Անգլիացի սպան, որին էսաղը հանձնել է այդ փաստաթուղթը, թվագրել է այն մոտավորապես 1914 թ. դեկտեմբեր – 1915 թ. հունվար ամիսներով⁴⁶³: Ներկայումս հայտնի փաստերի լույսի ներքո այդ թվագրումը կարելի է համարել ընդունելի, քանի որ փետրվարին արդեն նշաններ կային, որ այդ ծրագրի կետերը սկսել են իրագործվել: Այսպես օրինակ՝ լավատեղյակ գերմանացի փոխգնդապետ Շտանգեն⁴⁶⁴ հայտնում էր, որ փետրվարի 10-ին «քաղաքական պատճառներով» սպանվել են օսմանյան բանկի հայազգի փոխտնօրենը և համարյա այդ նույն օրերին՝ Էրզրնջանի հայոց եպիսկոպոսը⁴⁶⁵: Դրանից մի քանի օր հետո սկսվեց հայազգի պաշտոնյաների վտարումը պետական ծառայությունից, օսմանյան բանակի հայ շարքայիների զինաթափումը և սպաների ձերբակալումը⁴⁶⁶: Բոլոր այդ գործողությունները հիշատակված էին մեր կողմից քննության առնվող փաստաթղթում:

Որոշ մասնագետների պնդմամբ՝ երիտթուրքերի կենտկոմը վերջնական որոշումը հայերի զանգվածային կոտորածը սկսելու մասին ընդունել է 1915 թ. նույն ամսի կեսերին⁴⁶⁷: Արամ Անտոնյա-

⁴⁶² V. N. Dadrian, The Secret Young-Turk Ittihadist conference and the decision for the World War I Genocide of the Armenians. – Holocaust and Genocide Studies, 1993, Volume 7, No. 2, p. 174–175.

⁴⁶³ V. N. Dadrian, The Secret Young-Turk Ittihadist conference and the decision for the World War I Genocide of the Armenians. – Holocaust and Genocide Studies, 1993, Volume 7, No. 2, p. 174.

⁴⁶⁴ Նա եղել է «Հատուկ կազմակերպության» ղեկավարներից: Stü. V. N. Dadrian, Documentation of the Armenian genocide in German and Austrian sources. New Brunswick, 1994, p. 110. Այստեղ Շտանգեի զինվորական կղչումը սխալմամբ նշված է գնդապետ:

⁴⁶⁵ Der deutsche Oberstleutnant Stange an die deutsche Militärmission in Konstantinopel, Erserum, den 23. August 1915, Geheim. - DE/PA-AA/BoKon/170, www.armenocide.net -1915-08-23-DE-013Geheim!

⁴⁶⁶ Ch. J. Walker, Armenia: the survival of a Nation. London, 1983, p. 200.

⁴⁶⁷ Ch. J. Walker, Armenia: the survival of a Nation. London, 1983, p. 200.

նի կողմից հրատարակված երիտթուրքական կուսակցության կենտկոմի նամակը, ուղղված Ադանայի վիլայեթում կենտկոմի պատասխանատու ներկայացուցիչ Ջեմալին, գրված է փետրվարի 18-ին և աննուղղակի կերպով հաստատում է այդ վարկածը, քանի որ այստեղ նշվում է, թե արդեն որոշում է ընդունվել բոլոր հայերին ամխնա ոչնչացնել և համապատասխան հրամանները այդ մասին կառավարության կողմից շուտով կուղարկվեն նահանգների կուսակալներին ու բանակի հրամանատարներին⁴⁶⁸: Այսպիսով՝ կարելի եզրակացնել, որ “10 պատվիրանները” արտացոլում են Հայոց ցեղասպանության վերաբերյալ վերջնական որոշում ընդունելու նպատակով նախապատրաստական աշխատանքի այն փուլը, երբ արդեն ստեղծվել էր կոնկրետ խնդիրների լուծմանը ուղղված գործողությունների ու միջոցառումների միասնական ու համակարգված ծրագիր:

Ծրագրի հեղինակներից Թալեաթի, Բեհաեդդին Շաքիրի ու Նազըմի մեղքը Հայոց ցեղասպանության կազմակերպման ու իրականացման մեջ վաղուց հայտնի ու փաստված է, և լրացուցիչ անդրադարձի անհրաժեշտություն չկա: Ջանփոլադի հայաջինջ գործունեությունը նույնպես լավ հայտնի է: Սասնավորապես, նա գլխավոր պատասխանատու է Կ.Պոլսի հայ մտավորականության և այլ խավերի ներկայացուցիչների ձերբակալությունների և աքսորի համար: Նույնիսկ իր կուսակիցների շրջանում նա աչքի էր ընկնում անմարդկային դաժանությամբ ու արյունարբու հակումներով և այդ պատճառով նրան անվանում էին “մարդասպան զինվոր”⁴⁶⁹: Անգլիացի սպա Էնդրյու Ռյանը, որը հարցաքննել է ձերբակալված երիտթուրք պարագլուխներին, խոստովանում էր, որ ինքը նրա նկատմամբ ավելի քիչ համակրանք է զգում, քան թե ուրիշների նկատմամբ⁴⁷⁰: Իսկ ահա Մուսթաֆա Քեմալը ոչ միայն համակրում

էր այդ “մարդասպան զինվորին”, այլ նաև բարձր էր գնահատում նրան, որպես “պետական գործչի”...⁴⁷¹

Այդ հանցավոր խմբի հինգերորդ անդամը՝ գլխավոր շտաբի գնդապետ Սեյֆին, նույնպես եղել է Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներից: Նրա դերը մինչև օրս լիովին բացահայտված չէ: Հայտնի փաստերը վկայում են, որ նա, մասնավորապես, ղեկավարել է “Հատուկ կազմակերպության” շրջանակներում գործող մարդասպանների ջոկատները, այսպես կոչված, *ֆիդայիներին*: Այդ փաստը հաստատվել է գերմանացի գնդապետ ֆոն Լոստովի կողմից⁴⁷²: Սակայն, շնորհիվ գաղտնի գործելու մեծ փորձի, այդ մարդասպանին հաջողվեց խուսափել ետպատերազմյան օսմանյան ռազմական դատարանի առջև կանգնելուց: Պատերազմի ավարտից հետո նա ակտիվ, սակայն և հաճախ անտեսանելի գործունեություն ծավալեց քեմալական շարժման տարբեր ճակատներում: Այսպես, նա ղեկավարներից էր Արևմտյան ճակատում գործող գաղտնի “Համզա” խմբի, որի նպատակն էր ապահովել հաջողականությունը երիտթուրքերի և քեմալականների միջև⁴⁷³, իսկ հետագայում՝ Տրապիզոնում տեղակայված քեմալական բանակի ստորաբաժանումներից մեկի հրամանատարն էր⁴⁷⁴:

Հանցավոր խմբի անդամներից Սեյֆին միակն էր, որը մահացավ իր մահով: Թալեաթին և Բեհաեդդին Շաքիրին գնդակահարեցին հայ վրիժառուները, Նազըմը ու Ջանփոլադը մեղադրվեցին Մուսթաֆա Քեմալի դեմ մահափորձ նախապատրաստման համար և ի թիվս մի շարք այլ նախկին իթթիհաթականների 1926 թ. կախաղան բարձրացվեցին:

Հանցագործները սովորաբար փորձում են քողարկել իրենց հանցագործության հետքերը: Այդպես վարվեցին նաև Հայոց մեծ եղեռնի

⁴⁶⁸ Տես. նամակի տեքստում Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կտորածները և Թալեաթ փաշա: Երևան, 1990, էջ, 130:

⁴⁶⁹ O. S. Kocahanoğlu, İttihat-Terraki'nin sorgulanması ve yargılanması: Meclis-i Mebusan tahkikatı, Teşkilat-ı Mahsusa, Ermeni Tehcirinin içyüzü, Divan-ı Harb-i Örfi muhakemesi. İstanbul, 1998, s. 629.

⁴⁷⁰ British Foreign Office dossiers on Turkish war criminals. By Vartkes Yeghiayan. La Verne, 1991, p. 52.

⁴⁷¹ O. S. Kocahanoğlu, İttihat -Terraki'nin sorgulanması ve yargılanması: Meclis-i Mebusan tahkikatı, Teşkilat-ı Mahsusa, Ermeni Tehcirinin içyüzü, Divan-ı Harb-i Örfi muhakemesi. İstanbul, 1998, s. 630 – 631.

⁴⁷² V. N. Dadrian, The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Oxford, 1995, p. 220.

⁴⁷³ E. Şimşek, İ. Bahar, Türkiye'de istihbaratçılık ve MİT. İstanbul, 2004, s. 186 – 187.

⁴⁷⁴ E. J. Zürcher, The Unionist factor: the role of the Committee of Union and Progress in the Turkish National movement, 1905 – 1926. Leiden, 1984, p. 128.

հեղինակները: 1915 թ. մայիսին Օսմանյան կայսրության իշխանություններն ընդունեցին մի օրենք, որի նպատակն էր «օրինական» քող ծառայել հայ ժողովրդի կանխամտածված զանգվածային ոչնչացման ցեղասպանության համար: Սակայն նրանք հաշվի չառան, որ դիտարկվելով ի թիվս այլ պաշտոնական փաստաթղթերի այն փաստում է նրանց հանցավոր ծրագրերը: Այդպիսով՝ վերը նշված օրենքը դարձավ մարդկային պատմության ամենադաժան և ամենաարյունալի օրենքներից մեկը: Հայոց ցեղասպանության պատմության հետազոտմանը նվիրված մասնագիտական գրականության մեջ այն հաճախակի հիշատակվում է որպես «Տեղահանության օրենք»⁴⁷⁵:

Այդ օրենքի ընդունման նախապատմությունը հետևյալն է:

1915 թ. մայիսի 24-ին⁴⁷⁶ Անտանտի երեք տերությունները՝ Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան հանդես եկան համատեղ հայտարարագրով, որտեղ խստագույնս դատապարտելով հայերի զանգվածային կոտորածները և որակելով դրանք որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված թուրքիայի... նոր հանցագործություն», ընդգծեցին, որ այդ հանցագործության համար անհատապես պատասխանատու կճանաչվեն օսմանյան կառավարության անդամները⁴⁷⁷: Նույն օրը նրա ֆրանսերեն տեքստը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության կողմից հանձնվեց «Հավա» հեռագրական գործակալությանը և անմիջապես փոխանցվեց Կոնստանդնուպոլիս ու Բեռլին:

Հայտարարագրի տեքստի պաշտոնական հանձնումը օսմանյան կառավարությանը տեղի ունեցավ ավելի ուշ, երրորդ կողմի միջոցով, քանի որ դիվանագիտական հարաբերությունները Անտանտի երկրների և Թուրքիայի միջև բացակայում էին: Հրատարակված

⁴⁷⁵ Թուրք պատմաբանները այն անվանում են «Tehcir kanunu» (հայերեն՝ «Տեղահանության օրենք») կամ էլ՝ «Sevkiyat kanunu» (հայերեն՝ «Ուղարկելու օրենք»):

⁴⁷⁶ Ամսաթվերը, բացի հատուկ նշվածներից նոր տոմարով են:

⁴⁷⁷ Տե՛ս հայտարարագրի տեքստում. Դեպարտամենտի ծանուցագիրը «Հավա» գործակալությանը, Հրատապ, Փարիզ, 24-ը մայիսի 1915թ. - Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում: Հատոր I: Աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի: Առաջաբանը՝ ժան-Բատիստ Դյուրոզելի: Ֆրանսերենից թարգմանեց Վարուժան Պողոսյանը: Երևան, 2005, էջ 99:

դիվանագիտական փաստաթղթերը հնարավորություն են ընձեռում հետևել այդ արարողության բարդ ուղուն: Սկզբում նրա պատճենը մայիսի 28-ին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Դելկաստեի խնդրանքով Փարիզում ԱՄՆ դեսպան Վ. Շարփի միջոցով փոխանցվեց Վաշինգտոն, պետքարտուղար Վ. Բրյանին⁴⁷⁸:

Վերջինս մեկ օր անց, 29-ին այն հեռագրով ուղարկեց Կ.Պոլսում ԱՄՆ դեսպան Զ. Մորգենթաուին⁴⁷⁹, որը և հետագայում հանձնել է հայտարարագիրը սադրագամ Սաիդ Հալիմ փաշային:

Հայտարարագրի արձագանքը օսմանյան կառավարության անդամների կողմից բավական բուռն էր: Ավստրո-Հունգարիայի դեսպան Յոհան Պալլավիչինին հայտնում է Վիեննա, որ այն առաջացրել էր սադրագամ (նախարարների խորհրդի նախագահ) Սաիդ Հալիմ փաշայի անբաքույց ուժեղ զայրույթը⁴⁸⁰: ԱՄՆ դեսպան Զ. Մորգենթաուն իր օրագրում նկարագրում է հայտարարգրին ծանոթանալուց հետո Սաիդ Հալիմի վիճակը՝ որպես «չափազանց գրգռված»⁴⁸¹:

Թուրք պատմաբանները իրենց հերթին Հայտարարագրից ներգործվողների թվում նշում են ներքին գործերի նախարար Թալեթաթ բեյի անունը, որի հրամաններով էին սկսել և ընթացքի մեջ էին տեղահանությունները ու կոտորածները: Վերջինիս մոտ, այն, ըստ

⁴⁷⁸ Sharp – to Secretary of State, Paris, May 28, 1915. – Documents: The State Department File. – A. Hayrapetyan, «Race Problems» and the Armenian Genocide: The State Department file. – Armenian Review, Spring 1984, Volume 37, No. 1, p. 64; Փարիզում Միացյալ Նահանգների դեսպան պ. Վիլյամ Շարփը՝ արտաքին գործերի նախարար պ. Դելկաստեին, Փարիզ, 28-ը մայիսի 1915թ. - Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում: Հատոր I: Աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի: Առաջաբանը՝ ժան-Բատիստ Դյուրոզելի: Ֆրանսերենից թարգմանեց Վարուժան Պողոսյանը: Երևան, 2005, էջ 101:

⁴⁷⁹ Bryan – to Amembassy, Constantinople, Washington, May 29, 1915. – Documents: The State Department file. – A. Hayrapetyan, «Race Problems» and the Armenian Genocide: The State Department file. – Armenian Review, Spring 1984, Volume 37, No. 1, p. 65.

⁴⁸⁰ Pallavicini – an Baron Burian, Constantinople, an 18. Juni 1915. – K. u K. – Dokumente: Armenien in Österreichischen Archiven (Fotokopien). Band II: 1915 – 1917. Herausgeber: Artem Ohandjanian. S. 884.

⁴⁸¹ June 7, Monday. - [Henry Morgenthau], United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau 1913 – 1916. Compiled with an Introduction by Ara Sarafian. Princeton and London, 2004, p. 249.

երևույթին, առաջացրել էր մտավախություն, որ ողջ մեղքը այդ ոճ-րագործությունների համար հետագայում կբարդվի միայն իր վրա: Փորձելով խուսափել դրանց՝ նա նախաձեռնեց մի այնպիսի գործընթաց, որի նպատակն էր խուսափել միայնակ պատասխանատու լինելու վտանգից և պատասխանատվությունը ոճրագործության համար դարձնել կոլեկտիվ՝ տարրալուծելով այն կառավարության անդամների միջև⁴⁸²: Հետաքրքիր է, որ այդ ոճրագործը շատ լավ գիտակցում էր իր պատասխանատվությունը: Այդ մասին պահպանվել է Թալեաթի բացառիկ խոստովանությունը, որի մասին իր հուշագրություններում հիշատակում է նրա մերձավոր ընկեր, Օսմանյան կայսրության և "Միություն ու առաջադիմություն" կուսակցության ղեկավար գործիչներից Հալիլը: Համաձայն վերջինիս՝ Թալեաթը, ի նկատի ունենալով հայերի տեղահանությունը, նրան խոստովանել է, որ ինքն է կայացրել որոշումը տեղահանության մասին⁴⁸³:

Թալեաթի նախաձեռնության արդյունքում թուրքական ղեկավարության կողմից արագ ընդունվեցին մի շարք որոշումներ, որոնք մեկ շաբաթվա ընթացքում հանգեցրեցին, ինչպես ցույց կտրվի ստորև, "Տեղահանության մասին օրենքի" հրապարակմանը:

Թուրքիայում հրատարակած փաստաթղթերը փաստում են, որ հայտարարագրի հրապարակումից մեկ օր հետո, մայիսի 26-ին բանակի գլխավոր հրամանատարությունը դիմեց ներքին գործերի նախարարությանը՝ առաջարկելով սկսել հայերի տեղահանությունը "Արևելյան վիլայեթներից, Չեթունից և դրանց նման հայաշատ վայրերից"⁴⁸⁴: Ուշագրավ է, որ թուրք պատմաբանները խուսափում են հրատարակել այդ կարևոր վավերագրի ինչպես ֆոտոպատճենը, այնպես էլ օսմաներեն տեքստը, սահմանափակվելով միայն նրա ակնհայտորեն աղճատված տարբերակով, որը տեղադրել է իր մենագրությու-

նում Հայոց ցեղասպանության իրողությունը կեղծող թուրքական պաշտոնական պատմագրության հիմնասյուններից մեկը՝ հանգուցյալ պաշտոնաթող դեսպան Քյամուրան Գյուրյունը⁴⁸⁵: Մինչդեռ, թվում էր, թե այդ փաստաթղթի հրատարակումը պիտի կարևոր ներդրում լիներ հայերի տեղահանությունը որպես զուտ ռազմական անհրաժեշտությունից բխող միջոցառում ներկայացնող թուրքական պաշտոնական վարկածի վերահաստատման գործում: Այս հանգամանքը մտածել է տալիս, որ Գյուրյունը ոչ միայն լրիվ չի հրատարակել փաստաթուղթը, այլ նաև կեղծել է այն: Վերջին ենթադրությունը հաստատվում է նրանով, որ փաստաթուղթը առաջարկում է սկսել Չեթունի հայերի տեղահանությունը, մինչդեռ նրանց տեղահանությունը սկսվել է Թալեաթի հրամաններով դեռևս մարտի վերջերին, շարունակվել է ապրիլ ամսվա ընթացքում, և Չեթունում արդեն տեղակայվել էին թուրքական կանոնավոր զորքերը: Այդ վկայում է, որ գլխավոր հրամանատարության հեղինակած վերևում նշված փաստաթուղթը իրականում գրվել է ավելի վաղ, քան թե այդ փորձում է ցույց տալ Գյուրյունը, հավանաբար ապրիլ – մայիսի սկիզբ ժամանակահատվածում: Այդ կեղծիքի պատճառը, թերևս, այն է, որ փաստաթղթում հղում կա տեղահանության մասին ընդունված «բանավոր որոշման» վրա⁴⁸⁶: Այս «վրիպակը», մեր կարծիքով, կատարվել է իրականում ենվերի կողմից միտումնավոր, քանի որ դրանով ռազմական նախարարության համար հնարավորություն էր ստեղծվում խուսափել տեղահանությունը նախաձեռնողի պատասխանատվությունից:

Ի պատասխան այդ գրության՝ Թալեաթը ներքին գործերի նախարարության անունից գաղտնի զեկուցագրով դիմում է կառավարությանը՝ պահանջելով տեղահանել պատերազմական շրջանների հայ ազգաբնակչությանը⁴⁸⁷: Այս փաստաթուղթը, չնայած այն հան-

⁴⁸² Y. H. Bayur, Türk İnkılâbı tarihi. Cilt: III: 1914 -1918: Genel Savaşı, Kısım III: 1915 – 1917 vuruşmaları ve bunların siyasal tepkileri. Ankara, 1983, s. 39; Y. Halaçoğlu, Die Armenierfrage. Klagenfurt, 2006, S. 66.

⁴⁸³ [Halil Menteşe], Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin anıları. Giriş: İsmail Arar. İstanbul, 1986, s. 216.

⁴⁸⁴ Տե՛ս այդ փաստաթղթի տեքստում, որը հրատարակել է թուրք պատմաբան Բ. Գյուրյունը. K. Gürün, Ermeni dosyası. İkinci Baskı. Ankara, 1983, s. 213.

⁴⁸⁵ Տե՛ս օրինակ, Y. Halaçoğlu, Die Armenierfrage. Klagenfurt, 2006, S. 65 կամ էլ՝ Y. Ercan, Ermeniler ve Ermeni Sorunu. – Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 48 - 49.

⁴⁸⁶ K. Gürün, Ermeni dosyası. İkinci Baskı. Ankara, 1983, s. 213.

⁴⁸⁷ Այդ գաղտնի զեկուցագրի տեքստը՝ հայերեն թարգմանությամբ, առաջին անգամ հրատարակել է ցեղասպանության վերապրող և խորունկ հետազոտող Հայկազն Ղազարյանը: Տե՛ս Հ. Գ. Ղազարյան, Ցեղասպան թուրքը, Պեյրուք, 1968, էջ 324 – 328:

գամանքին, որ պարունակում է կեղծիքների ու ստերի մի ամբողջ արան, միաժամանակ հնարավորություն է տալիս վերահաստատելու թուրքական իշխանությունների ցեղասպանության դիտարկությունը: Յ. Ղազարյանի թարգմանությամբ այն ձևակերպված է այսպես. «Պետության կենսական ջանքերու կարգին կարևոր գործ մըն է այս մտատանջությունը⁴⁸⁸, զայն հիմնական կերպով լուծելու, վերջացնելու և ամբողջապես ջնջելու համար⁴⁸⁹: Այս մասին միջոցներ պատրաստելու և պատրաստ գտնվելու մասին խորհած և նկատողության առած ենք»⁴⁹⁰: Վերջին նախադասությունը կարելի է մեկնաբանել որպես անդրադարձ մեզ լավ ծանոթ «10 պատվիրանների»:

Իշխանությունները այնքան էին շտապում, որ խախտեցին օրենքների ընդունման կարգը, ինչը վկայում է նրանց շրջանում տիրող խուճապի մասին: Առանց կառավարության նիստ հրավիրելու, Թալեաթի զեկուցագիրը քննարկելու և կառավարության համապատասխան որոշում ընդունելու, արդեն հաջորդ օրը՝ մայիսի 27-ին, հապճեպ ընդունվում է և հունիսի 1-ին հրապարակվում է և անմիջապես ուժի մեջ է մտնում «Պատերազմի ժամանակ կառավարության գործունեության դեմ դուրս եկողների համար ռազմական տեսանկյունից առնվելիք միջոցների մասին ժամանակավոր օրենք» վերտառությամբ և սուլթանի և ռազմական նախարար Էնվերի ստորագրությամբ օրենքը⁴⁹¹: Ինչպես նշել էինք, այն ընդունված է անվանել նաև «Տեղահանության օրենք»:

Նախքան «Տեղահանության օրենքի» հրապարակումը, մայիսի 30-ին տեղի է ունենում կառավարության նիստ: Այն քննարկում է Թալեաթի զեկուցագիրը և ընդունում է որոշում սկսել տեղահա-

նությունը: Նրա տեքստը հրատարակված է⁴⁹²: Այն վերնագրված է «Նախարարների խորհրդի քննարկումների վերաբերյալ արձանագրություն» և բաղկացած է երկու մասից. «Համառոտ նկարագրություն»⁴⁹³ և «Որոշում»: Փաստաթղթի տակ ստորագրել են օսմանյան կառավարության մի շարք անդամներ: Սեզ հաջողվել է վերծանել սադրազան Սայիդ Հալիմ փաշայի, Էնվերի, Թալեաթի, Նասմիի ստորագրությունները: «Որոշում» հատվածում նույնպես առկա է արտահայտություն, որը բացահայտում է օսմանյան կառավարության ցեղասպանական դիտարկությունը՝ նշված է հայկական շարժման «լիովին ոչնչացման ու վերացման անհրաժեշտությունը» (“imhâ ve izâlesi kat’iyyen muktezi”)⁴⁹⁴:

Անդրադառնանք «Տեղահանության օրենքին»:

Ցայսօր նրա և՛ բովանդակության, և՛ հրապարակման առանձնահատկությունների հետ կապված շատ հանգամանքներ ինչպես մեզանում, այնպես էլ արտերկրում մնում են չպարզաբանված՝ նպաստելով իրարամերժ մտտեցումների դրսևորմանը:

Վիճահարույց խնդիրներից է, օրինակ, օրենքի ընդունման և հրապարակման անսաթվերի հարցը: Նույնիսկ այնպիսի ճանաչված ցեղասպանագետ, ինչպիսին Վահագն Տատրեանն է, իր երկու հիմնարար աշխատություններում նշում է այդ օրենքի հրապարակման երկու տարբեր անսաթվեր՝ երկուսն էլ սխալ: Նրանցից առաջինում, որը հրատարակվել է 1995 թ., նշված է 1915 թ. մայիսի 26-ը⁴⁹⁵ (այստեղ և այսուհետ հողվածի բոլոր անսաթվերը, բացի հատուկ նշվածներից նոր տոմարով են): Չորս տարի հետո լույս տեսած

⁴⁸⁸ Ինչպես երևում է փաստաթղթի համատեքստից, Թալեաթի “մտատանջությունը” դա հայ ժողովրդի ձգտումն էր իրականացնել բարենորոգումներ Արևմտյան Հայաստանում:

⁴⁸⁹ Թարգմանության հեղինակը, հաշվի առնելով սույն պարբերության կարևորությունը, բերում է թուրքերեն արտահայտությունը՝ հայերեն տառերով՝ քյուլիյեն իզալեսի:

⁴⁹⁰ Հ. Ղ. Ղազարյան, Ցեղասպան թուրքը, Պետրոս, 1968, էջ 325:

⁴⁹¹ Տեքստը տե՛ս Vakt-i seferde icraat-ı Hükûmete karşı gelenler için cihet-i askeriyece ittihaz olunacak tedbir hakkında kanun-ı muvakkat. - Takvîm-i Vekâyi’, 18 Receb 1333 / 19 Mayıs 1331, 7. sene, nr. 2189.

⁴⁹² Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtname: Hülasâ-i me’âlî, 17 Mayıs 1331. - BOA. Meclis-i Vükelâ Mazbatası, 198/163. - <http://www.devletarsivleri.gov.tr/kitap/pdf/2/17.pdf>

⁴⁹³ Պետք է հասկանալ, ըստ երևույթին, «խնդրի քննարկման համառոտ նկարագրություն»:

⁴⁹⁴ Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtname: Hülasâ-i me’âlî, 17 Mayıs 1331. - BOA. Meclis-i Vükelâ Mazbatası, 198/163. - <http://www.devletarsivleri.gov.tr/kitap/pdf/2/17.pdf>

⁴⁹⁵ V. N. Dadrian, The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Providence, Oxford, 1995. p. 400.

նրա գրչին պատկանող մեկ այլ գրքում կարդում ենք, որ այդ օրենքը մամուլում հրապարակվել է 1915 թ. մայիսի 27-ին⁴⁹⁶:

Մինչդեռ, թուրքական պաշտոնական վավերագրերը փաստում են, որ առաջին անսաթիվը վերաբերում է ներքին գործերի նախարար Թալեաթի գաղտնի գեկուցագրին, որին մենք արդեն անդրադարձել ենք, իսկ երկրորդը օրենքի ընդունման անսաթիվն է, այլ ոչ թե մամուլում հրապարակման, ինչը տեղի է ունեցել հինգ օր ավելի ուշ, 1915 թ. հունիսի 1-ին պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի վաքայիի» առաջին էջի վրա: Այդ ճշտումը կարևոր է, քանի որ, համաձայն օրենքի 3-րդ հոդվածի, այն գործողության մեջ պիտի մտնեի հրապարակման օրից:

Հայոց ցեղասպանության պատմության հետազոտմանը նվիրված մի շարք այլ աշխատություններում նույնպես կարելի է հանդիպել վերը նշված սխալին: Նշենք, օրինակ, մեզանում քաջ հայտնի Հայկազն Ղազարեանի և Լևոն Վարդանի մենագրությունները, որտեղ նույնպես առկա է շփոթումը օրենքի ընդունման ու մամուլում հրապարակման անսաթվերի միջև⁴⁹⁷:

Անսաթվերի մեջ շփոթվում են նաև որոշ թուրք պատմաբաններ: Այսպես, օրինակ, Մեհմեդ Հոջաօղլուն սխալմամբ գրում է, թե օրենքը սկսել է գործել 1331 թ. մայիսի 14-ին (համաձայն Օսմանյան կայսրության պաշտոնական գրագրության մեջ օգտագործված ռումի օրացուցային համակարգի)⁴⁹⁸, ինչը եվրոպական օրացուցային համակարգի նոր տոմարով համապատասխանում է 1915 թ. մայիսի 27-ին: Սակայն, օրենքը պաշտոնապես գործողության մեջ է դրվել է մամուլում հրապարակման օրից, այսինքն՝ 1915 թ. հունիսի 1-ից:

Օրենքի ընդունման ու հրապարակման անսաթվերի հետ կապված սխալը առկա է նաև թուրք պատմաբան Իսմայիլ Համիդ-Ղանի

մենդի մոտ, որի «Օսմանյան պատմության բացատրական տարեգրություն» վերտառությամբ քառահատորյակը տասնամյակներ շարունակ հանդիսանում է օսմանագետների սեղանի գիրքը: Այդ աշխատության չորրորդ հատորում հեղինակը գրում է, թե «Տեղահանության օրենքը» հրապարակվել է 1915 թ. մայիսի 27-ին՝ շփոթելով այդ անսաթիվը օրենքի ընդունման անսաթվի հետ⁴⁹⁹:

Մեկ այլ շփոթումների ենք հանդիպում ԱՄՆ-ում բնակվող թուրք պատմաբան Թաներ Աքչամի հայոց ցեղասպանությանը նվիրված գրքերից մեկում, որտեղ նա ճիշտ նշելով «Տեղահանության օրենքի» ընդունման ու հրապարակման անսաթվերը (մայիսի 27 և հունիսի 1) գրում է, որ դրանք վերաբերում են կառավարության որոշմանը տեղահանություն սկսելու վերաբերյալ: Ակնհայտ է, որ նա նույնացնում է «Տեղահանության օրենքը» և հայերի տեղահանությունը սկսելու վերաբերյալ կառավարության որոշումը, ինչը սխալ է⁵⁰⁰: Կառավարության «Տեղահանության որոշումը», ինչպես արդեն նշվել է, ընդունվել է նախարարների խորհրդի մայիսի 30-ին տեղի ունեցած նիստի ընթացքում, այսինքն՝ «Տեղահանության օրենքի» ընդունումից երեք օր անց: Ավելի ուշ լույս տեսած իր գրքերից մեկում Թ. Աքչամը, ցուցաբերելով պարտաճանաչ մոտեցում, ուղղեց իր վերը նշված սխալը⁵⁰¹:

Ճշգրտման կարիք ունի նաև օրենքի բուն բովանդակությունը, մասնավորապես, նրա հոդվածների թիվը: Այդ խնդրի շուրջ պատմագրության մեջ առկա են տարակարծություններ: Սակավաթիվ են աշխատությունները, որտեղ նշվում է օրենքի բովանդակությունը կազմող հոդվածների ստույգ թիվը՝ չորսը: Դրանցից արժե հիշատակել ամերիկահայ Գրիկերի կողմից հրատարակած ուշագրավ գիրքը⁵⁰²: Գրիկերը, թերևս, այն եզակի հեղինակներից է, որը, ըստ

⁴⁹⁶ V. N. Dadrian, Warrant for genocide: key elements of Turko – Armenian conflict. New Brunswick, 1999, p. 123.

⁴⁹⁷ Հ. Գ. Ղազարեան, Ցեղասպան թուրքը: Պեյրուք, 1968, էջ 69, 328 և Լ. Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը (Քննական ակնարկ ըստ թրքական վաւերագիրներու): Պեյրուք, 1970, էջ 117:

⁴⁹⁸ M. Hocaoglu, Tarihte Ermeni mezalimi ve Ermeniler. İstanbul, 1976, s. 645.

⁴⁹⁹ İ. H. Danişmend, İzahlı Osmanlı tarihi kronolojisi. Cilt: 4: M. 1703 – 1924 H. 1115 – 1342. İstanbul, 1955, s. 428.

⁵⁰⁰ T. Akçam, Türk ulusal kimliği ve Ermeni sorunu. 2. baskı. İstanbul, 1993, s. 109.

⁵⁰¹ T. Akçam, İnsan hakları ve Ermeni Sorunu: İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na. 2. Baskı. Ankara, 2002, s. 317 - 318.

⁵⁰² Եղգլատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը: Պատրաստեց Գրիկեր: Նիւ Եորք, 1980:

ամենայնի, ծանոթ է եղել «Թաքվիմ-ի վաքայի» պաշտոնական լրագրում տպագրված «Տեղահանության օրենքի» տարբերակին և այդ պատճառով նա չի սխալվում, երբ անդրադառնում է օրենքի բովանդակության, ինչպես նաև ընդունման ու հրապարակման ամսաթվերի հետ կապված հանգամանքներին⁵⁰³։ Նույնը կարելի է ասել նաև ճանաչված թուրք պատմաբան Թարքը Ջաֆեր Թունայայի մասին⁵⁰⁴։

Հիմնականում, թուրք հեղինակները նախընտրում են ընդգծել, որ «Տեղահանության օրենքը» ունեցել է երեք հոդված։ Նրանք նույնպես չեն նշում, թե ո՞ւմ ստորագրություններն են դրված օրենքի տակ։ Ժամանակին այդպես են վարվել, օրինակ, Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական պաշտոնական ժխտողական հայեցակարգի հիմնասյուները հանդիսացող էսաթ Ուրասը⁵⁰⁵ և Քյամուրան Գյուրունը⁵⁰⁶։

Հետագայում, Թուրքիայում մեծ հեղինակություն վայելող այդ պատմաբանների կողմից շրջանառության մեջ դրված օրենքի աղճատված տարբերակը անվերապահորեն ընդունվել է մի շարք թուրք հեղինակների կողմից ու տեղ գտել նրանց ինչպես գիտական աշխատություններում⁵⁰⁷, այնպես էլ հրապարակախոսական հոդվածներում⁵⁰⁸։ Նույնիսկ այնպիսի փորձառու պատմաբան, ինչպիսին Բիլյալ Շիմշիրն է, որն այսօր Թուրքիայում համարվում է Հայկական հարցի լավագույն «ուսումնասիրողներից» մեկը, գետնից հանելով «Տեղահանության օրենքի» տեքստը՝ նույնպես անտեսում է այն փաստը, որ օրենքի պաշտոնապես հրատարակված տեքստը

⁵⁰³ Եռզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը: Պատրաստեց Գրիկէր: Նիւ Եորք, 1980, էջ. 37 - 38:

⁵⁰⁴ T. Z. Tunaya, Türkiye'de siyasal partiler. Cilt I: İkinci Meşrutiyet dönemi, 1908 - 1918. Genişletilmiş ikinci baskı. İstanbul, 1988, s. 580.

⁵⁰⁵ E. Uras, Tarihte Ermeniler ve Ermeni Meselsi. Yeniden gözden geçirilmiş ve genişletilmiş 2. Baskı. İstanbul, 1987, s. 605.

⁵⁰⁶ K. Gürün, Ermeni dosyası. İkinci baskı. Ankara, 1983, s. 214.

⁵⁰⁷ St'u, օրինակ, Y. Ercan, Ermeniler ve Ermeni Sorunu. – Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 49.

⁵⁰⁸ St'u, օրինակ, S. Kaplan, 1915'teki trajedi işte bu tehcir kanunuyla başladı. - Hürriyet, mart 3, 2005.

ունեցել է չորս հոդված և սահմանափակվում է միայն երեքի մեջբերումով⁵⁰⁹։

Հետևելով իրենց հոգևոր հայրերի օրինակին՝ թուրք պատմաբանների երիտասարդ սերնդի ներկայացուցիչները շարունակում են քողարկել “Տեղահանության օրենքի” բուն բովանդակությունը։ Այսպես, օրինակ, Սյուլեյման Դեմիրելի անվան համալսարանի դասախոս Հասան Բաբաջանը, դիմելով “գիտական” անպարարության, կիրառում է հետևյալ հնարքը. հղելով «Թաքվիմ-ի վաքայի» 1915 թ. հունիսի 1- ի համարում հրատարակված օրենքի տեքստը, նա մեջ է բերում օրենքի միայն երկու հոդվածները, երկրորդ հոդվածին կցելով օրենքի չորրորդ հոդվածի բովանդակությունը և ընդհանրապես անտեսելով երրորդի գոյությունը⁵¹⁰։ Վարվելով այդպես՝ նա, թերևս, ենթադրում էր, որ «Թաքվիմ-ի վաքայի» 1915 թ. հունիսի 1- ի համարը չի կարող հասու լինել նաև ոչ թուրք մասնագետներին...

Վերջերս պաշտոնական թուրքական պատմագրության մեջ այդ տխրահռչակ օրենքի վերաբերյալ դրսևորվում է նոր մոտեցում. նրա գոյությունը ընդհանրապես անտեսվում է։ Այդպես է վարվել, օրինակ, Թուրքական պատմագիտական ընկերության (ԹՊԸ) կողմից հրատարակած «Հայեր. աքսոր և վերաբնակեցում» գրքի հեղինակների խումբը։ Այստեղ միայն նշված է, որ մեր կողմից վերևում արդեն հիշատակված նախարարների խորհրդի մայիսի 30-ի որոշումը «հավանություն տվեց ներքին գործերի նախարարության որոշմանը և արդեն ընթացքի մեջ գտնվող նրա իրագործմանը»⁵¹¹։ Թերևս, հեղինակները, որոնց թվում է նաև Հայոց ցեղասպանության պատմության թուրք “հետազոտողների” ներկա սերնդի «առաջնորդ» և ԹՊԸ նախագահ Յուսուֆ Հալաչօղլին, այդպիսով ուղղակի փորձել են խուսափել «Տեղահանության օրենքի» բովանդակության մասին կարծիք հայտնելուց։ Ավելորդ չէ նշել, որ պրոֆեսոր Հալաչօղլին գրքի «Ներածությունում» պնդում է, որ այն հիմնված է

⁵⁰⁹ B. N. Şimşir, Ermeni Meselesi: 1774 – 2005. Üçüncü basım. Ankara, 2006, s. 299.

⁵¹⁰ H. Babacan, Ermeni Tehciri hakkında bir değerlendirme. - Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 410.

⁵¹¹ H. Özdemir, K. Çiçek, Ö. Turan, R. Çalık, Y. Halaçoğlu, Ermeniler: sürgün ve göç. İkinci Basım. Ankara, 2004, s. 64.

«գիտական չափանիշների և պատմության ուսումնասիրման սկզբունքի վրա»⁵¹²: Դժվար է հասկանալ, թե ինչպե՞ս կարելի է համակերպել Հայոց ցեղասպանության վերաբերյալ կարևոր պաշտոնական վավերագրի գոյության անտեսումը «գիտական չափանիշների» հետ:

Ուշագրավ է, որ երկու տարի չանցած՝ արդեն միայնակ հեղինակած իր մեկ այլ գրքում Յու. Հալաչոլլին ոչ միայն հիշատակում է «Տեղահանության օրենքը», այլ նաև վերաշարադրում է նրա բովանդակությունը հետևելով, իհարկե, թուրքական պատմագրության համար արդեն ավանդույթ դարձած մոտեցմանը, համաձայն որի այդ օրենքի իրականացման համար պատասխանատու անձի էնկերի անունը չի հիշատակվում⁵¹³: Ի տարբերություն իր շատ գործընկերների՝ խոսելիս օրենքի մասին Հալաչոլլին հղում է ոչ միայն ավագ սերնդի պատմաբաններ Յուսուֆ Հիքմեթ Բայուրի⁵¹⁴ և Քյանուրան Գյուրունի⁵¹⁵ աշխատությունները, այլ նաև հիշատակում է պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի վաքայիի» 1915 թ. հունիսի 1-ի համարը, որտեղ տպագրված է «Տեղահանության օրենքը», սակայն և այս դեպքում խուսափում է գրել, թե ում վրա է դրվել անձնական պատասխանատվությունը նրա իրագործման համար, սահմանափակվելով բավական մշուշոտ նշումով, որ այդ օրենքի ընդունումով հայերի «վերաբնակեցումը փոխանցվեց ներքին գործերի նախարարությունից ռազմական իշխանություններին»⁵¹⁶:

Թուրքական աղբյուրների հետազոտման արդյունքում հնարավոր եղավ հայտնաբերել ժամանակակից թուրք հեղինակների կեղծիքի «ավանդույթի» սկզբնաղբյուրը: Պարզվում է, որ նրա սկիզբը դրվել է դեռևս 1916 թ.: Այդ տարի, այսինքն երբ դեռ շարունակվում էր Հայոց ցեղասպանության գործընթացը, օսմանյան կառավարությունը, ձգտելով մոլորության մեջ գցել համաշխարհային հանրությանը և խուսափել հնարավոր պատասխանատվությունից,

սկզբում թուրքերեն, հետագայում նաև եվրոպական լեզուներով հրատարակեց սովորածավալ գիրք-տեղեկագիր, որտեղ լկտիաբար կեղծվում էր իրականությունը և փորձ էր արվում Հայոց եղեռնի պատասխանատվությունը բարդել հենց հայերի վրա: Այստեղ բերված է «Տեղահանության օրենքի» աղճատված, երեք հոդվածից բաղկացած տեքստը, բացակայում են վերջին, չորրորդ հոդվածը, ինչպես նաև վերջին պարբերությունը: Չեն նշված նաև օրենքի տակ իրենց ստորագրությունները ղնողների անունները⁵¹⁷: Եվ դա այն դեպքում, երբ նախորդ տարի կառավարական պաշտոնաթերթում տպագրված տեքստում այդ բոլորը առկա էին:

Եւշենք նաև, որ օսմանյան կառավարությանը հաջողվեց հասնել իր նպատակին: Եվ ժամանակակիցներից, և հետագա սերնդների պատմաբաններից շատերը “Տեղահանության օրենքի” տեքստի համար որպես հիմք ընդունում էին կառավարական գիրք-տեղեկագրում զետեղված տարբերակը, այլ ոչ թե պաշտոնաթերթի տեքստը: Այդպես է վարվել, օրինակ, Հայոց ցեղասպանության ակնատես ու հետազոտող Յոհաննես Լեփսիուսը իր կողմից կազմած գերմանական դիվանագիտական վավերագրերի ժողովածուի մեջ ընդգրկելով օրենքի տեքստի այն տարբերակը, որը տեղ է գտել կառավարական գիրք-տեղեկագրի ֆրանսերեն հրատարակությունում⁵¹⁸: Հայկազն Ղազարեանը տպագրել է օրենքի երեք հոդվածների հայերեն թարգմանությունը՝ նույնպես հիմք ընդունելով նրա այն տարբերակը, որը տեղ է գտել վերևում հիշատակված պաշտոնական գիրք-տեղեկագրում, սակայն, ի տարբերություն Լեփսիուսի, նա օգտվել է այդ գրքի թուրքերեն հրատարակությունից⁵¹⁹:

⁵¹⁷ Ermeni komitelerinin âmâl-i ve harekât-i ihtilâliyesi ilân-i meşrutiyetten evvel ve sonra. İstanbul, 1332, s. 237 - 238.

⁵¹⁸ Deutschland und Armenien 1914 - 1918: Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 78.

⁵¹⁹ Հ. Ղազարեանի գրքում օրենքի թարգմանությունը զետեղված է երկու անգամ, տես. Հ. Ղ. Ղազարեան, Ցեղասպան թուրքը: Պեյրուֆ, 1968, էջ 69 - 70 և էջ 180 - 181: Այդ երկու տեքստերի միջև առկա են տարբերություններ:

⁵¹² H. Özdemir, K. Çiçek, Ö. Turan, R. Çalık, Y. Halaçoğlu, Ermeniler: sürgün ve göç. İkinci Basım. Ankara, 2004, s. VII.

⁵¹³ Y. Halaçoğlu, Die Armenierfrage. Klagenfurt, 2006, S. 68.

⁵¹⁴ Y. H. Bayur, Türk İnkilâbı tarihi. Cilt: III, Kısım 3. Ankara, 1983.

⁵¹⁵ K. Gürün, Ermeni dosyası, İkinci Baskı. Ankara, 1983.

⁵¹⁶ Y. Halaçoğlu, Die Armenierfrage Klagenfurt, 2006, S. 68.

Հարց է առաջանում. ինչո՞վ էր պայմանավորված օսմանյան կայսրության իշխանությունների նման մոտեցումը: Շրջանառության մեջ գտնվող պաշտոնական օսմանյան վավերագրերը հնարավորություն չեն տալիս հստակ պատասխանել այդ հարցին: Թերևս, կարելի է ենթադրել, որ դրա պատճառը օսմանյան թուրքիայի այդ տարիների կառավարող վերնախավի, մասնավորաբար, էմվերի փաշայի ձգտումն էր ամեն կերպ թոթափել իր վրայից պատասխանատվությունը հայերի տեղահանության համար:

Ինչպես արդեն նշել էինք, հայ ժողովրդի զանգվածային տեղահանությունը սկսվել էր նախքան օրենքի ընդունումը և հրապարակումը և այն իրականացվում էր ներքին գործերի նախարար և երիտթուրքական կուսակցության փաստացի առաջնորդ Թալեթի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ: Հետաքրքիր է, որ իր հուշագրություններում Թալեթը, ամեն կերպ փորձելով խուսափել պատասխանատվությունից, շեշտում է, որ բանակի ղեկավարությունը, համարելով, որ հայ ազգաբնակչությունը վտանգ է ներկայացնում ռազմական տեսակետից, պահանջում էր սկսել հայերի տեղահանությունը, իսկ ինքը դեմ էր դրան, ինչի համար իր գործընկերների կողմից մեղադրվում էր հայրենիքին անհավատարիմ լինելու մեջ⁵²⁰: Նրա ներկայացմամբ, քանի որ դրությունը զնալով ծանրանում էր, իսկ բանակն էլ հնարավորություն ուներ ձեռնարկել «անհրաժեշտ միջոցներ» նույնիսկ առանց համապատասխան օրենքի, ապա այլևս «օգուտ չունեն» ձգձգել տեղահանության մասին օրենքի ընդունումը⁵²¹:

Թալեթի պնդում է, որ բանակի Գլխավոր շտաբն է նախապատրաստել «Տեղահանության օրենքի» տեքստը և ուղարկել է

այն կառավարություն⁵²²: Սակայն նրա շարադրանքից պարզ չի դառնում, թե որքանով է այն հիմք ծառայել օրենքի վերջնական տարբերակի համար: Այդ հարցին պատասխան չեն տալիս նաև վերջին շրջանում թուրքիայում հրատարակված օսմանյան պաշտոնական վավերագրերը:

Ուշագրավ է այն փաստը, որ մինչ օրս չի հրատարակվել կառավարության որևիցե պաշտոնական վավերագիր, կապված օրենքի հետ: Թուրք պատմաբանների կողմից շրջանառության մեջ է դրվել միայն պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի վաքայի» 1915 թ. հունիսի 1-ի համարի առաջին էջի ֆոտոպատճենը, որտեղ զետեղված է օրենքը: Թե որքանով է այն համապատասխանում կառավարության կողմից վերջնականորեն ընդունված տարբերակին դժվար է ասել: Համենայն դեպս, Հայկազն Ղազարեանը գրում է, թե իրականում օրենքը ունեցել է ութ հոդված, որոնցից հինգը գաղտնի են պահվել⁵²³: Այդ հարցը կարիք ունի հետագա հետազոտման:

Վերևում նշված անճշտություններին ու շփոթմունքներին վերջ տալու լավագույն միջոցը «Տեղահանության օրենքի» տեքստի պաշտոնական տարբերակի թարգմանաբար ներկայացումն է, ինչը հնարավոր եղավ իրականացնել միայն ձեռքի տակ ունենալով պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի վաքայի» 1915 թ. հունիսի 1-ի համարի ֆոտոպատճենը: Ցայսօր գիտական շրջանառության մեջ գտնվող օրենքի հայերեն թարգմանությունները կատարված են նրա աղճատված տարբերակներից⁵²⁴:

«Տեղահանության օրենքի» պաշտոնական տարբերակը փաստում է, որ օրենքը ունեցել է չորս հոդված, ընդունվել է 1915 թ. մայիսի 27-ին, գործողության մեջ է մտել 1915 թ. հունիսի 1-ին և նրա իրագործման պատասխանատվությունը դրվել է անձամբ էմվերի վրա: Օրենքի տակ դրված են սուլթան Մեհմեդ Ռեշադ V, սադրա-

⁵²⁰ [Talât Paşa], Talât Paşa'nın hâtıraları: Sadırazam Talât Paşa'nın tarihin bir çok gizli taraflarını aydınlatan şimdiye kadar neşredilmemiş şahsi notları. İstanbul, 1946, s. 63 - 65. Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Թալեթի հուշագրությունները հրատարակվել են փոփոխված ու խմբագրած տեսքով, ինչը ժամանակին ընդունել է նույնիսկ Յուսուֆ Հիքմեթը Բայուրը: Stü. Y. H. Bayur, Ermeni Meselesi. kaynaklar, II: hatıralar. - Cumhuriyet, Salı / Cuma Kitabı, 26 haziran 1998.

⁵²¹ [Talât Paşa], Talât Paşa'nın hâtıraları: Sadırazam Talât Paşa'nın tarihin bir çok gizli taraflarını aydınlatan şimdiye kadar neşredilmemiş şahsi notları. İstanbul, 1946, s. 65.

⁵²² [Talât Paşa], Talât Paşa'nın hâtıraları: Sadırazam Talât Paşa'nın tarihin bir çok gizli taraflarını aydınlatan şimdiye kadar neşredilmemiş şahsi notları. İstanbul, 1946, s. 63 - 64.

⁵²³ Հ. Գ. Ղազարեան, Տեղասպան թուրքը: Պեյրուք, 1968, էջ 328:

⁵²⁴ Հ. Գ. Ղազարեան, Տեղասպան թուրքը: Պեյրուք, 1968, էջ 69 - 70 և էջ 180 - 181: Լ. Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը (Քննական ակնարկ ըստ թրքական վաւերագիրներու): Պեյրուք, 1970, էջ 117:

գամ (Նախարարների խորհրդի նախագահ) Մեհմեդ Սաիդ Հալիմ փաշայի և գլխավոր հրամանատարի տեղակալ ու ռազմական նախարար Էնվերի անունները:

Ստորև ներկայացնում ենք օրենքի տեքստը թարգմանաբար.

Հոդված 1. Պատերազմի ժամանակ բանակների, զորաբանակների և դիվիզիաների հրամանատարները և նրանց տեղակալները և առանձին դիրքերի հրամանատարները, բնակչության կողմից կառավարության հրամանների, երկրի պաշտպանության ու հանգստի ապահովման հետ կապված գործողությունների և միջոցառումների դեմ ընդդիմության, զենքով հարձակման և դիմադրության որևիցե դրսևորում տեսնելու դեպքում լիազորված և պարտավոր են անհապաղ զենքի ուժով ամենախիստ ձևով նրանց խելքի բերել և հարձակումն ու ընդդիմանալը հիմնովին ոչնչացնել:

Հոդված 2. Բանակների և առանձին զորաբանակների և դիվիզիաների հրամանատարները ռազմական հատուկ օրենքների վրա հիմնվելով, լրտեսություն կամ դավաճանություն կանխագալով, կարող են գյուղերի և գյուղաքաղաքների բնակչությանը առանձին-առանձին կամ զանգվածաբար այլ բնակատեղիներ ուղարկել և բնակեցնել:

Հոդված 3. Սույն օրենքը գործողության մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Հոդված 4. Սույն օրենքի դրույթների գործադրման համար պատասխանատու է գլխավոր հրամանատարի տեղակալը և ռազմական նախարարը⁵²⁵:

Բարեհաճեցի հրամայել, որ օրինականությունը ապահովելու նպատակով սույն օրենքի տեքստը ներկայացվի ընդհանուր ժողովի նիստում⁵²⁶, ժամանակավորապես դրվի գործողության մեջ և հավելվի պետության օրենքներին:

⁵²⁵ Այդ պաշտոնները զբաղեցնում էր Էնվեր փաշան:

⁵²⁶ Ի նկատի ունի օսմանյան խորհրդարանի վերին և ստորին պալատների համատեղ նիստը:

13 Ռեջեփի 1333, 14 մայիսի 1331⁵²⁷

Ռեշադ⁵²⁸,

Սադրագամ Մեհմեդ Սաիդ⁵²⁹,

գլխավոր հրամանատարի տեղակալ և ռազմական նախարար Էնվեր:

Ինչպես արդեն նշել էինք, օրենքը պետք է ծառայեր, ըստ նրա հեղինակների, ցեղասպանության քողարկմանը: Սակայն նրանում առկա դրույթը առ այն, որ. «Բանակների և առանձին զորաբանակների և դիվիզիաների հրամանատարները ռազմական հատուկ օրենքների վրա հիմնվելով՝ լրտեսություն կամ դավաճանություն կանխագալով, կարող են գյուղերի և գյուղաքաղաքների բնակչությանը առանձին- առանձին կամ զանգվածաբար այլ բնակատեղիներ ուղարկել և բնակեցնել», բացահայտում է օրենքի հեղինակների ձգտումը օգտագործել բանակին հայերի ցեղասպանությունն իրականացնելու նպատակով: Այս կետը համապատասխանում է ցեղասպանության գործընթացի ժամանակ թուրքական զինվորականության լայնածավալ ներգրավվածության փաստին⁵³⁰:

Ի մի բերելով վերևում նշված երեք փաստաթղթերի վերլուծության արդյունքները՝ ընդձեռք, որ նրանք, էստ էության, հանդիսանում են Հայոց ցեղասպանության ծրագիր, որը ընդունվել է օսմանյան կառավարության կողմից և հաստատվել է սուլթանի կողմից՝ ստանալով օրենքի կերպարանք:

⁵²⁷ Համապատասխանում է 1915 թ. մայիսի 27-ին:

⁵²⁸ Սուլթան Մեհմեդ Ռեշադ V:

⁵²⁹ Սադրագամ Մեհմեդ Սաիդ Հալիմ փաշա:

⁵³⁰ Տե՛ս այդ մասին. V. N. Dadrian, The role of the Turkish military in the destruction of Ottoman Armenians: a study of historical continuities. – Journal of political and military sociology, 1992, Vol.: 20, No. 2 (Winter): p. 257 – 288.

2. ՔԵՍԱԼԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Երիտթուրքերի սկսած գործը որոշել էին ավարտել քեմալականները՝ այս անգամ ստրկացնելով Հայաստանի Հանրապետությանը և ցեղասպանության ենթարկելով Արևելյան Հայաստանի հայությանը: Այդ է վկայում այն պաշտոնական փաստաթուղթը, որի մանրակրկիտ քննությունը կատարվում է ստորև:

Փաստաթուղթը ստեղծվել է 1920 թ. նոյեմբերին: Նրա նախապատմությունը հետևյալն է:

1920 թ. նոյեմբերը ճակատագրական էր Հայաստանի Հանրապետության համար: Հոկտեմբերի 30-ին թուրքական բանակը գրավեց Կարսը՝ կամխորոշելով հայկական կողմի ռազմական պարտությունը թուրք հայկական պատերազմում: Պայքարի ծանրությունը տեղափոխվեց դիվանագիտական ոլորտ: Մոտ մեկ ամիս տևած լարված բազմակողմանի բանակցությունների արդյունքում դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում ստորագրվեց պայմանագիր Թուրքիայի հետ, որը վավերացրեց Հայաստանի և՛ ռազմական, և՛ դիվանագիտական պարտության արդյունքները:

Այդ շրջանի թուրքական վավերագրերն ունեն բացառիկ կարևոր նշանակություն, քանի որ հնարավորություն են տալիս ծանոթանալու Օսմանյան կայսրության փլատակների վրա ձևավորվող նոր՝ հանրապետական Թուրքիայի «հիմնադիր հայրերի» Հայաստանի նկատմամբ քաղաքականության իրական նպատակներին, մոտեցումներին, գնահատականներին, ինչպես նաև նրանց գործելաոճին ու կիրառվող հնարքներին: Քանի որ այդ փաստաթղթերի մեծ մասը գաղտնի են եղել, նրանց հեղինակները կարիք չեն ունեցել թաքնվել շրջահոսուն դիվանագիտական արտահայտությունների հետևում, ինչի մեծ վարպետն են եղել բոլոր ժամանակների թուրք կառավարիչները և ձևակերպել են իրենց մտքերն ամենայն հստակությամբ:

Մասնավորապես, վավերագրերը անհերքելիորեն վկայում են, որ Թուրքիայի գերագույն նպատակը պատերազմի վերջին փուլում եղել է Հայաստանի ոչնչացումը: Այսպես, համաձայն ԹԱՄՏ-ի կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար

Ահմեթ Մուհթարի Քարաբեքիրին նոյեմբերի 8-ին ուղարկված ծածկագրում տեղ գտած հստակ ձևակերպման, «բացարձակ անհրաժեշտություն է, որ Հայաստանը քաղաքականապես ու նյութապես մեջտեղից վերացվի»⁵³¹: Այս արտահայտությունը պարունակում է պարզորոշ արտահայտված ցեղասպանական բնույթի դիտավորություն, որը նպատակաուղղված էր ոչ թե ժողովրդի, այլ առաջին հերթին այն պետության դեմ, որտեղ այդ ժողովուրդը բնակվում է: Վերացնելով Հայաստանը որպես պետություն՝ «քաղաքականապես ու նյութապես», թուրք ազգայնականները հող էին նախապատրաստում հայ ժողովրդի կենդանի մնացած հատվածին ֆիզիկապես բնաջնջելու համար:

Ցավոք, հայ քաղաքական ընտրանին ի գորու չեղավ ժամանակին բացահայտելու այդ նպատակաղղվածությունը, ինչը և զգալի չափով պայմանավորեց Հայաստանի պարտությունը նաև դիվանագիտական ճակատում: Թուրքիայի հետ խաղաղության մասին բանակցություններ վարելու նպատակով կազմված պատվիրակության ղեկավար ու նախկին վարչապետ և արտգործնախարար Ալեքսանդր Խատիսյանը հետագայում իր հուշագրություններում խոստովանում էր. «...Մեր պատվիրակությունը կը կարծեր, որ թուրքերը կը ցանկանան կենսունակ Հայաստանի մը ստեղծումը, որը օգտակար էր իրենց պետական շահերու տեսակետեն, ինչպես որ այդ մասին շարունակ կը հայտարարեին թուրք պետական գործիչները»⁵³²:

Ստորև ներկայացնում ենք այդ կարևոր փաստաթղթի տեքստի մեր կողմից կատարված թարգմանությունը:

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Մուհթար բեյի⁵³³ ծածկագիրը Արևելյան ռազմաճակատի հրամատար Քյազըմ Քարաբեքիր փաշային

⁵³¹ Hariciye Vekili Ahmet Muhtar, Şark Cephesi Kumandanlığına, Ankara, 8/11/1336. - K. Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.

⁵³² Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթնք, 1930, էջ 263:

⁵³³ Ահմեթ Մուհթար, հետագայում ընդունել է Մոլլաօղլու ազգանունը (1870-1934): Դիվանագետ, փոխարտգործնախարար, 1920 – 1921թթ. հաճախակի

(8 նոյեմբերի 1920 թ.)⁵³⁴

Անկարա
8/11/1336

Արևելյան ռազմաճակատի հրամանատարությանը

Կասկած չկա, որ Հայաստանի զինադադարի առաջարկը այս պահին, երբ նա մեկուսացված է և արևմտյան, և արևելյան աշխարհներից, նպատակ ունի խուսափել վրա հասնող աղետից: Ուժեղանալուն պես Հայաստանը, բնականաբար, կաշխատի իրականացնել Սևրի պայմանագրով իր վրա դրված Արևելքի հետ մեր կապը կտրելու պարտականությունը, ինչպես նաև հույների հետ համատեղ կխաթարի մեր կյանքն ու զարգացումը: Անհնարին է, որ Հայաստանը, որը գտնվում է մեծ մահմեդական շրջանակի կենտրոնում, այդ դաժան ժանդարմի պարտականությունից սրտի համոզմունքով հրաժարվի և որոշի իր բախտը լիովին կապել Թուրքիայի և իսլամականության հետ: Այդ պատճառով, բացարձակ անհրաժեշտություն է, որ Հայաստանը քաղաքականապես ու նյութապես մեջտեղից վերացվի: Դրա հետ մեկտեղ, քանի որ այդ նպատակի իրականացումը կախված է մեր հզորության ընձեռած հնարավորությունից և ընդհանուր քաղաքական իրադրության բարենպաս-

փոխարինում էր երկարատև արտասահմանյան գործողություններում գտնվող քենալական Թուրքիայի առաջին արտգործնախարար Բեքիր Սամիին: Եղել է Օսմանյան կայսրության դեսպանը Հունաստանում, Ուկրաինայում, հանրապետության տարիներին զբաղեցրել է դեսպանի պաշտոններ Մոսկվայում ու Վաշինգտոնում: Բազմիցս ընտրվել է Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի պատգամավոր:

⁵³⁴ Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959–1960, s. 901. Փաստաթուղթը հայերեն ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ: Նրա առանձին հատվածների հայերեն թարգմանությունը ժամանակին տպագրել է Ե. Ղ. Սարգսյանը: Տես. Երվանդ Սարգսյան, Հայադավություն. – Հայաստանի աշխատավորուհի, 1991, N. 3, էջ. 1–2 և Երվանդ Սարգսյան, Դավադիր գործարք Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա. Երևան, 1995, էջ. 170 – 171: Այդ երկու թարգմանությունները զգալիորեն տարբերվում են մեկը մյուսից և շեղվում են բնագրից: Փաստաթղթին անդրադարձել է նաև Վահագն Տատրյանը, տես. Vahagn N. Dadrian, The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Oxford, 1995, p. 358.

տությունից, ապա անհրաժեշտ է վերևում նշված կարևոր նախապայմանների համաձայնեցված նախապատրաստում: Դրանից բխում է, որ քննարկման առարկա չի կարող լինել հայերի հետ պարզ մի զինադադարի համաձայնության արդյունքում մեր հետ քաշվելը: Հայերին փոխանցվող զինադադարի հիմնադրույթները պիտի ուղղված լինեն ոչ թե Հայաստանից դուրս գալուն, այլ հայերին մոլորեցնելուն և Եվրոպայի նկատմամբ խաղաղասեր երևալուն: Սակայն իրականում նրանց արդյունքը պիտի լինի մեր նպատակի աստիճանաբար նախապատրաստման ու հասունացման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը:

Ներկայումս բացարձակ անհրաժեշտություն է գորացրել հայկական բանակը և բռնագրավել նրա զենքը՝ այդպիսով հնարավորություն չտալով, որ վերականգնվի նրա ռազմական կառույցը: Երկաթուղիները հսկողության տակ պահելու և մահմեդական ազգաբնակչության իրավունքները պաշտպանելու պատրվակով անհրաժեշտ է մեր ռազմական հսկողությունը հաստատել Հայաստանի ողջ տարածքի վրա և այդպիսով մեր ձեռքում պահել Թուրքիան Ադրբեջանին կապող բոլոր ճանապարհները: Վերը նշված այդ նպատակը պիտի իրականացնել քողարկված ու փափուկ ձևով՝ ինչպես խաղաղության պայմանագրի տեքստում, այնպես էլ նրանից բխող գործողություններում՝ հայերի աչքերում մշտապես խաղաղասեր երևալու պայմանով:

Հայկական կառավարությանը հանձնելու նպատակով այսօր Ձեզ ուղարկված զինադադարի պայմանների⁵³⁵ առաջին կետով սահմանի վերաբերյալ հանրաքվեի սկզբունքի ընդունումը բխում է Հայաստանի հետ սահմանների վերջնական որոշմանը խոչընդոտելու ձգտումից: Կարող եք ժամանակավորապես ընդունել Բրեստ Լիտովսկի սահմանի գիծը, քանի որ նպատակ է դրված այդ հարցում հայերի ձեռքից նախ և առաջ սահմանի վերաբերյալ զրավոր առաջարկ ստանալ և այդպիսով խոչընդոտել բանակցությունների փակուղի մտնելուն: Սակայն անհրաժեշտ է հարատև միջամտության համար հող նախապատրաստել՝ սահմանի մյուս կողմում մնա-

⁵³⁵ Ի նկատի ունի Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը փոխանցվելիք փաստաթուղթը:

ցող մահմեդական փոքրամասնության իրավունքները պաշտպանելու պատրվակով: Պիտի պայմանագրի մեջ մտցնել կետեր, որոնք կապահովեն հնարավորինս արագ թշնամու ձեռքից զենքի բռնագրավումը և նրա բանակի զորացրումը: Անհրաժեշտ է հատուկ ջանքեր գործադրել քայլ առ քայլ տարածաշրջանի թուրքերին զինելու և ազգային զինված ուժեր ստեղծելու ուղղությամբ: Նրանք պիտի կապեն միմյանց հետ Արևելքն ու Արևմուտքը և դարձնեն Ադրբեջանը ինքնուրույն թուրքական պետություն:

Կառավարության իրական նպատակը պարունակող այս հրահանգը գաղտնի է: Այն նախատեսված է միայն Ձեզ համար:

Խնդրում ենք գրավոր հայտնել այս գաղտնագրի լրիվ վերծանման մասին:

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար
Ահմեթ Մուխթար

Մեր ձեռքի տակ եղած այս և նաև այլ թուրքական վավերագրերը ցույց են տալիս, որ քեմալականների իրական պատկերացումները թուրքիայի պետական շահի վերաբերյալ տրամազծորեն այլ էին, քան թե կարծում էին հայ ղեկավարները: Նրանց իրական նպատակները պարզելու համար կարևոր նշանակություն ունի Մուսթաֆա Քեմալի ելույթը ԹԱՄԺ-ի 1920 թ. նոյեմբերի 18-ի փակ նիստում, որտեղ նա, հենվելով գլխավոր սպայակույտի եզրահանգումների վրա, նշում է, որ Հայաստանի դեմ ռազմական գործողությունները նպատակ ունեին ցամաքային կապ հաստատել Ադրբեջանի հետ⁵³⁶: Այդպիսով, հերքվում է ավելի ուշ՝ 1927 թ., նույն Աթաթյուրքի արտասանած հայտնի «ճառում» ի լուր աշխարհին ծառուցած Հայաստանի դեմ պատերազմի պատճառի «պաշտոնական» մեկնաբանությունը. – «1920 թ. աշնանը հայերի կողմից իրակա-

նացվող վնասարար գործողությունները դարձան անտանելի: Ռոշուն ընդունեցինք զնալ Հայաստանի վրա»⁵³⁷:

Լավատեղյակ թուրք հեղինակները գրում են, որ Հայաստանի դեմ ռազմական գործողություններ սկսելու ծրագրի հեղինակը հենց Մուսթաֆա Քեմալն էր: Նա դեռևս 1920 թ. փետրվարին հանգել էր եզրակացության, թե «կովկասյան պատը» այսինքն՝ Հայաստանը, հետևից պիտի քանդվի⁵³⁸: Քեմալականների բացահայտ պանթյուրքիստական նպատակները հաստատվում են նաև վերևում արդեն նշված վավերագրով: Ակնհայտ է, որ այն գաղտնի ծածկագրերը, որոնք ուղարկվում էին Անկարայից արտագործնախարարի պաշտոնակատար Մուխթար բեյի ստորագրությամբ, արտահայտում էին առաջին հերթին հենց Մուսթաֆա Քեմալի մտեցումները ու գնահատականները:

Թուրքական վավերագրերը վկայում են, որ սկսելով պատերազմը՝ թուրք պարագլուխները ունեին ավելի «համեստ» նպատակ՝ ոչնչացնել ոչ թե Հայաստանը, այլ միայն նրա զինված ուժերը: Այդ է փաստում սեպտեմբերի 20-ին գլխավոր սպայակույտի պետ Իսմեթ բեյի արձակած հրամանը Հայաստանի դեմ հարձակում ձեռնարկելու վերաբերյալ: Դիմելով Արևելյան ռազմաճակատի հրամանատարությանը, նա գրում է. – «Մեր բուն նպատակը հայկական զինված ուժերի ոչնչացումն է»⁵³⁹: Հրամանում նշված է, որ այդ փաստաթղթի համար հիմք է ծառայել ԹԱՄԺ-ի համապատասխան որոշումը, որը ստացել է նաև կառավարության հավանությունը:

Սակայն հետագայում մի քանի ճակատամարտերում պարտության մատնելով հայկական բանակին և տեսնելով, որ Հայաստանը մեկուսացված ու լքված է իր դաշնակիցների կողմից՝ թուրքիայի ղեկավարությունը սկսեց փոփոխություններ մտցնել իր ծրագրերի մեջ: Այդ գործընթացը, որը կարելի է համարել թուրք-հայկական պատերազմի առանցքային իրադարձություններից մեկը, տևեց մի քանի օր և առաջացրեց վեճեր քեմալականների դե-

⁵³⁶ [Atatürk], Erzurum Mebusu İsmail Beyle Rüfekasının, Ermenistan Sulh Şeraiti Hakkında İstizah Takriri ve Hariciye Vekâleti Vekili Muhtar Beyin Cevabı Münasebetiyle Sözleri. - [Atatürk] Atatürk'ün T.B.M.M. açık ve gizli oturumlarındaki konuşmaları. Yayına hazırlayan: Kâzım Öztürk. Ankara, 1990, s. 322.

⁵³⁷ Kemal Atatürk, Nutuk. Cilt: II, 1920 – 1927. İstanbul, 1961, s. 486.

⁵³⁸ T. Bıyıklıoğlu, Atatürk Anadolu'da (1919 - 1921). Ankara, 1959, s. 19.

⁵³⁹ Այդ ուղագրով փաստաթուղթը առանց կրճատումների հրատարակել է իր հուշագրություններում Իսմեթը: Տե՛ս Ի. İnönü, Hatıralar: 1. kitap. Yayına hazırlayan: Sabahattin Selek. Ankara, 1985, s. 222.

կավար շրջանակներում: Թուրքական աղբյուրները հնարավորություն են տալիս պարզաբանելու նրա որոշ մանրամասներ:

Քյազըմ Քարաբեքիրի հուշերից պարզ է դառնում, որ նա Կարսի գրավման հաջորդ օրը՝ հոկտեմբերի 31-ին, հեռագրով հայտնում է քեմալականների ռազմական նախարար Ֆեվզի փաշային (Չաք-մաք) իր տարած հաղթանակի մանրամասները՝ նշելով, մասնավորապես, որ բռնագրավված ռազմավարի քանակը այնքան մեծ է, որ կարող է բավականացնել տասը տարի պատերազմ մղելու համար⁵⁴⁰: Ուշագրավ է, որ Քարաբեքիրի այդ հեռագիրը ստանալուց երկու օր հետո՝ նոյեմբերի 2-ին, ԹԱՄԺ-ի կառավարությունը դիմում է Հայաստանի կառավարությանը՝ առաջարկելով անհապաղ սկսել բանակցություններ՝ խաղաղություն հաստատելու նպատակով⁵⁴¹: Այդ փաստաթուղթը գրված է բավական փափուկ ոճով, չի պարունակում վերջնագրային բնույթի դրույթներ և, ըստ էության, խաղաղության բանակցություններ սկսելու առաջարկ է:

Քեմալականների կողմից խաղաղության բանակցությունների վերաբերյալ նման զգուշավոր առաջարկով Հայաստանին դիմելը վկայում է, որ այդ պահին նրանք դեռևս լուրջ մտավախություններ ունեին, որ Կարսի գրավումը կարող է հանգեցնել ծանր դիվանագիտական բարդությունների և այդ պատճառով փորձում էին մեղմել իրենց ոտնձգությունները Հայաստանի տարածքի նկատմամբ: Ինչպես վկայում է իր հուշագրություններում Իսմեթը, Անկարայի քաղաքական շրջանակները միանշանակ մոտեցում չունեին Հայաստանում Կարաբեքիրի բանակի սրընթաց առաջխաղացման նկատմամբ: Կային գործիչներ, որոնք կարծում էին, թե այդ հաղթարշավը կարող է վնասակար լինել ընդհանուր և վերջնական հաղթանակի հասնելու տեսանկյունից⁵⁴²: Այդ նույն օրերին ԹԱՄԺ-ի մի քանի պատգամավորներ նույնիսկ հանդես եկան հարցապնդմամբ՝ պահանջելով բացատրություններ, թե ինչու կառավարությունը Հայաստանի դեմ պատերազմը ընդլայնում է առանց ԹԱՄԺ-ի թույլտվու-

յան⁵⁴³: Այս ամենը վկայում է, որ այդ օրերին քեմալականների դեկավար շրջանակներում առաջացել էին տարածայնություններ Հայաստանի նկատմամբ հետագա գործողությունների վերաբերյալ:

Սակայն Քարաբեքիրին խորթ էին նման տատանումները: Նա համոզված էր, որ պիտի շարունակել առաջխաղացումը դեպի Հայաստանի տարածքի խորքերը, դեպի Ալեքսանդրապոլ և միայն դրանից հետո սկսել խաղաղության բանակցությունները: Այդ պատճառով նա որոշում է սկսել գործել իֆքնուրույն՝ անտեսելով կառավարության դիրքորոշումը: Նոյեմբերի 3-ին, թողնելով Կարսում միայն հազար հոգանոց զինված ջոկատ, որը կազմված էր նախօրեին Սամսունից ժամանած «կամավորներից», որոնք շտապել էին միանալ կանոնավոր բանակին թալանելու նպատակով, Քարաբեքիրը իր հրամանատարության տակ գտնվող բանակի առավել մարտունակ զորամիավորումներով սկսում է առաջխաղացումը դեպի Ալեքսանդրապոլ՝ այդ կարևորագույն քաղաքը նույնպես գրավելու նպատակով⁵⁴⁴:

Մինդեռ հայկական զորքերը դեռ չէին կորցրել իրենց մարտունակությունը: Արդեն հաջորդ օրը Քըզըլչախչախի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայկական բանակը կատաղի դիմադրություն ցույց տվեց և զգալի կորուստներ պատճառեց հակառակորդին: Միայն երեկոյան այն կազմակերպված լքեց դիրքերը և նահանջեց⁵⁴⁵:

Քարաբեքիրի առաջխաղացումը նախապես չէր համաձայնեցված Անկարայի հետ. ինչպես ինքն է նշում իր հուշագրություններում, Ալեքսանդրապոլի վրա հարձակման մասին «ես տեղյակ պահեցի (ընդգծումը մերն է՝ Ռ. Ս.) Գլխավոր սպայակալուտի հրամանատարությանը»⁵⁴⁶: Թերևս, նա համոզված չէր, որ ներկա փուլում կառավարությունը կարտոնի նրա հետագա հարձակողական գործողությունները:

⁵⁴⁰ K. Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 898.

⁵⁴¹ Տեքստը տե՛ս Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը. Աթևք. 1930, էջ 245 - 246:

⁵⁴² İ. İnönü, Hatıralar: 1 Kitap. Yayına hazırlayan: Sabahattin Selek. Ankara, 1985, s. 222.

⁵⁴³ Siyasi kırımlıklar: 15 gün gizli tutulan görev. – Tercüman, 4 Mayıs 1993.

⁵⁴⁴ K. Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 899.

⁵⁴⁵ է. Ա. Չոհրաբյան, 1920 թ. թուրք – հայկական պատերազմը և տիրությունները. Երևան, 1997, էջ 273 - 274:

⁵⁴⁶ K. Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 899.

Անկարայի կառավարության զգուշավոր դիրքորոշման պատճառը արտաքին գործոնն էր: Ըստ էության, քեմալականների ղեկավարները հաշվի էին առնում երեք երկրների դիրքորոշումը՝ Մեծ Բրիտանիային, Խորհրդային Ռուսաստանին և Վրաստանին: Նրանցից ամենակարևորը, անտարակույս, երկուսն էին՝ Մեծ Բրիտանիան և Խորհրդային Ռուսաստանը: Սակայն դեռևս վերջնականապես պարզված չէր նաև Վրաստանի դիրքորոշումը: Կառավարական շրջանակներում կար մտավախություն, որ վրացիները, օգտվելով իրադրությունից, կարող են զավթել փաստացի անպաշտպան մնացած Կարսը: Մանավանդ, ինչպես վկայում է իր հուշերում Քարաբեքիրը, նոյեմբերի 3-ին նա ստացել էր Արդահանում տեղակայված վրացական բանակի հրամանատարի վերջնագրային բնույթի ուղերձը, որտեղ ընդգծվում էր, որ եթե թուրքերը դուրս գան Կարսից և անցնեն վրացիների նախանշած գիծը, ապա վերջիններս կհարձակվեն նրանց վրա⁵⁴⁷:

Հաշվի առնելով վերևում նշված հանգամանքները՝ գլխավոր սպայակույտը, ստանալով Քարաբեքիր փաշայի զեկույցը Ալեքսանդրապոլի գրավումը նախապատրաստելու վերաբերյալ, հրամայում է. «Այդ գործողությունը վտանգավոր է: Վրացիների հարձակումը Կարսի վրա չի կարելի բացառել: Այդ պատճառով պիտի անհապաղ վերադառնալ Կարս»⁵⁴⁸: Քարաբեքիրը անհամաձայնություն է հայտնում գլխավոր սպայակույտի այդ հրամանի հետ, չի ենթարկվում նրան և շարունակում է առաջ շարժվել Ալեքսանդրապոլի ուղղությամբ:

Ծածկագրերի՝ վերը նշված փոխանակումը Անկարայի ու Քարաբեքիրի միջև տեղի է ունեցել նոյեմբերի 5-ին: Արդյունքում, թուրքական զորքերը, չենթարկվելով Գլխավոր սպայակույտի հրամանին, նույն օրվա երեկոյան դիրքեր զբաղեցրին Ալեքսանդրապոլից դեպի արևմուտք գտնվող բարձունքների վրա և այդպիսով անմիջական վտանգ ստեղծեցին քաղաքի համար: Հաջորդ օրվա առավոտյան Քարաբեքիրը ստացավ Հայաստանի կառավարության առաջարկը զինադադար հաստատելու մասին, որը ուղարկվել էր

դեռևս նոյեմբերի 3-ին: Քարաբեքիրը այն փոխանցեց իր ղեկավարությանը և չսպասելով նրանից համապատասխան ցուցումների՝ անհապաղ ներկայացրեց հայկական կողմին վերջնագրային բնույթի մի շարք պահանջներ: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 7-ին, հայկական կողմը, ընդունելով վերջնագրի պայմանները, Ալեքսանդրապոլը հանձնեց թուրքերին: Այսպիսով՝ Քարաբեքիրի ինքնագուլիս գործողությունները պսակվեցին աննախադեպ հաջողությամբ: Պատերազմը, փաստորեն, ավարտված էր:

Կարաբեքիրի այդ հաջողությունը արագացրեց կառավարության և գլխավոր սպայակույտի կողմից Հայաստանի հետ պատերազմում թուրքիայի վերջնական նպատակների վերածնակերպման գործընթացը: Այն խտացված ձևով արտահայտվեց զինադադարի վերաբերյալ հայկական կողմին ուղղված երկու վերջնագրերի տեքստերում⁵⁴⁹: Առաջինը՝ թվագրված նոյեմբերի 6-ով, պարունակում էր ավելի մեղմ պահանջներ, քան թե երկրորդը, որը ներկայացվել էր ընդամենը երկու օր անց՝ նոյեմբերի 8-ին: Նրանցից առաջինը արդյունք էր Քարաբեքիրի «ինքնագործունեության», որի համար, ամենայն հավանականությամբ, հիմք էր ծառայել արդեն հիշատակված Անկարայի կառավարության նոյեմբերի 2-ի համեմատաբար ավելի մեղմ պահանջներ ներկայացնող նոտան, իսկ երկրորդը գրված էր քեմալական շարժման պարագուլիսների կողմից կատարված իրադրության վերագնահատումներից հետո: Այս վերջինի համար հիմք էր ծառայել ԹԱՄԺ-ի կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեթ Մուհթարի նոյեմբերի 8-ով թվագրված հույժ գաղտնի ծածկագիրը, որին արդեն անդրադարձել ենք:

Ուսանելի է համեմատել այդ ծածկագրված փաստաթուղթը նույն օրվա ընթացքում և նույն ղեկավար գործչի կողմից ստորագրված մեկ այլ պաշտոնական փաստաթղթի հետ՝ Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը ուղարկված և Թուրքիայի կողմից առաջարկվող խաղաղության ընդհանուր պայմանները պարունակող նամակի հետ. այսինքն դիվանագիտական բնույթի վավե-

⁵⁴⁷ K. Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 899.

⁵⁴⁸ K. Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 899.

⁵⁴⁹ Վերջնագրերի տեքստերը տես. Ս. Վրացյան, Հայաստանի հանրապետություն. Երևան, 1993, էջ 511 – 513:

րագրի, որը նախատեսված էր “արտաքին օգտագործման” համար⁵⁵⁰.

Այսպես, օրինակ, եթե առաջինը շեշտում էր, որ Հայաստանը որպես ինքնուրույն գործոն պիտի ոչնչացվի, ապա երկրորդում խոսվում էր այն մասին, որ Թուրքիան ամեն ինչ կանի, որ օգնի Հայաստանին սննդամթերքով և կաջակցի նրա տնտեսության զարգացմանը: Հայաստանի կառավարությանն ուղղված նամակում նշվում էր. թե «թուրք – հայկական սահմանի որոշումը պիտի լինի պարզ վիճակագրության ու հանրաքվեի հարց», իսկ ծածկագիրը բազատրում էր դիվանագիտական հնարքներից հեռու փաշային, որ այդ առաջարկի նպատակը «բխում է սահմանի որոշմանը խոչընդոտելու ձգտումից»...

Հենվելով Անկարայից ստացված նոր ցուցումների վրա՝ Քարաբեքիրը և ներկայացրեց չափազանց ծանր պայմաններ պարունակող երկրորդ վերջնագիրը:

Բնութագրելով հայ-թուրքական պատերազմի ժամանակ Քարաբեքիրի գործունեությունը՝ պիտի հաշվի առնել այն հանգամանքը, որ նա, ըստ էության, խաղում էր երկակի խաղ. ցուցադրելով հավատարմությունն Սուսթաֆա Քեմալին՝ նա միաժամանակ չէր խզում իր կապերը այդ շրջանում ակտիվ գործունեություն ծավալած երիտթուրքերի պարագլուխներից՝ տխրահռչակ էնվեր փաշայի հետ⁵⁵¹ և նույնիսկ որոշ դեպքերում գործում էր՝ համաձայն վերջինիս ցուցումների⁵⁵²: Էնվերը իր հերթին ամեն կերպ աջակցում էր Քարաբեքիրին: Մասնավորապես, իր ղեկավարությամբ Բաքվում ստեղծված «Թուրքական կոնունիստական կուսակցության» հիմնադիրներից հայտնի երիտթուրք գործիչ Ֆուաթ Սաբիթը⁵⁵³ (Աղա-

⁵⁵⁰ Stępa և տե՛ս. Sulh Şartlarımız, Ankara, 8/11/1920. – K. Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 900.

⁵⁵¹ Այդ շրջանում Քարաբեքերի և էնվերի միջև փոխանակված բազմաթիվ նամակները գետնից են Քարաբեքերի գրքերից մեկում. K. Karabekir, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki erkânı. İstanbul, 1967.

⁵⁵² M. Çulcu, Spekülatif marjinal tarih tezleri. 6. Baskı. İstanbul, 2000, s. 281 – 282.

⁵⁵³ D. Avcioglu, Millî kurtuluş tarihi 1836'den 1995'e. İstanbul, 1976, s. 487.

ջըք) գործում էր որպես Քարաբեքիրի “կապավոր պաշտոնյա” և ուղարկում էր նրան զեկուցագրեր⁵⁵⁴:

Մեր կողմից օգտագործված փաստաթղթերի մեծ մասը վերցված է Հայաստանի դեմ պատերազմելու նպատակով ստեղծված Արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազըմ Քարաբեքիր փաշայի գրչին պատկանող գրքերից: Նրա ղեկավարած բանակը, որին միացել էին բազմաթիվ զինված ավազակախմբեր, ներս խուժեց Հայաստան՝ ամենուրեք տարածելով մահ ու ավերածություն: Այդ «հերոսությունների» համար Քարաբեքիրին շնորհվեց Ֆերիքի (գեներալ-լեյտենանտի) զինվորական կոչում⁵⁵⁵, իսկ պատերազմի ավարտից հետո նա պարգևատրվեց «Կանաչ և կարմիր ժապավեններով Անկախության մեդալով»⁵⁵⁶ և մտավ հանրապետական Թուրքիայի պաշտոնական պատմության տարեգրության մեջ որպես «Արևելքի նվաճող»⁵⁵⁷: Իր անկախ հայացքներով աչքի ընկնող թուրք պատմաբան Ջեմալ Քուբային ժամանակին Քարաբեքիրի գործունեությանը տվել է ավելի իրական գնահատական, բնութագրելով այն որպես «Հայաստանի ոչնչացում»⁵⁵⁸:

Սակայն այդ փառամոլ թուրք փաշան չգոհացավ իր պետության կողմից ստացած պարգևներով: Նա որոշեց ուսումնասիրել իր իսկ կողմից սրի քաշած ժողովրդի պատմությունը և բացատրել նրան, թե նա «որտեղից է եկել և ուր է գնում»⁵⁵⁹: Ինքնավստահա-

⁵⁵⁴ Doktor Fuad Sabit, Kâzım Karabekir Paşa Hazretlerine, Bakû, 25 Teşrinisani 1920. – K. Karabekir, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki erkânı. İstanbul, 1967, s. 78 – 80.

⁵⁵⁵ M. Erat, Kâzım Karabekir Paşa'nın Ermeniler üzerine harekâtı (1920). – Kafkas Araştırmaları, II, 1996, s. 102.

⁵⁵⁶ M. Erat, H. Yılmaz, Kâzım Karabekir'in hayatı ve Çanakkale savaşlarındaki rolü. – T.C Çanakkale Onsekiz Mart Üniversitesi Eğitim Fakültesi Tarih Öğretmenliği, 4: Çanakkale Savaşı Semineri, 2003, s. 17.

⁵⁵⁷ Ş. Turan, Türk Devrim tarihi II: ulusal direnişten Türkiye Cumhuriyeti'ne. İstanbul, 1992, s. 202.

⁵⁵⁸ C. Kutay, Karabekir Ermenistan'ı nasıl yok etti? İstanbul, 1956.

⁵⁵⁹ Քարաբեքիրը 1946 թ., երբ հերթական անգամ արդիականացել էր Հայկական հարցը, ավարտեց հայերին նվիրված իր գրքի ձեռագիրը, որը այդպես էլ վերնագրված էր. “Հայերը որտեղից են եկել, ու՞ր են գնում”: Այն, ինչպես և նրա գրչին պատկանող այլ գրքեր, լույս տեսավ տասնամյակներ անց՝ “Հայկական դոսյե” խորագրի ներքո: Տե՛ս. K.

բար հայտարարելով, որ ծանոթ է հայերի մասին գոյություն ունեցող համարյա ողջ գրականությանը⁵⁶⁰։ Քարաքեքիորը հանգեց մի «եզրակացության», որը նույնիսկ հայերի նկատմամբ թուրքական վերնախավի ամենատարբեր ներկայացուցիչների կողմից տասնամյակների ընթացքում արտահայտված տեսակետների շրջանակում աչքի է ընկնում բացառիկ ցինիզմով։ Պատմության խորքերը «թափանցած» թուրք փաշան պարզելով, որ «գոյություն ունեն ապացույցներ հայերի՝ թուրքական ծագում ունենալու մասին»⁵⁶¹, պահանջեց, «Հայերը պիտի անեն հետևյալը. մամուլով նրանք պիտի սեր տարածեն թուրքի նկատմամբ...»⁵⁶²։

Այսպիսի հայատյացի վրա էին դրել քեմալականների պարագլուխները Հայաստանը կործանելու և հայ ժողովրդի ցեղասպանությունը շարունակելու խնդիրը։ Սակայն այս անգամ թուրքերի ծրագրերը մնացին անավարտ։ Եջշտ է, Հայաստանը կրեց ծանրագույն պարտություն, սակայն «մեջտեղից չվերացավ» և ընդգրկվեց խորհրդային կայսրության կազմում, ինչը հնարավորություն տվեց հայ ժողովրդի մեկ հատվածին փրկվելու ֆիզիկական բնաջնջումից։

Karabekir, Ermeni dosyası. Yayına hazırlayan Prof. Faruk Özerengin. İstanbul, 1994.

⁵⁶⁰ K. Karabekir, Ermeni dosyası. Yayına hazırlayan Prof. Faruk Özerengin. İstanbul, 1994, s. 29.

⁵⁶¹ K. Karabekir, Ermeni dosyası. Yayına hazırlayan Prof. Faruk Özerengin. İstanbul, 1994, s. 40.

⁵⁶² K. Karabekir, Ermeni dosyası. Yayına hazırlayan Prof. Faruk Özerengin. İstanbul, 1994, s. 42.

Վերջաբանի փոխարեն

ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ

Ժամանակակից ցեղասպանագիտության մեջ լայն տարածում է ստացել տարբեր ցեղասպանությունների համեմատական ուսումնասիրումը։ Համապատասխանաբար, ուշադրություն է դարձվել համեմատական հետազոտությունների մեթոդաբանական կողմի վրա։ Մասնավորապես, առաջարկվել է «ցեղասպանությունների տարբեր դեպքերի համեմատության և ուսումնասիրման մատրիցա»⁵⁶³։ Սակայն բացակայում են պետության բարձրագույն մարմինների կողմից նախապատրաստված ցեղասպանական ծրագրերի՝ կամ այլ համանման փաստաթղթերի համեմատական ուսումնասիրությունները։ Նշանակում է՝ չկա նաև համապատասխան մեթոդաբանություն։ Այդ պատճառով մենք ստիպված ենք առաջարկել մեր մեթոդը, որը կարելի է անվանել *համեմատական-կառուցվածքային*։ Այն իր մեջ ներառում է համեմատական, ինչպես նաև կոնկրետ տեքստերի հետազոտությունների տարրեր և հնարավորություն է տալիս լավագույնս քննության առնելու ամերիկացի հասարակագետ Սթիվըն Քացի կողմից նշված ցեղասպանության վերլուծության երեք հիմնական հարցերը. բնորոշում, փաստացի նյութ և մեկնաբանություն⁵⁶⁴։

Այդ տեսանկյունից համեմատելով 1915 թ. ծրագիրը 1876 թ. փաստաթղթի հետ՝ կարելի եզրակացնել, որ թուրքական վերնախավը անցած չորս տասնամյակների ընթացքում զգալիորեն հմտացել էր ցեղասպանություն նախապատրաստելու ու համապատասխան գործողությունների ծրագիր ստեղծելու գործում։ Մասնավորապես,

⁵⁶³ W. K. Ezell, Investigating genocide: a catalog of known and suspected cases, and some categories for comparing them. - Remembering for the future: working papers and agenda. Volume III: the impact of the holocaust and genocide on Jews and Christians. Oxford, 1989, p. 2880 – 2892.

⁵⁶⁴ S. T. Katz, Quantity and Interpretation: Issues in the Comparative Historical Analysis of the Holocaust. - Remembering for the Future: Working Papers and Addenda. Volume III: The Impact of the Holocaust and Genocide on Jews and Christians. Oxford, 1989, p. 2510.

մի ողջ ազգի բնաջնջման գործընթացը 1915 թ. վավերագրերում ծրագրավորված է իրականացնել պետական տարբեր մարմինների համակարգված և մեկ կենտրոնից ղեկավարվող տարաբնույթ գործողությունների միջոցով: Դրանց թվին են պատկանում, օրինակ, և բռնի տեղահանությունը, ընդ որում, այն պօգտագործվելու էր որպես քող՝ ֆիզիկական բնաջնջման համար, և հայ ազգաբնակչության նախապես ընտրված որոշակի խմբերի զանգվածային ոչնչացումը ու բռնի մահմեղականացումը և այլն: Նշված է, թե պետական որ կառույցն է իրականացնելու բնակչության որ խմբի ոչնչացումը: Հաշվի է առնված նաև ժամանակի գործոնը՝ նշված է գործողությունների միաժամանակյա իրականացման անհրաժեշտությունը:

Հատուկ ուշադրություն է դարձվում քողարկիչ միջոցառումների իրականացման և հույժ գաղտնիության պահպանման անհրաժեշտության վրա: Կարևոր հանգամանք է այն, որ նշված ցեղասպանական գործողությունները նախատեսված է իրականացնել ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլ ողջ կայսրության տարածքում:

1876 թ. ծրագրում բոլոր այդ բաղադրիչները բացակայում են: Այն պարզապես պարունակում է ժամանակակից հասկացողությամբ ցեղասպանական գործողությունների որոշակի մի ընդհանրություն, որը նախատեսված էր իրականացնել միայն Բուլղարիայի տարածքի վրա: Չեն նշված նրանց իրականացման ու ղեկավարման միջոցները, անտեսված են ժամանակի գործոնը և համակարգման անհրաժեշտությունը: Ի տարբերություն 1915 թ. ծրագրի՝ ուշադրություն դարձված չէ գաղտնիության և ցեղասպանական գործողությունների իրական նպատակի քաղաքական հանգամանքի վրա: Դեռ ավելին, ռուսական դիվանագիտական աղբյուրները հայտնում էին, թե նրա գլխավոր հեղինակ Միդիատ փաշան չի էլ թաքցնում այդ ծրագրի գոյության փաստը և «բացահայտորեն խոսում է նրա մասին»⁵⁶⁵:

Ծրագրերի միջև կարևոր տարբերությունից է նաև այն, որ 1876 թ. ծրագիրը ընդունվել է կառավարության նիստի ընթացքում՝

⁵⁶⁵ Вице-консул в Филипполе - Послу в Константинополе, 17 /29 мая 1876г., копия, прил.к предыд. – АВПРИ, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л. 160об.

բննարկումներից ու վիճաբանություններից հետո: Այն ունեցել է իր ընդդիմախոսին՝ ի դեմս կայսրության արտաքին գործերի նախարարի: 1915 թ. ծրագիրը ներկայացնող երեք փաստաթղթերից առաջինը արդյունք է գաղտնի խորհրդակցության, որի ընթացքի մասին ոչ մի մանրամասն հայտնի չէ: Այդ փաստաթուղթը հասարակությունից և նույնիսկ կառավարության որոշ անդամներից պահվել է գաղտնի և սկսել է իրագործվել նույնպես գաղտնիության պայմաններում, ինչպես և պահանջում էր նրա վերջին կետը:

Սակայն կայսրությունով մեկ տեղի ունեցող խաղաղ հայ բնակչության անասելի դաժան ու զանգվածային կոտորածը այլևս անհնարին էր պահել գաղտնի: Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները հայտարարելով դիմում են օսմանյան կառավարությանը՝ նրա անդամների վրա դնելով անձնական պատասխանատվություն թուրքիայի կողմից «մարդկության ու քաղաքակրթության» դեմ իրականացվող հանցագործությունների համար: Թուրքիայի պարագլուխները և միաժամանակ ցեղասպանության ծրագրի հեղինակները հանցագործությունները քողարկելու և պատասխանատվությունից խուսափելու միջոց էին ընտրել հայերի սպանող՝ որպես պատերազմական գոտիներից տեղահանություն ներկայացնելու հնարքը: Հայտարարագրի հրապարակման հաջորդ օրվանից թուրքական իշխանությունները թալեաթի նախաձեռնությամբ, սկսում են ձեռնարկել քայլեր, որոնց նպատակն էր post factum «օրինական» տեսք հաղորդել բռնի տեղահանությանը:

Այսպիսով՝ Հայոց ցեղասպանության հիմնական կազմակերպիչները, լավ գիտակցելով իրենց մեղքը, սկսած կոտորածների արդեն առաջին փուլից, փորձ էին անում խուսափել պատասխանատվությունից: Հայոց ցեղասպանության մասին որոշում ընդունելու վերջին փուլը արտացոլող ներկայումս հայտնի փաստաթղթերի ծագումնաբանական-բովանդակային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ի տարբերություն 1876 թ., երիտթուրք ոճրագործների գործողություններում հենց սկզբից մեծ տեղ է հատկացվել իրականության կեղծմանը ու քողարկմանը:

Որոշ դեպքերում ակնհայտ է ծրագրերում առկա նմանատիպ դրույթների առկայությունը: Այսպես, օրինակ, և 1915 թ. ծրագրի ա-

ռաջին հատվածում, և՛ 1876 թ. ծրագրում հատուկ ընդգծված է սոցիալական-մասնագիտական որոշակի խմբի՝ և՛ բուլղարացի, և հայ *ուսուցիչների* իսպառ բնաջնջման անհրաժեշտությունը: Կամ էլ, բռնի մահմեդականացումը երկու փաստաթղթերում դիտարկվում է որպես ազգի բնաջնջման լրացուցիչ միջոց:

Ընդհանուր առմամբ, 1876 թ. ծրագիրը արտահայտումն է միջանկյալ փուլ՝ միջնադարում Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների նկատմամբ որպես պատժամիջոց լայնորեն կիրառված զանգվածային կոտորածների քաղաքականության և լայնածավալ ցեղասպանության քաղաքականության միջև: Այդ պատճառով այն որպես կոնկրետ ցեղասպան գործողություններ նախանշող փաստաթուղթ «անկատար» է: Ի տարբերություն նրան՝ 1915 թ. ծրագրի կետերը աչքի են ընկնում և նպատակների հստակ նախանշմամբ, և նրանց իրականացմանն ուղղված ու զաղտնիության պայմաններում նախապատրասվող միջոցառումների լավ մտածված մի ողջ համակարգով: Ըստ էության, 1915 թ. պետական ծրագիրը այդ տեսակետից արտահայտումն է այն փաստի, որ թուրքական վերնախավը տասնամյակների ընթացքում «հմտացավ» այլազգիների ու այլադավանների զանգվածային սպանող կազմակերպելու ոճրագործ գործում: Այդ առումով՝ այն կարող է համեմատվել միայն նացիստական Գերմանիայի կողմից հրեաների ցեղասպանությունը ծրագրավորող փաստաթղթերի հետ: Ամեն դեպքում այն անցյալ դարի ամենադաժան փաստաթղթերից է, բացարձակ չարի խտացրած արտահայտումներից:

Մեր կողմից քննության առնված ցեղասպանական բնույթի փաստաթղթերի միջև կա նաև մեկ սկզբունքային տարբերություն: Առաջինը՝ 1876 թվականին, ըստ էության, նպատակ ուներ արմատական միջոցներով *հակազդել* արդեն ընթացող բուլղարական զինված ապստամբությանը: Իսկ երկրորդը՝ 1915 թվականին, արդյունք էր տարիների նախապատրաստական աշխատանքի, որը, փաստորեն, սկիզբ էր առել դեռևս 1910 թ.⁵⁶⁶ և նրա ստեղծման պահին Օսմանյան կայսրությունում հայերի զինված ապստամբու-

⁵⁶⁶ Տե՛ս այդ մասին՝ Ռ. Սաֆրաստյան, Ինչպես էր նախապատրաստվում ցեղասպանությունը. երիտթուրքերը 1910 թ. - Իրան-Նամե Արեվելագիտական հանդես, 1997, 4-5-7, էջ 7:

յուն գոյությունն չունեն: Բացի դրանից, թուրքական իշխանությունները 1890-ականներից սկսած, արդեն ձեռք էին բերել հայ ժողովրդի զանգվածային կոտորած ամենադաժան միջոցներով իրականացնելու «փորձառություն» և 1915 թ., անտարակույս, հաշվի առան այն: Բուլղարների դեպքում, այդ փորձը սահմանափակ էր:

1876 թվականի ծրագիրը այդպես էլ հիմնականում չիրականացվեց: Բուլղարները, չնայած այն հանգամանքին, որ ապրիլյան ապստամբությունը դաժանորեն ճնշվեց, ոչ միայն պահպանեցին իրենց գոյությունը իրենց հայրենիքի տարածքի վրա, այլ նաև շուտով հնարավորություն ստացան նախադրյալներ ստեղծելու ինքնիշխան պետություն ստեղծելու համար: 1915 թ. ծրագիրը իրականացվեց «մեծ հաջողությամբ», քանի որ դրա արդյունքում հայ ժողովուրդը իսպառ բնաջնջվեց իր պատմական հայրենիքի տարածքի մի զգալի հատվածից:

1920 թ. ծրագիրը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում, քանի որ նպատակաուղղված էր ոչ թե հպատակ ժողովրդի դեմ, այլ ինքնիշխան պետության դեմ: Այդ պետության փաստացի ոչնչացումը պետք է հնարավորություն տար ֆիզիկապես բնաջնջելու հայ ժողովրդի կենդանի մնացած հատվածին. այդպիսով՝ «քանդելով պատր» և ուղղակի կապ հաստատելով «մուսուլմանական աշխարհի» մաս կազմող Ադրբեջանի հետ: Այդպիսով, շարունակվելու և ավարտին էր հասցվելու Հայոց ցեղասպանության քաղաքականությունը:

Վերևում նշված փաստաթղթում Հայաստանի «մեջտեղից վերացումը» հիմնավորվում է հետևյալ կերպ. «անհնարին է, որ Հայաստանը, որը գտնվում է մեծ մահմեդական շրջանակի կենտրոնում, ...դաժան ժանդարմի պարտականությունից սրտի հանոգմունքով հրաժարվի և որոշի իր բախտը լիովին կապել Թուրքիայի և իսլամականության հետ»⁵⁶⁷: Նույն փաստաթղթի մեկ այլ տեղ գրված է, որ անհրաժեշտ է «մեր ձեռքում պահել Թուրքիան Ադրբեջանի հետ կապող բոլոր ճանապարհները»⁵⁶⁸: Այս արտահայտությունները բացահայտում են քեմալականների ցեղասպանական ծրագրի շարժառիթը:

⁵⁶⁷ K. Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.

⁵⁶⁸ K. Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.

Նշված են նաև նպատակին հասնելու միջոցները, որոնք ներառում են ինչպես ուժային, այնպես էլ դիվանագիտական գործողություններ: Այսպես, օրինակ, ծածկագիրը ընդգծում է, որ «Ներկայումս բացարձակ անհրաժեշտություն է զորացրել հայկական բանակը, բռնագրավել նրա զենքը՝ այդպիսով հնարավորություն չտալով, որ վերականգնվի նրա ռազմական կառույցը: Երկաթուղիները հսկողության տակ պահելու և մահմեդական ազգաբնակչության իրավունքները պաշտպանելու պատրվակով անհրաժեշտ է ռազմական բռնատիրություն հաստատել Հայաստանի ողջ տարածքի վրա»⁵⁶⁹: Մեկ այլ տեղ նշվում է, որ «Կարող եք ժամանակավորապես ընդունել Բրեստ Լիտովսկի սահմանի գիծը, քանի որ նպատակ է դրված այդ հարցում հայերի ծեռքից նախ և առաջ սահմանի վերաբերյալ զրավոր առաջարկ ստանալ և այդպիսով խոչընդոտել բանակցությունների փակուղի մտնելուն: Սակայն անհրաժեշտ է հարատև միջամտության համար հող նախապատրաստել՝ սահմանի մյուս կողմում մնալիք մահմեդական փոքրամասնության իրավունքները պաշտպանելու պատրվակով»⁵⁷⁰:

Ծածկագիր ծրագիրը բացահայտում է նաև քեմալականների քաղաքականության գաղափարական հենքը: Այն հայտ է դառնում, որ քեմալականները, շարունակելով երիտթուրքերի քաղաքական նախապատվությունները, ապավինում էին պանթուրքիզմի գաղափարական-քաղաքական ուսմունքի վրա. «Անհրաժեշտ է հատուկ ջանքեր գործադրել քայլ առ քայլ տարածաշրջանի թյուրքերին զինելու և ազգային զինված ուժեր ստեղծելու ուղղությամբ, որոնք պիտի կապեն միմյանց հետ Արևելքն ու Արևմուտքը և դարձնեն Ադրբեջանը ինքնուրույն թյուրքական պետություն»⁵⁷¹:

Փաստաթուղթը պարունակում է ձևակերպումներ, որոնք վկայում են, որ նրա հեղինակները հատուկ ուշադրություն էին հատկացնում նաև իրենց հանցավոր գործողությունները քողարկելուն: Ծածկագրում կարդում ենք. «Վերը նշված այդ նպատակը պիտի իրականացնել քողարկված ու փափուկ ձևով՝ ինչպես խաղաղության պայ-

մանագրի տեքստում, այնպես էլ նրանից բխող գործողություններում՝ հայերի աչքերում մշտապես խաղաղասեր երևալու պայմանով»⁵⁷²: Վավերագրի այլ հատվածում իրականությունը քողարկելու ձգտումը ի հայտ է գալիս ավելի բացահայտ կերպով. «Հայերին փոխանցվող զինադադարի հիմնադրույթները պիտի ուղղված լինեն ոչ թե Հայաստանից դուրս գալուն, այլ հայերին մոլորեցնելուն և Եվրոպայի նկատմամբ խաղաղասեր երևալուն: Սակայն իրականում նրանց նպատակը պետք է լինի նախապայմանների ու նպատակի աստիճանաբար նախապատրաստում ու հասունացում»⁵⁷³:

Քեմալականների հեղինակած ծրագիրը ցույց է տալիս, որ նրանք ոչ միայն լավագույնս սերտել էին երիտթուրքերի «ցեղասպանության» դասերը, այլ նաև ցուցաբերում էին նույնիսկ ավելի մեծ «հնտություն»՝ դուրս բերելով ցեղասպանական քաղաքականությունը երկրի սահմաններից դուրս և նախապատրաստելով նրա գործարկումը ինքնիշխան պետության դեմ: Այս վերջին հանգամանքը պարտադրում էր նրանց ավելի մեծ ուշադրություն հատկացնել հանցագործությունը քողարկելու հնարքներին:

Ի մի բերելով մեր կողմից իրականացված վերլուծության արդյունքները՝ նշենք, որ ցեղասպանական ծրագրերի առկայությունը, որոնք ուղղված էին երկու տարբեր ժողովուրդների դեմ՝ և որոնք միմյանցից բաժանված են ավելի քան չորս տասնամյակ ժամանակահատվածով, վկայում է, որ Օսմանյան կայսրության կառավարող շրջանակները ցեղասպանության քաղաքականությունը՝ նրա հարեճագրկման տարբերակով, դիտարկում էին որպես բազմազգ ու բազմադավան կայսրության՝ միատարր պետության վերածելու ու տարածքային ամբողջականությունը պահպանելու արմատական միջոց, իսկ սուլթանի կայսերական կառավարության դեմ ապստամբած թուրք ազգայնականները, Քեմալի ղեկավարությամբ, պատրաստ էին ցեղասպանության քաղաքականությունը կիրառել նաև ինքնիշխան պետության դեմ: Ըստ էության, ցեղասպանության ոճրագործության նախապատրաստումը և իրականացումը դարձել էին պետական գործառույթների քաղաղամաս: Նման դեպքերում,

⁵⁶⁹ K. Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.

⁵⁷⁰ K. Karabekir, İstiklâl harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.

⁵⁷¹ K. Karabekir, İstiklâl harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.

⁵⁷² K. Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.

⁵⁷³ K. Karabekir, İstiklâl harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.

համաձայն որոշ հետազոտողների, կարելի է խոսել նույնիսկ որոշակի *համառության* մասին, որը ցուցաբերում է տարիների ընթացքում տվյալ պետության կառավարող վերնախավը՝ հետապնդելով ցեղասպանական նպատակներ, նույնիսկ եթե նրանք որոշ դեպքում չեն ստանում համապատասխան ձևակերպում⁵⁷⁴:

Այս եզրակացությունը ուժեղացնում է այն հետազոտողների դիրքերը, որոնք առաջարկում են բնութագրել Օսմանյան կայսրությունը իր գոյության վերջին կեսդարյա ժամանակահատվածում որպես «ցեղասպան» կամ «ոճրագործ» պետություն: Այս մոտեցումը կհսում են այնպիսի ճանաչված ցեղասպանագետներ, ինչպիսիք են Լեո Բուփըրը⁵⁷⁵, Իրվինգ Լուիս Յորոպիցը⁵⁷⁶, Իվ Թերնոնը⁵⁷⁷ և այլք: Մենք նույնպես կողմնակից ենք այդ մոտեցմանը⁵⁷⁸:

Միաժամանակ, Օսմանյան կայսրության օրինակով պետականորեն նախապատրաստված ցեղասպանությունների ծրագրերի համեմատական-կառուցվածքային ուսումնասիրումը և ժամանակի ընթացքում նրանց հիմնադրույթների կերպարանափոխման օրինաչափությունների բացահայտումը հնարավորություն են տալիս գիտական լուրջ հիմքի վրա դնելու ընդհանրապես «ցեղասպան» պետության ծագումնաբանության հայեցակարգային մի շարք կարևոր խնդիրների հետազոտումը: Այսպես՝ կարևորվում է կառավարող կուսակցության դերը: Եթե այն ամբողջատիրական է և զավթելով իշխանությունը նույնացնում է իրեն պետության հետ, միանձնյա, անտեսելով ժողովրդավարության սկզբունքները և ստեղծելով կառավարման բռնապետական համակարգ, ինչպես

⁵⁷⁴ F. Chalk, Definitions of genocide and their implications for prediction and prevention. - Remembering for the future: working papers and agenda. Volume III: The impact of the holocaust and genocide on Jews and Christians. Oxford, 1989, p. 2382.

⁵⁷⁵ L. Kuper, Genocide: its political use in the twentieth century. New Haven and London, 1981.

⁵⁷⁶ I. L. Horowitz, Taking lives: genocide and state power. New Brunswick-London, 1997.

⁵⁷⁷ Y. Ternon, L'Etat criminel: les génocides du XXe siècle, Paris, 1995.

⁵⁷⁸ Ռ. Սաֆրաստյան, Ցեղասպանության ակունքները միջնադարյան Օսմանյան կայսրությունում. - Պատմա - բանասիրական հանդես, 1998, թիվ 1-2 (147-148), էջ 105-112:

վարվեց «Միություն և առաջադիմություն» կոմիտեմ⁵⁷⁹, ապա նույնիսկ ընդդիմադիր կուսակցությունների գոյության պայմաններում ցեղասպանության քաղաքականությանը այլընտրանքային քաղաքական գծի մշակման հնարավորությունները ցածր էին⁵⁸⁰: Միաժամանակ, ինչպես ցույց տրվեց նախորդ գլուխներում, Օսմանյան կայսրության թուրք ընդդիմադիրները՝ “նոր օսմանցիները”, երիտթուրքերը, քեմալականները հասնելով իշխանության իրենք էին նախապատրաստում ցեղասպանական բնույթի ծրագրեր:

Սույն մենագրության կարևորագույն եզրակացությունն է, որ Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ոճրագործության նախապատրաստումը և իրականացումը դարձել էին պետական գործառույթների կարևոր ոլորտ: Նման գործելակերպի որոշ տարրեր քեմալականների միջոցով փոխանցվեցին հանրապետական թուրքիային:

⁵⁷⁹ R. Safrastian, The political party and genocide: the Committee of Union and Progress at the threshold of the "Final Solution". - Problems of genocide: proceedings of the international conference on "Problems of Genocide", April 21-23, 1995, Toronto, 1997, p. 191 - 200. Ռ. Սաֆրաստյան, Ինչպես էր նախապատրաստվում ցեղասպանությունը. երիտթուրքերը 1910 թ. - Իրան-Նամե. Արևելագիտական հանդես, 1997, թիվ. 4 - 5 - 7, էջ 7:

⁵⁸⁰ Р. Сафрасьян, Национальный вопрос в программных документах партии "османских демократов" (1909-1911). - Պատմա - բանասիրական հանդես, 1996, թիվ 1-2 (143-144), էջ 65-72: Р. Сафрасьян, Турецкие оппозиционные партии и национальный вопрос в Османской империи 1908 - 1909 годах (анализ партийных документов). - Լրաբեր հասարակական գիտությունների. << ՉԱԱ, 1998, թիվ 2, էջ 80 - 90:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐ
ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ա. ՓԱՏՏԱՎԱԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Արխիվներ

Հայաստանի ազգային արխիվ

1. Ֆոնդ 411, Դ.Փ.Բ. Լուչ, ցուցակ 1.
գործ 230, The Massacre at Egin: How it was planned and carried out. By Mrs. Rendel Harris. From the "Daily News", December 11th, 1896.
գործ 231, The Sultan and the Armenians: an official document. Reported from the "Manchester Guardian", December 13th, 1897:
2. Ֆոնդ 450, Հայկական Հարց, ցուցակ 2, Public record office, FO 195/812, x/p 9440:
գործ 173, Palgrave – to Ambassador, Trabezond, March 28th 1867, copy;
գործ 196, Brunt – to Viscount Palmerston, Erzeroom, July 22nd 1841, copy.

ԴԴ Ե. Չարենցի անվան

գրականության ու արվեստի պետական թանգարան

3. Թ. Ազատյանի ֆոնդ, ք. I, 17, Հ. Ասատուր, Աշխարհաբար մատենագիտության պատմություն (ծեռագիր):
4. Թ. Ազատյանի ֆոնդ, ք. XII, 11335-52, Օսյան Գ. Ս., 23 նամակ:
5. Թ. Ազատյանի ֆոնդ, 45, Տարեդարձներ:
6. Թ. Ազատյանի ֆոնդ, 6516, Ընտանյաց բարեկամ մը. Գրիքոր Աղաթոն:
7. Թ. Ազատյանի ֆոնդ, 6599, Հ. Ս. Երեմյան, Ազգային դեմքեր. Գրագետ հայեր:

8. Թ. Ազատյանի ֆոնդ, 6841, Յ.Գ.Ս., Հին օրեր և այդ օրերուն հայ մեծատունները 1550 – 1870:
9. Թ. Ազատյանի ֆոնդ, 6857, Հիշատակ Միքայել Փորթալալ փաշայի. կայսերական գանձապետի:

Архив Внешней Политики Российской Империи

10. Фонд Главный архив, II -18, 1855-1867, д.1 (О турецких Хатм-и Хумаюнах, 1855 – 1857, 1866 - 1867).
11. Фонд Посольство в Константинополе 1861, д. 1415, (Консульство в Монастыре-Битоле).
12. Фонд Посольство в Константинополе 1866, д. 21826 (Консульство в Руцук).
13. Фонд Турецкий стол (старый), 1867г., д. 2661.
14. Фонд Канцелярия, 1867г., д. 30.
15. Фонд Канцелярия, 1867г., д. 31.
16. Фонд Канцелярия, 1876г., д. 32.
17. Фонд Канцелярия МИД, 1876г., д. 25.

Государственный Архив Российской Федерации

18. Фонд 730 (Личный фонд Н.П. Игнатъева, 1623 - 1918, III: Документальные материалы, отложившиеся в результате служебной деятельности Н. П. Игнатъева по должности посланника в Турции: Собрание "О политике России в Турции и деятельности русского посольства в Константинополе"), Описание 1: По должности посланника в Турции:
А). О политике России в Турции и деятельности русского посольства в Константинополе:
ед. хр. 537: Донесение Н. П. Игнатъева А. М. Горчакову о его беседе с Али-пашой по вопросу о положении христиан в Турции (2 сентября 1870 г., фр. яз., копия);

ед. хр. 677: Замечания Н. П. Игнатъева на турецкую конституцию Мидхата (1876г., фр. яз.);
ед. хр. 706: Записка (без подписи) "О смысле кризиса, происходящего в настоящее время в Турецкой империи и о влиянии происходящих в ней реформ на ее государственный строй (б. д., фр. яз.);

ед. хр. 807: Обращение патриотов – мусульман к лорду Дерби (2 июня 1876г.);

Б). Донесения и записки русского агента в Турции Поля Анино Игнатъеву:

ед. хр. 917: О зверствах турецких регулярных войск в армянских деревнях в районе Юзгата (1876 г., фр. яз.);

ед. хр. 925: О терпимости англичан к зверствам турок в отношении христианского населения Османской империи (10 августа – 4 октября 1876г., фр. яз.);

В). О событиях на Балканах и о положении христианских народов Турции в 60-70-х годах XIX в.:

ед. хр. 1139: Записка (без подписи): О положении христиан в Турции (1867 г., фр. яз.);

ед. хр. 1186: Записка (без подписи) о грабежах и зверствах в турок в Армении (б. д., фр. яз.);

ед. хр. 1204: Статья из турецкой газеты о победе Турции на Константинопольской конференции 6 держав в декабре 1876г. (1876г., фр. яз., копия).

Российский Государственный Военно-Исторический Архив

19. 3.1. Коллекция Военно-ученного архива, 71 Турция, ф. 450, 1658 – 1917 гг. :

ед. хр. 66: Донесение русского военного агента в Константинополе о предполагаемом формировании военных частей из христиан, 10 апреля 1861г.;

Արխիվային փաստաթղթերի հրապարակումներ

Գրքեր և հոդվածներ

Թուրքական փաստաթղթեր

20. Arşiv belgelerine göre Kafkaslarda ve Anadolu da Ermeni mezâlimi. T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü: Osmanlı Arşivi Daire Başkanlığı: Yayın Nu: 23. I: 1906-1918. Ankara: Başbakanlık Basımevi, 1995.
21. Belgelerle Tanzimat: Osmanlı sadrazamlarından Âli ve Fuad Paşaların siyasî vasiyyetnâmeleri. Hazır.: E. D. Akarlı, İstanbul: Boğaziçi Üniversitesi, 1973.
22. İğdemir U., Kuleli Vak'ası hakkında bir araştıma. Ankara: TTK, 1937.
23. Kaynar, R., Mustafa Reşit Paşa ve Tanzimat. Ankara: TTK, 1954.
24. Kocahanoğlu O. S., İttihat-Terraki'nin sorgulanması ve yargılanması: Meclis-i Mebusan tahkikatı, Teşkilat-ı Mahsusa, Ermeni Tehcirinin içyüzü, Divan-ı Harb-i Örfi muhakemesi. İstanbul: Temel, 1998.
25. Osmanlı Arşivi: Yıldız tasnifi: Ermeni Meselesi: Ermeni olayları üzerine resmi görüşler: Belgeler, 3. Cilt. İstanbul: Başbakanlık Osmanlı Arşivi, 1989.
26. Osmanlı belgelerinde Ermeniler (1915 - 1920). Ankara: T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, Osmanlı Arşivi Daire Başkanlığı, 1994.
27. Tunaya T. Z., Türkiyede siyasi partiler. İstanbul: Doğan Kardeş, 1952, 799 s.
28. Tunaya T. Z., Türkiye'de siyasal partiler. Cilt I: ikinci meşrutiyet dönemi, 1908 - 1918. Genişletilmiş ikinci baskı. İstanbul: Hürriyet Vakfı, 1988.

49. K. u K. – Dokumente: Armenien in Österreichischen Archiven (Fotokopien). Band II: 1915 – 1917. Herausgeber: Artem Ohandjanian, Alle Rechte vorbehalten.

Գերմանական փաստաթղթեր

50. Deutschland und Armenien 1914–1918: Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam: Der Tempelverlag, 1919.
51. A documentation of the Armenian genocide in World War I. Ed.: W. Gust, S. Gust. - www.armenocide.net
52. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник. Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний д-р ист.наук, проф. В. Микаелян. Ереван: Гитутюн НАН РА, 1995.
53. Геноцид армян перед судом. Судебный процесс Талаат паши. Стенографический отчет. Под ред. проф., д-ра ист.наук С.С.Степаняна, М.: Феникс, 1992.
54. Документи за българската история из германски архиви (1829 - 1877). Съст. и ред. Хр. Христов и В. Паскалева. София, 1963.

Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

55. The Armenian massacres 1894 – 1896: US media testimony. Edited and with an introduction by Arman J. Kirakossian. Foreword by Bob Dole. Detroit : Wayne State University Press, 2004.
56. The Armenian massacres 1894 – 1896: British media testimony. Edited and with an introduction by Arman J. Kirakossian. Foreword by Lord Shannon. Dearborn: Armenian research center, University of Michigan – Dearborn, 2008.
57. Ermeni komitelerinin âmâl-i ve harekât-i ihtilâliyesi ilân-i meşrutiyetten evvel ve sonra. İstanbul: Matbaa-ı Âmirê, 1332.

58. Schopoff A. Les réformes et la protection des chrétiens en Turquie. 1673-1904. Paris: Plon – Nourrit et Cie, 1904.
59. The United Nations: Blue Books Series, Volume VII: The United Nations and Human Rights, 1945-1995. With an introduction by Boutros Boutros-Ghali, Secretary General of the United Nations. New York: Department of Public Information, United Nations, 1995.
60. Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии. Том 2. Часть 1. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментариев Ю. А. Барсегов. М.: Гардарики, 2003.
61. Нюрнбергский процесс: Сборник материалов в 8-ми томах, т. 1, М.: "Юридическая литература", 1987.
62. Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875-1877. Под ред. С. А. Никитина, В. Д. Конобеева, Ал. К. Бурмова, Н. Т. Тодорова. М.: АН СССР, 1961.
63. По следите на насилюето: Документи и материали за налагане на исляма. Съст.: П. Петров, Ч. Първа, София: Наука и изкуство, 1987.
64. Ատենագրությունը Ազգային ժողովո, 1876-1877, Կ.Պոլիս, Ս. Միքայելյան, 1876:
65. Դիվան հայոց պատմության, գիրք ԺԳ. Հարստահարություններ Տաճկահայաստանում (Վավերագրեր 1801-1888). Հավելվածներով, ծանոթագրություններով և բառգրքով. Հրատ. Գ. Աղանյանց, Թիֆլիս, Տպարան Ն. Աղանյանցի 1915:
66. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի եվ նյութերի ժողովածու, Մ.Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երեւան, Հայաստան, 1991:

Օսմանյան օրենքների ժողովածուներ, Ղուրան

67. Düstür. Tabb-ı sani. Dersaadet: Amire, 1282.
68. Düstür. Cild-i evvel. İstanbul, 1289.
69. Düstür. Cild-i sani. İstanbul, 1289.

70. Gözübüyük A. Ş., Kili S., Türk Anayasa metinleri. Ankara: Ajans Türk, 1957.
71. Коран. Перевод и комментарий И. Ю. Крачковского. М.: Наука, 1986.

Բ. ԺԱՄԱՆԱԻ ԹՈՒՐԶ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրքեր

72. [Abdülhamit II]. İkinci Abdülhamid'in hatıra defteri. İstanbul: Selek, 1960.
73. Ahmed Midhat. Üss-i İnkılap. Kısım-ı 1-2. İstanbul: Takvim-i Vakai Matbaası, 1295.
74. Ali Suavi, A propos de l' Herzegovine. Paris, 1875.
75. [Atatürk], Atatürk'ün T.B.M.M. Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. [Cilt: 1], Yayına Hazırlayan: Kâzım Öztürk. Ankara: Kültür Bakanlığı, 1990.
76. [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı yazışmaları. Yayınlayan: Mustafa Onar. C. II, Ankara: Kültür Bakanlığı, 1995.
77. Atatürk M. K., Nutuk. Cilt: II, 1920 – 1927. İstanbul: Milli Eğitim Basımevi, 1961.
78. [Ahmet Cevdet], Tarih-i Cevdet, B. 2. C. 9, İstanbul: Matbaa-i Osmaniye, 1309.
79. Bardakçı M., Talât Paşa'nın evrak-ı metrûkesi: Sadriazam Talât Paşa'nın özel arşivinde bulunan Ermeni tehirci konusundaki belgeler ve hususî yazışmalar. İstanbul: Everest, 2008.
80. Cevdet Paşa., Tezakir: 1 - 12. Yayınlayan: C. Baysun. Ankara: TTK, 1953.
81. EbuZZiya Tevfik, Yeni Osmanlılar tarihi. İstanbul: Pegasus, 2006.
82. İnönü İ., Hatıralar: 1. Kitap. Yayına Hazırlayan: Sabahattin Selek. Ankara: Bilgi, 1985.
83. [Kamil Paşa ve Said Paşa], Belgelerle Mısır, Ermeni-Kürt, Doğu Rumeli Meseleleri: II. İkinci Abdülhamid'in sadriazamları Kamil

- Paşa ve Said Paşa'nın anıları-polemikleri. Yayına hazırlayan: Gül Çağalı-Güven, İstanbul: Arda, 1991.
84. Karabekir K., İstiklâl harbimiz. İstanbul: Türkiye, 1959 – 1960.
85. Karabekir K., İstiklâl harbimizde Enver Paşa ve İttihat Terakki erkânı. İstanbul: Menteş, 1967.
86. Karabekir K., İstiklal harbimizin esasları. İstanbul: Timaş, 1992.
87. Karabekir K., Ermeni dosyası. Yayına hazırlayan Prof. Faruk Özerengin. İstanbul: Emre, 1994.
88. Mehmed Memduh, Tanzimat'tan Meşrutiyete mir'ât-i şuûnât, 1. İstanbul: Nehri, 1990.
89. [Menteşe H.], Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları. Giriş: İ. Arar. İstanbul, Hürriyet Vakfı, 1986.
90. [Midhat Pacha], Mémorial de Midhat Pacha au Prince Bismark. Paris [s. t.]: 1877.
91. Midhat Paşa, Hayat-ı siyasiyesi, hidematı, menfa hayatı. Naşiri: Ali Haydar Midhat. Cilt 2: Tabsıra-ı İbret. İstanbul: Hilal Matbaası, 1325.
92. Midhat Pacha. La Turquie: son passé, son avenir. London: Balitout, 1878.
93. Namık Kemal, Vatan yahut Silistre. - Külliyyat. I, Ankara, 1960.
94. Osmanoğlu A., Babam Abdülhamid. İstanbul: Güven, 1960.
95. Sultan Abdülhamit, Siyasi Hatıratım. İstanbul: Dergâh Yayınları 1984.
96. [Tahsin Paşa], Sultan Abdülhamid: Tahsin Paşanın Yıldız hatıraları. İstanbul: Boğaziçi Yayınları, 1990.
97. [Talât Paşa], Talât Paşa'nın hâtıraları: Sadriazam Talât Paşa'nın tarihin bir çok gizli taraflarını aydınlatan şimdiye kadar neşredilmemiş şahsi notları. İstanbul: Güven, 1946.
98. [Un Impartial], Réponse a Son Altesse Moustapha Fazil Pacha au sujet de Sa lettre au Sultan. Paris: Jouaust, 1867.

Հոդվածներ

99. Aali Pacha, Testament politique. - La Revue de Paris, 1910, T.3, No. 7, p. 505-524; No. 9, p. 105-124.

100. [Ali Pasha], Lewis B., Ali Pasha on nationalism. - Middle Eastern studies, 1974, No. 10, p. 77-79.

Գ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրքեր

101. Ahmet Rasim, Resimli ve haritalı Osmanlı tarihi. 2. Cilt, 2. Tabr. İstanbul: Sancakcyan Matbaası, 1333 -1335.
102. Ali Haydar Midhat, The life of Midhat Pasha. London: John Murray.
103. Benoit-Brunswik, La vérité sur Midhat Pacha. Paris, 1877.
104. Bianconi F., La Question d'Orient dévoilée ou la vérité sur la Turquie. Paris: Librairie Général, 1876.
105. Clician V., Son Altesse Midhat-Pacha, grand Vizir. Paris: [s.t.], 1909.
106. Collas L., Histoire de L'Empire Ottoman jusqu'a la revolution de 1909. Paris: Félix Alcan, [s.d.].
107. Engelhardt Ed., La Turquie et le Tanzimat, t. 1 -2, Paris: Cotillon, 1882 -1884.
108. Eton W. A., Survey of the Turkisch Empire. London: T. Cadell and W. Davies, 1798.
109. Farley L., Turks and Christians, London, 1876.
110. Galerie des contemporains illustres. T.VII: Rechid Pacha. Paris, 1850.
111. Jonquere Le Vte De La, Histoire de Empire Ottoman depuis les origines jusqu'a nos jours. P: Hachette, 1881.
112. Le Baron Lermot, La Turquie demasque et rehabilitation de l'Europe. Paris, 1877.
113. Léouzon le Duc L., Midhat Pacha, Paris: Dentu, 1877.
114. Madden R. R., The Turkish Empire in its relations with Christanithy and civilisation. London: T. Cautley Newby, 1862.
115. Maurocordatos G. A., De la reform et de la fusion des races en Orient. Athens, 1856.
116. [Mordtmann A. D.], Stambul und das moderne Türkenthum (Politische, sociale und biographische Bilder von Einem Osmanen), Leipzig: Duncker & Humblot, B. 1-2, 1877.
117. [Morgenthau H.], United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau 1913 – 1916. Compiled with an Introduction by Ara Sarafian. Princeton and London, 2004.
118. Oscanjan C., The sultan and his people, New York: Derby & Jackson, 1857.
119. Pears E., Forty Years in Constantinopole. London: Herbert Jenkins, 1916.
120. Prokesch-Osten A. Geschichte des Abfalls der Griechen vom Türkischen Reiche im Jahre 1821 und der Gründung des Hellenischen Reiches. Aus diplomatischem Stand. Band 6, Wien: Gerold, 1867.
121. St.Clair S.G.B. and Brophy Ch., A. Residence in Bulgaria or, notes on the resources and administration of Turkey, London: John Murray, 1863.
122. Stern B., Jungtürken und Verschwörer. Die innere Lage der Türkei unter Abdul Hamid II. Zweite Aufgake, Leipzig: Grübel & Sommerlatte, 1901.
123. Şemsettin Sami, Kamus-i Türki. Dersaadet: Ikdam Matbaası, 1317.
124. Thouvenel L., Trois années la Question d' Orient 1856-1859, Paris: Calmann Lévy, 1897.
125. Vaillant J.-A., Solution de la Question d' Orient. Paris, 1853.
126. Valmy, le Duc de, La Turquie et l' Europe en 1867. Paris: Amyot, 1867.
127. Канитц Ф., Дунайская Болгария и Балканский полуостров. Пер. с нем., СПб: Всемирный путешественник, 1876.
128. Пангалос К., Турция и просвещение, СПб., 1862.

129. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году. М., Типо-литография Т-ва И. Н. Кушнеров и Ко, 1896.
130. Розен Д. Т., История Турции от реформ в 1826 г. до Парижского трактата в 1856 г. В двух частях С.-Пб., 1872.
131. Убичини А., Куртеиль А., Современное состояние Османской империи, СПб., 1877.
132. Անտոնյան Ա., Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեթի փաշա: Երևան, Արևիկ, 1990:
133. Արմեն Գարո, Ապրուած օրեր, Պետրոս, Ոսկեդար, 1986, 210 էջ:
134. Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը: Աթէնք, Նոր օր, 1930:
135. Չերազ Մ., Կենսագրական միսիոներ. Փարիզ, Օշական, 1920:
136. Նուրիխան Հ. Մ. Վ., Ժամանակակից պատմություն, 1868-1878. Մասն Գ, Վենետիկ, Ի Վանս ս. Ղազար, 1907:
137. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն. Երևան, Հայաստան, 1993:

Հոդվածներ

138. Challemel-Lacour P. Hommes d'etat de la Turquie. Aali Pacha et Fuad Pacha. - Revue des deux mondes. 1868, XXXVIII annee, 2 serie, No. 78, p. 886-925.
139. Дентон В., Христиане в Турции. – Русский вестник, 1864, т. 50, No. 2, с. 721-741; No. 3, с. 79 -137.
140. [Игнатъев Н. П.], Записки графа Игнатъева, 1864-1874. - Русская старина, 1915, т. 161, кн. 1, с. 30 - 47; кн. 2, с. 297 - 310; т. 162, кн. 4, с. 14 - 23.
141. Рагозина Е. А., Из дневника русской в Турции перед войной в 1877 – 1878 гг. – Русская старина, 1915, т. 162, кн. 4, с. 90 - 95; кн.5, с. 291 – 294.

142. Смирнов В. , Официальная Турция в лицах. - Вестник Европы, 1878, кн. 1.
143. С Н., Константинопольские письма (1861 – 1864). – Русский вестник, 1867, т. 69, май.

Դ. ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍՈՒԼ

144. Hürriyet, 1868 -1869.
145. Muhbir, 1867-1868.
146. Takvîm-i Vekâyi', 18 Receb 1333 / 19 Mayıs 1331, 7. sene, nr. 2189.
147. Вестник Европы, 1809, 1878.
148. Русская старина, 1915.
149. Русский вестник, 1859-1874.
150. Արծվի Վասպուրական, 1855-1856, 1862:
151. Արեվելյան մամուլ, 1872-1877:
152. Արշալույս Արարատյան, 1866:
153. Մասիս, 1853 -1877:
154. Մեղու, 1856-1857:
155. Մեղու Հայաստանի 1859, 1875-1876:
156. Մշակ, 1872:

Ե. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրքեր

157. Aivazian A. M., The Armenian rebellion of the 1720s and the threat of genocidal reprisal, Erevan: AUA, 1997.
158. Akçam T., Siyasi kültürümüzde zulüm ve işkence. İstanbul: İletişim, 1992.
159. Akçam T., Türk ulusal kimliği ve Ermeni Sorunu. 2. B., İstanbul: İletişim, 1993.

160. Akçam T., İnsan hakları ve Ermeni Sorunu: İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na. 2. B., Ankara: İmge, 2002.
161. Akdağ M., Türkiye'nin iktisadi ve içtimai tarihi, C. I: 1243-1453. İstanbul: Cem, 1974.
162. Akyıldız, A., Tanzimat dönemi Osmanlı merkez teşkilâtında reform (1836 - 1856). İstanbul: EREN, 1993.
163. Artinian, V., Osmanlı Devleti'nde Ermeni Anayasası'nın Doğuşu 1839 – 1863. Çeviren: Zülal Kılıç. İstanbul: Aras, 2004.
164. Avcıoğlu D., Türklerin Tarihi. Birinci Kitap. Dördüncü Basım. İstanbul: Tekin, 1982.
165. Avcıoğlu D., Millî kurtuluş tarihi 1836'den 1995'e. İkinci Kitap. İstanbul: Tekin, 1976.
166. Aydın M., İkinci Abdülhamid Han'ın liderlik sırları. İstanbul: İzci.
167. Bailey F. Ed., British policy and the Turkish reform movement: a study in Anglo-Turkish relations: 1826-1853. Cambridge: Harvard University Pres, 1942.
168. Bayur Y., Türk İnkılâbı tarihi. Cilt: III: 1914 -1918: Genel Savaşı, Kısım III: 1915 – 1917 vuruşmaları ve bunların siyasal tepkileri. Ankara: TTK, 1983.
169. Berkes N., Türkiyede çağdaşlaşma. İstanbul: Bilgi, 1973.
170. Biberöğlu M., Tanzimat'tan II. Meşrutiyet'e Ermeni Nizamnameleri. İstanbul: Ohan Matbaacılık, 2003.
171. Bıyıklıoğlu T., Atatürk Anadolu'da (1919 - 1921), [Cilt: 1], Ankara: Türkiye İş Bankası, 1959.
172. Chalk Fr. and Jonassohn K., The history and sociology of genocide: analyses and case studies. New Haven and London: Yale University Press, 1990.
173. Çelik H., Ali Suavi ve dönemi. İstanbul: İletişim, 1994.
174. Çulcu M., Spekülatif marjinal tarih tezleri. 6. Baskı. İstanbul: E, 2000.
175. Dadrian V., N. The history of the Armenian Genocide: Ethnic conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Providence – Oxford: Berghahn Books, 1995.
176. Dadrian V. N., Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources. New Brunswick: Transaction Publishers, 1994.
177. Dadrian V. N., Warrant for Genocide: Key Elements of Turko – Armenian Conflict. New Brunswick: Transaction Publishers, 1999.
178. Dadrian V. N., Ermeni soykırımında kurumsal roller. Toplu makaleler, Kitap 1, Çeviren: Attila Tuygan, İstanbul: Belge yayınları, 2004.
179. Dadrian V. N., Türk kaynaklarında Ermeni soykırımı. Toplu makaleler, Kitap 2, Çeviren: Attila Tuygan, İstanbul: Belge yayınları, 2005.
180. Danişmend İ. H., Osmanlı Tarihi Kronolojisi. Cilt: 4. İstanbul: Türkiye Basımevi, 1955.
181. Davison R. H., Reform in the Ottoman Empire 1856 -1876. Princeton: Princeton University Press, 1963.
182. Ertuğ H. R., Basın ve yayın hareketleri tarihi, İstanbul: Sulhi Garan, 1959, 190 s.
183. Fein H. Accounting for Genocide. New York, 1979.
184. Gibb E.J.W., A History of Ottoman poetry, Vol. VI: containing the Turkish originals, London: Luzac and Company, 1963.
185. Gökbilgin M. T., Rumelide Yürükler, Tatarlar ve Evlâd-ı Fatihan, İstanbul: Osman Yalçın, 1957.
186. Gürün K. Ermeni dosyası. İkinci Baskı. Ankara: TTK, 1983.
187. Haerkötter R., Sultan 'Abdülhamîd II. in der türkischen Publizistik seit Gründung der Republik: Vom kemalistischen Feinbild zur Symbolfigur national-religiöser Kreise. Frankfurt am Mein: Peter Lang, 1996.
188. Halaçoğlu Y, Die Armenierfrage. Klagenfurt: Wieser, 2006.
189. Heper M., Türkiye'de devlet geleneği. [İstanbul]: Doğu-Batı, 2006.
190. Hocaoğlu M., Tarihte Ermeni mezalimi ve Ermeniler. İstanbul: Anda, 1976.
191. Horowitz I. L. Taking lives: genocide and state power. New Brunswick-London: Transaction Publishers, 1997.

192. İnalçık H., *The Ottoman Empire: The Classical Age, 1300-1600*. London: Weidenfeld and Nicolson, and New York: Praeger, 1973.
193. İnalçık H., *Tanzimat ve Bulgar Meselesi (Doktora Tezi'nin 50. yılı, 1942-1992)*. İstanbul: EREN, 1992.
194. Kafadar C., *Between Two Worlds: the construction of the Ottoman State*. Berkeley: University of California Press, 1995.
195. Kaplan M., *Namık Kemal: hayatı ve eserleri*. İstanbul: İÜ Edebiyat Fakültesi, 1948.
196. Karadağ R., *Muhteşem imparatorluğu yıkanlar*. 4. B. İstanbul: Divan, 1991.
197. Karal E. Z., *Osmanlı tarihi. VI cilt: Islahat Fermanı devri, 1856 - 1861*. Ankara: TTK, 1954.
198. Karal E. Z., *Osmanlı tarihi. VII cilt: Islahat Fermanı devri, 1861 - 1876*. Ankara: TTK, 1956.
199. Kodaman B., *Sultan Abdülhamid devri Doğu Anadolu politikası*. İstanbul: TKAE Yayınları, 1987.
200. Köprülü F., *Osmanlı devletinin kuruluşu*. Ankara: TTK, 1959.
201. Kuntay M. C., *Namık Kemal devrinin insanları ve olayları arasında*. C. I, İstanbul: Maarif, 1944.
202. Kuper L., *Genocide: its political use in the twentieth century*. New Haven and London: Yale University Press, 1981.
203. Kuran A. B., *İnkılap tarihimiz ve İttihad ve Terakki*. İstanbul, Tan, 1948.
204. Kuran A. B., *Osmanlı İmparatorluğunda inkılap hareketleri ve Milli Mücadele*. İstanbul, Çeltüt, 1959.
205. Kurgan Ş., *Ziya Paşa: hayatı, sanatı, eserleri*. İstanbul, 1962.
206. Kutay C., *Karabekir Ermenistan'ı nasıl yok etti?* İstanbul, 1956.
207. Lemkin R., *Axis rule in occupied Europe: laws of occupation - Analysis of government - proposals for redress*. Washington, D.C.: Carnegie endowment for international peace, 1944.
208. Lindner R. P., *Explorations in Ottoman prehistory*, Ann Arbor: University of Michigan Press, 2007.
209. Lindner R. P., *Nomads and Ottomans in medieval Anatolia*. Bloomington: Research Institute for Inner Asian Studies, Indiana University, 1983.
210. Mardin Ş., *The genesis of Young Ottoman thought: a study in the modernization of Turkish political ideas*. Princeton: Princeton University Press, 1962.
211. Ohandjanian A., *Armenien 1915: Österreichisch-Ungarische Botschaftsberichte beweisen das Genocid*. Wien: Verlag des Vereins zur Förderung der armenischen Geschichte und Kultur, 2007.
212. Özdemir H., Çiçek K., Turan Ö., Çalık R., Halaçoğlu Y., *Ermeniler: sürgün ve göç*. 2. B., Ankara: TTK, 2004.
213. Öztuna Y. T., *Başlangıcından zamanımıza kadar Türkiye tarihi*, C. 12, İstanbul: Hayat, 1967.
214. Pakalın M. Z., *Osmanlı tarih deyimleri ve terimleri sözlüğü*. C. I, İkinci Baskı, İstanbul: Millî eğitim bakanlığı, 1971.
215. Pfaff W., *The wrath of nations: civilization and the furies of nationalism*, New York: A Touchstone Book, 1994.
216. Pramono S., *An account of the genocidal state: refereed paper presented to the Jubilee conference of the Australasian political studies association, Australian national university, October 2002, Canberra, 2002*.
217. Safrastyan R., *A test of maturity: the genocide factor in Armenia's foreign policy*. - In depth analysis, policy papers of Center for strategic analysis spectrum, No.2, Yerevan, 2005.
218. Safrastyan R., *Modernizing Ottoman policy towards Christian subjects during tanzimat: concept of merger*: Paper Represented to the International Conference of Asian and North-African Studies ICANAS-38, Ankara, September 10 – 15, 2007. Yerevan, 2007.
219. Schabas W., *Genocide in international law: the crimes of crimes*, Cambridge: Cambridge University Press, 2000.
220. Show St. J., *History of the Ottoman Empire and modern Turkey*. Vol. I: Empire of the Gazis: the rise and decline of the

- Ottoman Empire, 1280 - 1808. Cambridge: Cambridge University Press, 1977.
221. Sırma İ. S., II Abdülhamidin İslam birliği siyaseti. 4. Baskı, İstanbul: Beyan, 1990.
222. Springer J., Genozid: Aus dem Englischen von Birgit Fricke, Hildesheim: Gerstenberg, 2007.
223. Staub E., The roots of evil: the origins of genocide and other group violence. Cambridge: Cambridge University Press, 1989.
224. Şakir Z., Büyük Türk inkılabı. C. 1, İstanbul: Çeltüt, 1956.
225. Şimşek Erdal, Bahar İlhan, Türkiye'de istihbaratçılık ve MİT. İstanbul: Kum Saati, 2004.
226. Şimşir B., Ermeni Meselesi: 1774 – 2005. 3. Baskı, İstanbul: Bilgi, 2006.
227. Tashjian J. H., Turkey: author of genocide: the centenary record of Turkey, 1822 - 1922. Boston: Commemorative Committee, 1965.
228. Tanzimat dönemi türk edebiyatı antolojisi. Hazır.: Ş. Kutlu. İstanbul: Remzi, 1972.
229. Tarih III: Yeni ve Yakın Zamanlar: T.T.T. Cemiyeti tarafından yazılmıştır. İstanbul: Devlet Matbaası, 1933.
230. Tökin F. H. Türkiye'de siyasî partiler ve siyasî düşüncenin gelişmesi, 1839 – 1965. İstanbul: Elif, 1965.
231. Turan Ş. Türk Devrim tarihi I: İmparatorluğun çöküşünden ulusal direnişe. İstanbul: Bilgi, 1991.
232. Turan Ş, Türk Devrim tarihi II: ulusal direnişten Türkiye Cumhuriyeti'ne. İstanbul: Bilgi, 1992.
233. Türkiye Tarihi: 3: Osmanlı Devleti: 1600 – 1908. Yayın Yönetmeni: Sina Akşin. İstanbul: Cem, 2002.
234. Türköne M, Siyasi ideoloji olarak İslamcılığın doğuşu. 2. Baskı. İstanbul, 1994.
235. Tütengil C. O., Yeni Osmanlılardan bu yana İngiltere'de Türk gazeteciliği: 1867—1967. İstanbul, 1969.
236. Uras E, Tarihte Ermeniler ve Ermeni Meselsi. Yeniden gözden geçirilmiş ve genişletilmiş 2. Baskı, İstanbul: Belge, 1987.
237. Uzunçarşılı İ. H., Osmanlı devleti teşkilatından kapukulu ocakları. II, Ankara: TTK, 1944.
238. Uzunçarşılı İ. H., Osmanlı devleti teşkilatına medhal. İstanbul: Maarif, 1941.
239. Uzunçarşılı İ. H., Osmanlı tarihi. I. Cilt: kuruluştan İstanbul'un fethine kadar. Ankara: TTK, 1947.
240. Walker Ch. J. Armenia: The survival of a nation. London: Croom Helm, 1983.
241. Werner E., Die Geburt einer Grossmacht - Die Osmanen (1300 -1481). Berlin, 1966.
242. Wittek P., The rise of the Ottoman Empire, London: Royal Asiatic Society, 1938.
243. Yerasimos S., Azgelişmişlik sürecinde Türkiye. Cilt 1: Bizanstan Tanzimata. İstanbul: Gözlem, 1977.
244. Yerasimos S., Azgelişmişlik sürecinde Türkiye. Cilt 2: Tanzimattan I. Dünya Savaşına. İstanbul: Gözlem, 1977.
245. Zürcher E. J., The unionist factor: the role of the Committee of Union and Progress in the Turkish national movement, 1905 – 1926. Leiden: E. J. Brill, 1984.
246. Авагян А., Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений. Ереван: Гитутюн, 1999.
247. Барсегов Ю. Г., Геноцид армян – преступление против человечества (о правомерности термина и юридической квалификации). Ереван: Айастан, 1990.
248. Барсегов Ю. Г., Геноцид армян - преступление по международному праву. М.: XXI век-согласие, 2000.
249. Жуков К. А., Эгейские эмираты в XIV - XV вв. М.: Наука, 1988.
250. Керимов Г. М., Шариах и его социальная сущность. М.: Наука, 1978.
251. Миллер А Ф. Мустафа паша Баурактар. М -Л.: Изд-во АН СССР, 1947.
252. Панченкова М. Т., Политика Франции на Ближнем Востоке и сирийская – экспедиция 1860 – 1861 гг. М.: Наука, 1966.

253. Петросян Ю. А., Младотурецкое движение (вторая половина XIX – начало XX в.). М.: Наука, 1971.
254. Саркисян Е.К., Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв. Ереван, Изд-во АН Арм.ССР, 1972.
255. Сафрасмян Р. А., Доктрина османизма в политической жизни Османской империи (50 – 70 гг. XIX в.). Ереван: Изд-во АН Арм. ССР, 1985.
256. Тодоров Н., Балканский город XV-XIX веков. М.: Наука, 1978.
257. Тодорова М. И., Англия, Россия и танзимат (вторая четверть XIX в.). М.: Наука, 1983.
258. Фадеева И. Е., Мидхат-паша: Жизнь и деятельность. М.: Наука, 1977.
259. Фадеева И. Л., Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм-панисламизм): XIX - начало XX в. М.: Наука, 1985.
260. Ալպոյաճյան Ա., Մինաս Չերազ. իր կյանքը և գործը. իր 60 ամյա հորեղանի առթիվ. Գահիրե, 1927:
261. Ասատրյան Հ., Հատընտիր, Երևան, Հայաստանի Հանրապետական կուսակցություն, 2004:
262. Գալոյան Գ., Հայաստանը և Մեծ Տերությունները 1917 – 1923 թթ. Երևան, Գիտություն, 1999:
263. Եղզրատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը: Պատրաստեց Գրիկէր: Նիւ Եորք, Ոսկետառ, 1980:
264. Ջոհրաբյան Է. Ա. 1920 թ. թուրք – հայկական պատերազմը և տերությունները. Երևան, Ոսկան երևանցի 1997:
265. Ջուլայան Մ.Կ., Արեւմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երեւան, Հայկ ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980:
266. Ջուլայան Մ.Կ., Հայոց պատմության խեղաթուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին եւ միջին դարեր), Երեւան, Հայաստան, 1995:
267. Ինճիկյան Հ.Գ. Օսմանյան կայսրության անկումը. սոցիալ-տնտեսական ակնարկ, Երևան, Հայաստան, 1984:
268. Լէօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատոր Բ. Երևան, Շաղիկ, 1994:
269. Խաչատրյան Կ., Հայ – ռուսական հարաբերությունները 1920 – 1922 թվականներին, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2007:
270. Խառատյան Ա. Ա. Արեւմտահայ պարբերական մամուլը եվ գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1989:
271. Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին. Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2002:
272. Կիրակոսյան Զ. Ս. Բուրժուական դիվանագիտությունը եվ Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Երևան, Հայաստան, 1980:
273. Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915 – ից մինչև մեր օրերը), Գիրք երկրորդ, Երևան, Հայաստան, 1983:
274. Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, Ջանգակ – 97, 2002:
275. Հովսեփյան Մ., ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլը (1909 – 1924 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. հրատ., 2009:
276. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800 – 1870 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1967:
277. Ղազարյան Հ. Գ., Տեղասպան թուրքը, Պեյրութ, Համազգային, 1968:
278. Մելքոնյան Ա. Ա. Էրզրում (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, Հայաստան, ԳԱ Հրատարակչություններ, 1994:
279. Մտրոչյան Լ., Ջեյթունի ապստամբությունը 1895 – 1896 թթ. Երևան, Համզգ. հայ կրթ. և մշակութ. մջություն, 1995:

280. Ներսիսյան Մ. Գ., Պատմության կեղծարարները, Երևան, Գիտություն, 1998:
281. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, Գիտություն, 2002:
282. Շաքարյան Ա., «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում. դեվլչիմեն, Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2006:
283. Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ –XX դ. սկիզբ), Երևան, Գիտություն, 2005:
284. Սարգսյան Ե., Ղավաղիր գործարք, Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա, Երևան, Հայաստան, 1995:
285. Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), Հ. Ա., Թիֆլիս, Էպոխա, 1912:
286. Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության երկու ծրագիր (1876 և 1915 թթ.): Ուսումնամեթոդական ձեռնարկ: ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, Թուրքագիտության ամբիոն: Երևան, Լուսակն, 2007:
287. Սիմոնյան Հր., Հայերի գանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ): Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009:
288. Վարդան Լ, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը (Քննական ակնարկ ըստ թրքական վաւերագիրներու): Պէյրուք, Ատլաս, 1970:

Հոդվածներ

289. Abu Jaber K.S., The Millet system in the nineteenth-century Ottoman Empire. - The Muslim World, 1967, Vol.57, No. 3, p. 212-223.

290. Akyol M., A Sultan with Swat. - The Weekly Standard, 2005, Vol. 11, No. 15.
291. Babacan H., Ermeni Tehciri hakkında bir değerlendirme. - Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 406 – 419.
292. Bardakçı M., 139 sene önceki şeriat komplosunun hikâyesi. – Hurriyet, 8 Kasım 1998.
293. Bauer Y., Is the Holocaust Exlicable? - In: Remembering for the Future: Working Papers and Agenda. Volume II: The Impact of the Holocaust on the Contemporary World. Oxford: Pergamon Press, 1989, p. 1967 - 1975.
294. Baykal B. S., Namık Kemal'e göre Avrupa ve biz. — Namık Kemal hakkında, İstanbul, 1942, s. 190 - 218.
295. Baykal B. S., Midhat Paşa'nın gizli bir siyasi teşebbüsü. – III Türk Tarih Kongresi, Ankara, 15-20 Kasım 1943. Ankara: TTK, 1948, s. 470-477.
296. Bayur Y. H., Ermeni Meselesi, kaynaklar, II: hatıralar. - Cumhuriyet, Salı / Cuma Kitabı, 26 Haziran 1998.
297. Beres L. R., International law, selfhood and the prevention of genocide. -Remembering for the future: working papers and agenda. Volume II: The impact of the holocaust on the contemporary world. Oxford: Pergamon Press, 1989, p. 1236 - 1241.
298. Beylérian A., Krikor Odian (1834 -1887): un haut fonctionnaire ottoman, homme des missions secrètes. – Revue du monde arménien, 1994, Tome I, p. 45-86.
299. Boran B., Namik Kemal'in sosyal fikirleri. — Namık Kemal hakkında. İstanbul, 1942, s. 251 – 277.
300. Buhl F., Millet. — Islam Ansiklopedisi, 2. B., C. 8, İstanbul: MEB, 1971, s. 317.
301. Chalk F., Definitions of genocide and their implications for prediction and prevention. - Remembering for the future: working papers and agenda. Volume III: The impact of the holocaust and genocide on Jews and Christians. Oxford: Pergamon Press, 1989, p. 2377-2389.

302. Chorbajian L. A., Massacre or Genocide: an essay in personal biography and objective experience. - Genocide and human rights: a global anthology. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London: University Press of America, 1982, p. 116 - 128.
303. Dadrian V. N., Methodological components of the study of genocide as a sociological problem - The Armenian Case. - Recent studies in modern Armenian history. Cambridge MA, 1971, p. 83-103.
304. Dadrian V. N., A typology of genocide. - International Review of Modern Sociology, 1975, Vol.: 5, No 2, p. 201 - 212.
305. Dadrian V. N., The convergent aspects of the Armenian and Jewish Cases of genocide. A reinterpretation of the concept of holocaust. - Remembering for the future. Working papers and addenda. Vol. II: the impact of the Holocaust on the Contemporary World. Oxford: Pergamon Press, 1989, p.1976-1996.
306. Dadrian V. N., Towards a theory of genocide: incorporating the instance of holocaust: comments, criticisms and suggestions. - Holocaust and Genocide Studies, 1990, Vol. 5, No. 2, p. 129-143.
307. Dadrian V. N., The secret Young -Turk Ittihadist conference and the decision for the World War I genocide of the Armenians. - Holocaust and Genocide Studies, 1993, Volume 7, Number 2, p. 173 – 201.
308. Dadrian V., The role of the Turkish military in the destruction of ottoman Armenians: A study of historical continuities. - Journal of political and military sociology, 1992, Vol.: 20, No. 2 (Winter): p. 257 – 288.
309. Davison R. H., Turkish attitudes concerning Christian-Muslim equality in the nineteenth century.-The American Historical Review, Vol. LIX, No. 4, July 1954, p. 844-864.
310. Dizdaroğlu H., Ali Suavi'de dil anlayışı. — Türk Dili, 1958, c. VII, № 80.
311. Dobkowski M. N Genocide and the Modern Age. - Remembering for the future. working papers and addenda. Vol. II: The impact of the holocaust on the contemporary world. Oxford: Pergamon Press, 1989, p. 1997-2002.
312. Dufour F. G., Toward a Socio-historical Theory of Persecution and an Analytical Concept of Genocide. - YCISS Occasional Paper. Nr. 67, October 2001.
313. Drum K, Mass Graves....Does this matter? – Washington Monthly, July 19, 2004; David Pryce-Jones, Curse of the militias: what Balkanization has done to Iraq, Lebanon, and others. - National Review, March 27, 2006.
314. Erat M., Kâzım Karabekir Paşa'nın Ermeniler Üzerine Harekâtı (1920). – Kafkas Araştırmaları, II, 1996, s. 93-105.
315. Erat M., Yılmaz H., Kâzım Karabekir'in Hayatı ve Çanakkale Savaşlarındaki Rolü. - T.C Çanakkale Onsekiz Mart Üniversitesi Eğitim Fakültesi Tarih Öğretmenliği, 4: Çanakkale Savaşı Semineri, 2003.
316. Ercan Y., Ermeniler ve Ermeni Sorunu. – Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 36 – 52.
317. Ezell W. K., Investigating genocide: a catalog of known and suspected cases, and some categories for comparing them. - Remembering for the future: working papers and agenda. Volume III: the impact of the holocaust and genocide on Jews and Christians. Oxford: Pergamon Press, 1989, p. 2880 - 2892.
318. Fein H., Political functions of genocide comparisons. - Remembering for the future: working papers and agenda. Volume III: The impact of the holocaust and genocide on Jews and Christians. Oxford: Pergamon Press, 1989, p. 2427 - 2441.
319. Fein H., Testing theories brutally: Armenia (1915), Bosnia (1992) and Rwanda (1994). - Problems of Genocide: Proceedings of the International Conference on "Problems of Genocide", April 21-23, 1995, Toronto: The Zoryan Institute of Canada, 1997, p. 181-190.

320. Fein H., Denying genocide: from Armenia to Bosnia: a lecture delivered at the London School of Economics and Political Science on 22 January 2001. – London School of Economics and Political Science: Occasional papers in comparative and international politics 1. London: Department of government, [2001], p. 4 - 5.
321. Freeman M., Genocide, civilization and modernity. - The British journal of sociology, 1995, vol. 46, No. 2, p. 207 - 223.
322. Horowitz I. L., Science, modernity and authorized terror: reconsidering the genocidal state. - Problems of genocide: proceedings of the international conference on "Problems of genocide", April 21-23, 1995, Toronto: The Zoryan Institute of Canada, 1997, p. 134 – 152.
323. Hovannisian R. G., Eighty years: memory against forgetting. - Problems of Genocide: Proceedings of the International Conference on "Problems of Genocide", April 21-23, 1995, Toronto: The Zoryan Institute of Canada, 1997, p. 13-20.
324. Huttenbach H., From the editor: towards a conceptual definition of genocide. - Journal of genocide research, 2002, 4(2), p. 167–176.
325. In favor of the ratification of the Convention on the prevention and punishment of the crime of Genocide. Presented to the Subcommittee on the Genocide Convention of the Senate Foreign Relations Committee. - Armenian affairs: a journal on Armenian studies, 1950, Vol. 1, No. 2.
326. Ilgaz A., Atatürk ve II. Abdülhamid Han'da milli düşünceler. - Milli Gazete, 2005, 11 aralık.
327. Ilgaz A., Abdülhamid Han, Atatürk ve İnkılaplar. - Milli Gazete, 2005, 25 aralık.
328. Inalcik H., Land problems in Turkish history. – The Muslim world, 1955, 45, p. 221 - 228.
329. Jonassohn K., Defining the perpetrator: seeking proof of intent. - MIGS Occasional paper, March 1993, p. 1 – 6.
330. Kaplan S., 1915'teki trajedi işte bu tehcir kanunuyla başladı. - Hürriyet, 3. mart 2005.
331. Karal E. Z., La transformation de la Turquie d'un empire oriental en un état moderne et national. - Cahiers d'histoire mondiale, 1957, vol. IV, No. 1, p. 426-441.
332. Karal E. Z., Non-Muslim representatives in the first constitutional assembly. – Christians and Jews in the Ottoman Empire: The functioning of a plural society. Ed. by B.Braude and B.Lewis, Vol. I: The Central Lands, New York – London: Holmes and Mier, 1982, p. 387-400.
333. Karal E. Z., Obstacles rencontrés pendant le mouvement de modernisation de l'Empire Ottoman. - Economie et sociétés dans l'Empire Ottoman (Fin du XVIII-e - Début du XX-e siècle). Actes du colloque de Strasbourg (1-er - 5 juillet 1980). Publiés par Jean-Louis Bacqué-Grammont et Paul Dumont, Paris: Editions du Centre national de la recherche scientifique, 1983. p. 11-12.
334. Karal E. Z., Gülhane Hatt-ı Hümayununda batının etkisi. - Belleter TTK, 1964, No. 112, s. 581 – 601.
335. Karal E. Z., Namık Kemal ve Şark meselesi. — Namık Kemal hakkında. İstanbul, 1942, s. 281 – 293.
336. Katz S., Quantity and interpretation: issues in the comparative historical analysis of the Holocaust. - Remembering for the future: working papers and addenda. Volume III: The impact of the Holocaust and Genocide on Jews and Christians. Oxford: Pergamon press, 1989, p. 2510-2526.
337. Kimura A., Genocide and the modern mind: intention and structure. - Journal of Genocide Research, 2003, 5(3), p. 405–420.
338. Kodaman B. Hamidiye hafif süvari alayları (II. Abdülhamid ve Doğu-Anadolu aşiretleri). - İstanbul Üniversitesi Edebiyat Fakültesi Tarih Dergisi: Ord.Prof. İ. H. Uzunçarşılı hatıra sayısı. 1972, Sayı: 32, s. 427-480.
339. Lemkin R., Akte der Barbarei und des Vandalismus als delicta juris gentium. - Anwaltsblatt Internationales, Vienna, Vol. 19, No. 6 (Nov. 1933), S. 117-119.

340. Lemkin R., Genocide - a modern crime. - Free world, Vol. 4 (April, 1945), p. 39 - 43.
341. Lemkin R., Genocide. - American scholar, Volume 15, No. 2 (April 1946), p. 227-230.
342. Lemkin R., Genocide as a crime under international law. - American journal of international law, Vol. 41, No. 1 (1947), p.145-151.
343. Makino U., Final solutions, crimes against Mankind: on the genesis and criticism of the concept of genocide. - Journal of genocide research, 2001, 3(1), p. 49–73.
344. Melson R., A theoretical inquiry into the Armenian massacres of 1894-1896. - Comparative studies in society and history, 1982, No. 24, p. 481-509.
345. Mouradian Kh., The specter of the Armenian genocide: an interview with Halil Berkday. – Aztag daily, November 12, 2005.
346. Özdem R., Tanzimat'tan beri yazı dilimiz. - Tanzimat I, İstanbul: Maarif Matbaası, 1940, s. 859-931.
347. Pryce-Jones D., Curse of the militias: what Balkanization has done to Iraq, Lebanon, and others. - National review, March 27, 2006.
348. Raphael Lemkin on genocide. - Genocide and human rights: A global anthology. Ed. by J. N. Porter. Washington, D.C.: University Press of America, 1982.
349. Reid J. M., The concept of war and genocidal impulses in the Ottoman Empire, 1821-1918. - Remembering for the future. Working papers and addenda. Vol. II: The impact of the Holocaust on the contemporary world. Oxford: Pergamon Press, 1989, p. 2048-2059.
350. Reid J. M., Batak 1876: A massacre and its significance. - Journal of genocide research, 2000, 2 (3), p. 375–409.
351. Safrastian R., The political party and genocide: the Committee of Union and Progress at the threshold of the "Final Solution". - Problems of Genocide: Proceedings of the International Conference on "Problems of Genocide. Toronto: The Zoryan Institute of Canada, 1997, p. 191- 200.
352. Safrastian R., Armenien & Türkei - Zwischenstaatliche Beziehungen / Eine Interpretation. - ADK, 119/120, Frankfurt am Main, Jg. 2003, Heft 1 & 2, S. 23-24.
353. Safrastjan R., Ottomanism in Turkey in the Epoch of Reforms in the 19th Century: Ideology and Policy. - Etudes balkaniques. Sofia: BAN, 1988, No. 4, p. 72 – 86; 1989, No. 1, p. 34 - 44.
354. Safrastyan R., Die armenischen liberalen und die konstitutionelle Bewegung im Osmanischen Reich, 1867 – 1876. – Osmanismus, Nationalismus und der Kaukasus: Muslime und Christen, Türken und Armenier im 19. und 20. Jahrhundert. Hg. von Fikret Adanir und Bernd Bonwetsch. Wiesbaden: Reichert Verlag, 2005, S. 153 – 164.
355. Safrastyan R., Armenians and Turks: Contacts in History from Seldjukides Times up to the End of the 19th Century. - Turkish and Ottoman Studies IV, Institute of Oriental Studies, Armenian National Academy of Sciences, Yerevan: Asoghik, 2006, p. 197 – 206.
356. Safrastyan R., Patterns of Ottoman politics towards Christians during Tanzimat: from equal rights to ottomanization and to genocidal intent. – Journal of oriental and african studies, Athens, 2007, Volume 16, p. 247 – 270.
357. Safrastyan R., "Kuleli Incident": Armenian sources. – Armenian folia anglistika: Armenian association for the study of English, reviewed international journal, Yerevan, 2007, 2 (4), p. 174 – 180.
358. Safrastyan R., Ottoman Policy Towards Christians During Tanzimat: New Tendencies. – Turcic and Ottoman Studies V, Institute of Oriental Studies, Armenian National Academy of Sciences, Yerevan: Asoghik, 2008, p. 56 – 77:
359. Scherrer Ch. Towards a theory of modern genocide: comparative genocide research: definitions, criteria, typologies, cases, key elements, patterns and voids. - Journal of Genocide Research, 1999, 1(1), p. 147 - 156.
360. Semelin J., Toward a vocabulary of massacre and genocide. - Journal of Genocide Research, 2003, 5(2), p. 193 - 210.

361. Siyasi kırıgınlıklar: 15 gün gizli tutulan görev. – Tercüman, 4 Mayıs 1993.
362. Smith R. W. State power and genocidal intent: on the uses of genocide in the twentieth century. - Problems of genocide: proceedings of the International Conference on "Problems of Genocide", April 21-23, 1995, Toronto: The Zoryan Institute of Canada, 1997, p. 225-236.
363. Sonyel S., Kurtuluş Savaşı günlerinde batı siyasamız (nisan 1920 – mart 1921). – Belleten, ocak 1981, cilt: XLV/1, sa: 177, s. 359 – 360.
364. Stanton G. H., The seven stages of genocide: paper presented at the Genocide studies program seminar, February 12, 1998, Yale University, Mellon Sawyer seminar series, Ben Kiernan, Director. New Haven: Yale Center for international and area studies, 1998.
365. Stanton G. H., Eight stages of genocide: originally written in 1996 at the Department of State. - www.genocidewatch.org
366. Stone D., Modernity and violence: theoretical reflections on the Einsatzgruppen. - Journal of Genocide Research, 1999, 1(3), p. 367–378.
367. Tashjian J. H., Genocide, the United Nations and the Armenians. - Genocide and Human Rights: A Global Anthology. Ed. by J. N. Porter. Washington: University Press of America, 1982.
368. Ternon I., The will to annihilate: for an approach of the concept of genocide. - Remembering for the future. Working papers and addenda. Vol. II: The impact of the Holocaust on the contemporary world. Oxford, 1989, p. 2060 - 2067.
369. Tournaye C., Genocidal intent before the ICTY. - International and comparative law quarterly, 2003, vol. 52, No. 2, p. 447 – 462.
370. Барсегов Ю. Г., Ответственность государства за геноцид в международном праве и в международной политике. – Геноцид – преступление против человечества (Материалы 1 Московского Международного Симпозиума 18-19 апреля 1995г.). М.: Международный гуманитарный фонд, 1997, с. 90-101.
371. Гусейнов Р. А., Удхи – военно-феодалный институт в Малой Азии в XI-XII вв. – Тюркологический сборник 1974. М.: Наука, 1978. с. 213 – 229.
372. Кисимовъ П. Метхадъ паша. Първи турски реформаторъ. - Българска сбирка, 1898, г. V, кн. IX, с. 799-809; кн. X, с. 886-898.
373. Киракосян А., К вопросу о константинопольской резне 1896 года. – Литературная Армения, 1989, No. 4, с. 98 – 103.
374. Мейер М. С., Новые явления в социально-политической жизни Османской империи во второй половине XVII – XVIII вв. - Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М.: Наука, 1986, с. 155 - 185.
375. Орешкова С. Ф., Государственная власть и некоторые проблемы формирования социальной структуры османского общества. – Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М.: Наука, 1986, с. 5 -18.
376. Петросян И. Е., К истории создания янычарского корпуса. – Тюркологический сборник 1978. М.: Наука, 1984, с. 191 – 200.
377. Плетньов Г., Съпротивата на българския народ против османизирането на родните училища в Дунавския вилает. – Трудове на Великотърновския Университет "Кирил и Методиј", 1974 - 1975. т. XII, кн. 3, Факултет за история, с. 104 - 165.
378. Попова А. А., Политика Турции и национально-освободительная борьба болгарского народа в 60-х годах XIX века. - Вопросы истории, 1953, No. 10, 49–64.
379. П. П. К. Мидхатъ паша и опитваннето му да потурчи българските училища. - Българска Сбирка, 1898, г. V, кн. I, с. 56-63.

380. Сафрастян Р., Национальный вопрос в программных документах партий "османских демократов" (1909 - 1911). – Историко-филологический журнал, 1996, N. 1-2 (143-144), с. 65 - 72.
381. Сафрастян Р., Турецкие оппозиционные партии и национальный вопрос в Османской империи в 1908 – 1909 годах (анализ партийных документов). – Вестник общественных наук НАН РА, 1998, No. 2, с. 80 - 90:
382. Сафрастян Р., К вопросу о методологии сравнительного исследования геноцида армян и геноцида евреев. – Страны и народы Ближнего и Среднего Востока, XVIII, Институт востоковедения НАН РА, Ереван: Зангак – 97, 1999, с. 49 - 54:
383. Сафрастян Р., Армянские либералы и конституционное движение в Османской империи: 1867-1876 гг. - Страны и народы Ближнего и Среднего Востока, XX, Институт востоковедения НАН РА, Ереван: Зангак – 97, 2001, с. 125 – 142.
384. Твертинова А. С., В. Д. Смирнов - историк Турции (К 125-летию со дня рождения). - Советская тюркология, 1971, No. 4, с. 103 -114.
385. Фадеева И. Л., Новые тенденции в политике Порты начала 70-х годов XIX в. – Тюркологический сборник 1878. М.: Наука, 1984, с. 229 – 234.
386. Шамсутдинов А. М., Проблемы становления османского государства по турецким источникам XIV-XVвв. – Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М.: Наука, 1986, с. 19 - 39.
387. Шпилькова В. И., Антимонархический заговор 1859г. в Турции. – Проблемы востоковедения, 1959, No. 1, с. 100 – 104.
388. Ջուլյան Մ. Կ., Ղեվչիրմեն (մանկահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական եւ հայկական

- աղբյուրների. - Պատմա - բանասիրական հանդես, 1959, թիվ 2-3, էջ 247-256:
389. Մելքոնյան Ա. Ա., Եղեռնի քաղաքականության ձևավորման ակունքներում. - Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ), Խմբագիր՝ Պ. Հ. Հովհաննիսյան, Երևան, Հրազդան, 2001, էջ 35 – 54:
390. Մկրտչյան Լ. Հ., Արևմտահայության ցեղասպանության արդյուլահամիդյան քաղաքականությունը. – Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ), Խմբագիր՝ Պ. Հ. Հովհաննիսյան, Երևան, Հրազդան, 2001, էջ 55 – 76:
391. Սաֆրաստյան Ռ., Ինչպես էր նախապատրաստվում ցեղասպանությունը. երիտթուրքերը 1910 թ. - Իրան-Նամե. Արևելագիտական հանդես, 1997, թիվ. 4 – 5 - 7, էջ 7:
392. Սաֆրաստյան Ռ., Ցեղասպանության ակունքները միջնադարյան Օսմանյան կայսրությունում. - Պատմա - բանասիրական հանդես, 1998, թիվ 1-2 (147-148), էջ 105-112:
393. Սաֆրաստյան Ռ., Թուրքական իշխանությունների հակազդեցությունը 1876 թ. բուլղարական ապստամբությանը. նոր մոտեցում. - Արևելագիտական ժողովածու, հատոր V, ԵՊՀ, Երևան, Իրանագիտական Կովկասյան Կենտրոնի հրատարակչություն, 2004, էջ 310 -318:
394. Սաֆրաստյան Ռ., Նախացեղասպանություն (Proto-Genocide). տեսության և պատմության խնդիրներ (Օսմանյան կայսրության օրինակով). - Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ III, ՀՀ զԱԱ Արևելագիտության ինստիտուտ: Երևան, Լուսաբաց, 2005, էջ 26 – 47:
395. Սաֆրաստյան Ռ., Ցեղասպանության ծագումնաբանության հարցի շուրջ. դիտավորության հանգամանքի կիրառումը. - Հայոց Մեծ Եղեռն - 90: Հոդվածների ժողովածու: Երևան, ԵՊՀ, 2005, էջ 366 – 378:
396. Սաֆրաստյան Ռ., Թուրք - հայկական պատերազմի շրջանի թուրքական վավերագրեր (1920 թ. նոյեմբեր). - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXV, ՀՀ զԱԱ

- Արևելագիտության ինստիտուտ, Երևան, Ջանգալ-97, 2006, էջ 412 - 442:
397. Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրությունում 1859 թ. դավադրության բնույթի հարցի շուրջ. - Գիտահետազոտական աշխատանքի ուղեծրում: Ղասախոսների գիտական զեկուցումների ժողովածու՝ նվիրված համալսարանի 15-ամյակին /պրակ երրորդ/: Երևան, Երևանի Հրաչյա Աճառյան համալսարան, 2007, էջ 154 – 159:
398. Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրության 1915 թ. «Տեղահանության օրենքը». - Պատմա - բանասիրական հանդես, 2007, թիվ 2 (175), էջ 72 - 81:
399. Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ. ներկայ փուլի առանձնահատկությունները. - Ազգակ Բացառիկ, Բեյրութ, 82-րդ տարի, թիվ 243 (23058), էջ 32 – 34:
400. Սաֆրաստյան Ռ., Հայոց ցեղասպանության պետական ծրագիրը. – Վէմ համահայկական հանդես, 2009, թիվ 1 (26), էջ 48-62:
401. Սիրունի Հ. Ճ., Թանգիմաթ և հայեր. - Պատմա - բանասիրական հանդես, 1966, թիվ 4, էջ 53 - 66:
402. Տատրեան Վ., Պետության մը եւ պետական կուսակցութեան մը միաձոյլ դերը հայկական ցեղասպանութեան մէջ. - Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով. Watertatown, 1995, էջ 107-140:

RUBEN SAFRASTYAN

**OTTOMAN EMPIRE:
THE GENESYS OF THE PROGRAM
OF GENOCIDE
(1876-1920)**

РУБЕН САФРАСТЯН

**ОСМАНСКАЯ ИМПЕРИЯ:
ГЕНЕЗИС ПРОГРАММЫ
ГЕНОЦИДА
(1876 – 1920гг)**

ՌՈՒԲԵՆ ՍԱՅՐԱՍՏՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ.
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(1876 – 1920 թթ.)

Ստորագրված է տպագրության 09.12.2009: Չափեր՝ 60 x 84 1/16: Թուղ-
թը՝ օֆսեթ № 1: Տառատեսակը՝ «Arial Armenian»: Տպագրությունը օֆսեթ:
15,5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ



հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:

Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:

Էլ. փոստ lusakn@rambler.ru